

ԲԱՐԵՎ  
ՄԱՏԵՎՈՅԱՆ

8



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

«МАТЕНАДАРАН»  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА  
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

ВЕСТНИК  
МАТЕНАДАРАНА

8

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1967

004  
F-12

«Մ. Տ. Տ. Ա. Գ. Ր. Ո. Ե»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԽՈՀՏԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԲ ԶԵԽԱՎԵՐՔԻ ԲԱՆԱԿԱՆԻՑ

ԲԱՆԱԿԱՆԻՑ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

942

8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԽՈՀՏԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԲ ԶԵԽԱՎԵՐՔԻ ԲԱՆԱԿԱՆԻՑ 1967  
ԵՐԵՎԱՆ



Նորագույնը՝  
Ա. ԽԱԶԻՅԱՆԻ և թ. 2019.09.06

Հ Ա Գ Վ Ա Ծ Ն Ե Ր  
Ե Վ  
Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ Ն Ե Ր

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՎԻՆ

ԽԻԿԱՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Խիկարի զրուցը և Գիլգամեշի վեպը տառա-քարելական աշխարհի գեղարվեստական գրականության բացառիկ օրինակներ են, որ պահպանվել ու հասել են մեզ վաղեմի ժամանակներից:

Եթե Գիլգամեշի վեպը ստեղծվել է շատ վաղուց, բայց արդեն VII դարում (մ.թ.ա.), գրի է առնված Պուր Շարրուկիին ազյուսների վրա, և ձանաշում ենք այն VII դարի տեսքով, որը նրա նախատիպն է և միակ օրինակը, ապա Խեկարի զրույցը, կազմվելով թերեւ նույն շրջանում, շարունակել է իր ճամփան գրավոր և բանավոր փոխանցումներով մինչև մեր թվարկության XIII—XIII դարերը, երբ հանդիպում ենք արդեն ձեռագրական օրինակների:

Այս երկար ձամփորդության ընթացքում զրուցը իր տեսքը կորցրել է, և նախնականը մթագնվել նոր շերտերի տակ:

Մեկ հայտնի չէ Խիկարի եթե ոչ առաջին, գոնե Հնագույն մի բնագիր, որի պայմաններում հնարավոր է ավելի հեշտ լուծել նրա հետագա աղղեցությունների, նրա բանավոր զարգացման ուղիների, զուգահեռ թեմաների հարթերակցման և ծավալման հարցերը, հարցեր, որ այնքան մեծ հետաքրքրություն են առաջացրել ըսդհանուր բանասիրության մեջ Ասեմանիից մինչև Ֆեթթեր և Նո (Nau): 1906 թվականին Էլեֆանտինի Հրեական համայնքում գտնվեցին Խիկարի պատճերուս պատառիկներ<sup>1</sup>, որոնք բանասիրությանը բիշ բան կարող են տալ նրա Հնագույն տեսքը և ծագումը որոշելու համար: Սակայն այս դեպքում նոր ձևով են մեկնվում, կամ, թերևս, լուծվում են փոխաղղեցության բաղմաթիւ հառցեր:

Պապիրուսների օգնությամբ հավաստելով Խիկարի վաղեմիությունը (V դար մ. թ. ա.), կարող ենք վստահորեն ասել, որ վազուց նկատված *Sop-er-hi-thi* հիշատակությունները և Սուլբ գրքում գուգահեռ թեմաների հետքերը դուլխս են Խիկարից (*Sop-er-hi-thi* գիրքը կազմվել է II դարում, մ. թ. ա.); Ալդափ-սով Խիկարի գրույցը պիտք է դասվի Աստվածաշնչի հիմքում ընկած երրայշ-նան ոռականության շարքում Խիկարի կենսագործությունն անցել է Եղովասուին և

<sup>1</sup> **SL.** Aramäische Papyrus und Ostraka aus einer jüdischen Militärkolonie zu Elephantine, bearbeitet von Eduard Sachau, *ἰαյαθη*, 1911; *Բնագիրը զերմաներեն թարգմանության հետ միասին, ինչպես նաև* Arthur Ungnad, Aramäische Papyri aus Elephantine. Kleine Ausgabe unter Zugrundelegung von E. Sachau's Erstausgabe, *ἰայαթէ*, 1911, միայն բնագիրը: Պապիրուների բնագրի ոռուերեն թարգմանությունը Զախառով գերմաներեն թարգմանությունից, օգնվելով Զախառով և Ունդնաղի բնագրերից և նորեցի զիսողություններից ճաշարակել է Գուրգնակով (տե՛ս Николай Дурново, К истории повести об Акире, Отдельный оттиск из II выпуска IV тома Трудов Славянской комиссии императорского московского археологического общества, *Մուկագա*, 1915):

ոչ ընդհակառակը, թերևս նրանց ծառայել է մեկ ընդհանուր աղբյուր, չառմենայն գեպս Եզովապուր չի կարող առաջնություն վիճարկել: Դեմոկրիտը օգտվել է Խիկարից, Լոկմանը կարող է կրած լինել ընդհանուր աղբեցություն: Բայց դրանով չի սահմանափակվում Խիկարի տարածման ոլորտը հնագույն և վաղքրիստոնեական շրջանի գրականության մեջ: Այն ունի ավելի բայց շրջանակ-ներ:

Եզիպատոսում սաեղծվում էր մի գրականություն, որ վերագրում էին Թոթ աստծուն, իսկ Թոթը թարգմանաբար նույնացվում էր Հերմեսի հետ: Հետագայում հույների մոտ Հերմեսը գիտակցվեց եզիպատական Թօթից անկախ, և նրա շուրջը ստեղծվեց առանձին գրականություն, մինչև մեր թվականության երրորդ դար: Հերմեսյան գրականությունը մեծ մասամբ կրոնա-փիլիսոփայական բնույթի է և օգտվում է խրատաբանական, ուսուցողական ձերց: Հիմնականում Հերմեսը դիմում է իր որդուն և Ասկղեպիոս աշակերտին:

Հայ մատենագրության մեջ պահպանվել է Հերմեսյան երկերի մի օրինակ: «Հերմեսյան եռամենի առ Ասկղեպիոս Սահմանք», որի գիտական բնագիրը հրատարակել է Մանանդյանը<sup>2</sup>: Մատենագրաբանի № 2543 ձեռագրի 172ա թերթից սկսվում է մի բնագիր, որը նույնական հերմեսյան երկերի թվին է պատկանում<sup>3</sup>: «Դարձեալ այլ բանք Հերմեսի իմաստնոյ, ասացեալ յաղագս տնօրէնութեան բանին աստուծոյ»:

Այստեղ սակայն Հերմեսը դիմում է, ոչ թե, ինչպես սովորաբար, Թոթին, կամ Ասկղեպիոսին, այլ բավական անսպասելի՝ Նաթանին: «Խօսեցաւ Հերմես իմաստասէրն ընդ որդոյ իւրում նաթանայ: «Մանիր որդեակ իմ նաթան, զի անպատճառ իջանելոց է հուրն ահեղատես: Կամ՝ «Որդեակ իմ նաթան, ես յայտնեցի զքեզ զամենայն ծածուկ խորհուրդս, որ առ իմաստասէրս: Այս է զիրք որ ասի զիրք կենաց: Եւ արդ, զու որդեակ, բաց զաշս մտաց բոց և գանձեալ ի գանձարանի սրտի քում, զոր այժմ աւանդեմ թեզ և պատճառն պատճառից պարունակեսցէ զքեզ...»<sup>4</sup>:

Այս բնագիրը թարգմանել է Կիպրոսի Դավիթ եպիսկոպոսը, արաբերենից՝ «թարգմանեալ յարաբացի գրոց ի ձեռն նուաստ և տգէտ եպիսկոպոսի Դաւիթի, ի խնդրոյ տէր Աւետիք նուիրակիս»<sup>5</sup>:

Բնագրի առնչությունը Խիկարի հետ ակնբախ է ոչ միայն արտահայտչական ձևի տեսակետից («Որդեակ իմ», «Հուր որդեակ»), որ ընդհանուր և տարածված էր արևելյան հնագույն գրականության մեջ, այլև, որ դիմում է նաև նաթանին, Խիկարի թեռորդուն («Որդեակ իմ նաթան»), ինչպես Խիկարը:

Այստեղ շփոթված է ոչ թե Հերմեսի աշակերտը, այլ նաթանի ուսուցիչը, Հերմեսը փոխարինել է Խիկարին: Դա ոչ ուղղակի վկայությունն է այն բանից, որ Հերմեսյան գրականությունը տարածված էր նաև Խիկարի անվամբ, ավելի ձիշտ՝ ինչպես Թոթի, այնպես էլ Խիկարի շուրջը ստեղծվել են երկեր: որոնք հետո մտել են Հերմեսյան հեղինակությունների մեջ:

Որ խոսքը նույն Հերմեսի մասին է, և այստեղ ես նա պատմական անձէ, այլ ընդհանրացված կերպար, Հայտնի է հենց բնագրից: Նախ նա դիմում է

<sup>2</sup> «Թանըրը Մատենագրաբանի» № 3, 1956, էջ 287—314:

<sup>3</sup> Այս բնագիրը պարունակող ձեռագրի մասին մեզ տեղեկացրել է Ս. Հալաֆարյանը:

<sup>4</sup> Մաշտոցյան մատենագրաբան, ձեռագրի № 2543, էջ 172ար:

<sup>5</sup> Անդ, էջ 172ա:

նաթանին, որը ոչ մի առնչություն չէր կարող ունենալ որևէ Հերմեսի հետ և ապա՝ նույն բնագրի մեջ փորձ է արփում Հերմեսի համար մարգարեների շարքում տեղ որոշել:

«Ծ (500) արորով յառաջ քան զԴաւիթ, իմաստունս այս Հերմես և Ծ (500) տարով յետոյ քան զՄովսէս»<sup>6</sup>:

Այդպիսի փորձ արփած է արաբական Լոկմանի և Հունական Եզովապոսի համար, իսկ Խիկարի մասին ինքը Սուրբ դիրքն է հոգ տանում: Մարգարեացված իմաստունների այս անվավեր շարքի մեջ պետք է մտնի նաև Հերմեսը:

Հնագույն ժամանակների իմաստունները անվերջ կերպավորել են իրար:

Խիկարի հետ Հերմեսի առնչումը թերևս զալիս է հետքրիստոնեական շրջանից, մինչև III դար, երբ Հերմեսը ըմբռնվել է Թոթից անկախ: Այդ է թույլ տալիս մեզ մտածելու բնագրի բովանդակությունը, բայց գուցե և ենթաղել ավելի վաղ շրջան: Հետաքրքիր է, որ այստեղ Հիշատակություն կա Եզիպատոսի մասին: «Եւ մտանէ յԵզիպատոս լոյսն ծածկեալ»: Դա իհարկե սոսկ վարկածային բնույթ ունի, բայց որ V դարում, մեր թվարկությունից առաջ Եզիպատոս է տարվել Խիկարի բնագիրը, անվիճելի է: Այդ են վկայում էլեֆանտինյան պապիրուսները:

Այսպես, մեր նպատակն էր Հպանցիկ Հիշատակել Խիկարի աղղեցությունը ընդհանուր գրականության վրա, որն ունի բավական լայն շրջագիծ՝ Սուրբ գրքից մինչև 1001 գիշերներ: Բայց և մեծ ու խորն է նրա աղղեցությունը բանավոր գրականության, տարբեր ժողովուրդների առածների, Հերմեսների, զրուցների, առակների վրա:

Խիկարի զրուցը վաղեմի ժամանակներից եկող բնդհանուր գրականության տարածուն և կենսական թեմաներից մեկն է:

Տեսնենք թե նա ինչ ճանապարհ է անցել մեր մատենագրության մեջ:

Հարրիսը՝ Կոնիբերի հետ միասին Պղնձե քաղաքի ժողովածուից դուրս, Խիկարի բնագրի առաջին Հրատարակողը, գրում է:

«Ինչ-որ տարօրինակ է, չնայած գրքի Հայերի մոտ շատ տարածված բնույթին, Հայ գրականության մեջ ուրիշ հետք չի նկատվում»<sup>7</sup>:

Զրուցի բնույթն այնպես է, որ կարող է հեշտությամբ տեղայնացվել, փոփոխվել և ձուլվել ազգային գրականությունների հետ: Հենց այդպես էլ եղել է զեռ շատ վաղուց: Մի աեղ ասված է, որ Խիկարը ծագումով Հրեա էր, իսկ հին կտակարանում նա Տովքիթի եղբորորդին է՝ Աքիկար («Աշուշան»), Հույները նրան սեփականել են՝ կապելով Եղովագոսի հետ, արաբները՝ Համարել Հազար ու մեկ գիշերների հերոսներից մեկը, Խիկարի ոսւսական խմբագիրը շիմուացել շեշտելու, որ նա իր որդուն ոռւսերն էր սովորեցնում:

Խիկարը տեղայնացել է և Հայ մատենագրության մեջ:

«Սարհազոնի որդի Սենեքերիմի, թագավորի Ասորեստանի և նինվեի, XX տարում»<sup>8</sup>: Այսպես է սկսվում ասորական բնագիրը, իսկ Հայկականը

<sup>6</sup> Անդ, էջ 172ր:

<sup>7</sup> The story of Ahikar from the Syriac, Arabic, Armenian, Ethiopic, Greek and Slavonic versions by F. C. Conybeare, J. Rendel Harris and Agnes Smith Lewis, *Leyden*, 1898, էջ LXXXI.

<sup>8</sup> Անդ, էջ 58: Իրականում Սարհազոնն է Սենեքերիմի որդին: Այդպիսի բնիմերում տալիս է Բեռլինի Զախառուի Աշուշանը: Տես F. Nau, Histoire et sagesse d'Ahikar l'Assyrien, *Փարիզ*, 1909, էջ 152:

բաց է թողնում Սևնեքերիմի հոր Հիշատակությունը. «Յամի Սևնեքերիմ, արքայի Ասորեստանի և Նինվեի»<sup>9</sup>:

Այս փոքրիկ ընթերցումը կարևոր է: Բնագրում Հիշվում է Արծվաց դաշտ, որտեղ պետք է Նախանի խարդավանքով ներկայանար Խիկարը: Հայկական բնագրում այն դարձել է Արծրունեաց դաշտ: Սևնեքերիմ, Արծրունեաց դաշտ:

Բայց զուգադիպությունները ավելի հեռու են գնում: Խորենացին Հայտնում է, որ Արծրունիները Ասորեստանի Սևնեքերիմ թագավորից են սերել. «Եւ են այս երկու տունք ի զաւակէ Աննեքերիմայ»՝ Արծրունիթ և Գնունիթ»<sup>10</sup>, իսկ նրանց տոհմական խորհրդանշանը եղել է արծիվը. «Եւ զԱրծրունիդ գիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որը արծուիս առաջի նորա կրէին: Թողում զառասպելեացն բաջաղանս, որ ի Հայտմակերտին պատմին, մանկան նիրհելոյ անձրի և արև հակառակեալ և հովանի թռչնոց՝ պատանւոյն թալկացելոյ»<sup>11</sup>:

Այս ամենից հետո ոչինչ էր մնում զրուցը կապելու Արծրունիների տան հետ:

Այդպես հայացվել են և այլ անուններ. Խիկարի կինը՝ Աշխեգանին դարձել է Արփիսապան, որը գալիս է արփի բառից, Սևնեքարը՝ Սնաքար, Արփկամը՝ Ապիկար:

Անունների այգպիսի տեղայնացումը բնորոշ է Խիկարի այլ խմբագրությունների համար: Հույների մոտ Սևնեքերիմին փոխարինել է Նեկտաններուը, որը հայտնի է և Ալիքսանդրի վարքից: Արարական գրականության մեջ Խիկարը տառապարձիկ է Հայկար, իսկ Նաբրուսեմաքը՝ Արուսամիթ, սլավոնական խրմբագրության մեջ հերոսը Ակիրն է, իսկ իրուն Փարավոնի գեսպան հանգես է գալիս այնքան մեծ սարսափ տարածած մի պատմական դեմք՝ Բաթու խանի իշխան Ելտեգին:

Զրուցի գիտավոր հերոս Խիկարը, Հայերենում երկար և հետաքրքիր ձանապարհ է անցել:

Մի ձեռագրում, որտեղ խոսվում է աղանդավորների մասին, գրված է. «Այրն, զոր գեղջուկը Շնար կոչեն և էր Շունայր, զի խոտէր զամուսնութիւնն, զրագումն ձեռաց զինի իւր, իսկ այրն զոր գեղջուկը Խիկար անուանեն և էր Խոկայր, զի իւրով իմաստութեամբ հանապազ խոկմամբ ամեննեցուն տայր խրատս և առակօք կրթէր, պատուեցաւ ի սուրբ Հայրապետէս Զաքարիայ»<sup>12</sup>:

Աղբյուրը ճառընտիր է ոչ սուրբ Կարապետ, ի Շթ ( = 1060) թուականին գրուած, ունի եւթն ճառեր ի տնօրինութիւնս տեսան և հիշատակարան ինչ-ինչ դեպքերուց<sup>13</sup>:

Այսպես, 1060 թվականին հիշատակվում է Խիկարի անունը, որն արդեն հնթարկված է ժողովրդական, կամ ավելի ճիշտ՝ գրական ստուգաբանության: Այդ նշանակում է, որ նա մինչ այդ արդեն երկար ճանապարհ է անցել, և մթագնվել է նրա ինքնությունը: Նրա անձնավորությունը պատմականացնելու համար մնում էր մի վերջին քայլ՝ «Պատուեցաւ ի սուրբ Հայրապետէս Զաքարիայ»: Դա Զաքարիա Ա. Զագեցի կաթողիկոսն է, որը կրքուությամբ պայ-

քարում էր Փոտ պատրիարքի դեմ և գործել է 855—876 թվականներին: Այդպիսով, Խիկարը իր ապրել է IX դարում:

Խիկարի անվան հաջորդ հիշատակությունը մենք հանդիպում ենք Ներսես Շնորհալու մոտ, ածականաբար գործածված, իմաստուն առումով:

Ես ինչ կարդամ զիւրմէն քեզ ճառ, իելօքն ծով է ու խիկար<sup>14</sup>:

Այդպիսով, մեկ դար անց նա այնքան է տարածված և ընդհանրական, որ արգին լեզվի մեջ գործածվում է հասարակ ձևով, իրրե իմաստուն:

Հենց այդպիս էլ ընդունել են Հայկազյան բառարանի Հեղինակները, — Խիկար բառ ուամկական, իմաստուն, կամ իմաստակ:

XIV—XV դարերում, Հավանաբար Սարայի աղդեցությամբ, մթագնվում է Խիկարի ինքնությունը:

Մի ձեռագրում պատմվում է Խարայելի թագավոր Սողոմոնի և Սարայի մեճը, որը, լսելով Սողոմոնի իմաստության հոշակը, գալիս է Հարեցատանից նրան փորձելու:

Զրուցը պարականոն է և վերցված ոչ թե Աստվածաշնչից, որտեղ շատ համառոտ է հիշատակվում այդ մասին, այլ Թալմուդից: Սակայն և Թալմուդում և Սուրբ զրուց հաղթում է Սողոմոնը. «Եւ ետես կինն զամենայն իմաստությին Սողոմոնի և ... յիմարեցաւը»<sup>15</sup>:

Հայկական օրինակում, որը վերագրվել է Խիկարին, վեճը շարունակում և հաղթում է ոչ թե Սողոմոնը, այլ Սարայ՝ Խիկարը: Սողոմոնն իր առջև զրուցած խնդիրը լուծելուց հետո հարցնում է Խիկարին. — Ո՞րն է աստծո արարուծների մեջ գեղեցկագույնը: — Գեղեցկագույնը ես իմ, կինը, — պատասխանում է նա: Այդպես, Խիկարը նույնացվել է Սարայի հետ և լիովին անձնակառել նրան:

Դրույցի պատմառունակության, որ քրիստոնյա միշավայրում հարազատ կարող է էր Հնչել, քան իրու զրուցը, որտեղ նա որոշակիորեն քրիստոնյա չէ և պաշտում է կուռքեր կամ աստվածներ:

Սակայն Խիկարը՝ փոխակերպվելով Սարայի՝ վերանձնավորել է և հենց իրն Խիկարը առն բունքում բունք Սարայի պարականոնի աղդեցությամբ, որը դիտվում է իրեւ Խիկարյան Հեղինակություն, փոփոխություններ են մըտնում: XIV—XV դարերի ընդորինակություններից զուրս է նետված Խիկարի կին առնելու հանգամանքը («վաֆտուն կին առի»), բազում աղոթելը և աստվածների անունները: Զրուցը այդպիսով համերաշխվում է Սարայի պարուկանոնին:

Անշուշա դրանով պետք է բացատրել այն տարօրինակ երեսութը. որ Խիկարը կիրառվել է որպես կանացի անուն: Այսպես, 1348 թվականին՝ տիրուշի

14. «Տեսան ներսեսի Շնորհալու Հայոց կաթողիկոսի բանք շափաւ», Վենետիկ, 1928, էջ 611:

15. Գ. թաղ, Ժ:

9 Անդ, էջ 125:

10. «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ա. Յարուբինս, Թիֆլիս, 1913, էջ 111 (Բ-է):

11. Անդ, էջ 111:

12. Վահագան Տեղեւական առաջան, Անդիք գործադիմուն և առակի, Պուլիս, 1893, էջ 20:

13. Անդ, էջ 22:

Ստեփանոսի<sup>16</sup>, 1419՝ մայր Յոհանէսի<sup>17</sup>, 1455՝ մայր Վարդան քահանալի<sup>18</sup>, 1471՝ մայր Անթառամի<sup>19</sup> և այլն:

Կանանց համար ալգափիսի անուններ գործածելը կենցաղում սովորական էր և ընդունված: Մենք հանդիպում ենք նուանա, ինձոր, իելոք կանացի անունների: Եթե կարող էր իելոք անոն լինել, որ հիշատակված է զեռևս 1336 թվականի գրչության մեջ<sup>20</sup>, ապա իիկար, որ նույնպես իելոք է նշանակում կամ իմաստուն, բնական է, կարող էր գործածվել: Բայց այս գեպքում, իրկնում ենք, միայն պետք է ընդունել, որ մթագնված էր բոն իիկարի անհատականությունը և նրա կապը գրուցի հետ. «Ես իիկար զպիր Սենեքարիմայ արքայի. վաթսուն կին առի և վաթսուն ապարանս շինեցի և ես իիկարս վաթսուն տարու եղայ և ոչ եղել ինձ որդի»<sup>21</sup>:

Հետագայում արդեն, XVI—XVII դարերում իիկարը վերագտնում է իրեն: Այս գործածված է նախ՝ իբրև տղամարդու մականուն, ինչպես Մուրատ իիկար (տաղասաց XVI դարու), Միրզաշան իիկար (հիշատակված Արցախի մի արձանագրության մեջ)<sup>22</sup> և այլն, իսկ հետո՝ պարզապես իբրև տղամարդու անուն. «Այս է հանգիստ իիկարին, Գրիգոր աւագ երիցու որդույն»<sup>23</sup>, «Գարձեալ յիշեցեք ... իիկարն և որդիքն իւր Դաւիթն, Բաղդասարն ...»<sup>24</sup>, մինչև մեր օրերը:

Իիկարը նորից ուզգակի կապվում է իր գրուցի հետ և գիտակցվում իբրև Սենեքերիմի քարտուղար, որը 60 կին ունի և աղոթում է աստվածներին:

Այդ շրջանում որոշ գրիշներ, նույնիսկ, ավելի լայն տեղեկություններ ունեն իիկարի մասին: XVII—XVIII դարերի երկու ընդօրինակություններ տալիս են հետաքրքիր ընթերցված: Խոսելով նարուսեմաքի մասին, որին Սենեքերիմը հանձնարարում է իիկարին պատճել, ձեռագրերի մեջ ասված է. «Արուսմագ օռուսի լեզուաւ Անպուշիլ»<sup>25</sup>:

Այդ նշանակում է, որ ոռուական բնագրում նարուսեմաքին անվանել են Անպուշիլ (=Անցուլ): Դա ցույց է տալիս, որ գրիշները ժանոթ են եղել իիկարի գրուցի սլավոնական խմբագրության հետ:

Իիկարը շարունակում է հնֆարկվել հետագա փոխակերպումների:

<sup>16</sup> «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ա. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 368:

<sup>17</sup> «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ա. Խաչիկյան, էջ Ա. Երևան, 1955, էջ 224:

<sup>18</sup> «Յուցակ հայերեն ձեռագրաց մատենագարանին Միթթարեանց ի վիճնա», կազմեց Յ. Ֆակովսով Վ. Տաշեան, Վեհեննա, 1895, էջ 425:

<sup>19</sup> «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ա. Խաչիկյան, էջ Բ. Երևան, 1958, էջ 317:

<sup>20</sup> «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 285:

<sup>21</sup> The story of Ahikar... .

<sup>22</sup> Մակար Բարիուս Պատրիարք Յանց, Արցախ, Բագրատ, 1895, էջ 406: Արձանագրությունն այսպէս է. «Քրիստոս աստուած նշանա բարեխաւ Գուլաթին. Աստուածով ևս Գուլաթի, ամուսին իմ մեծ իշխան Միրզաշան իիկար, որդիքս իմ Տաւիթ թէկի Ամիկի զանենեցին զիսաշ փրփութին հոգոյ ի տանէն Գեղամայ, դուսար Մէկի Դուկասին թ. ԶԴԲ»:

<sup>23</sup> Մ. Երևան կանց Տաճար, Հետաքանական անդագրության Հաղպատագ, Վաղարշապատ, 1886, էջ 38:

<sup>24</sup> «Յուցակ հայերեն ձեռագրիների Թէֆլիզի Ներսիսյան հոգեոր զպրանոցի», կազմեց Մտեփան Կանալյանց, Թէֆլիզ, 1893, էջ 40:

<sup>25</sup> Մաշտոցյան մատենագարան, ձեռագրի Ա. Ա. 3526 և 3493:

Նրան վերագրված է մի բնագիր, որին մեծ նշանակություն են տվել Կոնդիրեր և Հարրիսը, բայց որը սակայն անհարազատ է:

Այդ բնագիրը հարակցվել է զրույցի տարբերակներից մեկին և սկսվում է այսպես. «Հարցումն թագաւորաց որդուց և Պատասխանի Խիկարայ. Հուտայ և Բաղիայն հարցան ի Խիկարին և ասէ Խիկար ի նաթան»<sup>26</sup>:

Այսպես, թագավորի որդիները Հուտայ և Բաղիան հարցնում են Խիկարին և Խիկարը պատասխանում է նաթանին: Ինչպես տեսնում ենք, կապակցությունը բնագրությիկ է: Հարցնում են թագավորի որդիները, իսկ նա պատասխանում է ոչ թե նրանց, այլ նաթանին: Վերագրումն ավելի պարզ է զանոնում մի հետաքրքիր օրինակով: Նույն բնագրի վերջում առաջադրված է նոր հարցում. «Հարցին ի Խիկար, խաւսին թէ երկիրս ինչ կայ քաղցր, պատասխանի ամօթ երեսացն»<sup>27</sup> և այլն:

Նախադասության մեջ նկատվում է ինչ-որ անտեղի ճապագումն: Ավելորդ է հնչում «խաւին»-ը: Բայց զա վերապրուկն է մի այլ ճիշտ ընթերցվածի, որ պահպանված է Ա. Ա. 2669 և 6712 ձեռագրերի բնագրերում, ինչպես նաև Կոնդիրերի օգտագործած մի ձեռագրում: Ոչ թե «Հարցին ի Խիկար, խաւսին», այլ «Հարցին ի Պիտարիսաւին» (այն է՝ Պյութագորասին), թե երկիրս ինչ կայ քաղցր»: Այդպես, «Պիտարիսաւին» բոնի ստուգաբանվել է «Խիկար խաւսին» և բնագրիր վերագրվել նրան:

Այգափիսի վերագրումների շատ օրինակներ կարելի է բերել, ինչպես Խիկարին, այնպես էլ. ընդհակառակը, Խիկարից Սողոմոնին, Միրաքին և այլն:

Գարերի ընթացքում Խիկարի շուրջը կուտակվում է այնքան մեծ գրականություն, որ նորից մթագնվում է նրա ինքնությունը և նրան վերաբերող բուն երկը՝ զրույցը դիտվում նույնիսկ անհարազատ:

Գարբիել Այգավյանը վավերական համարելով բազմաթիվ առակներ, առածներ, զրույցներ, պատումներ և այլն, կասկածելի է գտնում հենց միայն բուն զրույցը, իսկ Խիկարը վերջնականապես հանաշվում է իբրև ազգային գրող<sup>28</sup>:

«Եթե անուն մը կա անգիր գպրության մեջ, անուն ամենուրեք հիշված ու հեղեղված, այս նշանավոր անունն է Խիկար: Որովհետեւ առածներ, առակներ ու առասպեկներ կավանդվեն ու կզրուցվեն նրա անունով, ուստի միշտ կոշված է Խիկար իմաստուն», — գրում է Վահան վարդապետ Տեր-Մինասյանը<sup>29</sup>:

Խիկարը հայ գրականության, հատկապես անգիր գպրության համար կատարում է նույն գերբ, ինչ Վարդանը առակագրության մեջ: Նա հանդիս է գալիս իբրև հավաքական հեղինակ: Այստեղ արդեն զուտ ազգային բնույթ ունի և կապը ասորա-բարեկանական Ասիխկարի հետ պայմանական է:

Ահա թե ինչպիսի հանապարհ է անցել Խիկարը մեզանում, և եթե փորձնենք բննել նրա բուն ազգեցության հետքերը մատենագրության մեջ, ապա անհրաժեշտ կլինել շոշափել հնդյան խութեր հարցեր:

<sup>26</sup> The story of Ahikar..., էջ 140:

<sup>27</sup> Մաշտոցյան մատենագարան, ձեռագրի Ա. Ա. 1978, էջ 23ա:

<sup>28</sup> Գ. Այգավանը և այլն, Հազար ու մեկ առակաւոր բանք աղքայինը և օտարք, Պոլիս, 1874, էջ Ը-ԾԲ:

<sup>29</sup> Տ. Տեր-Մինասյանը, Անգիր գպրութիւն և առակը, էջ 22:

1. Խիկարի օգտագործումը հայ մատենագիրների և պատմիչների կողմից, նրա դերը խրոտականքի, առածանիքի և առակազրության զարգացման մեջ, նրա թեմաների ժամանակակից առանձին գրական սեռերում և այլն:

2. Խիկարի շուրջն ստեղծված հեղինակային և բանահյուսական գրականությունը:

3. Զրույցի տեղայնացումը և հագեցումը ազգային թեմաներով:

4. Զրույցի հասարակական ըմբռումը և կիրարկումը:

5. Զրույցի գրական մշակումները:

Մենք այստեղ շնոր անդրադառնա այդ հարցերին, բայց կփորձենք քննել, թե ինչով է պայմանավորված Խիկարի այդպիսի տարածումը հայ և ընդհանուր գրականության մեջ:

Խիկարը, Ասորեստանի և նինվեի տիրակալ Սենեքերիմ արքայի դպիրը, իր իմաստությամբ ու հանճարով մեծ փառքի և հարստության է հասել, բայց ժառանգ չունի: Նա զիմում է աստվածներին: Աստվածները նրան պատասխանում են, թե չի հրամայված քեզ զավակ ունենալու: Բայց եթե կամենում են, վերցրու քո քրոջ որդում՝ նաթանին և նա «հաստուցէ քեզ զսնունդ քո»:

Այդպես էլ անում է: Որդեգրում է միամյա նաթանին և պահում լոթ տարի: Սովորեցնում է նրան իմաստություն և զարություն և ներկայացնում թագորին: Թագավորը գոհ է, հրամայում է, որ նաթանը նրան փոխարինի, իսկ ինքը Հանգստան զնա:

Խիկարը նրան տանում է տալիս իր նշանավոր խրատները:

«Որդեակ, եթէ լսես քան ինչ ի գրան արքունի, մեռու և թագու զնա ի սրաի քում և մի ումեր ի վեր հանիցնս:

Զեկապն կնքեալ մի արձակեալ և զարձակեալն մի կապեսցես...»:

Բայց նաթանը անազնիվ է վճարում նրա երախտիքը:

Որոշելով, որ իր մորեղբայրը ծերացել է և «զառամեալ են միտքն իւր» սկսում է վատնել նրա ունեցվածքը և անպատկառ զարվել տան ծառաների ու աղաթինների հետ:

Խիկարը բողոքում է արքային, որից գրգռված նաթանը գրում է Խիկարի անունից մի զավաճանական նամակ և գցում թագավորի ձեռքը, որը հրամայում է իր զորավար Արուսմաքին գլխատել նրան և հեռացնել «ըզդղըլում զորա իրքե կանգուն Ճ (100)»:

Խիկարը կարողանում է համոզել Արուսմաքին, և նրա փախարեն գլխատում են մի հանցագործ ծառայի Արքեկամ անունով, իսկ ինքը թարնվում է նետնախություն:

Անցնում է որոշ ժամանակ: Եղիպտոսի փարավոնն իմանալով, որ այլևս Խիկարը չկա, պահանջ է հղում Սենեքերիմ արքային. «Կիտութիւն լիցի քեզ, որի կամիմ շինել ապարան ընդ երկինքն և ընդ երկիրս ի մեջ ի կախ: Տես և առաքեա առ իս ճարտար այց, որ շինէ և այլ զոր ինչ հարցանեմ տայ պատասխանի, ապայ թէ անփոյթ առնես, ևս զամ և բառնամ զթագաւորութիւնը և զերկիրդ քո աւերեցից»:

Նախարարները խորհուրդ են տալիս զիմելու նաթանին, որը չի կարողանում պատասխան տալ:

Թագավորը ափսոսանքով է հիշում Խիկարին. «Եթէ տայր ոք զքեզ ինձ ես տայի նմա զինչ և խնդրէր լինչն, անշափ զանձ ոսկոյ և արծաթոյ»:

Դրանից խրախուված Արուսմաքը հայտնում է, որ Խիկարը կենդանի է:

Այնուհետև պատմվում է, թե ինչպես Խիկարը գնում է Եղիպտոս, ինչպես հարամտությամբ վճռում է երկնքի ու երկրի միջև տաճար կառուցելու խրնդիրը, ինչպես լուծում է փարավոնի հանելուկները և մեծ փառքով ու պարգևներով վերադարձնում Ասորեստան:

Նա հրամարվում է թագավորից որևէ բան վերցնել և խնդրում է իր ձեռքը տալ նաթանին. «Ինձ տացես զնաթան քեռորդին, զոր ուսուցի, զի ուսացչին ուսումն բարութ»:

Տանում է իր հետ, շղթայում և «գան հարկանելով ի թիկունս և ի փորնորա» տալիս երկրորդ ուսումը, մինչև որ «ուռեցաւ նաթան և պատառեցաւ»<sup>30</sup>:

Ինչպես տեսնում ենք, զրույցը կարծես մի փոքրիկ խճանկար է, որտեղ ամեն ինչ կա, և խրատ, և առակ, և պատմություն, և հերիաթ, և հանելուկ, թագմագան տարբեր հավաքվել են մի սլուժեի շուրջը: Իսկ զործողությունը ժամանական ձեռքի մեջ՝ խրատը և հարց ու պատասխանիք:

Խրատը հին և միջնադարյան գրականության մեջ տիրապետող ձև է. Այսօր այն չի հրապուրում, եթե հանդես է զալիս մերկ, բայց միջնադարյան ուսուցողական խոսքի լավագույն միջոցն էր, իսկ միջնադարյան ամբողջ գրականությունը հիմնականում ուսուցողական բնույթ ունի:

«Ճանաչել զիմաստութիւն և զիրատ», — ահա մեր զպրության հոր առաջին խոսքը ուղղված իր ժողովրդին և առաջին զիրը հայերեն լեզվով: Այսպես, հայերեն թարգմանված առաջին երկը խրատներ են: Դա պատահական ընտրություն չէ, այդակ նախասիրություն կա, այն էլ դարի նախասիրությունը, իսկ Խիկարյան զրույցը խիստ համասեռ է Սողոմոնի առակներին և հայտնվել է հայ գրականության մեջ թերեւս նույն շրջանում: Վ զարի հայ պատմիչներն արգեն ծանոթ էին Խիկարին՝ թարգմանաբար, բնագրից, կամ միջնորդված աղբյուրներից:

Նկատենք, որ ձեռագրերում, մինչև «Պղնձե թաղաքի» մեջ մտնելը, Խիկարը հաճախ ընդորինակվում էր և հետո էլ ընդորինակվել է Սողոմոնի, Սիրաքի խրատների և Մովսեսի օրենքների հետ մի ժողովածուում, իբրև հայտնյութեր: Եվ զա բնական է: Խրատը ոչ միայն նպատակ է զնում փոխանցել ավագ սերնդի իմացություն ու կենսափորձը, այլև սերնդի մշակած գարգիծը, որոնք հաճախ ուժ են ստանում զերածվելով օրենքի:

Խիկարյան խրատները նույնիսկ ձգտում են զրան: Գրշություններում բնագիրն այսպես է ներկայացվում.

«Խրատը խիկարյան իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուց ամենայն մարդոյ, վասն շահի և օգտութեան», «...պարտ է ամենայն հայրապետի խրատն զորդիս և վարդապետը զաշակերպահալն», «...պարտ է ամենանեցուն ի միտ առնուլ, պարտ է և արժան ուշիմ ի միտ դնել, զի գուռ է իմաստութեան և շահ է ամենայնի»:

Սահմանվում է նույնիսկ պատիժ:

«Արգ, որ լսէ զիրատս զայս և առնէ, սիրելի առնէ զանձն աստուծոյ և մարդկան և երանեմ կենաց նոցա: Եւ որ լսէ և ոչ առնէ, մանաւանդ թէ հակառակ և լինի և փոխանակ բարո, շար ևս խորհի, եթէ որդի է թէ եղբար, թէ աշկերտ, թէ սիրելի կամ օտար, ևս զառաշիկա գրեալդ ընդունի: Եւ թէ ոչ յազար եղանկ է նոցա»<sup>31</sup>:

<sup>30</sup> Զրույցը բերված է բառ կոնմիքերի բնագրի (տե՛ս The story of Ahikar, էջ 125—161):

<sup>31</sup> Մաշտոցյան մատենադարան, ձեռագիր № 2961, էջ 51:

Պատիժը ի՞նչարկե բարոյական է: Սպառնում է նաթանի ձակատագրով:  
Նկատեցինք, որ Խիկարը նաթանին պատժում է ամենայն գաժանությամբ,  
որովհետև «անտես արար և հոսեաց զբան», որպէս հողմ ընդդէմ փոշոյ»:  
Զնայած նաթանի խնդրանքին ու զջումին, նա չի ներում նրան, այլ «հարկա-  
ներ բիր» մինչև որ «ուսեցաւ նաթան և պատառեցաւ»: Այդպես է բոլոր խմբա-  
զրություններում, բայց հունականից, բայց դա ուղղվել է որնէ քրիստոնյա  
խմբագրի՝ հավանաբար հենց Պլատոնիսի ձեռքով:

«Որդեսակ, որ լնդ ականջն ու լսէ ընդ թիկունսն լսեցուցանեն», — ահա  
պատժի սահմանումը:

Լինելով հասարակական վարքի կանոններ, խիկարյան խրատականքը հա-  
րուստ է իր բովանդակությամբ: Այն արտահայտում է մարզու վերաբերմունքն  
ու փոխարաբերությունը կյանքի ամենատարբեր բնագավառներում՝ կնոջ,  
բարեկամի, ընկերոջ, ծնողների, ծերերի, դատավորների և իշխանավորների  
նկատմամբ, զինու, հաճույքների, հարստության և իշխանության վերաբերյալ  
և այլն, եվ համախի հակասական, որովհետև այնտեղ կան հասարակական գի-  
տակցության տարբեր շերտեր, փոփոխված բարոյական ըմբռնումներ:

«Որդեսակ, սիրեա զկին քո, զի անձն քո է և կցորդ կենաց քոց և յոյժ աշ-  
խատանաւը սնուցանէ զորդին քո»:

«Որդեսակ, կին, թուր, ձի ոչ են հաւատալի: Զշունն բաէ և զկին անդգամ՝  
ոչ: Զի շունն ոչ մոռանայ զերախտիս մարդոյ, իսկ կին, թուր, ձի ոչ ձանաշն  
զտէր իւրեանց»:

«Որդեսակ, մի տար թոյլ ընկերին կոխել զոտս քո, զի մի համարձակիցի  
կոխել զպարանոց քո»:

«Որդեսակ, խոնարհութիւն կալ զանձն քո և բնաւ մի հակառակիր, զի հա-  
կառակ խօսից բազում որոգայթ լինի»:

«Որդեսակ, լաւ է առն եթէ որ ի նեղութեան իցէ և կարէ բանիւ օգնել նմա,  
զի որպէս ի բերանոյ առնծու զերծուացէ զնա»:

«Որդեսակ, փախիր յերաշխատութենէ, թէ ոչ՝ բազում վիշտս կրես և ոչ  
զերծանիս, մինչև հատուսցես»:

Խրատներն ունեն ճանաշողական մեծ արժեք և կենսափորձի խտացում են:

«Որդեսակ, մի լինիր կարի քաղցր, զի մի կլանիցեն զքեզ և մի կարի դառն,  
զի մի թքանիցեն, այլ եղիցիս հեղ և հանդարտ ի գործս զնացից քոց»:

«Որդեսակ, մեծատան որդին օձ կերաւ, ասէին զեղ է նմա, աղքատին որ-  
դին կերաւ, ասեն առ սովուն կերաւ»:

Տարբեր ժամանակներում մարդիկ զտել են այնտեղ իւրեանց հետաքրքրող  
հարցերի պատասխանները և միշտ վերախմբագրել, արտահայտելով սեփա-  
կան տրամադրություն:

Օտար բոլոր խմբագրություններում խրատներից մեկն այսպես է: «Որ-  
դեսակ, կերա զառնին և լեզի և ոչ էր զառն քան զաղքատութիւն», իսկ հայկա-  
կան խմբագրության մեջ հնչում է հայերեն՝ «և ոչ էր զառն քան զաղքատու-  
թիւն և զպանդատութիւն»:

Մի այլ տարբերակում խորանալով տրամադրությունը՝ ստեղծվել է նոր  
խրատ: «Որդեսակ, կերայ տղրուկ և արբի ջուր հստեալ և չէր զառն, քան զոտա-  
րութիւն»:

«Որդեսակ, եղեր ինձ որպէս այծն, որ ուտէր զարուն, և ասէ տորուն  
զայծն, Զի՝ ուտես զիս, ո՞չ գիտես թէ ինչ շիկեն զմորթք: Ասէ այծն: Ես ի

կենդանութեան իմում ուտեմ զքեզ և ի մահուան իմում թող խլեն զտակ քո և  
շիկեն զմորթ իմ»: Այս առակը զրչի մոտ ինչ-որ մտքեր է արթնացնում և ձայ-  
նարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտել: «Ոհ. ոհ, ի դառն ժամա-  
նակիս»:

Խիկարի խրատները ավելի են տարածված հայկական ձեռագրերում, քան  
թէ Սիրաբի և Սաղմանի, չնայած նրանք օգտվում են Աստվածաշնչի հեղինա-  
կությունից: Սողոմոնի և Սիրաբի խրատները միաբնուկթ են և հեղինակային,  
իսկ Խիկարի խրատները ունեն ժողովրդական կենսալիիր ոճ և ուղեկցվում են  
հետաքրքիր պատմությամբ, Սիրաբի և Սողոմոնի խրատները ձեռագրերով  
անցել են գրեթե անփոխիս, որովհետև ունեն կանոնիկ նշանակություն: Պետք  
էր անազարտ պահել Սողորը զրքի խոսքը: Խիկարի համար այդպիսի սահմանա-  
փակում չկա: Ընդորինակող գրիշները ազատ են վարիլ և կատարել բազմա-  
թիվ հավելագրումներ ու նորմուծություններ՝ տարբեր ժամանակներում: Այդ-  
պիսով, զրուցի խրատականքը հենքի դեր է կատարել դարերի ընթացքում և  
դարձել մի տեսակ բարբերի ու վարքագծի տարբեցուց:

Խիկարի հայկական խմբագրությունը ունի յոթ տարբերակ, որից երկ-  
րորդը և չորրորդը՝ ավելի շատ թվով խրատներ ունեն: Երկրորդ տարբերակի մեջ  
անհարազատ են մոտ 77 խրատ, որոնք կազմում են մի ամբողջական բնագիր  
և ձուկել են զրուցին այնպես հաջող ու բնական, որ միշտ դիտվել են իրեն  
բնագրի մի մասը:

942 2  
Սյոյ խմբի մեջ կան հետաքրքիր խրատներ, որոնք արժեքը ունեն ոչ միայն  
իրենց բնույթով, այլև իրեն ժամանակի ոգու և տրամադրությունների արտա-  
հայտություն, որտեղ քաղաքական գիտակցություն է զրևորվում:

«Որդեսակ, այր անմիտ կարծէ ի սրտի իւրում, թէ յորժամ տեսանեմ ի թա-  
գաւորաց և յիշխանաց յորոգայթս նեղութեան, շնորհս ինչ յաւելու յինքն և ոչ  
իմանայ, թէ թշնամիք նոցա նեղեն զաշխարհս և ինքն այլ ի կորուստ մտանի  
ընդ նոսա»:

Նույն խրատը մի այլ շարքի մեջ ուղղակի փոխել է իր նախնական տեսքը.

«Որդեսակ, այր անմիտ կարծէ ի միտս իւր, թէ յորժամ մտանէ ի տուն  
թագաւորաց ի փառս իւր աւելու և ոչ իմանայ, թէ դիւրաւ ըմբռնի ի մահ»:

Եթե այս հավելագրումը ավելի հեղինակային և զրական ծագում ունի,  
ապա չորրորդ տարբերակին հարակցվել են զուտ ժողովրդական խրատներ:

1. «Որդեսակ, խօսքն զինչ ճոճար է, ի սատաֆի մէջն զիր և յամէն տեղ մի  
ցրուեր»:

2. «Որդեսակ, լեզուն հարցաւ զլխոյն, թէ հալտ ինչ է, ասաց, թէ քանի լուռ  
կաս, նա ես խիստ հանգիստ եմ»:

3. «Որդեսակ, զոտքը ի կան դնես ի փշոյ պատրաստ կացիր, ըգձեռքը ի  
ծակըն տանիս, ի յօձու պատրաստ կացիր»:

4. «Որդեսակ, ով մոտ ի լուսին նստի՝ երեսն նման լուսոյ պայծառանայ և  
ով մոտ ի սկ պատկն նստի՝ նորա նման լինենալ»:

5. «Որդեսակ, եթէ ասէ ոսկին թէ ես Հնդիստանի եմ, ինչ շահ է իւր ասեն,  
վասն զի մահաքն կու ճանաշէ զինքն»<sup>32</sup>:

Զրուցի երկրորդ մասը հարց ու պատասխանիք է, որը նույնպես ուսուցու-  
ղական բնույթ ունի և ավելի ճանաշողական արժեք: Հին աշխարհում մարդո-

<sup>32</sup> Մաշտոցյան մատենագրան, ձեռագիր № 2018, էջ 270բ—271ա:



քիշ բան գիտեր բնության և աշխարհի մասին և պակասը լրացնում էր յուրովից: Նա երեխայի պես բաց էր արել աշքերը և նայում էր շուրջը զարմացած, նույնարձում էր, ինչո՞ւ և պատասխանում կամ ձեռք բերված փորձով, կամ սրամիու հնարանցով, կամ երեակայությամբ, կամ գերբնական հանապարհով: Հերթաթների մեջ ողողվել է այս թեման, թագավորները իրար հետ մրցում են հանելուկներով, վիշապները բարդ առաջադրանքներ են տալիս հերոսներին, հանելուկներ կամ դժվար խնդիրներ են լուծում, որ հասնեն տենչած գեղեցկություն և այլն:

Փարավոնի բոլոր հարցերը Խիկարը լուծում է բացառապես իմաստությամբ: Նա այդպես է հաղթում թշնամուն:

Փարավոնն առաջադրում է առմարի, երկնքում տաճար կառուցելու, ավարդությամբ պարան մանելու, գեռ չմագած խոսք ասելու և ուրիշ խնդիրներ:

Այդ ամենը ինքնին հետաքրքիր են և հյուազում են այնպիսի կապակցությամբ, որ շատ հեշտ ամեն մի խնդիր կարող է ինքնակա արձեք ունենալ: Ոչինչ չի տուժի, եթե զրանց վրա ավելացվեն նոր խնդիրներ, կամ որոշ խնդիրներ զուրս ընկնեն, ծավալվեն գեղարվեստական անկախ ձևերի մեջ և այլն:

Այստեղից էլ առաջանում է փոխազեցության լայն հնարավորություն: Այդ խնդիրները զուգահեռաբար կան մեր և ուրիշ ժողովուրդների զրուցներում, հերթաթներում և այլն:

Այսպես: Տոմարի խնդիրը Խիկարն ասում է, որ ասորաց հորթարածներն անգամ գիտեն: Այդ խնդիրը կա և «Պատմութիւն ազշկանն ու մանկան» զրուցիչնեց: Երկրորդ խնդիրը կապած է մարդու թոշելու զաղափարի հետ: Ասորարարեկան ազյունների վրա պատմվում է էտանի մասին, որը թոշում է արծվի հետ: Այդպես են անում Խիկարը և Եղովասոր: Հույն առասպելում թոշում են Գեղալին ու Խիկարը:

Մարդու այդ երազանքը հետաքրքիր հանապարհ է անցել: Էտանի զրուցը ավելի հին է և շատ անքնական է հնչում: Նա ինքն է նստում արծվի վրա, որը սովորական արծիվ չէ, այլ գիտի մարդկացին լեզուն: Խիկարի մոտ զրվագը հավանաբար անցել է էտանից, բայց ստացել իրական գծերը. թոշում է ոչ թե ինքը, այլ վարժեցված երեխաներ, որոնց զնում է կողովի մեջ: Դա նույնությամբ անցել է Եղովասորին, իսկ Խիկարը ինքն է թերե սարքում և փորձում թոշել, — սա արդեն նոր բան է և մարդու թաիլքի առաջին փորձը, որը նույնպես ծնվել է նախորդ երազներից: Բայց այստեղ դիտենք մի հարց, — արդյո՞ք Խիկարը որևէ առնչություն չի կարող ունենալ Խիկարի հետ, թե՝ անունների պատահական զուգահեռնություն է:

Խիստ տարածված են և մյուս խնդիրները. ավագից պարան մանել, այնպիսի բան ասել, որ ոչ ոք չի իմացել: Հիշենք, որ այս վերցին թեմայի վրա է կառուցել իր հերթաթներից մեկը Հ. Թումանյանը և այլն: Սրանք թեմաներ են, որոնք անվերջ հետաքրքել են մարդկանց:

Զրուցի երրորդ մասը նորից խրատներ են, բայց առակավոր բնույթի, ուղղակի առակներ, որոնք ես, պարզ է, կարող էին ե՛ բնդարձակվել ե՛ պոկվել Խիկարի զրուցից ու ստանալ անկախ բնույթ: Աղվեսագրում ու Վարդանի ժողովածուների մեջ ցրված են այդ առակներից, բայց, պետք է նկատել, ոչ այնքան շատ: Այդ նրանից է, որ Խիկարի առակավոր խրատները պտտվում են մի հարցի շուրջը, ունեն պատճի բնույթ, թեմատիկ մեծ կապ իրար հետ, ուստի որոշելք դժվար է:

Խիկարի զրուցը հրապուրի է եղել անցած դարերի համար ոչ միայն այն պատճառով, որ արտահայտվել է գեղարվեստական ձկուն ձեւերի մեջ, — այլև որ արտահայտել է կարևոր մի թեմա՝ երախտագիտությունը և մի գաղափար՝ ուղղագիծ ժողովական խնդիրը:

Խիկարի զրուցը չնայած իր թարգմանական բնույթին դարձել է, ինչպես շատ ժողովուրդների, այնպես էլ մեր զրականության անկապտելի մասը, և նրա ուսումնասիրությունը խիստ կարևոր է ոչ միայն միջազգային, այլև բուն հայ զրականության պատմության համար:

Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

### МЕСТО И РОЛЬ АХИКАРА В АРМЯНСКОЙ СЛОВЕСНОСТИ

#### Р е з у м е

«Наставления и премудрость Ахикара» («Повесть об Акире премудром») связана с тремя великими памятниками: Библией, Эзопом и «Тысяча и одной ночью». Сохранившись на разных языках,—ассирийском, арабском, греческом, армянском, славянском, эфиопском и т. д.—«Наставления» стали неразрывной частью литературы этих народов.

Повесть Ахикара получила в армянской литературе широкое распространение и признание. Под именем Ахикара слагались повести, пословицы, наиздания, притчи, забавные истории и т. д., носящие чисто национальный характер. В древнеармянской литературе повесть и имя Ахикара пережили интересные этапы развития. В древнейший период Ахикар признавался чужеземным автором, впоследствии имя Ахикар стало нарицательным и употреблялось в смысле «мудрец», как личное имя, и, наконец, в XVI—XVII веках вновь приобрело свой первоначальный смысл. В статье показаны и объяснены эти изменения.

Богаты и разнообразны в древнеармянской литературе редакции и варианты повести Ахикара. До настоящего времени науке были известны две армянские редакции, а повесть имеет шесть редакций, которые значительно расходятся между собой. Изучение этих вариантов может дать значительный материал для разрешения важных вопросов, связанных с первоначальным текстом повести Ахикара.

A. A. MARTIROSSIAN

### DE L'IMPORTANCE D'AKHIKAR DANS LA LITTERATURE ARMENIENNE

La légende d'Akhikar, œuvre marquante de la littérature mondiale, se rattache à trois grands monuments littéraires: les Fables d'Esope, la Bible et les Contes des Mille et une nuits. Elle nous est parvenue en

assyrien, en arabe, en grec (partiellement), en arménien, en slavon, en éthiopien, etc. On ne saurait la détacher du patrimoine littéraire des peuples qui l'ont adoptée.

Cette légende fut largement répandue dans la littérature arménienne. Nombreuses sont les légendes, fables, sentences, anecdotes strictement nationales se prévalant du nom d'Akhikar.

La légende et le nom d'Akhikar subirent en Arménie et dans la littérature arménienne une évolution particulière. A l'origine, Akhikar ne rappelait qu'un auteur étranger, il revêtit bientôt un caractère national, son nom prenant la valeur d'un nom commun devint synonyme de sage. Il servit aussi de nom propre et ce n'est qu'aux XVI<sup>e</sup>—XVII<sup>e</sup> siècles qu'on le rétablit dans sa valeur initiale. Cette évolution nous est ici présentée et commentée.

Les versions et les variantes arménianes du texte même de la légende d'Akhikar sont des plus riches et des plus nombreuses.

La littérature arménienne semblait ne posséder que deux variantes. Elles sont aujourd'hui au nombre de sept, très différentes les unes des autres. Leur étude contribuera à éclaircir certaines questions très importantes du point de vue de la recherche du texte original.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ՄԻՒԽԱՏՐԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԵՆՔԵՐ  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆԳԱՄ ՀԲՆ ԶԵՌԱԿՐԵՐԻ ԽՆՏՏԵՑՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ  
Ե Բ Ե Վ Ա Ն Խ Ա Ռ Ա Ն Ի  
№ 8 1967

### Լեզու ՇԱՀԻՆՅԱՆ

#### Ո՞ՐՆ Է ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՃԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ\*

Խորենացու և նրա «Հայոց պատմության» շուրջ ծավալված ավելի քան երկդարյա վեճը, որը փոթորկոտ չափերի հասավ անցյալ դարի երկրորդ կեսին, չնայած խաղաղ վախճանին, բացասական հետևանքներ ունեցավ: Խորենացին իշավ իր բազմադարյան սրբացված պատվանդանից, շրջագայեց Վ—IX դարերի վերջերը և միայն շնորհիվ Ֆ. Կոնդիրերի, Ստ. Մալխասյանցի, Մ. Արեգյանի ու Հ. Աճառյանի նորից վերադարձավ Վ դար՝ արդեն մասամբ կորցրած իր աշխատության գիտական արժեքը: Ինչո՞ւ.

Մեղմ ասած, Խորենացին իբր պատմություն էր «Հորինել», «առանց պատմականն ու առասպելականը իրարից զանազանելու», և «սխալաշատ», «Հակասություններով լի» ու «քմաստեղծ» ժամանակագրության հեղինակ էր: Կասկածի ենթարկելով Խորենացու «Հայոց պատմությունը», բանակերներից շատերը (հատկապես նրա աշառու քննադատները՝ Կարիեր, Խալաթյանց, Դաղբաշյան, Ակինյան և ուրիշներ) սկսեցին կասկածել նաև հեղինակի ազնվությանը և, ճիշտ չհասկանալով Խորենացուն, աշխատեցին ամենուր մեղադրել նրան՝ դիտումնավոր փոփոխություններ կատարելու և կեղծիրի մեջ: Այս էր բուն պատճառը, որ Խորենացու շուրջ ծավալված գիտական բանավեճը հիմնականում ընթացավ նրա ապրած ժամանակաշրջանի, մասամբ էլ Խորենացու անձնավորության իսկությունը բացահայտելու ուղղությամբ: Մեսսագաշտից Համարյա գուրս թողնելով նրա «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգի մեկնաբանման անշափ կարևոր հարցը: Այս առթիվ կատարված նախորդ սակավ փորձերն էլ (Վիստոն եղբայրների, Սեն-Մարտենի, Ք. Պատկանյանի, Ն. Աղոնցի, Ստ. Մալխասյանցի և ուրիշների), որոնք, ինչպես կտեսնենք, Խորենացուն առաջնորդել են Հակառակ Խորենացու, ոչ միայն ավարտվել են անհաջողությամբ և չեն լուծել նրա աշխատության ժամանակագրական հակասությունների հարցը, այլև իրենց հերթին հիմք են ծառայել, որ թե նրանք, ովքեր հակված էին մերժելու Խորենացուն, և թե նրանք, ովքեր փորձում էին հավատալ, հիմնականում երես զարձնեն Խորենացուց (Հետևարար Արշակունիների մասին տեղեկություններ թողած հայ բոլոր հեղինակներից): Սա է պատճառը նաև, որ Արշակունիների ժամանակաշրջանի պատմության և ժամանակագրության շատ հարցեր, որոնց նվիրված են Խորենացու աշ-

\* Մովսես Խորենացու «Պատմության» ժամանակագրական համակարգի մասին վերջերս հրատարակվեցին ուշադրավ աշխատություններ (Թ. Ավելալեկյան, Գ. Մարգոսյան): «Բանքերի» խմբագրությունը, Համոզված լինելով, որ մտքերի անկաշանդ փոխանակությամբ միայն համարվու է հասնել հարցերի ճշգրիտ լուծմանը, հրապարակում է ընկ. և. Շահնիյանի սույն հոգածը, ԽՄԲ.

խատության երկու զրբերը, չնայած մոտավորապես լուծված են համարվում, մնում են ոչ միայն հայ ժողովրդի պատմության, այլև համընդհանուր պատմագրության անբավարար լուսաբանված հարցերի թվում:

Չցանկանալով այստեղ հանգամանորեն անդրադառնալ Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրությանը նվիրված նախորդ ուսումնասիրություններին, նկատի ունենալով, որ մեր աշխատանքը շատ հարցերում տարբերվում է նրանցից, մասամբ էլ այդ ուսումնասիրություններում առաջ քաշված որոշ կարծիքներ ու ննթադրություններ շոշափելու են շարադրության ընթացքում, այսուհետեւ անհրաժեշտ ենք համարում հայտնել, որ մինչև այժմ Խորենացուն ներկայացված մեղագրանքների, նրա «Հայոց պատմության» պատմական դերի անտեսման և այդ աշխատությունում նկատվող ժամանակարական հակասությունների պատճառն իրականում ոչ թե Խորենացին էր, նրա «սխալաշատ ժամանակագրությունը» կամ այդ առթիվ սկզբնաղբյուրների քմահամ օգտագործումը նրա կողմից, ինչպես բազմիցս ուղղակի կամ անուղղակի ենթադրվել է, այլ Խորենացու ժամանակագրական վկայությունների սխալ մեկնարանումները, որոնք՝ դրսնորվել են՝ 1. Արշակունիների անների սխալ մեկնարանումները, որոնք՝ դրսնորվել են՝ 2. Արտավանի սպանության տարեթիվ, 3. Պարսից Արշակունիկախացման, 4. Վազարշակի թագավորության սկզբնատարփա, 5. Հայ Արշակունիների վախճանի, 6. Նրանց տեսողության, 7. Սասանյան հարստության հիմնադրման, ինչպես նաև հարակից ու համանման հարցերում:

Նախապես պետք է նկատել, որ այդ սխալներն էլ ունեն իրենց ծնող պատճառները:

Առաջին ու հիմնական պատճառն այն է, որ նախորդ համարյա բոլոր բանակրները, վերոհիշյալ հարցերը մեկնարանելիս, չնայած տեսականորեն առաջարկել են Խորենացուն հասկանալ Խորենացիով, գործնականում նրան առաջնորդել են գիտական լայն ճանաչում զտած մատենագիրների և անվանի պատմաբանների հետքերով: Փաստորեն Խորենացուն մեկնարանել են հակառակ Խորենացու:

Երկրորդ ու սխալ որոշելով Արշակունիների անկախացման սկզբնատարին, Արշակունիների ժամանակագրական արքայացուցակների վրա և հիմնականում նիշտ չեն որոշել այդ արքայացուցակներում տեղ գտած հետագա փոփոխությունների հարցը՝ որովհետեւ մեծ մասամբ անտեսել են Խորենացուն սկզբնաղբյուր ճանաշող հեղինակների վկայությունները:

Երրորդ սխալ որոշելով Արշակունիների անկախացման սկզբնատարին, որը Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ ու երրորդ գրքերի ժամանակագրության առաջին ու միակ ելակետն է, աշխատել են այլ նշանաձողեր փնտրել այդ համակարգում:

Չորրորդ ու հիշատակված հարցերը, որոնք անքակտելիորեն կապված են իրար և փոխադարձարար պայմանավորում են ու լրացնում միմյանց, մինչև այսօր ոչ մի ուսումնասիրողի կողմից համատեղ քննարկման նյութ չեն դարձել: Էլ չենք խոսում այն մասին, որ Խորենացու ավանդած ժամանակագրությունը, սակայ բացառությամբ, լուրջ ուսումնասիրության չի արժանացել: Այստեղ նկատի չունենք Դ. Սարգսյանի վերցերս լույս տեսած աշխատությունը, որն այդ ուղղությամբ կատարված առաջին ծավալուն ուսումնասիրությունն է (Դ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965):

Պետք է նկատել, սակայն, որ Սարգսյանի աշխատանքն էլ, չնայած որոշ ձիշտ եղբաշանգումների, որոնք վերաբերում են այս կամ այն գահակալի իշխանության տարեքանակների ձգրտմանը, ընդհանուր առումով հեռու է «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգի իրական պատկերը ներկայացնելուց: Սարգսյանի վերականգնած աղյուսակը քննություն չի բռնում Խորենացու համաժամանակագրական վկայություններով ու պատմա-ժամանակագրական տեղեկություններով, իսկ առանց այս պահանջները բավարարելու, չի կարող խոսք լինել այն մասին, թե վերականգնված է Խորենացու աշխատության ժամանակագրական համակարգը:

Խորենացու ժամանակագրության վերականգնման նախորդ փորձերից առանձնակի ուշադրության է արժանի թագեռու Ավղալբեկյանի աշխատանքը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 206—212): Չնայած այլ ելակետին (ոչ ըստ Խորենացու) և առանձին արքաների իշխանության տարեքանակների ոչ ձիշտ վերականգնմանը, նա կարողացել է մինչև Սասանյան ժամանակաշրջանի հարցերում համեն շոշափելի արդյունքի: Զեր բերած արդյունքներով, ինչպես կահսնենք, Ավղալբեկյանի վերականգնած աղյուսակն, աննշան շեղումներով, մոտ է մեր վերականգնած աղյուսակի համապատասխան հատվածին:

Այս հոդվածում մենք նպատակ ենք ունեցել անդրադառնալ վերնում թվարկված հարցերին և տեսնել, թե ինչպես են մեկնարանվել Խորենացու վկայությունները նախորդ ուսումնասիրություններում և ո՞րն է Խորենացու վերահիշյալ գրքերի ժամանակագրական համակարգը:

Նախրան բոն խնդրի լուծումը, անհրաժեշտ է անդրադառնալ հետեւալ առանցքային հարցերին:

1. Արդյո՞ք Խորենացին և նրան հետևող հայ հեղինակները Արշակունիների համար սահմանագծային տարեթվեր են ընդունել 250 (մ.թ.ա.) և 226 (մ.թ.) թվականները:

2. Հնարավո՞ր է նույնությամբ ընդունել մեզ հասած Խորենացու ժամանակագրական վկայությունները:

Այս հարցերի լուսաբանման համար, որոնց հետ օրգանապես կապված են ոչ միայն պարսից, այլև հայ Արշակունիների ժամանակագրության հարցերի ձիշտ լուսաբանումը և, հատկապես, Խորենացու ժամանակագրական համակարգի մեկնարանման գաղտնիքը, շատ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Խորենացու և հետագա հայ հեղինակների աշխատություններում, որոնց կաշխատենք անդրադառնալ ստորև:

Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» երկրորդ գրքի առաջին պիտու Արշակունիների սկզբնատարիվ վերաբերյալ գրում է:

«Ցեստ տիրելոյն ամենայն տիեզերաց Ազերանագրի Մակեղոնացույ, որդու Փիլիպպեայ և Ոլոմափիադայ, որ էր քսան և շորրորդ յԱքիդզայ, բազմաց տալուի դաէրութիւնն կտակաւ, զի ամեննեցուն իշխանութիւն՝ Մակեղոնացուց անուաննեցի՝ ինքն մեռանի:

Զենի որոյ թագավորեաց թարեկունի Սելմկիոս, զյուովից կորզելով դիշխանութիւն. ուստի և զՊարթիւս հնագանգեաց մեծաւ պատերազմաւ, և կոչեցաւ նիկանովը այնորիկ աղազաւ: Սորա տիրեալ ամս երեսուն և մի՛ թողու զթազաւութիւնն որգույ իրում Անտիոքայ, անուաննեցելոյն Սաւտէր, ամս ինն և

տասն: Զատ յաջորդէ Անտիոքոս, ասացեալն թեւոս, ամս տասն, և ի մետասներորդին ապստամբեն Պարքե ի ծառալութենէ Մակեդոնացոցն: Ուստի և թագաւորեաց Արշակ Քաջ...»<sup>1</sup>:

Նույն զրքի երկրորդ զլխում, այս վկայությունը ավելի որոշակի դարձնելու նպատակով, անմիջապես շարունակում է:

«Երպէս ասացա՞յ յետ վարսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ բազաւորէ ի վերայ Պարքեաց Արշակ բազ ի բաղարին, որ կոչի Բահղ Առաւոտին, յերկիրն Քուշանաց»<sup>2</sup>:

Համանման Խորենացուն, այս մինույն տեղեկությունները վերավկայում են Դրասխանակերտցին<sup>3</sup>, Ասողիկը<sup>4</sup>, Թումա Արծրունին<sup>5</sup>, Միհիթար Անեցին<sup>6</sup>, Վարդան Արևելցին<sup>7</sup> և շատ ուրիշներ:

Ինչպես Խորենացին, այնպես էլ Հիշատակված Հեղինակները Արշակունիների անկախացման սկզբնատարին որոշելու համար երկու հնարավորություն են ընձեռում: Թէ՛ մեկը՝ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից մինչև Պարթևների տնկախացումը, թէ՛ մյուսը՝ Սելևկոս Նիկատորի թագավորության առաջին տարվանից մինչև Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին, մինույն ժամանակաշրջանն են արձանագրում: Վաթսուն տարի Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից մինչև նրանց անկախացումը, վաթսուն տարի էլ Սելևկոս Նիկատորի թագավորության սկզբից մինչև Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին (Սելևկոս Նիկատոր՝ 31, Անտիոքոս Սոսեր՝ 19 և Անտիոքոս Թեոսի 10-ը տարին): Ելնելով այս որոշակի փաստերից, պետք է ընդունել, որ Հայ Հեղինակների համար երկու զեպքում էլ ելակետային տարեթիվ է Հանդիսացել Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականը (323 թ. մ.թ.ա.), ուրեմն նրանց վկայությունները Արշակունիների անկախացման տարեթիվ են մատնանշում 263 թվականը (մ.թ.ա.): Զնայած այսքան պարզ վկայություններին, բանասերներից շատերը (Սեն-Մարտեն, Մկրտիչ Էմին, Քերովք Պատկանյան և ուրիշներ) փորձել են հակառակություն տեսնել Խորենացու վկայություններում և աշխատել են այլ ձևով մեկնարանել: Պատճառը Անտիոքոս Թեոսի 11-րդ տարվա որոշման հարցն էր, որը Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությամբ», Հակառակ Խորենացու, մատնանշում էր 250 թվականը (մ.թ.ա.):

Այսպես, Եվսեբիոսը իր հանրահայտ «Ժամանակագրության» Երկրորդ մասում Արշակունիների անկախացման վերաբերյալ հայտնում է.

«Պարթեք ի Մակեդոնացոց ապստամբեցին. և ի նոցանէ թագաւորեաց Արշակ. ուստի և Արշակունիք»: Եվսեբիոսի այս վկայությունը նրա ժամանական մասում էր 250 թվականը (մ.թ.ա.):

<sup>1</sup> «Մոլոսի Խորենացու Պատմոթիմ Հայոց», Տիգիս, 1913, էջ 102 (այսուհետև՝ Խորենացի և այլ աշխատանքների մասին հայությունը):

<sup>2</sup> Անդ, էջ 102—103:

<sup>3</sup> Հռվ գան ննես գր աս ի ան ակ եր տց ի, Պատմոթիմ Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 23—24 (այսուհետև՝ գր աս ի ան ակ եր տց ի):

<sup>4</sup> Ա տ հ ի ա ն ո ս Ա ս ո դ ի կ, Պատմոթիմ տիեզերական, Պետքրուրդ, 1885, էջ 29, տե՛ս նաև էջ 32 (այսուհետև՝ Ա ս ո դ ի կ):

<sup>5</sup> Թ ո վ մ ա Ա բ ը թ ո ւ ն ի, Պատմոթիմ տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1912, էջ 82 (այսուհետև՝ թ. Ա բ ը թ ո ւ ն ի):

<sup>6</sup> Մ ի ի թ ա ր Ա ն ե ց ի, Պատմոթիմ, Պետքրուրդ, 1879, էջ 8, տե՛ս նաև էջ 20 (այսուհետև՝ Մ ի ի թ ա ր Ա ն ե ց ի):

<sup>7</sup> Թ ա ր դ ա ն թ ա ր ձ ր ա ր ե ր դ ց ի, Պատմոթիմ տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 43 (այսուհետև՝ թ. Թ ա ր ձ ր ա ր ե ր դ ց ի):

Կազմական աղյուսակում Հիշատակված է Հռոմի Հիմնադրման Շ(500)-ից ՇԺ(510)-ի տասնամյակում, Արքահամի ծննդից ՌԶԿԶ(1766) տարի անց, ձևի(132-րդ) օլիմպիադի Յ-րդ<sup>8</sup>, Պաղումեսոս Ֆիլադելֆուսի թագավորության լի(34-րդ), Մակեդոնական գահակալ Անտիոքոնոս Գոնատասի թի(29-րդ) և Սելևկյան գահակալ Անտիոքոս Թեոսի ԺԱ(11-րդ) տարիներին<sup>9</sup>: Ալմաել Հիշատակված փաստերից մեղ Հետաքրքրողը Անտիոքոս Թեոսի թագավորության 11-րդ տարին է, չնայած բոլորն էլ՝ թե 132-րդ Օլիմպիադի Յ-րդ տարին (776—526=250), թե Արքահամի 1766 տարին (2016<sup>10</sup> (բայտ յոթանասնից) — 1766=250) և թե մյուսները մատնացուց են անում միննույն 250 թվականը (մ.թ.ա.):

Հավատալով Եվսեబիոսին և Համոզված լինելով, որ Խորենացին անպայման հետեւել է նրան, նախորդ ուսումնասիրողները այն տեսակետն են զարգացրել, թե Խորենացին նույնպես, Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին Հիշատակելիս, նկատի է ունեցել 250 թվականը (մ.թ.ա.), որ Խորենացին էլ, ինչպես Եվսեబիոսը Սելևկոսի թագավորության սկիզբը ընդունել է ոչ թե Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից, այլ սելևկյան տոմարի հաստատման տարեթվից (311 թ. մ.թ.ա.)<sup>10</sup>: Եթե Խորենացուն Հարկադրաբար թելադրված այս պահանջով մոտավորապես լուծվում էր նրա ու Եվսեబիոսի միջև նկատվող Հակասությունը և Խորենացին Հարմարեցվում էր Եվսեబիոսին, ստեղծվում էր մի նոր ներքին Հակասություն Խորենացու հիշատակած Երկու վկայությունների միջև, քանի որ այս մոտեցմամբ Խորենացու մոտ մի դեպքում ստացվում էր 263 թվականը, իսկ մյուս դեպքում՝ 250 կամ 251-ը (մ.թ.ա.): Խորենացու մոտ Հարկադրաբար ստեղծված այս Հակասության լուծման փորձ կատարեց ֆրանսիացի Հայազետ Սեն-Մարտենը, որի հնթաղորությամբ Խորենացու «Յետ վաթսուն ամի մահուանն Ալեքսանդրի» միտքը չպետք էր հասկանալ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից անմիջապես հետո, այլ նրա մահից 12 տարի անց, այն է 312 թվականից (մ.թ.ա.)<sup>11</sup>: Սեն-Մարտենի այս առաջարկը ոչ միայն ընդունելի համարվեց և լույսայն ընդունվում է առ այսօր, այլև եղան բանասերներ էլ, որոնք ընդունելով այն, աշխատեցին ավելի հիմնավորել:

Մկրտիչ էմին Ասողիկի «Տիեզերական պատմության» 1864 թ. ուսուերեն Հրատարակության 8-րդ հավելվածում առաջարկում էր Խորենացու Ալեքսանդրի մասին վկայությունը Հասկանալ ոչ թե հին աշխարհի հոչակավոր զորավար Ալեքսանդր Մակեդոնացուն, այլ նրա մանկահասակ որդի Ալեքսանդրին, որի մահը դրվում էր 311 թվականին (մ.թ.ա.):

<sup>8</sup> Եվսեబիոսը մեկ այլ առիթով Արշակունիների անկախացման տարեթիվը դրև է 133-րդ օլիմպիադին (248—244 թթ. մ.թ.ա.), առանց որոշակի տարին մատնանշելու (տե՛ս Եվսեբիոսի մասին վկայությունը Հասկանալ ոչ թե հին աշխարհի հոչակավոր զորավար Ալեքսանդր Մակեդոնացուն, այս առաջարկը ոչ միայն ընդունելի համարվեց և լույսայն ընդունվում է առ այսօր, այլև եղան բանասերներ էլ, որոնք ընդունելով այն, աշխատեցին ավելի հիմնավորել:

<sup>9</sup> Եվսեբիոսը մեկ առիթով պատմութիւնը պատմութիւն է առաջարկում պատման տարեթիվին Անտիոքոսի մահից հետո (տե՛ս Եվսեբիոսի մասին վկայությունը Հասկանալ ոչ թե հին աշխարհի հոչակավոր զորավար Ալեքսանդր Մակեդոնացուն, այս առաջարկը ոչ միայն ընդունելի համարվեց և լույսայն ընդունվում է առ այսօր, այլև եղան բանասերներ էլ, որոնք ընդունելով այն, աշխատեցին ավելի հիմնավորել):

<sup>10</sup> Ինչպես այս, այնպես էլ մնացած բոլոր դեպքերում Սելևկյան տոմարի հիմնադրման տարեթիվ ենք ընդունելու 311-ը (մ.թ.ա.), նկատի ունենալով, որ Հեղինակների մեջ մասը և Հատկապես, Եվ. Կնարացին առաջնորդի հետ ավելի թվականուվ:

<sup>11</sup> Տե՛ս Իстория Армении М. Хоренского, Москва, 1858, прилож. 137, стр. 279. Դաեւ Ա ս ո դ ի կ, էջ 313—314, ծան. 39:

Քերովքի Պատկանյանը, Համակարծիք լինելով Սեն-Մարտենին և այլոց, միաժամանակ ենթադրում էր, որ Խորենացին թերեւ Ալեքսանդր Մակեդոնացուն չի էլ ճանաւել<sup>12</sup>:

Այս ենթադրությունները, որոնց բուն նպատակը, ինչպես երկում է, Խորենացուն ըստ ամենայնի Եվսեբիոսի հետ հաշտեցնելն էր, փաստական տվյալներով բոլորովին չհիմնավորված սոսկ կռահումներ էին:

Համոզվելու համար անհրաժեշտ է վերադառնալ Սեն-Մարտենի ենթադրությանը և պարզել, հավանակա՞ն է արդյոք, որ Խորենացին գրեր «Յետ վաթսուն ամի մահուանն Ալեքսանդրի» և այսքան բացահայտ վկայությամբ Համականար ոչ թե Մակեդոնացու մահվանից անմիջապես հետո, այլ նկատի ունենար ինչ-որ 12 տարի էլ, նոր ապա 60 տարի: Մեր կարծիքով այս ենթադրությունը հեռու է հավանական լինելուց: Եթե Խորենացին հիշյալ 60 տարվանից զատ նկատի ունենար ինչ-որ 12 տարի էլ, բոլորովին անհրաժեշտություն չկար, որ նա դիմեր այնպիսի հանելուկային հաշվի, ինչպիսին առաջարկվում է նրան այս ենթադրությամբ: Այլ, փոխարին գրելու «Յետ վաթսուն ամի մահուանն Ալեքսանդրի» պարզապես կգրեր «Յետ եթանասուն և երկու ամի մահուանն Ալեքսանդրի», որն ավելի հասկանալի կդառնար, մի բան, որ Խորենացու բուն նպատակն էր: Մյուս կողմից, եթե Խորենացին նկատի չունենար Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականը, այլ ցանկանար Արշակունիների անկախացման տարեթիվը բացատրել նրա մահվանից 12 տարի հետո կատարված որեւէ իրադարձությամբ, չեր հիշատակելու Ալեքսանդր Մակեդոնացուն և ոչ էլ մեր ուշադրությունը հիրավիրեր նրա մահվան թվականի վրա: Առավել անհավանականը Մկրտիչ Էմինի ենթադրությունն է: Իրեւ այս ենթադրությունը հերքող ապացույց, բավական է թեկուզ կրկին ուշադրություն բենեն Խորենացու համապատասխան վկայության վրա և տեսնել, թե ո՞ր Ալեքսանդրին է վերաբերում նրա խոսքը:

«Յետ տիրելոյն ամենայն տիեզերաց Աղեքսանդրի Մակեդոնացույ, որդույ Փիլիպպայ և Ուլումպիադայ, որ էր քան և շորորդ յԱլիդայ, բազմաց տալով զաւըարթիմն կտակա, զի ամենեցուն իշխանութիւն՝ Մակեդոնացուն անուանեսցի՝ ինքն մեռանի»<sup>13</sup>:

Այս պերճախոս վկայություններից հետո ոչ միայն անհավանական, այլև անհնար է նման ենթադրության հանգելը: Ինչպես տեսնում ենք, Խորենացին իր հիշատակած Ալեքսանդրին այնպիսի տարբերանշող հատկանիշներ է վերագրել՝ տիեզերակալ, Փիլիպպոսի և Օլիմպիադայի որդի, 24-րդն Արթիլիսից, որոնք հնարավոր չի վերագրել ոչ Ալեքսանդրի մանկահասակ որդուն և ոչ էլ երբեւ գոյություն ունեցած մի այլ Ալեքսանդրի:

Այստեղ մեր նպատակը Արշակունիների անկախացման վերաբերյալ Խորենացու վկայությունների առթիվ եղած բոլոր ենթադրությունների քննարկումը չեր, այլ ցանկացանք անդրադառնալ նրանցից ակնառուներին, հատկապես Սեն-Մարտենինը, որն ուղեցույց է ծառայել հետագա բազմաթիվ ուսումնասիրությունների, և ցույց տալ, թե որքան կամայական է եղել Խորենացու այդքան արժեքավոր և ելակետային վկայությունների մենարանումը: Բավարարվենք առեւ, որ հիշյալ գիտնականներից զատ այս տեսակետը պաշտպանել են Խո-

<sup>12</sup> Տե՛ս Կ. Պատկանօվ, Մատերիալ դա արմանական շաբաթական համակարգը, 1884, շտ. 51.

<sup>13</sup> Խորենացի, էջ 102:

թենացու ժամանակագրությանն անդրադարձած համարյա բոլոր ուսումնասիրողները (Հ. Տաշյան, Ն. Աղոնց, Ստ. Մալխասյանց, Թ. Ավդալըեկյան, Գ. Սարգսյան և ուրիշներ): Այստեղ բացառություն են կազմում Ա. Գարսդյանն ու Գր. Խալաթյանցը, որոնք հարևանցիորեն, ակնարկել են լոկ, որ Խորենացու հիշատակած 60 տարին պետք է հաշվել Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականից (323 թ. մ.թ.ա.):

Այդ տեսակետը պաշտպանող գիտնականներն անգամ չեն նկատել, որ Հակասությունն են ստեղծում իրենց ենթադրություններում: Ինչպես կարելի է մի կազմից Խորենացուն Եվսեբիոսին գիտակ ու հետևող համարել, իսկ մյուս կողմից չել պնդել, թե նա շփոթել է Ալեքսանդր Մակեդոնացուն կամ լավ չի իմացել նրա մահվան թվականը: Զէ՞ որ Եվսեբիոսը, որի հետ այնքան չերմեսանդունությունը կապվել է Խորենացու «Ճայոց պատմության» ժամանակագրական համակարգի բախտը, բազմից հիշատակել է Ալեքսանդր Մակեդոնացուն, չմոռանալով նաև մի շարք անգամ մատնանշել նրա մահվան թվականը:

Մեր կարծիքով Խորենացու և Եվսեբիոսի միջև եղած ժամանակագրական վերոհիշյալ հակասությունը փնտրվելու է ոչ թե Խորենացու սխալով, այլ այն բանով, թե նրանց վկայությունները ո՞ր թվականն են մատնանշել իրեւ Սելեկոս Նիկատորի թագավորության սկզբնատարի՝ 311-ը, ինչպես Եվսեբիոսը և իրեն հետևող հեղինակները (Միքայել Ասորի, Սամվել Անեցի և ուրիշներ, որոնց վկայություններին այստեղ շանդրագրածանք), թե՝ 323-ը, ինչպես Խորենացին և մյուս հայ հեղինակները: Այս է բուն պատճառը, որ Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին Եվսեբիոսի մոտ համբնկում է 250 թվականին, իսկ Խորենացու մոտ 263-ին (մ.թ.ա.): Հարցի այսօրինակ մոտեցումը երկուստեք արգարացվում է պատմականորեն: Իրավացի է Եվսեբիոսը, որ Սելեկոյան հարցության հիմնադրման թվական է համարել 311-ը (մ.թ.ա.), քանի որ այս թվականին մահացավ Ալեքսանդր փոքրը, հետևաբար այս թվականից Սելեկոսը իրավունք կունենար պաշտոնապես թագավոր հռչակվելու, իրավացի է նաև Խորենացին, որովհետ Սելեկոսը Ալեքսանդրի այն զորագարներից էր, որը նրա մահվանից անմիջապես հետո իշխանություն ստացավ Արեւելքում: Նկատի ունենալով, որ այս փաստերը ապացուցված են նախորդ ուսումնասիրություններում, բավարարվենք հետևյալով: Անգամ եղ. Կեսարացին, որը մի քանի անգամ Սելեկոսի թագավորության սկիզբը գրել է Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 12 տարի հետո, չի խուսափել նրա թագավորության սկիզբը համարել նաև 114-րդ օլիմպիադի առաջին տարին (776—453—323 թ. մ.թ.ա.), որը, ինչպես երեսում է, Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականն է: Խոսելով Մակեդոնացու տերության բաժանման մասին և անդրադառնալով Սելեկոյաններին, Եվսեբիոսը գրում է.

«Բայց կիդաստանի հանգեց թրակացոց կողմանցն իհւսիմաքոս թագարեցնոց կողմանցն և Ասորոց Սեղեկոսը և ունէին երկոքեան ձ որդի շուբատաններուի ողոմափաղին յառաջնում ամին»<sup>14</sup>:

Անառարկելի է, որ Սելեկոյան հարաբության հիմնադրման թվականը 311-ն է, ասկայն բացառված չեր նաև այն, որ Սելեկոսը իր իշխանության տարիները, այն է Ալեքսանդրի մահվանից մինչև 311 թվականը, գումարեք իր թագավորության տարիներին հարաբության տարիներին: Հավանական է, որ այսպես էլ արձանագրված

<sup>14</sup> Եղ սեր ի բու կ ու կ ա ս պ ա ց ի, մասն Ա., էջ 344:

է եղել պատմական այն սկզբնազրյուրում, որից (ուղակի թե անուղղակի) նյութեր են քաղել Եվսեբիոսը և Խորենացին: Սակայն քննարկվող հարցի համար կարեորն այն չի, թե Սելևկոսի թագավորության սկզբնատարվա համար ո՞ր թվականն է ընդունելին, կարեորն այն է, որ Խորենացին նկատի է ունեցել Մակեդոնացու մահվան տարեթիվը և այս մեկնակետով կառուցել Արշակունիների ժամանակագրական ցուցակները: Եթե անգամ համոզված լինեինք, որ Խորենացին այս հարցում սխալվել է, դարձյալ իրավունք չէինք ունենա այս մեկնակետով կառուցված նրա ժամանակագրությունը բացատրել մեկ ուրիշ հեղինակի, ներկա դեպքում Եվսեբիոսի վկայություններով: Ինչպես կտեսնենք, ժամանակը էլ այս բանի արգասիքն են Խորենացու ժամանակագրական թվացող հակասությունները:

Այսուհենդեռձ, Խորենացին էլ Սելևկոսի թագավորության սկզբնատարվա հարցում ցուցաբերել է յուրահատուկ մոտեցում: Ուսումնասիրություններից էրեսմ է, որ Խորենացին Սելևկոսի թագավորության սկզբը համարել է ոչ թե 323 թվականը (մ.թ.), այլ՝ 322-ը: Այս ենթադրության համար հիմք են ծառայում Սերեսոսի աշխատությամբ մեղ հասած երկրորդ գլխի հեղինակի<sup>15</sup> վկայությունները: Արշակունիների սկզբնատարվա վերաբերյալ հիշյալ հեղինակը գրում է.

«Եւ եղէ յետ մահուանն Աղեքսանդրու կայսեր Մակեդոնացւոց ժառայեցին Պարթեք Մակեդոնացւոց ամս ԿԱ(61): Քանզի թագաւորեաց Սեղակիոս Նիանովը ի Բարելոն ամս ԼԲ(38)<sup>16</sup>: Անտիոքոս Սոտեր՝ ամս ԺԹ(19): Անտիոքոս Քէոս՝ ամս Ժ(10):

Եւ յամի մետասաներորդի Անտիոքայ արքայի ապստամբեալ ի բաց կացին Պարթեք ի ծառայութենէ Մակեդոնացւոց»<sup>17</sup>:

Անանուն Ա.-ի այս վկայությունները հիմնականում համանման են Խորենացուն: Ի բաց առյալ ընդհանուր համանմանությունները, առաջին տարբերությունը, որը նկատվում է նրանց միջև, այն է, որ Խորենացու մոտ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից մինչև Արշակունիների անկախացումը հաշված է 60 տարվա ժամանակաշրջան, իսկ Անանունի մոտ՝ 61 տարվա: Երկրորդ տարբերությունը՝ Խորենացու մոտ Սելևկոս Նիկատորին տրված է 31-ամյա թագավորություն: Անանունի մոտ՝ 32: Ինչպես երեսմ է, տարբերությունն այսուել մեծ չի, այն դրսելորվել է ընդամենը մեկ տարվա շուրջ, որին կարելի է թերմա ուշագրություն ըգարձնել: Սակայն այսքան աննկատ տարբերությունն էլ իրականում անշափ արժեքավոր է: Հանրահայտ է, որ Ալեքսանդր Մակեդոնացին մահացավ 323 թվականի վերջինին: Շատ հավանական է, որ Խորենացին շեհաշվել այս վերջին ամիսները, որոնք իրեն մեկ լրիվ տարի գումարված են: Եղել Սելևկոսի թագավորության տարբերանակին: Կրծատելով Սելևկոսի մեկ տարին (ամիսներ), անհրաժեշտություն է առաջացել նույնքանով էլ կրծատել

<sup>15</sup> Այս հեղինակին այսուհետեւ կոչելու ենք Անանուն Ա, նույն՝ Սերեսոսի աշխատությամբ մեջ հասած երկրորդ գլխի հեղինակից զանազանելու նպատակով, որին կոչելու ենք Անանուն Բ:

<sup>16</sup> Այսուհեղ գրչի սխալ է: Նախապես եղել է «ՀԲ», և ոչ՝ «ԱՀ»: «Բ» տարը փոխարկվել է «ՀԲ»-ի: Իրեն ապացույց նկատի ունենք նույն հեղինակի վերոհիշյալ վկայության 1-ին մասը: Եթե հեղինակը 61 տարի է հաշվել Ալեքսանդրի մահվանից մինչև Պարթեների անկախացումը և նրա վկայության երկրորդ մասն էլ, ինչպես տեսնում ենք, բացահայտում է առաջինի, հետեւարը 61 տարի էլ պետք է լինի 2-րդ դեպքում՝ Սելևկոս Նիկատոր 32+Անտիոքոս Սոտեր 19+Անտիոքոս Քէոսի 10-ը=61:

<sup>17</sup> Ա երես ս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 7-8 (այսուհետեւ՝ Ա երես ս):

Ալեքսանդրի մահվանից մինչև Արշակունիներն ընկած ժամանակաշրջանի տևողությունը: Այս է բուն պատճառը, որ Անանունի մոտ Սելևկոսին արված է 32 տարվա թագավորության ժամանակաշրջան, որը մի շարք անգամ հաստատում է նաև Եվսեբիոսը<sup>18</sup>, իսկ Խորենացու մոտ՝ 31 տարվա: Միաժամանակ, Անանունի մոտ Ալեքսանդրից Արշակունիներն ընկած ժամանակաշրջանի տևողությունը 61 տարի է, իսկ Խորենացու մոտ՝ 60 տարի: Այս ենթադրությամբ, ինչպես տեսնում ենք, երկու հեղինակներն էլ Արշակունիների անկախացման տարեթիվը են մատնանշում 262 թվականը, միայն այն տարբերությամբ, որ Անանունը՝ Սելևկոսին 32 տարի տալով, հաշվել է 323 թվականից, իսկ Խորենացին՝ 31 տարի տալով, հաշվել է 322 թվականից: Մեր սույն ենթագրությունը հաստատվելու է նաև Խորենացու համաժամանակագրական վկայություններով: որոնց կանդրագառնանք հետագա շարադրանքի ընթացքում:

Խորենացու վկայություններով պարսից Արշակունիների վերջին տարին Արտավանի սպանության թվականը) ոչ թե 226-ն է (մ.թ.), որով մինչև այժմ ժործել են Խորենացուն առաջնորդել, ինչպես օրինակ՝ Մ. Զամշյան, Սեն-Մարտինը, Մկրտիչ Էմին, Ք. Պատկանյան և շատ ուրիշներ՝ համարյա բոլորը, այլ՝ 245-թվականը (մ.թ.):

Ապացուց է ծառայում այն, որ Խորենացին, նաև իրեն հետևող բոլոր հեղինակները, Արտավանի սպանությունը որոշակիորեն զնում են Փիլիպպոս Արարի կայսրության ժամանակաշրջանում, որը բավականաշափ հեռու է բանասերների կողմից Խորենացուն մատուցված արեթվից:

Խորենացին իր «Հայոց պատմության» երկրորդ գրքի 71-րդ գլխում, խոսելով Արտավանի սպանության և այս առթիվ հայոց Խոսրով թագավորի ձեռնարկած միջցառումների մասին, գրում է:

«Բայց յառաջազոյն իրեն լուաւ զաղմուկ շփոթին թագաւորն Հայոց Խոսրով, գիմեաց յօնականութիւն Արտաւանայ, եթէ հնար լիցի աճապարել ապրեցուցանել միայն զԱրտաւան. և միջամուխ եղեալ լԱսորեստան՝ լսէ զրօթ մահուան Արտաւանայ ... դառնայ յաշխարհս մեծաւ տրտմութեամբ և զկծանօթ: Եւ նոյն հետայն փոյթ ընդ փոյթ ազդ առնէ Փիլիպպոսի կայսեր Հոռվմացւոց, օգնականութիւն ի նմանէ խնդրելով»<sup>19</sup>:

Նույն գրքի հաջորդ գլխում շարունակում է:

«Ազմուկ խոռվութեան լեալ ի թագաւորութեանն Փիլիպպոսի՝ ոչ կարաց ի Հոռմայիցոց զնդացն պարապեցուցանել, առ ի զօրավիկն լինել Խոսրովայ: ԱԱ օգնէ նմա ի ձեռն գրոյ, հրամայելով սատարել նմա յամենայն կողմանց»<sup>20</sup>:

Խորենացու այս վկայություններից երևում է միայն, որ Արտավանի սպանությունը տեղի է ունեցել Փիլիպպոս կայսեր իշխանության ժամանակ, սակայն Փիլիպպոսի ո՞րերորդ տարում, որոշակի չի հիշատակված:

Այսուղի արդեն մեղ օգնության են գալիս նրան հետեւող մյուս հեղինակները՝ Պիտտանես, Ասողիկ, Մ. Անեցի, Ք. Բաղիշնեցի և ուրիշներ:

Ուխտանեսի մոտ կարդում ենք:

«...Զաս (Արտավանին — Լ. Շ.) սպանեալ Արտաւարի որդուց Սասանայ Ստահրացւոց՝ Երարձ զթագաւորութիւնն Պահպակաց յերկրուդ ամի բազաւությունը:

<sup>18</sup> Ե զ ս բ ի ո ս հ ե ս ա ր ա ց ի, մասն Ա, էջ 344, 357, մասն Բ, էջ 34, 226 և այլուր:

<sup>19</sup> Խ ո բ ե ն ա ց ի, էջ 207—208:

<sup>20</sup> Անդ, էջ 208:

ըուրիշանն Փիլիպպոսի կայսեր Հռովմայեցոց: Աստանօր գագարումն առնու թագաւորութիւնն Պարսից ի Պարթևաց՝ յազգէ Պահլաւկաց ...»<sup>21:</sup>

Այս նույնը հաստատում է Ասողիկը.

«Զաա (Արտավանին— Լ. Շ.) սպանեալ Ստահրացոյն Արտաշրի, որդուց Սասանյայ՝ երած զտէրութիւնն Պահլաւկաց, յերկորդ ամին Փիլիպպեայ քա- գատրին Հռոմայ»<sup>22:</sup>

Ասողիկը Սասանյան հարստության վախճանի առիթով նորից է անդրա- դառնում Փիլիպպոսին, այս անգամ հիշատակելով նրա երրորդ տարին՝ իր և Սասանյան Արտաշրի արքայի առաջին տարի<sup>23:</sup> Ասողիկի այս երկրորդ վկա- յությունը չպետք է թյուրիմացովիյան տեղիբ տա: Այս պարզապես արդյունք է հեղինակի հաշվումների՝ Փիլիպպոսի երկրորդ տարին Արտավանի սպանու- թյուն, երրորդը՝ Արտաշրի առաջին տարի: Կամ էլ «երկրորդ»-ը վեր է ածվել «երրորդ»-ի, սակայն ոչ հակառակը, քանի որ, ինչպես կտեսնենք հետագա շա- րադրանքում, Արտավանի սպանությունը 245 թվականից այս կողմ չպետք է տեղաշարժել:

Ելապես ուրեմն, եթե Խորենացու վկայությունները Արտավանի սպանու- թյան տարեթիվ վերաբերյալ ժամանակագրական բնդհանուր բնույթի տեղեկու- թյուններ էին հաղորդում՝ հիշատակելով Փիլիպպոսի իշխանության տարիները. ապա Ուխտանեսն ու Ասողիկը, ի լրումն Խորենացու, մատնացուց են անում Փիլիպպոսի կայսրության երկրորդ տարին:

Ինչպես հայտնի է, Փիլիպպոս Արքայի կայսրությունը, որը հիշատակված է այստեղ, օտար ազբյուրների վկայություններով ընդունված է հաշվել 244 թվա- կանից (մ.թ.)<sup>24:</sup> Մեզ համար հատկապես կարևոր այն է, որ Փիլիպպոսի կայս- րության համար մինույն թվականը ընդունում է նաև Խորենացին: Չնայած Խորենացին այս առթիվ բացահայտ տեղեկություն չի ավանդել, սակայն, ձիշտ լուծման դեպքում, այն բխում է նրա ժամանակագրական համակարգի ներքին էությունից, որը մասսամբ երևալու է հետագա շարադրանքում:

Ճգուտ 244 թվականի՝ իր և Փիլիպպոսի սկզբնատարի, համեմատաբար բացահայտ տեղեկություն է թողել Ասողիկը: Խոսելով Գվինի եկեղեցական ժո- ղովում հայոց տոմարի բնդունման մասին, ի թիվս համաժամանակագրական մի շարք տեղեկությունների, Ասողիկը հայտնում է.

«Եւ էր Յունաց թուականն ՅԴ(304)՝ յէ (7-րդ) ամէն Փիլիպպոսի կայսեր: Ժողովի ամենայն ժամանակն ի ծննդին Ֆրկչին մինչև ցժողովն Դունայ և ցթուականն Հայոց ամք ՇԾԳ(553), և ի լուսաւորութիւնէ սրբոյն Գրիգորի, որ է սկիզբն աստուածածանօթեան աշխարհին Հայոց՝ ամք ՄԾԲ(252)»<sup>25:</sup>

Ասողիկի համաժամանակագրական այս վկայություններից երևում է հետեւյլը:

21 Ու իս տանես, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 69 (այսուհետեւ Ու իս տանես):

22 Ասողիկ, էջ 31:

23 Անդ, էջ 117:

24 Տե՛ս Զայջան, Պատմութիւն Հայոց, Հատ. Գ, Վենետիկ, 1786, «Ժամանակագրական աղիւսակ», էջ 48: Հմմտ. Գարագաջան, Քննական պատմութիւն Հայոց, մասն. Բ, Թիֆլիս, 1895, էջ 85, նաև՝ Մանագաջան, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, Հատ. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 82:

25 Ասողիկ, էջ 83:

ա) Եթե մինչև հունաց ՅՈՐ թվականը, որը հաշված է Փիլիպպոսի 7-րդից, հավասար է 553 տարվա, ապա նրա 7-րդ տարին լինելու է 250 թվականը (553—303):

բ) Եթե 250-ը Փիլիպպոսի 7-րդ տարին է<sup>26</sup>, հետևաբար Ասողիկը նրա 1-ին տարին համարել է 244-ը՝ (250—6):

Իսկ, թե ինչո՞ւ հունաց թվականը Ասողիկը հաշվել է Փիլիպպոսի 7-րդից, մոխարեն 5-րդ տարվանից հաշվելու, պետք է բացատրել այն բանով, որ Ասո- ղիկը (ավելի ձիշտ՝ նրա ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրի հեղինակը) Հռոմի հիմնադրման հարցում հետևել է Կատոնյան ժամանակագրության (751 թ. մ.թ.ա.):

Գիտենալով Փիլիպպոսի կայսրության առաջին տարին, դժվար չի ենթա- դրել, որ վերոհիշյալ հայ հեղինակները Արտավանի սպանության թվական են ընդունել 245-ը: Այս առթիվ կարելի է վկայակուլուն նաև Սամվել Անեցու տեղե- կությունը, որով Արտավանի սպանությունը դրված է 244 թվականին<sup>27:</sup> Սա- կայն նկատի ունենալով, որ Անեցին իր ժամանակագրական հաշվումները խարսինել է Խորենացու փոփոխված ձեռագրերի վրա և պարբերաբար 5 տարվա- տեղաշարժ է նկատվում գեղարք առաջ, չենք կամենում առաջնորդվել նրա հա- զորդած տարեթվերով:

Խորենացու վրա հենվելով, Ստ. Մալխասյանը Արտավանի սպանությունը դնում է Փիլիպպոսի ժամանակաշրջանում (տե՛ս Ասողիկի «Տիեզերական պատ- մություն»), 1885 թ. 39-րդ ծանոթություն) և իրավացիորեն զարմանում «... թէ ուստի առնու Մ. Էմին և վկայէ, թէ Մ. Խորենացին զվահման տէրութեանն Արշակունաց Պարսից զնէ յամի 226»:

Սակայն այս չի խանգարել հարգարժան գիտնականին, որ, Խորենացու ժամանակագրության մի շարք հարցեր մեկնարանելիս, ինքն էլ առաջնորդվե- համբողջանուր ճանաշում դարձ 226 թվականով:

Արտավանի սպանության այս թվականը՝ 245, ապացուցվում է նաև Ար- տավանից Տրդատ Մեծի թագավորության առաջին տարին ընկած ժամանակա- շրջանին վերաբերյալ տեղեկություններով, որոնք Խորենացու և իր հետևող հեղինակների մոտ որոշակիորեն բաժանված են երկու ժամանակահատվածի՝ մինչև Խոսրովի սպանություն և Խոսրովի սպանությունից մինչև Տրդատի տա- րածություն տարին: Առաջին ժամանակահատվածի վերաբերյալ վկայությունների ու միայն Խորենացին, նրան էլ հետևելով նաև հետագա հեղինակները, այլև Ազաթանգեղոսը, որից օգտվել է ինքը Խորենացին: Համաձայն այդ վկայությունների առաջին ժամանակահատվածի տևողությունը 12 կամ 14 տարի է: 12 տարի՝ ըստ Ազաթանգեղոսի, 14 տարի՝ (որն առավել հավանական է)՝ ըստ Խորենացու և հետագա հեղինակների:

26 Ասողիկի վկայությունը Փիլիպպոսի 7-րդ տարվա ժամանակագրությունը: Նկատի նկատի ունենալով, ապա Ասողիկից զատ մի շարք հեղինակներ, այդ թվում և նվազագույն ապահովագրությունը կատարության ժամանակաշրջան:

27 Սամվել Անեցու մոտ այս վկայությունը ենթարկվել է փոփոխության: Նախապես եղած ՄԾԳ(244)-ն փոխվել է ՄԾԲ(242)-ի: Ասպացուց է այն, որ Արտավանի թագավորության սկիզբը, Անեցին դրել է ՄԾԳ(213) թվից, նրան տալով 31 տարվա ժամանակաշրջան (Տե՛ս Մամուռ Անեցի էջ 60):

Ազաթանգեղոսի վկայությամբ, Արտավանի սպանությունից հետո՝ առաջին տարում, հայոց Խորով արքան Սասանյան Արտաշից վրեժ խնդրել չի կարողացել: Սակայն «Արդ՝ ի միւս ևս ի գլուխ տարւոյն,— գրում է Ազաթանգեղոսը,— սկսանէր Խորով Թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել և ... ասպատակ դնել ի կողման Պարսից, արշուել ի կողման Սասրեստանի, մինչեւ ի դրունս Տիբրոնի»<sup>28</sup>:

Ապա՝ «Եւ ամս մետասան ստէպ-ստէպ զայս օրինակ աւար առեալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբն և ընդ իշխանութեամբն էր»<sup>29</sup>:

Այս բոլորից հետո Սասանյան Արտաշիրը զանազան խոստումներով կաշառում է Արշակունի Անակ իշխանին և սպանել տալիս Խորովին, ըստ Ազաթանգեղոսի, մյուս տարվա գարնանը<sup>30</sup>:

Ինչպես երեսում է, այս վկայություններով Խորովի սպանությունը տեղի է ունեցել Արտավանի սպանությունից 12 տարի անց՝ 13-րդ տարվա գարնանը:

Հենվելով Ազաթանգեղոսի վերոհիշյալ տեղեկությունների վրա, ինչպես ինքն է վկայում, ձեռքի տակ ունենալով նաև այլ սկզբնազբյուրներ, իր աշխատության շրջադարձում է 67—75, նույն գեղաքերի մասին ավելի հանգամանորեն պատմում է Խորենացին: Միակ տարբերությունը, որն այս առթիվ նկատվում է երկու հեղինակների միջև, այն է, որ Խորենացին Խորովի սպանությունը դրել է ոչ թե Անակի Հայաստան գալու առաջին տարում, այլ՝ երրորդ տարում:

«Եւ յետ անցանելոյ երկուց ամաց գալստեանն Անակայ ի Հայս,— գրում է Խորենացին,— յերբորդումն սպանանէ զԽորով...»<sup>31</sup>:

Խորենացուն նույն ձեռվ վերավկայում են Հայ հեղինակներից շատերը՝ Դրասիանակերտցի<sup>32</sup>, Ուստանես<sup>33</sup>, Ասողիկ<sup>34</sup> և ուրիշներ:

Այս վկայություններով արդեն Խորովի սպանությունը դրվելու է ոչ թե Արտավանից հետո 13-րդին, այլ 15-րդին, հետևաբար 259 թվականին, քանի որ նույն հեղինակների նախորդ տեղեկություններով Արտավանի մահվան թվական ընդունվեց 245-ը (մ.թ.):

Հօգուտ այս թվականին Խորովի սպանության, վերջնական ապացուց պետք է համարել Խորենացու հեղեկությունը: Վկայակոչելով Կապադովիլիայի Փերմիլիանոս Եպիսկոպոսին, նա գրում է:

«Նոյն այր ասէ, եթէ յետ սուսերահարն լինելոյ Խորովու, միաբանեալ նախարարք Հայոց՝ ածեն իւրեանց յօդնականութիւն զդօրու Յունաց որ ի Փոփուգիայ՝ Պարսից ընդդիմանալ և պահել զաշխարհա: Եւ իսկոյն ազգեցին Վաղերիանոսի կայսեր: Բայց վասն զի Գունդք (իմա՞ Գոթք) անցեալ ընդ Դանուր զետ զրացում գաւառու զերի վարեցին, և զի իշաղադայ կղզիս աւար առին՝ վասն»

28 Աղաթանգեղոսի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 21—22 (այսուհետև՝ Աղաթանգեղոսի պատմութիւն):

29 Անդ, էջ 25:

30 Անդ, էջ 25—28:

31 Եռոք են ացի, էջ 212:

32 Դրասիանակերտցի, էջ 38:

33 Ուստանես:

34 Ասողիկ, էջ 52:

որոյ ոչ ժամանէ մերոյ աշխարհիս թեարկել Վաղերիանոս, նա և ոչ յերկարէ զիեանսն...»<sup>35</sup>:

Նույն գեղաքերը վերապատում են թ. Արծրունին<sup>36</sup> և ուրիշներ, իսկ Ուստանեսը հատկապես մատնանշում է.

«Բայց Վաղերիանոսի կայսեր ոչ ժամանեալ ի շփոթմանէ իւրմէ օգնել մերոյ աշխարհիս, այլի ի մօտոյ վճարէ զիեանս իւր...»<sup>37</sup>:

Եվսեբիոս Կեսարացին 259-րդ օհմպիադի երկրորդ տարվա տակ, որը 258 թվականն է, գրում է.

«Վաղերիանոս յարոց հալածանս քրիստոնէից. և առժամայն ծառայութիւն կրեաց ի բարբարոսաց»:

Նույն օհմպիադի երրորդին (259 թ.) ավելի որոշակի հայտնում է.

«Ի Վաղերիանոսի գերի ի Պարս երթալոյ՝ Դաղիանոս մերում ոճոյս արար դիրութիւն»<sup>38</sup>:

Նկատի չունենալով պատմական բնույթի հակասությունները վկայակոչված հեղինակների միջն, քննարկվող հարցի համար անշափ կարենոր է, որ նրանք Վաղերիանոսի կայսրության վերջին տարվա համար ընդունում են միենույն թվականը: Եթե Հայ հեղինակների, հատկապես Խորենացու վկայություններով Խորովի սպանությունից (259) հետո Վաղերիանոսը շատ կարճ է իշխել, որը նրանց մոտ սիալմամբ համարվել է Վաղերիանոսի մահվան թվական, ապա եվսեբիոսը, թեպետ անուղղակի, գալիս է հաստատելու Խորենացուն՝ որոշակիորեն մատնանշելով միենույն տարբեթիվը, որն ընդունված է բոլոր ուսումնասիրողների կողմից, այսպես՝ Գաթրձյան՝ 258/59, Գաթրագայան՝ 259, Աստուրյան՝ 259/60, Մանանդյան՝ 260 և շատ ուրիշներ:

Այսպիսով, եթե Խորենացու ակնարկը Վաղերիանոսի կայսրության վերջին տարվա մասին, որը նրա մոտ պայմանավորված էր Խորովի սպանության տարբեթվով, առանց ժամանակագրական հակասության ապացուցվում է ստարագրություններով ու նրանց հիման վրա կատարված ուսումնասիրություններով, անառարկելի է դառնում 259 թվականի ընդունումը՝ իրեւ Խորովի սպանության տարբեթիվ:

Խորովի սպանության այս տարբեթիվն էլ իր հերթին մի կողմից հաստատում է Արտավանի մահվան թվականի (245), մյուս կողմից էլ, որին այժմ կանդրագառնանք, ելակետ է ծառայելու երկրորդ ժամանակահատվածին վերաբերող ժամանակագրական տեղեկությունների քննարկման:

Այստեղ զարձյալ, ինչպես շատ գեղեկատուն Խորենացին է: Իր աշխատության երկրորդ գրքի 77-րդ գլուխում, խոսելով հիշյալ ժամանակահատվածի պատմական անցուղարձերի և հատկապես Սասանյան Արտավարքի արքայի Հայաստանում ձեռնարկած միջոցառությունների մասին, նորենացին գրում է.

«Եւ կալաւ [Արտաշիր] զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց, պարսիկ գործակալօք ամս խան և վեց. և յետ նորա որդի նորին, որ անուանեցաւ, որ լսի Արքայամանուկ, ցթագավորելն Տրդատայ, ամ մի»<sup>39</sup>:

35 Խորենացի, էջ 214:

36 Թովման Արծրունի, էջ 103—104:

37 Ուստանես:

38 Եղանական կազմակերպություն, մասն Բ, Վենետիկ, էջ 300:

39 Խորենացի, էջ 216:

Խորենացուն, այլէ՝ միմյանց: Սակայն, ինչպես երեսմ է աղյուսակից, զեռնս չեն արտացոլված գոյություն ունեցող բոլոր տարատեսակությունները բոլորովին այլ պատկեր է իրականում: Համարյա չկա մի հեղինակ, որի վկայությունները նման լինեն Խորենացուն: Ի բաց առյալ առանձին հեղինակնեմասնակի տարրերությունները Խորենացուն, որոնք հիմնականում համանմեն նրան, ուշադրության արժանին հատկապես այն է, որ էական և շատ օրշակի տարրերություններ են նկատվում մի կողմից Ասողիկի ու Սեբեռոսի ախատությամբ մեղ հասած Յ-րդ գլխի հեղինակի՝ Անանուն Բ-ի, իսկ մյուս կողմից էլ Խորենացու և մնացած բոլոր հեղինակների վկայությունների միջև: Ենելով իրականում գոյություն ունեցող այս նմանություններից ու տարրերություններից, աղյուսակում վկայակոչված հեղինակներին պայմանականոր կարելի է բաժանել երկու հիմնական իմքերի՝ Խորենացու և Ասողիկի: Երաժանումն էլ կատարվում է պայմանականորեն, քանի որ թե Ասողիկը և Անանունը, ի թիվս մյուս հեղինակների, ինչպես ասվեց, Արշակունիների ցցակները ընդօրինակել են Խորենացուց: Ինչ խոսք, այս բանը վաղուց ի վրազմապիսի փաստերով ապացուցված է և մեր նպատակն էլ զրա ապացուց մը չի, սակայն, ենելով շարադրանքի անհրաժեշտությունից, ավելորդ չի լինեթ մեկ անգամ էլ անդրադառնանք Ասողիկի հետևյալ վկայությանը.

«Ելլ որ ինչ ի թագաւորութենէն Արշակայ Քաջի մինչև ցայսը (այն է՝ Խորովի մահը), — գրում է նա, — ասացաւ՝ ի մեծէ պատմագրէն Մովսիսէ Տարնեցույ՝ Բագրևանդայ և Արշարունիաց եպիսկոպոսէ, որ է աւարտումն բանմերոյ մաշն Խորովու Հայոց արքայի»<sup>45</sup>:

Արդ, եթե Արշակունիների ժամանակագրության համար Ասողիկի մի սկզբնաղբյուրը՝ ինչպես վկայում է հեղինակը, Խորենացին է, հետևաբնանց տեղեկությունները պետք է ըստ ամենայնի նման լինեին, այդ թվուապարսից Արշակունիների արքայացուցակները: Ավելին, Ասողիկի մոտ առավելան մեկ ուրիշ հեղինակի, ինչպես օրինակ՝ Սամցել Անեցու, Մխիթար Անեց Մխիթար Այրիվանեցու և ուրիշների (նկատի չունենք միայն Ռիմաննեսի սպասվում էր գտնել ավելի շատ նմանություններ, որովհետև Ասողիկը համատարար ավելի վաղ շրջանի զործիշ էր, և Խորենացու աշխատությունն նրան հասած կլիներ ավելի քիչ փոփոխություններով: Սակայն, եթե Խորենացու և մյուս հեղինակների տարրերությունները գրաւորվել են մեկական սքայի, առավելն՝ երկուսի կամ երեքի տարրերանակների շուրջ, ապա Ասողիկան է հեռացել Խորենացուց, որ, եթե Ավիներ նրա վկայությունը Խորենացու օգտվելու մասին, թերևս ստիպված լինեինը Ասողիկի համար որոնել ուրիշ սկզբնաղբյուր: Բավական է ասել, որ արքայացուցակներով հիշատաված ընդամենը 14 պարսից արքաներից 7 գահակալի տարրերանակների ուրաբերյալ տարրեր տեղեկություններ ենք գտնում Խորենացու և Ասողիկի համասած աշխատություններում: Ահա այս տարրերությունների մեջ էլ պետք ինարել, քննարկվող Հարցի պատասխանը: Այն, թե ո՞վ է նրանցից հավատինարել, ավելի ճիշտը, ո՞ր վկայություններն են եղել Խորենացու նախնականագրում, փոփոխված համարել Խորենացո՞ւ, թե՝ Ասողիկի տեղեկությունները, հարցեր, որոնք նախորդ ուսումնապիրություններում լուրջ քննարկմանդիր չեն դարձել: Եթե հետևելու լինենք աղյուսակում հիշատաված մյ

Համակալության արքաների անունները		Գահակալության արքաներն ըստ առանձին հեղինակների									
		Մ. Խորենացի, 1813, էջ 103 հ 203—205)	Միքան (Ա. Տիգրանի, կամ 1939, էջ 10)	Աստիճանի Պատրիարք, կամ 1881, էջ 29—31)	Միքան (Պ. Տիգրանի, 1880, էջ 15—22)	Ա. Խանջյան (Վաղարշակ, 1871, էջ 38 և օր)	Միքան (Պ. Տիգրանի, 1870, էջ 47—60)	Մ. Խորենացի (Պ. Տիգրանի, 1870, էջ 8 և 21)	Մ. Խորենացի (Պ. Տիգրանի, 1867, էջ 25—26)	Պաղիբան Բարդիկչյան (Վ. Ա. Հակոբյան և Ա. Ժանիսյան, 1856, էջ 308)	Մ. Խորենացի և Ա. Ժանիսյան (Վ. Ա. Հակոբյան և Ա. Ժանիսյան, 1856, էջ 308)
1.	Արշակ Քաջ	31	?	31	57	31	31	31	31	31	57
2.	Արտաշես (Նահան Արտաշես)	26	?	26	31	31	46	46	46	26	31
3.	Արշակ Մեծ	53	56	52	52	52	53	53	53	54	52
4.	Արշական (Նահան Արշակ)	30	70	?	30	30	31	30	31	30	50*
5.	Արշամակ (Նահան Արշակ Աշուազ)	31	32	32	32	32	30	31	30	30	32
6.	Արշակ (Նահան Արտաշես)	20	22	20	20	20	20	20	20	20	20
7.	Արշավիր	46	45	46	46	46	46	46	46	46	20
8.	Արտաշես	34	34	34	31	31	34	34	35	35	46
9.	Դարեհ	30	30	30	30	30	30	30	30	30	33**
10.	Արշակ (Նահան Արշական)	19	17	57	19	19	17	17	17	17	30
11.	Արտաշես (Նահան Արտաշես)	20	46	20	20	20	20	20	20	20	17***
12.	Գերող (Նահան Վաղարշակ)	34	64	34	33	33	34	34	34	34	20
13.	Վաղարշ (Նահան Վաղարշակ)	50	50	50	50	50	50	50	50	50	33
14.	Արտաշես	31	36	36	36	36	31	31	31	31	50
	Ընդունությունը	455	502	468	487	487	455	474	455	455	36
	Արդարի վկայություններ ընդունության մասին	կամ՝ (454)	կամ՝	573	455	457	457	454	454	454	507
				Նահան 452							

ԵՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — 1. Խնչուս Խորենացու, այնպես էլ վկայակոչված մյուս հեղինակների մոտ պարսից Արշակունիների հաջորդական կարգը  
միշտայն է:

- Առաջին պլանում զարսից Արշակունի արքաների անուններն են, ըստ Խորենացու: Փակագերում՝ այս կամ այն արքայի  
անդամն առարկական, ըստ առանձին հեղինակների, նաև ըստ Խորենացու: Թե ո՞ր առարկակը, ո՞ր հեղինակն է,  
խուսափել ենք ցույց տալ աղյուսակը չժամանական հայության նկատմամբ:
- Խորենացու և Աւագանեսի ժողովարենական արտահայտված են բառերով, իսկ վկայակոչված մյուս հեղինակների  
մոտ հայոց այրութենի համապատասխան տառերով: Այս բոլորը վերածել ենք արարական թվանշանների:
- Բնուշանությունը հեղինակի ավանդած ուղղակիք վկայությունը՝ պարսից Արշակունիների ընդհանուր տևողության մասին,
- անդապրված է նրանց համապատասխան այլակների վերջում:
- «Արքազրված և ընդունելի տարեքանակներ» սյունակի հիմքում հիմնականում Ասովիկի տեղեկություններն են, նաև  
Արտաշես Բ-ի, երեք փոփոխությամբ՝ շորորդ գահակալ Արշակունին 30-ի փոխարեն 50 տարի, բ) ութերորդ գահակալ  
Արտաշես 31-ի փոխարեն 33, և առանձինորդ գահակալ Արշակին՝ 19-ի փոխարեն 17 տարի:

Հեղինակների և Խորենացու արքայացուցակի նմանություններին, ինչպես նաև Խորենացուց օգտվելու մասին նրանց վկայություններին, ստիպված կրինենք նախապատվությունը տալ Խորենացու մեզ հասած արքայացուցակին։ Հիմնականում այսպիս էլ վարվել են անցյալում։ Հատկապես նկատի ունենք բազմավաստակ գիտնական Ստ. Մալիշասյանցի փորձը, որը դեռևս 1885 թվականին, Ասողիկի «Տիեզերական պատմության» 39-րդ ժամությունում, անդրադարձել է Խորենացու և Ասողիկի արքայացանկերի փոխարաբերության հարցերին և աշխատել Ասողիկի վկայությունները հարմարեցնել Խորենացու մեզ հասած վկայություններին, Ասողիկին մեղադրելով դիտումնավոր փոփոխություններ կատարելու մեջ։ Այստեղ շենք կամենում բանավեճ ակսել հարգարժան գիտնականի ենթադրությունների շարք, նկատի ունենալով, որ մեզ օգնության է գաղիս Սեբեոսի աշխատությամբ մեզ հասած 3-րդ գլխի հեղինակը և պահանջում՝ Խորենացու ավանդած պարսից Արշակունիների արքայացուցակի բնագիր վկայությունները տեսնել Ասողիկի մոտ։ Ավելին, խիստ կարևոր այս հարցը, որը ինչպես ասվեց, վերաբերում է Խորենացու աշխատության բնագրի ժամանակագրական որոշ տեղեկությունների վերականգնմանը և առանցքային նշանակություն ունի նրա ավանդած ամբողջ համակարգի մեկնարանման համար, հավանական է այսպիս էլ հարց մնար, եթե շինուեր վերոհիշյալ 3-րդ գլխի հեղինակի շափականց արժեքավոր վկայությունը՝ Խորենացու և Ասողիկի արքայացուցակները ընդորինակելու վերաբերյալ։ Հանրահայտ է, որ Սեբեոսի աշխատության 3-րդ գլուխը վերնագրված է այսպիս՝ «Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացույ եւ Ստեփանոսի Տարանացույ; Հաւաստի եւ ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հաւրէ ճանաշել», որի տակ, Սեբեոսի նույն աշխատության նախորդ գլխում արդեն հիշատակված պարսից Արշակունիների ժամանակագրական արքայացուցակին զուգահեռ (տե՛ս աղյուսակ Ա՝ Սեբեոս Ս, Հմմտ՝ Սեբեոս Բ), կրկին շարադրված է պարսից արքաների ցուցակը՝ նույն հաջորդականությամբ և զահակալների միևնույն տարեքանակներով, ինչպես Ասողիկի մոտ է (տե՛ս, նույն աղյուսակ՝ Սեբեոս Բ, Հմմտ՝ Ասողիկ)։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում նախապես նկատել, որ մենք համամիտ շենք Գևորգ Արքարյանի այն կարծիքին, թե երրորդ գլխի հեղինակը ծանոթ է Խորենացուն Ասողիկի միջոցով<sup>46</sup>: Ընդհակառակը, ինչպես հայտնում է Անանուն հեղինակը, նա հավասարաշափ ծանոթ է թե՝ Խորենացուն և թե՝ Ասողիկին։ Այս բանին կհամոզվենք դեռևս հետագա շարագրանքի ընթացքում, եթե ապացուցած կլինենք Ասողիկի, հետևաբար Անանուն Բ-ի ավանդած պարսից Արշակունիների արքայացուցակի ժամանակագրական վկայությունների հավաստիության հարցը։ Այս առումով արդեն, երրորդ գլխի վերնագրի վկայությունների անգերազնահատելի արժանիքը ոչ միայն այն է, որ Խորենացու ու Ասողիկի ժամանակագրական արքայացուցակներին զուգահեռ պահպանվել է մի 3-րդ ժամանակագրական ցուցակ, այլ հատկապես այն, որ Արշակունիների ժամանակագրական ցուցակները շարագրելիս, հեղինակի համար հավասարազոր նշանակություն են ունեցել թե՝ Խորենացու և թե՝ Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ) ժամանակագրական վկայությունները։ Եթե՝ ոչ, ապա Անանուն հեղինակը նրանց միասին չէր վկայա-

46 Գ. Արքարյան, Սեբեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 63։

կոչի և շէր ներկայացնի միայն մի ցուցակ՝ իբրև համագիր պատկեր Խորենացու և Ասողիկի արքայացուցակների:

Ահա, թե ինչու ենթադրում ենք՝

ա) Այն ժամանակ, երբ զիել է Անանունը, Խորենացու և Ասողիկի պարսից Արշակունիների արքայացուցակները ժամանակագրական իրենց տեղեկություններով ամբողջովին համանման են եղել, ինչպես համանման են գահակալների հաջորդականությամբ ու անուններով։

բ) Քանի որ այսպես է, հետևաբար Խորենացու, Ասողիկի և Անանունի արքայացուցակները մինչև այսօր էլ իրենց ժամանակագրական տեղեկություններով պետք է համանման լինեին։ Փաստորեն համանման են միայն Ասողիկն ու Անանունը, իսկ Խորենացին, ինչպես տեսանք, որոշակիորեն տարրերվում է նրանցից։ Այստեղից էլ պետք է եղրակացնել՝ փոփոխության են ենթարկվել ո՞ւ թե Ասողիկի ու Անանունի, այլ Խորենացու վկայությունները, որովհետեւ անկարելի էր, որ երկու առանձին հեղինակ՝ Ասողիկ և Անանուն, միատեսակ փոփոխությունների ենթարկվելին այնպիս, որ դարեր հետո ամբողջովին համանման լինեին միմյանց։

Ասողիկի ժամանակագրական վկայությունների հավաստիության ապացույց է նաև այն, որ նրա և Անանունի ավանդած արքայացուցակներով պարսից Արշակունիների գահակալության տարիների ընդհանուր զումարը համապատասխանում է նույն թագավորական հարստության համար վերելում՝ Խորենացու, Ասողիկի և մյուս հեղինակների վկայություններով ուրվագծված ամբողջ տեղությանը, եթե պարսից 4-րդ գահակալ Արշականին տալու լինենք ոչ թե 30 (և), այլ 50 (օ) տարվա թագավորության ժամանակաշրջան՝  $487+20=507$  (տե՛ս աղյուսակ Ա, Ասողիկ, Հմմտ, Սեբեոս Բ):

Այս փոփոխությունը, որն առաջարկել է Սեն-Մարտենը և հետագայում ընդունել է Թ. Ավդալբեկյանը, լրիվ արդարացվում է Խորենացու համաժամանակագրական վկայություններով։ Այսպես, Խորենացին հայ Արշակունի 3-րդ գահակալ Արտաշեսի առաջին տարին զուգավորել է Արշականի 24-րդի հետ, նրան տալով 25-ամյա թագավորության ժամանակաշրջան։ Ապա, գարծյալ Խորենացու վկայությամբ, Արտաշեսին հաջորդել է նրա որդի Տիգրանը նույն արքայի 49-րդ տարում։ Ինչպես երևում է, Արշականը 49 տարուց պահանջանելու դաշտում է թագավորել, ուստի սխալ է 30 տարին ընդունելը, որը սոսկ վրիսպակ է և հետագա փոփոխության արդյունք։ Մեր կարծիքով այն Ասողիկին է անցել արդին փոփոխած վիճակում։

Բացի Արշականի տարեքանակից, Ասողիկի արքայացուցակում պետք է կատարել նաև երկու անհշան փոփոխություն։ Այն է՝ 8-րդ գահակալ Արտաշեսին տալ 33 տարի, որի մասին տեղեկություն է պահպակ Խորենացու մի տարբերակում, իսկ 10-րդ գահակալ Արշակին՝ 19-ի փոխարեն 17 տարի, որը, բացի Խորենացուց, Ասողիկից ու Անանուն Բ-ից վկայում են մնացած բոլոր հեղինակները (տե՛ս աղյուսակ Ա)։ Այս փոփոխություններն էլ, որոնք համարյա նույնությամբ ընդունված են նախորդ բանասերներից (Ն. Աղոնց, Թ. Ավդալբեկյան, Գ. Մարգարյան, այն տարբերությամբ, որ Արտաշեսին 33-ի փոխարեն տվել են 34 տարի) բխում են Խորենացու համաժամանակագրական վկայությունների ներքին էությունից, և չեն փոխում պարսից Արշակունիների տիրապետության ընդհանուր տեղությունը։

Ավարտելով մեր խոսքը՝ Ասողիկի ավանդած պարսից Արշակունիների արքայացուցակի ժամանակագրության հավաստիության մասին, անհրաժեշտ ենք համարում նախապես նկատել, որ վկայակոչված փաստերն ու նրանցից բխող Ենթագրությունները, որքան էլ նրանք հավանական երևան, լավագույն դեպքում կմնային սոսկ հավանականության սահմաններում, եթե Ասողիկի ավանդած արքայացուցակը, այս փոփոխություններով հանդերձ, քննություն չընունելի միայն Խորենացու համաժամանակագրական վկայությունները մեկնարանելիս, այլև նրա ավանդած ամբողջ պատմությամբ, որն իր շարադրանքի կուռ կառուցվածքով ու հետևողական հաջորդականությամբ մի յորահատուկ ժամանակագրական համակարգ է։ Ահա թե ինչու, պարսից Արշակունիների ժամանակագրությանը անդրագառնալիս, ի տարբերություն նախորդ ուսումնասիրողների, որոնք մեծամարդ առաջնորդվել են Խորենացու մեզ հասած արքայացուցակով, պետք է նախապատվությունը տալ Ասողիկին, նրա մոտ տեսնելով Խորենացու բնագրի վկայությունները։ Այս առումով, Ասողիկի պարսից Արշակունիների արքայացուցակը ծառայելու է իրեն Խորենացու բնագրին առավել հարազատ մնացած մի ընդօրինակություն, որն իր վաղեմիությամբ մոտ 400 տարով հին է Խորենացու մեզ հասած ամենավաղ գրչագրերից։

Այսպես ուրեմն, ենինով Խորենացու և իրեն բնդօրինակող հեղինակների ժամանակագրական վկայությունների համատեղ բննարկումից, պարսից Արշակունիների հիմնադրման թվական ենք համարում 262-ը (մ.թ.ա.), վախճանը՝ 245 (մ.թ.), ամբողջ տեղությունը՝ 507 տարի, իսկ ժամանակագրական աղյուսակի հիմքում՝ Ասողիկի ավանդած արքայացուցակը, վերևում առաջարկված 3 փոփոխություններով։

Ահա այս նախագրյալներով էլ կազմվում է նրանց ժամանակագրական աղյուսակը (տե՛ս էջ 40, աղյուսակ Բ):

Այժմ արգեն, երբ ձեռքի տակ ունենք պարսից Արշակունիների ժամանակագրական աղյուսակը, որը հանդիսանում է Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրության հենքը և միաժամանակ նրա ամբողջ ժամանակագրական համակարգի մեկնաբանման նախապայմանը, մեր հերթական ու անհրաժեշտ խնդիրն է՝ Խորենացու վկայություններով քննարկել նաև հայ Արշակունիների ժամանակագրության հարցերը, նախապես որոշելով այդ հարստության հիմնադրման սկզբնատարին։

Համաձայն Խորենացու, որը հաստատվում է Արշակունիներին անդրադարձած հետագա բոլոր հայ հեղինակների տեղեկություններով, Հայաստանում Արշակունի հարստության հիմնադրի է հանդիսացել պարսից երրորդ գահակալ Արտաշեսին տալ 33 տարի, որի մասին տեղեկություն է պահպակ Խորենացու վկայությամբ։ Այս փոփոխությամբ էլ որդի Վաղարշակը (Խորենացի, զիրը Ա, գլուխ Գ):

Այս բանը շի ժխտում անգամ Սեբեոսի աշխատությամբ մեզ հասած երկրորդ գրքի հեղինակը, որի վկայությունը մինչև օրս ճիշտ շի մեկնաբանվել և զանազան թյուրիմացությունների տեղիք է ավելի։ Ենինով այս համընդհանուր տեղեկություններից, հայ Արշակունիների հիմնադրման տարեթիվը գտնելու համար անհրաժեշտ է որոշել Վաղարշակի սկզբնատարին։ Զնայած այս առթիվ շատ ուշագրավ տեղեկություններ ենք գտնում հայկական սկզբնադրյուրներում, սակայն նրանցից ամենաարժեքավորը Խորենացու, Ասողիկի, մասամբ էլ Մխիթար Անեցու վկայություններն են։

Խորենացին իր «Հայոց պատմության» երկրորդ գրքի 68-րդ գլխում, թվարկելով պարսից Արշակունիներին, գրում է. «Յետ Արշակայ մեծի առնու զթագաւորութիւն նորա Արշական, յերեքտասաններորդի ամի Վաղարշակայ թագաւորին Հայոց...»:

Համաժամանակագրական այս արժեքավոր վկայությունը, իրրե Վաղարշակի թագավորության սկզբնատարվա որոշման նախապայման, օգտագործվել է նաև նախորդ ուսումնասիրողների կողմից՝ Սեն-Մարտեն, Ք. Պատկանյան, Մկրտիչ Էմին և շատ ուրիշներ: Սակայն այն ձիշտ է մեկնարանվել այնքանով, որքանով ձիշտ է մեկնարանվել պարսից Արշակունիների ժամանակագրության հարցը, որովհետեւ Խորենացու ժամանակագրական վկայություններով, ինչպես տեսնում ենք, նրանք օրգանական ամբողջականությամբ շարա՞յուսված են միմյանց հետ: Հենց այս օրգանական կապվածությունն է պատճառը, որ Զամշ-

## ԱԶՅՈՒՍԿԻ Բ

Պարսից Արշակունիների ժամանակագրական կարգը

Համաժամանակական կարգը	Արքաների անունները	Տարբերակների հայր ըստ դիմումի	Գահակալություն տարեթիւնը
1	Արշակ Ա (Քաջ)	57	262—205 Ա.թ.ա.
2	Արտաշես Ա	31	205—174 *
3	Արշակ Բ (Մեծ)	52	174—122 *
4	Արշակ Գ (Արշական)	50*	122—72 *
5	Արշակ Դ (Արշանակ)	32	72—40 *
6	Արտաշես Բ (Արշեղ)	20	40—20 *
7	Արշավիր	46	Ա.թ.ա. 20—26 Ա.թ.
8	Արտաշես Գ	33*	26—59 *
9	Դարեհ	30	59—89 *
10	Արշակ Ե	17*	89—106 *
11	Արտաշես Դ	20	106—126 *
12	Գերող (Վաղողեսոս)	33	126—159 *
13	Վաղարշ	50	159—209 *
14	Արտավան	36	209—245 *
—	Հնդհանուր տեղողությունը	507	Ա.թ.ա. 262+245 Ա.թ.=507

Մանր. Աստղանիշներով մատնաշված տարբեանակները, ըստ Խորենացու համաժամանակագրական տեղեկությունների:

յանի մոտ մատնանշված է 149 թվականը, Սեն-Մարտենի մոտ 152-ը, Ք. Պատկանյանի մոտ 132-ը, Թ. Ավդարեկյանի մոտ 135-ը և այլն: Այժմ արդեն, երբ Խորենացու ժամանակագրական ցուցակի նոր մեկնարանմամբ, ձեռքի տակ ունենք մեր կազմած պարսից Արշակունիների ժամանակագրական աղյուսակը, որը շատ էական գծերով տարբերվում է նախորդներից, փորձենք Խորենացու վերոհիշյալ վկայությունը մեկնարանել մեր կազմած ժամանակագրական աղյուսակով: Ենինով աղյուսակի տվյալներից, Արշակ Մեծի որդի, պարսից 4-րդ զահակալ Արշականը, որին այստեղ հիշատակել է Խորենացին, թագավորի է 122 թվականինց (մ.թ.ա.): Եվ եթե Խորենացու այս ժամանակագրական վկայությամբ Արշականը թագավորել է Վաղարշակի թագավորության 13-րդ տարում, հետեւար Վաղարշակի առաջին տարին լինելու է 134 թ. (մ.թ.ա.)<sup>47</sup> (122+12=134): Գիտենալով Վաղարշակի թագավորության առաջին տարին,

հեշտ է արդեն մակարերել, որ Խորենացին այն պետք է գներ Արշակ Մեծի զահակալության 41-րդ տարում, որովհետեւ Արշակ Մեծը, զարձյալ մեր կազմած աղյուսակի տվյալներով, թագավորի է մ.թ.ա. 174—122 թթ. (տե՛ս ժամանակագրական աղյուսակ Ա): Այս վերջին հնթագրությունը, որը բխեցվեց աղյուսակի տվյալներից, մեզանից անկախ հաստատում է նաև XII դարի հեղինակի Միթթար Անեցին<sup>48</sup>:

Իրեւ անհերեթի ապացուց 134 թվականի և ի հաստատումն մեր հնթագրության անշափ արժեկավոր է Ասողիկի վկայությունը:

Խոսկելով հայ Արշակունիների վերացման մասին, նա հայտնում է. «Աստանօր գաղարէ թագաւորութիւն Հայոց յագգէն Արշակունինեաց, Ակսեալ յժմ (12-րդ) ամի երկրորդ եւերգեաէս Պտղոմէոսի Եղիպատացոց...»<sup>49</sup>:

Պտղոմէոս Եղիպատես թ-ն (Պտղոմէյան Հարաստության 7-րդ զահակալը), ինչպես ընդունված է գիտական պատմագրության մեջ, թագավորել է 145—146 թթ. (մ.թ.ա.)<sup>50</sup>: Արդ, եթե 145 թվականին է Պտղոմէոս Եղիպատես Բ-ի առաջին տարին, իսկ Ասողիկն էլ հայ Արշակունիների սկզբնատարին հաշվել է նրա 12-րդ տարվանից, հետեւար Վաղարշակի սկզբնատարվա համար նկատի է ունեցել մ.թ.ա. 134 թվականը (145—11=134):

Այսպիսով, վկայակոչված հայ հեղինակներից երեր՝ Խորենացի, Ասողիկ, Միթթար Անեցի, ինչպես տեսնում ենք, Վաղարշակի սկզբնատարվա համար տարբեր ուղիներով մատնանշում են միենալուն 134 թվականը (մ.թ.ա.): Հօգուտ այս թվականի շնայած կարելի է այլ փաստեր վկայակոչել, սակայն բավարարվենք այսքանով, նկատի ունենալով, որ այն հաստատվելու է նաև Խորենացու համաժամանակագրական վկայություններով:

Ինչպես հայտնի է, ժամանակակից պատմագրությունը հայ Արշակունիների սկզբնատարի է ընդունում 66 թվականը (մ.թ.), հմինագիր՝ Տրդատ Ա-ին, հենվելով Հունա-Հռոմեական աղբյուրների տեղեկությունների վրա, անտեսելով Խորենացու և առհասարակ հայ հեղինակների վկայությունները: Նկատի ունենալով, որ այս հոդվածով մեր նպատակը Խորենացու ժամանակագրական համակարգի վերականգնումն է իր իսկ՝ Խորենացու, մասմար էլ նրան հնտեսող հեղինակների վկայություններով, առ այժմ շնոր անդրագանալու Խորենացու և պատմագրության միջև նկատվող տարբերություններին և ոչ էլ՝ նրանց հավաստիության խնդիրներին:

Ընդունելով 134 թվականը (մ.թ.ա.)՝ իրեւ Վաղարշակի սկզբնատարի, արդեն որոշակի է գանում, որ հայ Արշակունիների ակնողությունը, մինչև Խոսրովի սպանություն (Խոսրովից հնատ քննարկելու ենք Սասանյան արքաների ժամանակագրության հետ), կազմելու է 393 տարի (134+259=393), քանի որ Խոսրովի սպանության տարեթիվը, ինչպես տեսանը Արտավանի թագավորության վերջին տարին քննարկելիս, Խորենացու և իրեն հնտեսող հեղինակների վկայություններով, գրվեց 259 թվականին (մ.թ.):

Ի հաստատումն այն բանի, որ Խորենացին իրոք հիշյալ ժամանակահատվածի համարնկատի է ունեցել 393 տարվա ժամանակաշրջան, բացառիկ կարևորություն ունեն նրա ավանդած հայ Արշակունիների արքայացուցակի ժամանակագրական տեղեկությունները:

<sup>47</sup> Մի իթ ար Ան եցի, էջ 20:

<sup>48</sup> Ասողիկ, էջ 77:

<sup>49</sup> «Վсевобщая история Ст. Таронского», Москва, 1864, прилож., 17.

Նկատի ունենալով հոգվածի հնարավորությունները և այն, որ Խորենացու հիշյալ արքայացուցակը, ի տարրերություն պարսից Արշակունիների արքայացուցակի, մեզ է հասել առանց հետագա փոփոխությունների և ստուգման ու համեմատության պահանջ չի առաջանում, նպատակաշարմար ենք գտնում այստեղ վկայակոչել միայն Խորենացուն, առանց համեմատական ազյուսակի:

Համաձայն Խորենացու, հայ Արշակոնի արքաները թագավորել են ներբուժիշյալ հաջորդականությամբ ու գահակալության տարեքանակներով:

1. Վաղարշակ՝ 22 (գիրք Բ, գլ. Ը),
2. Արշակ Ա՝ 13 (գիրք Բ, գլ. Թ),
3. Արտաշես Ա՝ 25 (գիրք Բ, գլ. ԺԹ),
4. Տիգրան Բ՝ 33 (գիրք Բ, գլ. ԺԹ),
5. Արտավազդ Ա՝ տարեքանակ չունի,
6. Արշամ՝ 20 (գիրք Բ, գլ. ԽԵ),
7. Արգար՝ 38 (գիրք Բ, գլ. ԼԳ),
8. Անանուն՝ երեխ ամիսներ, զուգահեռ Սանատրուկի (Ի, գլ. ԼԳ),
9. Սանատրուկ՝ 30 (գիրք Բ, գլ. ԼԶ),
10. Երվանդ՝ 20 (գիրք Բ, գլ. ԽԶ),
11. Արտաշես Բ, 41 (գիրք Բ, գլ. Կ),
12. Արտավազդ Բ՝ օրեր (գիրք Բ, գլ. ԿԱ),
13. Տիրամ՝ 21 (գիրք Բ, գլ. ԿԲ),
14. Տիգրան Գ՝ 42 (գիրք Բ, գլ. ԿՊ),
15. Վաղարշակ՝ 20 (գիրք Բ, գլ. ԿԵ),
16. Խոսրով Մեծ՝ 48 (գիրք Բ, գլ. ՀՊ):

Խորենացու այս ցուցակով հայ արքաների գահակալության տարեքանակների համատեղ գումարը կազմում է 373 տարի: Եթե այդպես է, և եթե, ինչպես ասվեց, անփոփոխ են Խորենացու վկայությունները, օրինական հարց կառաջանա, ապա ո՞ւր է քսան տարին, չե՞ որ նույն հեղինակի նախորդ վկայություններով այն պետք է լիներ ոչ թե 373, այլ 393 տարի:

Հարցի պատասխանը հնարավոր է զանում Խորենացու համաժամանակագրական վկայություններով: Բանն այն է, որ Խորենացին, նրան էլ հետևելով մյուս հեղինակները, Տիգրան Բ-ի վերջին տարվանից մինչև Արշամի առաջին տարին ընկած ժամանակաշրջանում թագավոր են ճանաչում Տիգրանի որդի և նրա անմիջական հաջորդ Արտավազդին՝ առանց նրա թագավորության տարեքանակը հիշատակելու: Այսուղի բացառություն են կազմում Սամզել Անեցին, Մխիթար Անեցին, Մխիթար Այրեվանեցին և հետագա որիշ հեղինակներ, որոնք, հայտնի չի ինչ աղբյուրից, նրան տալիս են ընդամենը 2 (Բ) տարվա թագավորության ժամանակաշրջան:

Համոզվելու համար դիմենք փաստերին: Խորենացու վկայություններով, ինչպես արդեն առիթ ենք ունեցել տեսնելու, Տիգրան Բ-ն թագավորել է պարսից 4-րդ գահակալ Արշականի 49-րդ տարվանից (գիրք Բ, գլ. ԺԴ), իսկ Արշամը՝ Պարսից 6-րդ գահակալ Արշեղի վերջին՝ 20-րդ տարում (գիրք Բ, գլ. ԽՊ): Այս համաժամանակագրական վկայություններից պարզ երևում է, որ հավասար ժամանակաշրջան է ընկած թե Տիգրան Բ-ի առաջին տարվանից մինչև Արշամի առաջին տարին և թե Արշականի 49-րդից մինչև Արշեղի 20-րդ տարին:

Բոլորովին այլ է պատկերը Խորենացու արքայացուցակներով:

Այսպես, Տիգրան Բ-ի առաջին տարվանից մինչև Արշամի առաջին տարին ունենք ընդամենը 33 տարի (Տիգրան Բ՝ 33 + Արտավազդ՝ ոչինչ), իսկ Արշականի 49-րդից մինչև Արշեղի 20-րդ՝ 53 տարի (Արշական՝ 2-րանի որ թագավորել է 50 տարի — + Արշական՝ 32 + Արշեղի 19-ը = 53): Ինչպես

երևում է, հայ Արշակունիների գծում, համեմատած պարսից Արշակունիներին, միևնույն ժամանակաշրջան մի ժամանակաշրջան, չնայած Արտավազդի զոյտության, թափուր է մնում: Այս թե ինչու, իրականում եղած այս 20 տարին, պետք է ավելացնել Խորենացու հայ Արշակունիների արքայացուցակի ընդհանուր գումարին, որով արդեն մի կողմից անփոփոխ են մնում Խորենացու հիշատակած հայ արքաների տարեքանակները, մյուս կողմից էլ լրացվում է նրա արքայացանկը՝ թափուր մնացած միջանկալ 20 տարով, և կազմում 393 տարի: Խորենացու արքայացուցակի այսօրինակ մեկնարանմամբ ոչ միայն հաստատվում է նրա նախորդ վկայություններով ուրվագծված հայ Արշակունիների տևողությունը (393)՝ մինչև Խորենացու սպանություն, այս բացայտվում է այդ արքայացուցակի ներքին էությունը, որը մինչև այժմ բաղմաթիվ սխալների ու թյուրիմացությունների տեղիք է տվել:

Այս քանամյա պակասը գենես 1929 թվականին, ինչպես երևում է «Պատմաբանասիրական հանդեսի» 1964 թ. վերջին համարից, նկատել է Թ. Ավդալրեկյանը, որի կարծիքը ցավոք ուշագրության չի արժանացել: Ի տարբերություն Ավգալլեկյանի, որը հիշյալ 20 տարին ամբողջապես վերագրել է Արտավազդին, կարծելով, թե Խորենացու մոտ Արտավազդի համար եղել է ի (20) տարի և ի-ի զիսիկի կորուստն է, որ բանասերներին երկար տարիների տառապանք է պատճառել, ենթագրում ենք, որ Խորենացին Արտավազդի համար տարեքանակ չի հիշատակել (միակ բացառությունը նրա մոտ): Արտավազդին պետք է տալ հիշյալ 20-ամյա ժամանակաշրջանի առաջին 7-ը կամ ամենաշատը 10-ը տարին (մենք բնդունում ենք վերջինը), իսկ մնացած 13 կամ 10-ը տարին՝ անիշխանություն:

Այս ենթագրությունն էլ արվում է Արտավազդի գերության մասին Խորենացու, Սարարոնի, Հովսեփի Երբայցու, Տակիտոսի, Պլուտարքոսի և ուրիշ հիմնակների վկայությունների հիման վրա:

Իսկ թե որտեղ տեղադրել վերոհիշյալ 20 տարին, փորձենք որոշել Խորենացու համաժամանակագրական վկայությունների և մեր կազմած պարսից Արշակունիների ժամանակագրական աղյուսակի տվյալներով: Այսպես:

Տիգրանը թագավորել է Արշականի 49-րդից ընդամենը 33 տարի, հետեւ արք նրա վերջին տարին լինելու է 41 թ. (մ.թ.ա.), քանի որ աղյուսակում Արշականի 1-ին տարին 122 թվականն է (122=(48+33)=41): Այս այս թվականն էլ (41) ընդունում ենք, թե՝ 20-ամյա ժամանակաշրջանի և թե՝ Արտավազդի թագավորության առաջին տարի:

Քսանամյա ժամանակաշրջանի վերջին տարին, որ է միաժամանակ Արշամի առաջին տարին, լինելու է 21 թիվը (մ.թ.ա.), քանի որ Արշամը թագավորել է Արշեղի 20-րդ տարվանից, իսկ Արշեղի 1-ին տարին աղյուսակում մ.թ.ա. 40 թվականն է (40—19=21):

Այժմ արդեն, երբ հայտնի է հայ Արշակունիների սկզբնատարին, նրանց տևողությունը մինչև Խորենացու սպանություն, ինչպես նաև Խորենացության տարեթիվը, կարող ենք կազմել նաև հայ Արշակունիների ժամանակագրական աղյուսակը 20-ամյա ժիշտանկալ ժամանակաշրջանի գոյությամբ, որն արտացոլվելու է քիչ հետո ներկայացվող համաժամանակագրական աղյուսակում:

Հայ և պարսից Արշակունիների ժամանակագրական աղյուսակները, որոնք անշափ սեղմ ամփոփումն են Խորենացու «Հայոց պատմության» երկ-

րորդ գրքի ժամանակագրական տեղեկությունների, դեռևս չեն կարող լրից պատկերացում տալ նրաւավանդած ժամանակագրական համակարգի մասին։ Ուստի, մեր պատկերացումը ամբողջական դարձնելու նպատակով անհրաժեշտ է թեկուզ շատ համառոտ անդրադառնալ նաև երրորդ գրքի ժամանակագրական վկայություններին։ Այստեղ արդին ըստ Խորենացու քննարկվելու է հիմնականում 4 հարց՝ Սասանյան արքաների, հայ Արշակունիների՝ Տրդատից մինչեւ վախճան, հայ կաթողիկոսների, ինչպես նաև հոռմեական կայսրերի ժամանակագրության հարցերը։

Սասանյան արքաների ժամանակագրության համար ելակետ ենք ընդունում 245 թ. (մ.թ.), որը ինչպես տեսանք, տարեթիվն էր թե՛ պարսից Արշակունիների անկման և թե՛ Սասանյան հարստության հիմնադրման։

Ժամանակագրական աղյուսակը կազմելիս, պետք է հենվել Խորենացու ավանդած արքայացուցակի տեղեկությունների վրա՝ անփոփոխ պահպանելով թե՛ արքաների հաջորդական կարգը և թե՛ տարեքանակները՝ այսպես։

1. Արտաշիր՝ տարեքանակ չի նշում,
2. Շապուհ՝ տարեքանակ չի նշում,
3. Ներսե՞ն 9 (գիրք Բ, գլ. Զթ),
4. Որմիզդ՝ 3 (գիրք Բ, գլ. Զթ.),
5. Շապուհ Բ՝ 70 (գիրք Գ, գլ. ՄԱ),
6. Արտաշիր Բ՝ 4 (գիրք Գ, գլ. ՄԱ),

7. Վուամ (Կրման) Ա՝ 10 (գիրք Գ, գլ. ՄԱ),
8. Հաղկերտ Ա՝ 11 (գիրք Գ, գլ. ՄԶ),
9. Վուամ Բ՝ 21 (գիրք Գ, գլ. Կէ),
10. Հաղկերտ Բ՝ տարեքանակ չի նրանում, որովհետև Հաղկերտ Բ-ի առաջին տարվանով ավարտել է իր ժամանակագրը (գիրք Գ, գլ. Կէ):

\* Իրավ է, Խորենացին չի հիշատակել Սասանյան առաջին երկու արքաների տարեքանակները, սակայն նրա ժամանակագրական այլ տեղեկություններով հնարավոր է լինում լրացնել նաև այդ թերին։

Վերևում, Խորովի սպանությունից հետո ընկած 27-ամյա անիշխանության մասին խոսելիս, տեսանք, որ Խորենացու վկայությամբ այս ժամանակաշրջանի առաջին 26 տարին վերագրված էր Սասանյան հարստության հիմնադրի Արտաշիր արքային (գիրք Բ, գլուխ Հէ): Ելք բանի որ Արտավանի սպանությունից մինչև Խորովի սպանություն, դարձյալ Խորենացու վկայություններով, կազմում էր 14 տարի, ուստի պետք է ենթադրել, որ Խորենացու ժամանակագրությամբ Արտաշիր արքային տրված է 40 տարվա թագավորության ժամանակաշրջան ( $26+14=40$ )։

Շապուհ Ա-ի տարեքանակը որոշելու համար մեր առաջին հենակետն է դառնում Արտաշիր արքայի վերջին տարին, որը, ինչպես տեսնում ենք, զրկվելու է 285 թվականին և զուգագիպում է Տրդատի առաջին տարվան։

Երկրորդ հենակետը Խորենացու համաժամանակագրական վկայությունն է՝ Տրդատ Մեծի որդի և հաջորդ Խորով Բ-ի սկզբնատարվա վերաբերյալ, որի համաձայն՝ «Յերկրորդ ամի Որմիզդի Պարսից արքայի ... թագաւորեաց Խորով» (գիրք Գ, գլուխ Բ):

Այս վկայություններով պարզ է արդեն, որ Շապուհ Ա-ի առաջին տարվանից մինչև Որմիզդ արքայի երկրորդ տարին հավասար է Տրդատի թագավորության ամբողջ տևողությանը՝ 56 տարվա (գիրք Բ, գլ. ՂԲ): Այս այս 56 տար-

վանից էլ ետքնթաց հաշվով պետք է պակասեցնել նախ՝ Որմիզդ արքայի մեկ տարին, քանի որ Տրդատի հաջորդ թագավորել է նրա երկրորդ տարվանից, ապա՝ Որմիզդի նախորդ և Շապուհ Ա-ի հաջորդ ներսե՞ն արքայի ամբողջ 9-ր տարին, ընդամենը 10 տարի։ Այսպիսով Տրդատի առաջին տարվանից մինչև 47-րդը, որը հավասար է Շապուհ Ա-ի առաջին տարվանից ներսե՞ն առաջին տարին ընկած ժամանակաշրջանին և կազմում է 46 տարի, համարվելու է Շապուհ Ա-ի թագավորության անողությունը։

Շապուհ Ա-ի թագավորության անողության մասին անշափ արժեքավոր է Սամվել Անեցու հետևյալ վկայությունը. «Իսկ զեապոյ Պարսից, թէ ՀԳ (73) ամ համարիս թագաւորեալ, սկսանելի է ի սպանմանէն Խորովով, ապա թէ ԽԶ (46) համարիս՝ զոյգ ընդ Տրդատայ. զ իէ (27) ամն ընդ Արտաշրի հօրն իւր ի կեանս, և զԽԶ (46) յիտ մահուանն»<sup>50</sup>:

Չնայած կարելի է բազմաթիվ այլ փաստերով հիմնավորել Սասանյան արքաների վերոհիշյալ տարեքանակները, սակայն բավարարվենք այսպանով, նկատի ունենալով, որ դրանք բազմակողմանիորնն ապացուցվում են Խորենացու ժամանակագրական համակարգի ընդհանրության մէջ: Նշենք միայն, որ Խորենացու վկայություններով այս նույն տարեքանակները ստացել են նաև Դ. Սարգսյանը<sup>51</sup>:

Հայ Արշակունիների Տրդատից մինչև վերջ ընկած ժամանակաշատվածի նկակետն արդեն մեզ հայտնի է՝ 285 թ. (մ.թ.)՝ իրեւ Տրդատի թագավորության սկզբնատարի:

Ժամանակագրական աղյուսակի համար հիմք ենք ընդունում Խորենացու վկայած տարեքանակներն անփոփոխ։

- |                                    |                                      |
|------------------------------------|--------------------------------------|
| 1) Տրդատ Մեծ՝ 56 (գիրք Բ, գլ. ՂԲ), | 8) Խորով Գ՝ 5 (գիրք Գ, գլ. Մ),       |
| 2) Խորով Բ՝ 9 (գիրք Գ, գլ. Ժ),     | 9) Վուամշապուհ՝ 21 (գիրք Գ, գլ. ՄԱ), |
| 3) Տիրան Բ՝ 11 (գիրք Գ, գլ. Կէ),   | 10) Խորով (Կրկն) 1 (գիրք Գ,          |
| 4) Արշակ Բ՝ 30 (գիրք Գ, գլ. Խ),    | զեապոյ 7 (գիրք Գ, գլ. ԼԹ),           |
| 5) Պատպահ՝ 4 (գիրք Գ, գլ. Խ),      | 11) Շապուհ 4 (գիրք Գ, գլ. ՄԶ),       |
| 6) Վարագպատ՝ 4 (գիրք Գ, գլ. Խ),    | 12) Անիշխանություն՝ 3 (գիրք Գ,       |
| 7) Արշակ—                          | զեապոյ 5 (գիրք Գ, գլ. ԽԶ),           |
|                                    | 13) Արտաշես (Արտաշիր)՝ 6 (գիրք Գ,    |
|                                    | գլ. ՄԲ):                             |

Արտաշեսով ավարտվում է հայ Արշակունիների թագավորությունը, ինչպես երեսում է, Տրդատ Ա-ից մինչև նրանց վախճանը, ըստ Խորենացու կազմում է 162 տարի։

Այսպիսով, չնայած այլարտվում է հայ Արշակունիների թագավորությունը, ինչպես երեսում է, Տրդատ Ա-ից մինչև նրանց վախճանը, ըստ Խորենացու կազմում է 162 տարի։

Այսպիսով, չնայած այն բանին, որ Խորենացին հայ Արշակունիների ամբողջ հարստության մասին ուղղակի տեղեկություն չի ավանդել, սակայն այն հնարավոր է որոշել նրա ժամանակագրական վկայությունների ընդհանրության մէջ: Ինչպես երեսում է, այն կազմում է 581 տարի ( $393+26+162=581$ )՝ սկսած 134 թվականից (մ.թ.ա.) ներառյալ 447 թվականը (մ.թ.): Այս տարեքանակն էլ (581) իր հերթին բազմակողմանիորեն հաստատվում է

<sup>50</sup> Մամուկել Անեցի, էջ 63:

<sup>51</sup> Գ. Արգույան, Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 26-27:

Խորենացու «Հայոց պատմության» ամբողջ ժամանակագրական համակարգով: Երավ է, հայ հեղինակներից շատերը տեղեկություն են թողել նաև հայ Արշակունիների տիրապետության ընդհանուր տևողության մասին, սակայն, նկատի ունենալով, որ դրանք արդյունք են առանձին հեղինակների հաշվումների և չեն ժամանանշում վերոհիշյալ տարեքանակը, առաջմ թողնում ենք դրանց ըննարկումը:

Հայ կաթողիկոսների ժամանակագրությունը որոշելու համար ելակեա ենք ընդունում 301 թիվը (մ.թ.), հենվելով Խորենացու հետևյալ վկայության վրա, որը վերագրայում են հետագա համարյա բոլոր հեղինակները: «Յեօթն և տասներորդի ամի թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ առարելոյն թադէսսի զհայրն մեր Գրիգորիոս և ըստ Աւետարանի ծնող» (գիրք Բ, գլուխ ՂԱ):

Ժամանակագրական աղյուսակի համար անփոփոխ հիմք ենք ընդունում Խորենացու ավանդած տարեքանակները:

- |                                   |   |
|-----------------------------------|---|
| 1) Գր. Լուսավորիչ՝ 30 (գիրք Բ,    | 6) Ներսես Մեծ՝ 34 (գիրք Գ, գլ. ԱՅ),<br>գլ. ՂԱ), |
| 2) Արիստակես՝ 7 (գիրք Բ, գլ. ՂԱ), | 7) Սահակ (Ծահակ)՝ 3 (գիրք Գ,<br>գլ. ԼԹ),        |
| 3) Վրթանես՝ 15 (գիրք Գ, գլ. ԺԱ),  | 8) Զավեն՝ 4 (գիրք Գ, գլ. Խ),                    |
| 4) Հուսիկ՝ 6 (գիրք Գ, գլ. ԺԴ),    | 9) Ասպուրակես՝ 5 (գիրք Գ, գլ. ԽԱ),              |
| 5) Փառներսեհ՝ 4 (գիրք Գ, գլ. ԺԶ), | 10) Սահակ-Պարթիկ՝ 51 (գիրք Գ,<br>գլ. ԿԷ):       |

Այսուհետ անհրաժեշտ է նկատել միայն, որ Սահակ Պարթիկ կենդանության ժամանակ կաթողիկոսներ նստած Սուրբակի՝ 1 (գիրք Գ, գլ. ԿԴ), Բրիժոյի՝ 3 (գիրք Գ, գլ. ԿԴ) և Շամուելի՝ 5 (գիրք Գ, գլ. ԿԶ) տարեքանակները չպետք է հաշվել, որովհետև Խորենացու վկայություններով 51 տարին հաշված է Սահակ Պարթիկ բաշանայապետության սկզբից մինչև նրա մահը (գիրք Գ, գլ. ԿԷ):

Ինչպես հետևում է մինչ այս եղած շարադրանքից, Խորենացու «Հայոց պատմության» բնագրի ժամանակագրական վկայություններից պետք է փոփոխված համարել միայն պարսից Արշակունիների արքայացուցակի որոշ թվական տվյալներ՝ այնպես, ինչպես ենթադրվեց շարադրության ընթացքում: Մնացած բոլոր դեպքերում Խորենացու ավանդած բացարձակ թվական ցուցումները՝ հայ Արշակունի թագավորների, կաթողիկոսների և Սասանյան արքաների իշխանության տարեքանակների վերաբերյալ, ընդունվում են նույնությամբ: Այս վերջին ենթադրությունը ապացուցվելու է, եթե այդ ցուցումներով կառուցված ժամանակագրական աղյուսակը կաշխատենք քննարկել իր իսկ Խորենացու համաժամանակագրական վկայություններով և պատմաժամանակագրական բնույթի տեղեկություններով:

Նախապես ասենք, որ փոփոխություններ պետք է նկատել նաև Խորենացու համաժամանակագրական ներքոհիշյալ վկայություններում:

1. Երվանդի թագավորության առաջին տարին հաշվել՝ ոչ թե «յութերորդ ամի Դարեհի վերջնոյ» (գիրք Բ, գլ. ԱՅ), այլ՝ լիններորդ:

2. Խոսրով Մեծի հայր Վաղարշի թագավորության սկիզբը՝ ոչ թե պարսից համանուն արքայի «յերեսներորդի» (գիրք Բ, գլուխ ԿԵ), այլ՝ յերեսներորդի և երրորդի:

3. Վարագգատի թագավորությունը ոչ թե Շապուշ երկրորդի «յիսուն և հինգ» (գիրք Գ, գլ. Խ), կամ «յիսուն և հօթն» (ըստ տարբերակի), այլ՝ յիսուն և վեցն տարվանից:

4. Զավենի կաթողիկուսության սկիզբը՝ ոչ թե «երկրորդ ամի Վարագգատայ» (գիրք Գ, գլ. Խ), այլ՝ յերրորդ ամի:

5. Ասպուրակեսի կաթողիկոսությունը՝ ոչ թե Արշակ Գ-ի «յերկրորդ ամին» (գիրք Գ, գլ. ԽԱ), այլ՝ յերրորդ ամի:

Այս շատ անհնան փոփոխություններն են՝ որոնցով պետք է առաջնորդվել աղյուսակը ըննարկելիս, ոչ թե սոսկ բառափոխության վրա հենված ենթադրություններ են, այլ բխում են Խորենացու ժամանակագրական համակարգի բովանդակ էությունից և պատճառաբանվում են բազմակողմանիորեն: Այս բանին կարող է համոզվել ամեն որ՝ թեկուզ սույն հոդվածին կից ներկայացվող համաժամանակագրական աղյուսակի տարբեր շարքերի համապատասխան ժամանակահատվածների միջանկյալ տարեքանակների համեմատությամբ:

Նկատի ունենալով միաժամանակ, որ Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքերի ոչ միայն ժամանակագրությունը, այլև պատմական նյութի ամբողջ շարադրանքը բազմաթիվ ու բազմապիսի թելերով կապված է հոռմեական կայսրերի հետ, իսկ համախ էլ հայ թագավորների սկզբնատարիները զուգակշռված են այս կամ այն կայսրեր համապատասխան տարեքանակներով, անհրաժեշտություն է զգացվում առաջիկա համաժամանակագրական աղյուսակում ունենալ նաև հոռմեական կայսրերի ժամանակագրական շարքը:

Այստեղ արդին հիմք ենք ընդունելու պատմագիտության ընդունած ժամանակագրությունը, որովհետև Խորենացին հատուկենատ կայսրերի իշխանության տարեքանակներ է հիշատակել, չնայած, իր շարադրած պատմության պահանջներից ելնելով, հիշատակված են հոռմեական ու բյուզանդական համարյա բոլոր կայսրերը մինչև Մարկիանոս: Հատկապես կարևորն այն է, որ նրանք հիշատակված են այնպիսի հիշտ հաջորդականությամբ, ինչպես ընդունված է գիտական պատմագրության մեջ: Նախապես ասենք, որ այսուղի, որոշ նկատառումներով, որին կանգրադառնանք իր տեղում, Կոնստանդին Մեծից սկսած աղյուսակում երկրորդելու ենք կայսրերի ժամանակագրությունը, ուղեցուց ունենալով Խորենացու համաժամանակագրական վկայությունները և հենվելով հայ հետագա հեղինակների ավանդած տարեքանակների վրա:

Այժմ արդեն, եթե որոշված է պարսից Արշակունիների արքայացուցակի փոփոխությունների հարցը, եթե նախադրյալներ են ստեղծված վերականգնելու Մասանյան արքաների, հայ Արշակունիների և կաթողիկոսների ժամանակագրական աղյուսակները, եթե որ թվականն է Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքերի ժամանակագրական համակարգի ելակետը, անհրաժեշտ պահանջ է առաջանում կազմել այդ համակարգն ամփոփակ մի ընդհանուր համաժամանակագրական վկայությունները և հենվելով հայ հետագա հեղինակների ավանդած տարեքանակների վրա:

Հարազատ մնացել Խորենացուն և ինչքանո՞վ ճիշտ ենք վերականգնել նրա «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը (տե՛ս աղյուսակ Գ)։

Բացի ժամանակագրական բացարձակ թվական տվյալներից, որոնց օգնությամբ թվակարգված է սույն աղյուսակը, այստեղ, ըստ առանձին գահակալների տեղագրված են նաև Խորենացու համաժամանակագրական բոլոր վկայությունները, որոնք բացառիկ նշանակություն ունեն աղյուսակի քննարկման համար։ Հատկապես այն պատճառով՝ որ Խորենացին, նպատակ ունենալով դարերին ընդդեմ աներեր գարձնել իր «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, այդ վկայություններով փոխազարձարար կապացել է տարբեր երկրների իրար ժամանակից գահակալների, ուշագրության կենտրոնում ունենալով հայ թագավորներին ու կաթողիկոսներին։ Այս առումով արդեն, կասկածից վեր և անառարկելի է, որ Խորենացու համաժամանակագրական վկայությունները տարբեր ուղիներով միևնույն տարեթվերն են մատնանշել։ Ուստի, եթե մեր կազմած աղյուսակը իրոք պատկերն է Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգի, պետք է առաջին հերթին քննություն բռնի նրա համաժամանակագրական վկայություններով։

Ինչպես երևում է աղյուսակից, ամբողջովին արդարանում են մեր սպասելիքները, քանի որ աղյուսակի բոլոր շարքերում փոխհամաձայնությունը Խորենացու վկայությունների հետ կատարյալ է։ (Այսուղեղ նկատի չունենք Կոստանդին Մեծից հետո նկատվող մասնակի անհամաձայնությունները, որոնք դրսերպում են, մի կողմից, հոռմեական շարքի, իսկ մյուս կողմից՝ աղյուսակի մյուս երեք շարքերի միջև, որոնք, ինչպես կտևենք քիչ, ոչ թե արդյունք են աղյուսակի սխալ լինելուն, այլ այն բանի, որ այս հատվածում Խորենացին երկու տեղ շեղվում է հոռմեական կայսրերի համար ընդունված արդի ժամանակագրությունից)։

Այս եզրակացությունը ապացուցելու նպատակով նախապես թվարկենք նկատվող հակասությունները։

1. Խորենացու վկայությամբ Խոսրով Բ-ն թագավորել է Կոստանդ Բ-ի 8-րդ տարում (գիրք Գ, գլ. Ը): Առկա է Յ տարվա հակասություն, որովհետև Կոստանդի կայսրության սկիզբը համարվում է 337 թվականը, իսկ աղյուսակում Խոսրովի առաջին տարին 341 թվականն է։

2. Խոսրովի հաջորդ Տիրանը ըստ Խորենացու, թագավորել է նույն կայսեր 17-րդ տարում (գիրք Գ, գլ. Ժ): Դարձյալ նույն հակասությունը, քանի որ Տիրանի առաջին տարին աղյուսակում գրված է 350 թվականին։

3. Խորենացու երրորդ գրքի ԺԴ, ԺԵ, ԺԵ և ԺԷ գլուխների շարադրանքից երևում է, որ նախ պետք է մահանա Հուսիկ կաթողիկոսը, ապա նույն տարում, կամ ամենաուշը հաջորդ տարում Հովհանոս կայսրը, Հովհանոսի մահվան տարում, կամ հաջորդ՝ Հովհանոսը և վերջինիս մահվանից հետո Շապուհ Բ-ի կողմից կուրացվի ու գահապրկվի Տիրան թագավորը։

Աղյուսակով Հուսիկի մահը՝ 358, Տիրանի գահապրկումը՝ 361, իսկ պատմագիտությամբ՝ Հովհանոսի մահը՝ 363, Հովհանոսինը՝ 364 թվականին է տեղի ունեցել։ Ինչպես երևում է առկա է միևնույն հակասությունը։

4. Վարագգատը, ըստ Խորենացու, թագավորել է Թեոդոս Մեծի 20-րդ տարում (գիրք Գ, գլ. Խ): Այսուղեղ արդեն աղյուսակը համահնչուն է պատմագիտությանը, քանի որ Թեոդոս Մեծի առաջին տարին ընդունված է 379 թիվը, իսկ Վարագգատի թագավորության սկիզբն աղյուսակում 398 թիվն է։ Այլ հարց

Սէկելյանների տարեքա- թվերն ըստ Եվոկրիսով համաժամանակագրական աղյուսակի (Մասն Բ)	Սէկելյանների տարեքա- թվերն ըստ Եվոկրիսովի Մասն Ա, էջ 343—345, 357—358; Մասն Բ, էջ 34—35, 226—248	Վեց արքաների ժամա- նակադրությունը ըստ Բրուսեի
---	--	---

մասն իռավեց շարադրության ընթացքում։  
Առելը ըստ Խորենացու։

Նույնությամբ Այս թվակարգման համար առաջնորդվել ենք Խորենացու եր-  
րու վկայություններով Վագարշակի թաղավորը, թյան տաճին տարում (մինչև  
հմականում ընկած են Եվոկրիսով պահպաժ տարեքանակներն ու ժամանա-

լածարուր բերված են ըստ Բրուսեի։

Եթէ հայությամբ վրաց և հրեա գործչի ժամանակագրական կապի ստուգութը

լոր է որոշել, բայց թեոդոս փոքրի Աւստի կերպինի համար 42 տարին ընդու-

48

Հա  
ռա  
բյ  
նի  
թյ  
մա  
րի  
կա  
բե  
ուն  
կա  
վկ  
Ռւս  
պա  
քնի  
սեր  
րի  
տու  
զրո  
մու  
դր  
են  
հրի  
մա  
նկ  
8-ր  
կու  
կու  
17-  
Տի  
եր  
կա  
տո  
կու  
մա  
ուն  
կու  
կու  
մա

է արգեն, որ Թեոդոս Մեծի համար պատմագիտության մեջ ընդունված է ընդամենը կայսրության 16-ամյա ժամանակաշրջան:

5. Վերջապես, երրորդ գրքի 41-րդ զլիսի տեղեկություններից երևում է, որ Թեոդոս Մեծը թագավորեցրել է Պապի Արշակ-Վաղարշակ որդիներին և դրանից մեկ կամ երկու տարի անց մահացել: Այստեղ արգեն կա մոտ 9 տարվա հակասություն, քանի որ աղյուսակում Արշակ-Վաղարշակի թագավորության սկիզբը 402 թիվն է, իսկ Թեոդոսի կայսրության վախճանը ընդունված է 395 թիվն: Այս 9-ը տարվա հակասությունը տարածվում է նաև Թեոդոս Մեծից հետո ընկած ժամանակաշատվածի վրա:

Ինչպես տեսնում ենք, նկատվող հակասությունները օրինաշափ բնույթ են կրում և որոշակի սահմանագծով (Թեոդոս Մեծի առաջին տարին) տարածվում են քննարկվող ժամանակաշատվածի երկու բաժինների վրա՝ երեքամյա հակասություններ մինչև Թեոդոս Մեծ և իննամյա հակասություններ նրանից հետո: Հատկապես կարեռն այն է, որ այս հակասությունները հեշտությամբ գումարում են, երբ փորձում ենք հոսմեական շարքի քննարկվող ժամանակաշատվածը թվակարգել Խորենացու համաժամանակագրական վկայություններով:

#### Այսպես՝

Երեքամյա հակասությունների պատճառը հետևյալն է. Խորենացին Կոստանդին Մեծի կայսրությունը հաշվել է ոչ թե 306 թվականից, ինչպես ընդունված է, այլ Դիոկղետիանոսի վերջին տարվանից (304 թ. մ. թ.), նրան տալով 30-ամյա կայսրության ժամանակաշրջան:

Եթե ապացուց նկատի ունենք հետևյալը:

Խորենացու համաժամանակագրական վկայություններով Տրդատ Մեծի առաջին տարվանից մինչև Խոսրով Բ-ի առաջին տարին պետք է հավասար լինի Դիոկղետիանոսի երկրորդ տարվանից մինչև Կոստանդ Բ-ի 8-րդ տարին ընկած ժամանակաշրջանին:

Ինչպես երևում է, հայկական գծում միայն Տրդատի թագավորության տարիներն են՝ 56 տարի, որը բաժանվում է հոսմեական շարքի համապատասխան ժամանակաշատվածին հետևյալ կերպ: Տրդատը իր թագավորության առաջին 19-ը տարիներին ժամանակակից է Դիոկղետիանոսին, քանի որ վերջինիս համար համարյա բոլոր աղյուսները՝ թե հայ, թե օտար, վկայում են 20-ամյա կայսրության ժամանակաշրջան: Այդպես էլ ընդունված է պատմագիտության մեջ:

Տրդատի թագավորության վերջին 7 տարիները, ըստ Խորենացու, համընկնում են Կոստանդ Բ-ի առաջին 7 տարիներին, որովհետև վերջինիս 8-րդից ինչպես ասվեց, թագավորել է Խոսրովը: Այսպիսով, մնում է Տրդատի միջանկանցին 30 տարին, որը պետք է տալ Դիոկղետիանոսի հաջորդ և Կոստանդ Բ-ի յանուարի Կոստանդին Մեծին, վերջինիս կայսրությունը հաշվելով 304 թիվը, նկատի ունենալով, որ Խորենացին ճիշտ գիտեր Դիոկղետիանոսի առաջին տարին՝ 284 թ. մ.թ.: 304 թիվը իբրև Կոստանդին Մեծի առաջին տարի հաստատում է նաև Ասողիկը: Ըստ Ասողիկի «Ի սորա (Կոստանդինի) քսանամեկին ՄԴԱ է նաև Ասողիկը»: Ըստ Ասողիկի «Ի սորա (Կոստանդինի) քսանամեկին ՄԴԱ (291) ամ էր ի կենարար շարշարանաց Տեառն»<sup>52</sup>: Եթե 3 տարով ետ ենք տանում Կոստանդին Մեծի կայսրությունը, արդյո՞ք նույնքանով էլ չի խախտվում

52. Առաջիկ, էջ 138:

Թեղողոս Մեծի առաջին տարին, որի շուրջ, ինչպես տեսանք, չկար անհամաձայնություն աղյուսակի և պատմադիտության միջև: Ըստ Խորենացու՝ ոչ Քննարկենք հայ ու Հոռմեական շարքերի մի այլ ժամանակահանատված:

Ըստ Խորենացու, Տիրան Բ-ի առաջին տարվանից մինչև Վարազդատի առաջինը հավասար է Կոստանդ Բ-ի 17-րդից մինչև Թեղողոս Մեծի 20-րդին ընկած ժամանակաշրջանին:

Հայկական գծում ունենք՝ Տիրան Բ<sup>1</sup> 11 + Արշակ Բ<sup>2</sup> 30 + Պապ<sup>3</sup> 7 = 48:

Հոռմեական գծում ենթագրվում է Կոստանդ Բ-ի 17-րդ տարվանից + Հուլիսանունը + Հովհաննունը + Վաղերիանոս և Վաղես + Թեղողոս Մեծի 19-ը տարին: Ինչպես երևում է, Հոռմեական գծում ըստ Խորենացու Հայտնի է միայն հիշյալ ժամանակահատվածի վերջին 19-ը տարին, մյուսները անհայտ են, որովհետև Խորենացին վերջիշյալ կայսրերի տարեքանակները չեն ավանդել: Այս միջանկյալ տարեքանակը պարզելու համար հենվում ենք հետագա հայ հեղինակների ավանդած և պատմագիտության ընդունած տարեքանակների վրա:

Այսպիս:

Անունները հաջորդաբար	Ասողիկ 1885, էջ 138—139	Ս. Անսեղի 1893, էջ 64—67	Մխ. Արքի- վանցիկ 1867, էջ 25	Բառ պատմա- գիտութ.
Կոստանդին Բ . . . . .	24	24	24	24
Հուլիսանոս . . . . .	2	1,8	2	2
Հովհաննոս . . . . .	1	8 ամիս	1	1
Վաղենտիանոս — Վաղես . . . . .	11	16 (Նախ 11)	11	15
Թեղողոս Մեծ . . . . .	15	25	25	16

Քանի որ ոչ մի տեղ չենք գտնում որոնված 48 տարին, ենթագրաբար ընդունում ենք այլուակի առաջին երեք կայսրերի տարեքանակներն անփոփոխ, նկատի ունենալով, որ նրանք ընդունված են բոլորի կողմից: Այս ենթագրությամբ պարզվում է նաև քննարկվող ժամանակահատվածի առաջին ծայրաթեր, որը կաղմելու է 11 տարի՝ Կոստանդ Բ-ի մնացած 8 տարին + Հովհաննու 2 + Հովհաննոս 1: Այսպիսով երկու ծայրաթեր միասին կաղմելու են 30 տարի, մնում է միջանկյալ 18 տարին, որը, դարձալ ենթագրաբար, տալիս ենք Վաղերիանոս և Վաղես կայսրերին, պատմագիտության մեջ ընդունված 15-ի փոխարեն: Փաստորեն, եթե 3 տարով, ըստ Խորենացու, ետ շարժվեց Կոստանդին Մեծի կայսրությունը, հետեւար և հաջորդ կայսրերինը, Թեղողոս Մեծի առաջին տարին մնաց անփոփոխ, Վաղենտիանոս և Վաղես կայսրերի տարեքանակները Յ տարի ավելացնելով:

Այս ենթագրություններով կունենանք հետևյալ տարեթվերը՝ Դիոկեստիանոս՝ 284—(20)—304, Կոստանդին Մեծ՝ 304—(30)—334, Կոստանդ Բ՝ 334—(24)—358, Հովհաննոս՝ 358—(2)360, Հովհաննոս՝ 360—(1)—361, Վաղենտիանոս և Վաղես՝ 361—(18)—379, որոնցով լուծվում են վերջիշյալ երեքամյա բոլոր հակասությունները:

Երկրորդ հարցը Թեղողոս Մեծից հետո նկատված 9-ամյա հակասությունների հարցն է: Այստեղ արգեն պատճառը համեմատաբար որոշակի է: Բանն այն է, որ Խորենացին Թեղողոս Մեծի համար ընդունել է ոչ թե 16, այլ 25-ամյա կայսրության ժամանակաշրջան: Դիմենք փաստերին՝ Վերը կայսրեւում տեսանք, որ նա հիշատակեց 20-րդ տարին՝ իբրև Վարազդատի 1-ին տա-

րի: Սրան զուգահեռ Խորենացին հայտնում է նաև, որ նույն կայսրը ոչ միայն գահազրիել ու աքսորել է Վարազդատին, վերջինիս 4-ամյա թագավորությունից հետո (գիրք Գ, գլ. հ, ԽԱ), այլև թագազրել է Պապի Արշակ ու Վաղարշակ որդիներին, այս ինչպես երեսում է երրորդ զրբի 41-րդ զլիի շարագրանքի հաջորդականությունից, Արշակի երկրորդ, գուցե և երրորդ տարում մահացել:

Այսպիսով, ըստ Խորենացու, Թեղողոս Մեծի համար ունենք՝ 24 կամ 25 տարի (19 + 4 + 1 կամ 2), մի տարեքանակ, որը հաստատում են Ս. Անեցին, Մի. Այրիվանեցին և ուրիշներ: Այստեղ էլ արդյունքը նույնն է: Թեղողոս Մեծի համար ընդունելով 25-ամյա ժամանակաշրջան (ընդունելու իրավունք չունենք, քանի որ խոսքը Խորենացու «Հայոց պատմության» ժամանակաբական համակարգի վերականգնմանն է վերաբերում), և անփոփոխ պահպանելով հետագա կայսրերի տարեքանակները՝ Արկադիոս՝ 13, Թեղողոս փոքր՝ 42, ինչպես ընդունված է, որը հաստատում են նաև հայ հեղինակները՝ Ասողիկ, Ս. Անեցին, Մի. Այրիվանեցին և ուրիշներ, բացարկվում են նաև Հոռմեական շարքի քըն-նարկվող հատվածի մյուս շարքերի միջև նկատվող 9-ամյա հակասությունները:

Նկատի ունենալով միաժամանակ, որ այս մոտեցմամբ Հոռմեական շարքի բննարկվող ժամանակահատվածը համահնչյուն է գառնում աղյուսակի մնացած բոլոր շարքերին, որը ներքին փոխհամաձայնությունը ակնրախ և անկատածելի է, անհնար է շննարկելու անգամ, որ Խորենացին Հոռմեական կայսրերի համար այսպիսի ժամանակագրության է հետևել:

Համաժամանակագրական այս աղյուսակը Խորենացու համաժամանակագրական տեղեկություններով քննարկելուց զատ, մեր հերթական ինդիքն է այն ստուգման ենթարկել նաև նրա «Հայոց պատմության» երկրորդ ու երրորդ գրքերի պատմա-ժամանակագրական բնույթի տեղեկություններով և այդ գրքերուում ամփոփված պատմական նյութի ամբողջ շարագրանքով: Այս պահնաջը պեաք է ծառանա Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրությամբ զրադվոզ յուրաքանչյուր ուսումնասիրողի առջն, քանի որ, ինչպես հայտնի է, և ինչպես վերևում ակնարկվեց, Խորենացին ժամանակագրության հեղինակ չի բարիս բուն իմաստով, ինչպես օրինակ Եվսեբիոս Կիսարացին իր հանրահայտ «Ժամանակագրությամբ», Միսիթար Այրիվանեցին՝ «Պատմությունն ժամանակագրական» աշխատությամբ և ուրիշներ: Խորենացին հմուտ պատմաբար է, որին ժամանակագրությունը անհրաժեշտ է եղել բուն պատմության շարագրանքի համար, որովհետեւ, ինչպես նիշան նկատել է նաև «Ոչ է պատմութիւնն ձևարիտ առանց ժամանակագրության»: Այս իսկ առումով Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրության վերականգնման ամեն մի փորձ պետք է քննություն բոնի նրա շարագրանք պատմությամբ, անառարկելի համարելով այն, որ նա պատմությունը կշարագրեր իր գիտեցած ժամանակագրությամբ:

Նախապես հայտնինք, որ մեր կազմած համաժամանակագրական աղյուսակն ամբողջությամբ քննություն է բռնում նաև այս գնաքրում, որի հաստատման համար Խորենացու աշխատությամբ կայսրեւում է աշխատությամբ և ուրիշներ: Խորենացին հմուտ պատմաբար է, որ ներքին ժամանակագրությունը անհրաժեշտ է եղել բուն պատմության շարագրանքի համար, որովհետեւ, ինչպես նիշան նկատել է նաև «Ոչ է պատմութիւնն ձևարիտ առանց ժամանակագրության» ժամանակագրական պահպանման ամեն մի փորձ պետք է քննություն բոնի նրա շարագրանք պատմությամբ, անառարկելի համարելով այն, որ նա պատմությունը կշարագրեր իր գիտեցած ժամանակագրությամբ:

օտար գործիչները որևէ շափով ժամանակակից Ախնան իրենց հետ հիշատակված հայոց արքաներին:

Վերջապես, համոզվելու համար, որ, իրոք, այս ժամանակագրական համակարգն է ընկած Խորենացու «Հայոց պատմության» հիմքում, դիմենք նաև հետեւյալ փաստերին:

1. Երկրորդ գրքի 24-րդ գլխի վկայությունների համաձայն Հայաստանում թագավորել է Արշամը, իսկ նույն տարում Պարսկաստանում մահացել է 6-րդ գահակալ Արշամը և գահը ժառանգել նրա մանկահասակ որդի Արշամիրը: Այսպիսի էլ ունենք աղյուսակում: 20 թվականը (մ.թ.ա.) տարեթիվն է թե Արշամի մահվան և թե Արշամի ու Արշամիրի թագավորության:

2. Նույն գրքի 26-րդ գլխի տեղեկություններով, Արգարի թագավորության երկրորդ տարում Հայաստանը լրիվ հարկատու է գարձել Օգոստոս կայսեր և նույն տարում տեղի է ունեցել Քրիստոսի ծնունդը:

Աղյուսակով՝ մեկ թվականը (մ.թ.) համապատասխանում է Արգարի երկրորդ տարվան, նույն թվականին, բայց պատմագիտության, տեղի է ունեցել Օգոստոսի արևելյան աշխարհագիրը և Քրիստոսի ծնունդը:

3. Երկրորդ գրքի 6-րդ գլխի շաբաթանքից երեսում է, որ Շապուհ Բ-ն թագավորել է Խոսրով Բ-ի սկզբի տարիներին: Իրականում այսպէս էլ ունենք աղյուսակում՝ Խոսրով Բ՝ 341 թվից (մ.թ.) Շապուհ Բ՝ 343-ից (մ.թ.):

4. Համաձայն նույն գրքի 9-րդ գլխի, վրաց թագավոր Միհրանը սպանվել է Խոսրով Բ-ի ժամանակ Հյուսիսային ցեղերի կողմից, որոնք արշավել էին Հայաստան: Միհրանը, որը 24-րդ գահական է վրաց, բայց Բրոսսեի թագավորել է 265—342 թթ.<sup>53</sup>:

Ինչպես տեսնում ենք նաև, իրոք, ժամանակակից է Խոսրովին, վերջինիս թագավորության սկզբի տարիներին:

5. Ըստ Խորենացու, Խոսրով Բ-ի որդի Տիրանի 4-րդ տարուց հետո Միհրանը պետքում պայշարել են Շապուհ Բ-ն ու Կոստանդը և զինադադար են կնքել, որը տեղի է «ամս սակաւա», որից հետո վերադարձել է Կոստանդ կայսրը և երկար հիվանդությունից հետո մահացել (գիրք Գ, գլ. ԺԹ): Աղյուսակով Տիրանի 4-րդ տարին 353 թվին է, իսկ Կոստանդի մահը՝ 358<sup>54</sup>: Պարզ երեսում է, որ աղյուսակը քննություն է բռնում նաև այս տեղեկություններով:

6. Այս դեպքերից հետո Տիրան թագավորը, դաշնակյած Հովհանոսի հետ, պայշարել է Շապուհ Բ-ի դեմ, և Հովհանոսի առաջին կամ երկրորդ տարում տանջամահ արել Հուսիկ կաթողիկոսին (գիրք Գ, գլ. ԺԹ, ԺԴ): Ըստ աղյուսակի՝ Հովհանոսի կայսրության սկիզբը 358 (մ.թ.), նույն կամ 359 թվին Հուսիկի մահը:

7. Համաձայն 3-րդ գրքի 19-րդ գլխի, Վալենտիանոս կայսրը թուղթ է գրել Արշամ Բ-ին: Աղյուսակով՝ Վալենտիանոսի և Արշամի սկզբնատարիները գրված են 361 թվին: Հետեւարար հնարավոր էր, որ նրանք նամակագրական կապ ունենային:

8. Ըստ Խորենացու Պապի թագավորության առաջին տարում տեղի է ունեցել Զիրավի ճակատամարտը: Ժամանակակիցներ են Շապուհ Բ-ը և Թեոդոսի:

<sup>53</sup> Զուանչիք, Պատմութիւն վրաց, Վենետիկ, 1884, էջ 40, ծանոթ. 4:

<sup>54</sup> Ինչպես այս, այնպես էլ հնագաւ կայսրերի մասին խոսելիս, նկատի ունենք նրանց համար Խորենացու վկայություններով կազմված ժամանակագրությունը, որի մասին խոսվեց վերևում:

Մեծ կայսրը (գիրք Գ, գլ. ԷՅ): Այդ հնարավոր է, որովհետև Պապի առաջին տարին 391 թիվն է, Շապուհը թագավորելու է դեռևս մինչև 413 թիվը, իսկ Թեոդոսի Մեծի կայսրությունը ընդգրկում է 379—404 թվականները:

9. Խորենացու տեղեկություններով Պապին սպանել են Թեոդոսի Մեծի ժամանակ (գիրք Գ, գլ. ԷԹ), Վարազդատին թագավորել և ապա, ինչպես ասվել է, գահազրկել է Թեոդոսի Մեծը, որից հետո թագավորել է Պապի Արշամը և կաղաքական որդիներին և երկու տարի անց մահացել: Ըստ աղյուսակի՝ Պապի մահը՝ 398, նույն թվից՝ Վարազդատ, վերջինիս գահազրկումը՝ 402-ին, այս թվից՝ Արշամ և Վաղարշակ:

10. Համաձայն Երրորդ գրքի 42-րդ գլխի, Շապուհ Բ-ն ու Արկադիոս կայսրը ժամանակակիցներ են և բաժանում են Հայաստանը Արշամ Գ-ի վեցերորդ տարում (գիրք Գ, գլ. ԽԶ):

Այսպես էլ ունենք: Արշամ Գ-ի թագավորության վերջը (ամբողջ Հայաստանի վրա) 407 (մ.թ.), Արկադի կայսրությունը՝ 404—417, Շապուհ Բ-ի թագավորությունը արդեն հայտնի է:

11. Արշամ Գ-ի Հայաստանի արևմտյան մասում երկու և կես տարվա թագավորության (407—409/10) վերջինին պայքար է տեղի ունեցել Արշամի և Խոսրովի միջև (վերջինս արևելյան մասում), ժամանակակից են դարձյալ Արկադ կայսրը և Շապուհը (գիրք Գ, գլ. ԽԲ—Ծ): Այստեղ էլ համաձայնությունը անկասկածելի է:

12. Ըստ Երրորդ գրքի 50-րդ գլխի տեղեկությունների, Սահակ Պարթեի կահողիկոսության առիթով, ինչպես նաև Արկադիոս կայսեր հետ բարեկամանաւու պատճառով, Շապուհը զայրանում և գահազրկում է Խոսրովի Գ թագավորին և նրա փոխարեն թագավորում Վոամշապուհին: Աղյուսակի՝ համաձայնությունը ակնրախ է, որովհետև Խոսրովի առաջին անգամվա թագավորության վերջին տարին, ինչպես ասվել է Շապուհը (գիրք Գ, գլ. ԽԲ—Ծ): Այստեղ էլ համաձայնությունը անկասկածելի է:

13. Նույն գլխի վկայություններով, Շապուհ Բ-ի որդի Արտաշիրը, որը առարված էր Հայաստան՝ թագավորելու Վոամշապուհին, թագավորելուց հետո անու թողեալ գունդ ստուար: Ինքն ի Տիգրոն փութայր հասանել, ի ծերութենէ հօրն ակն ածել, ըստ իր ունելով զեսրուով...:

14. Համաձայն նույն գրքի 51-րդ գլխի, Արկադիոս կայսրը արքա ժամանակակից է Վոամ Կրման արքային, վերջինիս թագավորության սկզբներին: Աղյուսակով՝ Վոամ Կրմանի առաջին տարին և Արկադիոս կայսերը վերջին տարին 417 թվականն է:

15. Ըստ Երրորդ գրքի 55-րդ գլխի տեղեկությունների, Խոսրով Գ-ն երկրորդ անգամ թագավորվել է Հաղկերտ Ա-ի կողմից և մեկ տարի թագավորելուց հետո մահացել, որին փոխարենել է Հաղկերտ որդի Շապուհը: Աղյուսակով՝ Հաղկերտ Ա՝ 427-ից, Խոսրովի երկրորդ թագավորությունը՝ 433—434 թթ., Շապուհի թագավորության սկիզբը՝ Հայաստանում՝ 434-ից:

16. Նույն գրքի 56-րդ գլխի վկայություններով, Հաղկերտ Ա-ի մահվան տարում սպանվել է Շապուհը, այդ թվականը միաժամանակ վերջինիս Հայաստանում թագավորելու վերջին տարին էր: Այսպես էլ ունենք աղյուսակում, քանի որ նույն 438 թվականն է թե՝ Հաղկերտի մահվան և թե՝ Հայաստանում Շապուհի թագավորության վերջին տարին:

Չնայած մեր կազմած համաժամանակագրական աղյուսակի ստուգման համար այսքանով էլ չեն սպառվում Խորենացու «Հայոց պատմոթյան» ընձեռած հնարավորությունները, սակայն բավարարվենք եղածով և այստեղ ավարտենք մեր խոսքը: Ավելացնենք միայն, որ այս բոլորից հետո, երբ աղյուսակը քննություն է բառում Խորենացու համաժամանակագրական վկայություններով, պատմա-ժամանակագրական բնույթի տեսքեկություններով և, անգամ, նրա աշխատության ամրող շարադրանքով, մեր կարծիքով անկարելի է կասկածելն անգամ, որ այս ժամանակագրությունն է հանդիսացել «Հայոց պատմոթյան» հենքը և այս է Խորենացու երկրորդ ու երրորդ գրքերի ժամանակագրական համակարդի ընդհանուր ու ճիշգ պատկերը:

Այժմ արդեն, երբ վերականգնված ենք համարում Խորենացու «Հայոց պատմոթյան» ժամանակագրական համակարգը, մեր հերթական խնդիրն է առաջիկայում, անդրադառնալով նաև նրա հավաստիթյան հարցին, ցույց տալ՝ հնարավո՞ր է արդյոք առաջնորդվել այդ ժամանակագրությամբ, կամ որքանո՞վ է հավասար Խորենացու շարադրած պատմոթյունը:

Լ. Պ. ՇԱՀԻՆՅԱՆ

## О ХРОНОЛОГИЧЕСКОЙ СИСТЕМЕ «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

### Р е з ю м е

В статье рассматривается ряд важных вопросов, уточнение которых может послужить предпосылкой для восстановления хронологии второй и третьей книг «Истории Армении» М. Хоренаци.

На основании соответствующих показаний М. Хоренаци и последующих армянских историков в статье показано, что Хоренаци указал в качестве даты основания династии персидских Аршакидов—не 250 г. до н. э., как это полагали многие исследователи, а 262 г. до н. э.

Второй вопрос касается определения последнего года царствования той же династии Аршакидов и, следовательно, даты основания династии Сасанидов. Автор предполагает, что Хоренаци имел в виду не 226, а 245 г. н. э.

Особое внимание автор обратил на те изменения, которые претерпели в последующие века хронологические данные Хоренаци, касающиеся царей династии персидских Аршакидов, и пришел к заключению, что, корректируя эти изменения, следует принять за основу Степанниоса Асогхика, поскольку у него данные Хоренаци сохранились в сравнительно более нетронутом виде. При таком толковании данных Хоренаци как по конечным датам, так и по сумме лет правления указанных в списке царей общая продолжительность правления династии персидских Аршакидов составляет 507 лет вместо указываемых ими 476.

Исходя из этих предварительных выводов, автор статьи составил хронологическую таблицу персидских Аршакидов, на основании которой он пытается решить вопросы хронологии армянских Аршакидов, Сасанидских царей и армянских католикосов. По мнению автора статьи,

до нас дошли в неизменном виде все те хронологические данные Хоренаци, которые относятся к количеству лет правления каждого из последних.

На основании соответствующих синхронических данных Хоренаци автор предлагает внести некоторые корректировки в дошедший до нас список царей армянских Аршакидов.

К статье приложена общая синхроническая таблица второй и третьей книг «Истории» Мовсеса Хоренаци, которая согласована автором со всеми показаниями хронологического характера Хоренаци и изложением всей его «Истории». Эту таблицу автор считает общей и точной картиной хронологической системы упомянутых книг «Истории Арmenии».

Рассмотрение достоверности этой хронологии не входило в цель данной статьи.

L. P. CHAHINIAN

## A PROPOS DE LA CHRONOLOGIE DE L'HISTOIRE D'ARMENIE DE MOISE DE KHORENE

L'auteur examine quelques questions préliminaires se rapportant aux recherches chronologiques des II<sup>e</sup> et III<sup>e</sup> livres de l'*Histoire d'Arménie* de Moïse de Khorène.

La première rectification émanant des témoignages de Moïse de Khorène, comme de ceux des auteurs anciens l'ayant imité, concerne l'avènement de la dynastie des Arsacides de Perse que le célèbre historien arménien fait remonter à -262 et non à -250 comme on l'a souvent cru.

La seconde question est celle de la date de l'avènement de la dynastie des Sassanides qui est aussi celle de la fin des Arsacides, que l'auteur suppose être chez Moïse de Khorène l'an 245 et non en 226.

L'auteur examine également la question des modifications d'ordre chronologique apportées à la liste des rois Arsacides de Perse. Les témoignages de Moïse de Khorène que l'auteur compare à ceux des historiens reproduisant la liste des rois montrent que la liste des rois arsacides de Perse de Moïse de Khorène a subi, par ailleurs, de notables changements qu'on ne peut rétablir qu'en s'adressant à Etienne Acohik qui nous a relativement mieux conservé ces mêmes témoignages de Moïse de Khorène.

Une semblable analyse des témoignages de Moïse de Khorène, s'inspirant, d'une part, des dates limites et, d'autre part, de la somme des années de la liste des rois nous donne la durée du règne des Arsacides égale à 507 années au lieu des 476 admises.

Ces premières déductions ont servi à dresser le tableau chronologique des Arsacides de Perse, grâce auquel l'auteur tente de et aider à

résoudre les problèmes chronologiques concernant les Arsacides arméniens, les rois sassanides et les patriarches arméniens.

Selon l'auteur, les témoignages renfermés dans le texte original de l'Histoire d'Arménie de Moïse de Khorène, relatifs à la durée des règnes des patriarches arméniens, nous sont parvenus inchangés.

La liste des rois arsaciades arméniens exigent certaines corrections qui devront découler des données chronologiques rapportées par Moïse de Khorène.

L'article s'accompagne d'un tableau synchronique général des II<sup>e</sup> et III<sup>e</sup> livres de l'Histoire d'Arménie de Moïse de Khorène. Ce tableau correspond à tous les renseignements d'ordre chronologique rapportés par Moïse de Khorène, ainsi qu'au contenu de son Histoire. Selon l'auteur, ce tableau reproduit fidèlement et avec précision le système chronologique des deux livres précités de l'Histoire d'Arménie.

Le présent article n'avait pas pour tache de vérifier la justesse de cette chronologie.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՍ ՄԻՒԽԱՏՐԵՐԻ ԱՊՎԵՏԻՆ ԱԹՔԵԹԵՐ  
ՄԱԴՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՃՐ ԶԵՐԱԳՐԵՐԻ ԽԵՍՏԻՑՈՒՏ «ՄԱՏԵՆԱԳԱՐԱԿ»

ԲԱՆՐԵՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱԿԻ  
ԵՐԵՎԱՆ Խ 8 1967

### ՀՐԱՋ ԲԱՐԹԻԿՅԱՆ

## ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ» ԵՎ ՆՐԱ ԲԱՆԱՔԲՈՒ ՀԱՐՑԻ ՀՈՒՐՁԸ

Բազմաթիվ են այն մասնագետները, որոնք զրադվել են հայկական միջնադարի ամենալուսավոր գեմքերից մեկի՝ Անանիա Շիրակացու զրական ժառանգության ուսումնասիրությամբ։ Սակայն պետք է ընդգծել, որ մեկ ուղղությամբ կատարված աշխատանքը չի կարելի դեռևս բավարար համարել, մինչև վերջնականապես շահմանագատենք իսկապես Անանիա Շիրակացուն պատկանող երկերը նրան սիսակ կերպով վերագրվող երկերից, մինչև վերջնականապես չգտնենք, չորոշենք, թե իսկապես ինչպիսի աղբյուրներից է օգտվել Շիրակացին, հին աշխարհի ո՞ր դիտնականների նվաճումներին է նա արձագանքել, ի՞նչ է ավելացրել նա մինչ այդ եղած ուսումնասիրությունների վրա, հայ մտածողի մասին մեր ունեցած պատկերացումը կինի որոշ շափով սահմանափակ, հաճախ նաև ոչ ճիշտ։

Այդ ուղղությամբ մեր կատարած աշխատանքի առաջունքը «Ճաղագս ամպոց և նշանաց» երկի իսկական հեղինակի հայտնաբերումն էր։ Պարզվեց, որ այդ գործը սիսակամբ է վերագրվել Շիրակացուն, որ այն թարգմանությունն է անտիկ աշխարհի նշանավոր բանաստեղծ Արատոս Սոլացու «Դիօսդիուս» կամ «Պրօցռատուչ» գործի։<sup>1</sup>

Շարունակելով աշխատել այդ ուղղությամբ, մենք կանգ առանք Շիրակացուն վերագրված «Ժամանակագրության» վրա։ Նախ և առաջ պետք է նշել, որ մեր ժամանակներում զրեթե անտեսվել է այն բրտնաշան աշխատանքը, որ տարվել է սրանից վեց տասնամյակ առաջ «Ժամանակագրության» վրա։ Անուշագրության են մատնվել այն արդյունքները, որոնց հասել են այդ երկով զրադված մասնագետները և այժմ, առանց որևէ կասկածի, «Ժամանակագրությունն» ամբողջությամբ վերագրվում է Անանիա Շիրակացու գրչին, սահմանագետ այն տպավորությունը, որ դրանով, իբր, մի աստիճանով բարձրացվում է հայկական միջնադարի խոշորագույն մտածողներից մեկը։ «Ժամանակագրությունը»<sup>2</sup> կազմված է տարբեր հեղինակների գործերից, որի մասին մասնագետները մտանացուց են արել դեռ վաղուց։ Այնտեղ օգտագործվել են։

1. Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից առանձին գլուխներ (երկու էջ<sup>3</sup>)։

1 Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964։

2 «Ժամանակագրություն» վերնագիրը նոր շրջանի հրատարակիչներին է պատկանում։ Զերպերում այդպիսի վերնագիրը չի հանդիպում։

3 Էջերը հաշվվում են ըստ Ա. Աբրահամյանի հրատարակության։ «Անանիա Շիրակացու մատնագրությունը», Երևան, 1944։

2. «Անդրեասի» վերնագրված, բայց իրականում Հիպաղոլիտոսին պատկանող «Liber generationis» աշխատության հայերեն թարգմանությունը (տասնմեկ էջ):

3. Պարսից Աքեմենյան թագավորների, եզիպտոսի Պտղոմյանների, հրեա իշխանների, Հոռմեական-բյուզանդական կայսրերի մի ցուցակ՝ հիմնված Եվսեբիոս Կեսարացու աշխատությունների վրա (յոթ էջ):

4. Սասանյան թագավորների մի ցուցակ, ամենայն հավանականությամբ հայ հեղինակի գրչին պատկանող ինքնուրույն գործ:

5. «Եւսեբի ժամանակագրի» և «Եպիփանի» վերնագրերը կրող մի հատված, պարսից Աքեմենյան թագավորների մի երկրորդ ցուցակ և առանձին, իրար հետ կապ չունեցող դեպքերի և առասպելների նկարագրություն, վերցված նմանապես Եվսեբիոս Կեսարացու գործերից:

6. Հոռմեական-բյուզանդական կայսրերի մի երկրորդ ցուցակ (բասներկու էջ), վերնագրված՝ հայուսերք Հոռովմոց թէ որշափ ամք կամ կամ ամիսը և զինչ գործ գործեցան», նույնպես թարգմանական: Պեսք է նշել, սակայն, որ հայ բանահավաքի ձեռքն այս վերջին բաժնում պարզ նկատելի է, հակաքաղկեդոնական ոգով տոպորված հեղինակը մանրամասն կանգ է առնում ոչ միայն դավանարանական վեճերի վրա, այլև որոշ շափով նաև ժամանակակից Հայոց պատմության, մի բան, որ բացարձակապես տեղ չի գտել «Ժամանակագրության» մյուս մասերում (բացառությամբ ընդամենը մի երկու նախադասությունների)<sup>4</sup>:

Այժմ համառոտակի անդրադառնանք այն աշխատանքին, որ կատարված է «Ժամանակագրության» ուսումնասիրության գծով:

Դրիգոր Խալաթյանցը 1903 թ. հրատարակեց նախորդ տարում Համբուրգում կայացած արևելագիտների համագումարում կարդացած իր «Հիպաղողիտոսի ժամանակագրության հայերեն թարգմանության մասին»<sup>5</sup> խորագրով դեկուցումը: Այդ աշխատության մեջ Գր. Խալաթյանցը քննության ննթարկելով ինքը առարկա «Ժամանակագրության» «Անդրեասի» վերնագրված բաժինը գտավ, որ այն «բառացի նմանություն ունի Հիպաղողիտոսի «Գիրք ծննդոց»-ի (Liber generationis) հետ»<sup>6</sup>: Գր. Խալաթյանցը միաժամանակ ցույց տվեց, որ սկսած պարսից Աքեմենյանների ցանկից «Ժամանակագրության» «Liber generationis»-ի հետ ունեցած նմանությունը զգալի կերպով նվազում է, այսինքն պարզ է զառնում, որ «Ժամանակագրությունը» կազմողի համար Հիպաղողիտոսի գործը դադարում է աղբյուր ծառայելուց և աղբյուր է զառնում մի այլ գործ, որը Եվսեբիոս Կեսարացու գրչին է պատկանում:

Գր. Խալաթյանցը փորձում է որոշել, թէ ով է այս Անդրեասը, որ հանդիս է զալիս որպես այս բաժնի հեղինակ և զառնում է, որ նա Մաքնոս Եպիսկոպոսի Եղբայր Անդրեասն է (IV դար), որ «Հայունապես դ զարուն կիսուն Հիպաղողիտ-

<sup>4</sup> Իշարկե, խոսքը չի վերաբերամ Մովսես Խորենացուն պատկանող հատվածին և Սասանյան թագավորների ցուցակին:

<sup>5</sup> G. Chalatantz, Über die armenische Version der Weltchronik des Hippolitus, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, Bd. XVII, 1903, S. 182—186. Այս հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1904, Փետրվար, էջ 46—48; ուռւերեն թարգմանությունը՝ Գ. Խալատյան, Արմանակագրություններ, Հայունապետություններ, 1903, մաս 1, Երևան, 1903, էջ 50—54.

<sup>6</sup> Գ. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 47:

յա ժամանակագրության բնագրեն՝ բազվածույք մ' ըրած է»<sup>7</sup>: «Այս բազվածքը, — շարունակում է նա, — հայերենի է թարգմանել Անանիա Ծիրակացին»<sup>8</sup> և որ «այս զմեզ զբաղեցնող գրություն» (այսինքն ամբողջ «Ժամանակագրությունը» — Հ. Բ.) Ծիրակացույն է, նույն իսկ գրության լեզուն և ոճը ժամանակույց կրնեն»<sup>9</sup>:

Հայագետ Ֆինկը նույնպես փորձեց ապացուցել, որ «Ժամանակագրության» մեջ հիշատակված Անդրեասը ոչ այլ ոք է, բայց Անդրեաս Բյուզանդացին, IV դարի առմարդկանը, Մաքնոսի եղբայրը<sup>10</sup>:

Գր. Խալաթյանցի հետ միաժամանակ «Ժամանակագրության» վրա աշխատում էր նաև Վենետիկի միսիթարյան Բարսեղ Սարգսյանը, որը և հրատարեց այն «Անանուն ժամանակագրութիւն», խմբագիր յօրինեալ յի գարու ի հնագոյն ժամանակագրաց «վերնագրով»<sup>11</sup>: Բ. Սարգսյանը իր ուսումնասիրության մեջ մանրամասն կանգ առավ «Ժամանակագրության» հետ կապված մի շարք աղբյուրագիտական հարցերի վրա և հանգեց հետևյալ եղբակացության «Ժամանակագրությունը» հինգեն վեց աղբյուրներեւ բազկացած է, այն 1. Մովսես Խորենացի, 2. Հիպաղողիտոս՝ Անդրեասի խմբագրությամբ, 3. Եվսեբիոս, 4. Ափրիկանոս, 5. վեցերորդ դարի անպաշտոնական գրվածքներ»<sup>12</sup>:

Բ. Սարգսյանը, ի տարրերություն մյուս ուսումնասիրողների, վերոհիշյալ Անդրեասին համարում է հայ, որը հունարեն բնագրից հայերենի է թարգմանել Հիպաղողիտոսի այս հատվածը, և հետագա ձեռագրերում սխալմամբ հիշատակվել է որպես հեղինակ: Նա գրում է. «Գուցե՝ Տարոնի հոչակավոր սուրբ Ղազար վանքի գիտնական վանականն ու Ս. Սահակա աշակերտը, որ իրքն հոգևոր հայր Ս. Շուշանկան՝ ի միասին կերպար ի Վիրս, կրլար անոր վշտացը միխիթար, և մեռնելին վերջ ալ կը գրեր իր և Ս. Նունեի խաչի Պատմությունը, Քրիստոսի 475 թվականին վերջ»<sup>13</sup>: Շարունակելով իր միտքը, նա ավելացնում է. «Հիպաղողիտոսի թարգմանողն եղած է՝ հավանորեն՝ կամ ե դարու մեր թարգմանիշներն մին, այն է Անդրեաս Տարոնեցին, զոր ի վեր անդր հիշեցինք. և կամ, Անանիա Ծիրակացին»<sup>14</sup>: «Ժամանակագրության» վերջում կցված կայսերաց երկրորդ ցուցակի մասին Բ. Սարգսյանը գրում է. «Մինչն Կոստանդիանոսի շրջանը օգտագործված են օտար (բյուզանդական) աղբյուրներ, իսկ Մեծն Կոստանդիանոսն մինչև Կոստանդիանոսի բողոքնատունը Հուստափանու (այսինքն է Հուստափիանոս Բ) — որով վերջ կդրվի ժամանակագրության բյուզանդական կայսերաց վերաբերյալ մասը՝ երթալով ավելի ընդարձակված է՝ կրոնական խնդիրներով: Շատ ջանացինք բյուզանդական պատմշաց և ժամանակագրաց կարգին մեջ որոնել գտնել հայ խմբագրության նաև այդ մասի աղբյուրները, բայց բաղդատությունները դրական արդյունք մը շտվին մեզ և մենք շուլեցինք հեռավոր աղերսներով գոհ ըլլալ: Այսու հանդերձ՝ համոզված

<sup>7</sup> Գ. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 48.

<sup>8</sup> Անդ.

<sup>9</sup> Անդ.

<sup>10</sup> F. N. Finck, Zur Personallichkeit des Chronisten Andreas, Zeitschrift für armenische Philologie, II Bd., I Heft, Marburg, 1903, S. 73—74.

<sup>11</sup> Վենետիկ, 1904:

<sup>12</sup> Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ ԺԳ—ԺՒ:

<sup>13</sup> Անդ, էջ Ը:

<sup>14</sup> Անդ, էջ ԺԳ:

ենք, որ մինչև Փոքր Թեղոս ավանդվածներն՝ ուղղակի կամ անուղղակի կերպով — այսինքն է՝ տոհմային երիցագույն հիշատակարաններու միջոցով — հունական աղբյուրներէ քաղված ըլլան։ Իսկ մնացածը — մասնավորապես եկեղ. պատմության վերաբերյալ տեղեկությունները — ըստ մեծի մասին անտարակույս Զ և է դարու առաջին կիսում գրված ասորի և Հայ այնպիսի հիշատակարաններէ հավաքված են, որոնք միաբնյայց կուսակցական ոգվովը տուգրված կամակորված և պատմական ստուգութենք զուրկ են»<sup>15</sup>։

Բ. Սարգսյանը, շարունակելով իր աշխատանքը «Ժամանակագրության» վրա, հետագայում նրա աղբյուրների ցանկում ավելացրել է նաև Արծրունյաց Գրիգոր Եպիսկոպոսի Երուսաղեմից Հայաստան գրած Թուղթը՝ Տեառնընդառաջում մասին<sup>16</sup>։ «Ժամանակագրության» մեջ կա մի Հատված այդ նամակից։

Բ. Սարգսյանը մանրամասն կանգ է առնում նաև այն կարևոր հարցի վրա. թէ այդ բազմաթիվ ու բազմատեսակ աղբյուրները ով է ի մի Հավաքել ու խմբագրել. նա գտնում է, որ այդ անձնավորությունը պետք է եղած լինի Անանիա Ծիրակացին<sup>17</sup>; Նա իր միտքը Հաստատելու համար բերում է մի շարք կը պահանջիր. որոնց վրա մենք այժմ մեկ առ մեկ կանգ կառնենք։

1. Ստեփանոս Ասողիկը Ծիրակացուն է վերագրում «Ժամանակագրությունը» նա ասում է. «Իսկ Անաստաս (կաթողիկոսը) խորհեալ Հայաստանեալցըս կարգել տօմար անշարժ, բատ այլոց ազգաց, և Հրամայէ Անանիայի Ծիրակացոյ կարգել զՔրոնիկոն Հրաշազան, յորում զոօմար մեր կարգեաց անշարժ»<sup>18</sup>։

Պրոֆ. Աշ. Արքահամյանն ապացուցել է, որ Ստեփանոս Տարոնացին «Քրոնիկոնի» տակ նկատի է ունեցել ոչ թէ «Ժամանակագրությունը», այլ Ծիրակացու ԾՂԲ աղյուսակը<sup>19</sup>. Այդ մասին խոսք կլինի ստորև։

2. «Ինչպես տեսանք, — գրում է Բ. Սարգսյանը, — անանուն ժամանակագրությունը կավարտի ի թվ. Հայոց ՃկԴ, այն է՝ յամի Տեառն 685։ Իսկ որովհետեւ Սամ. Անեցիեն գիտենք, որ այդ թվականներ վերջ իսկ դեռ կապրեր Անանիա՝ Հայոց մեծ գիտնականը. ուրեմն հնտեսությունն Հայտնի է»<sup>20</sup>, այսինքն, որ կարող էր Անանիա Ծիրակացին լինել «Ժամանակագրության» խմբագիրը։

Այս փաստարկը ևս համոզեցուցիլ չէ. Մենք իրավունք չունենք Ծիրակացուն վերագրել VII դարի որևէ երկասիրություն, ենեղելով լոկ նրանից, որ Ծիրակացու կյանքի տարիներին է շարագրվել այն Սամվել Անեցու տեղեկության վրա պետք է Հատուկ ուշագրություն դարձնել։ Նա գրում է. «Չժթ. Աշակերտքն Անանիայի՝ Հերմոն և Տրդատ և Յզարիա, Եղեկիէլ և Կիրակոս Երթեալ յերուսաղէմ Հաւանեցան երկարնակացն, և ի դարձն ոչ ընկալաւ զնոսսա ճշմարիտ վարդապետն Անանիա»<sup>21</sup>։

Սամվել Անեցին այդ գեպքը թվագրում է 712 թ., պետք է հնտեցնել ուստի, որ Անանիան (Ծիրակացին) 712 թ. գեռ ողջ էր և լայն գործունեություն էր

15 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ ԺԲ.

16 «Արքոյ հօրն եւագրի Պոնտացոյ Վարք և ժամանակագրութիւնը», Վենետիկ, 1907, էջ ՃԺԲ.

17 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ ԺՋ.

18 Անդր. Ընդդումները Բ. Սարգսյանին են։

19 «Անանիա Ծիրակացու Մատենագրությունը», էջ 143։

20 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ ԺԵ.

21 Սամվելի քահանա այն անապահ Անեց յուր է, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 85։

ծավալում։ Պրոֆ. Աշ. Արքահամյանը մանրամասն կանգ է առել Ծիրակացու ծննդյան թվականի հարցի վրա և ցույց տվել, որ «Ծիրակացին Տյուքիկոսի մոտ է զնացել իր երիտասարդ հասակում, հավանական է 20 տարին լրացած, ուրեմն Ծիրակացին ծնված պիտի լինի VI դարի վերջերում, և ամենաուշը — VII դարի սկզբներում»<sup>22</sup>։ Պրոֆ. Արքահամյանն այնուհետև գրում է. «661—667 թթ. (Անաստաս կաթողիկոսի ժամանակ—Հ. Բ.) Ծիրակացին գտնվում էր տարիքավոր հասակում»<sup>23</sup>. Գրեթե նույն եղանակացություններին է հանգել վերջերս ֆրանսիացի բյուզանդացեա Պ. Լըմերը<sup>24</sup>:

Արդ, եթե որևէ արժեկ տանք Սամվել Անեցու ասածին, պետք է լնդունինք, որ տարիքավոր (այսինքն շուրջ 65—70 տարեկան) այդ մարդին ապրել է իս մի 55 տարի և 120 տարեկան հասակում զբաղվել միաբանակ-երկաբանակ վեճերով։ Դա հավանականությունն ցատ հնուու է; Կամ Սամվել Անեցու նշած տարեթիվն է սխալ, կամ էլ այդ Անանիան՝ Անանիա Ծիրակացին չէ, հետևաբար այդ փաստի վրա հենվելով հնարավոր չէ հանգել լուրջ եղանակացությունների<sup>25</sup>։

3. «Ժամանակագրության ներքին փաստերն իսկ, — գրում է այնուհետև Բ. Սարգսյանը, որպիսիք են լեզվական նմանություննք, զանազան իրաց վերաբերյալ պատմական ակնարկություններ և ամբողջական կտորներ իսկ, որոնք սերտ առնչություն մը կհաստատեն մեծ Ծիրակացվույն ճառական, տումարական և պատմական մյուս գրվածքներուն հնուու: Օրինակի աղագավ, գլխավոր դարագլուխները — Աղամեն մինչև ջրհեղեղ, և անտի մինչև Քրիստոսի ծնունդը — զորս կնշանակե այստեղ, նույնությամբ կտնենք նաև իր Տոմարին մեջ: Այսպիս նաև 72 ազգերու հիշատակությունն և ի մասնավորի 12 ազգերու անվանակոչություննք՝ որոնք դպրություն և գիր կգործածեին ի հնումն, նույն է երկու գրվածոց մեջ ևս: Յովսեպսին առնված մեկ տեղին, ուր կպատմվի Հավուրս Պենտակոստեից Երուսաղեմի տաճարին մեջ կատարված մեծագոյն Հրաշան և բարբառ. «Գնամք աստի, զնամք» ալլով Հանդերձ, մեջ բերված է՝ բառ առ բառ նույնպես Անանիա Ծիրակացվու Յաղագ Յայտնութեան և Մննդեան Հարազատ ճառին մեջ...»<sup>26</sup>։

Վերօհիշյալ նմանությունները (եթե այդպիսիք կան), բացարձում են ոչ թէ այն հանգամանքով, որ երկու գործն էլ նույն հեղինակի գրչին են պատկանում, այլ այն պարզ փաստով, որ երկուն էլ կարող են օգտված լինել մինչնույն աղբյուրից: Բայց իրականում այդպես է արդյոք: Կանգ առնենք վերօհիշյալ չորս փաստերի վրա:

ա. Աղամից մինչև ջրհեղեղ և այստեղից մինչև Քրիստոսի ծնունդը, որի մասին խոսվում է «Ժամանակագրության» մեջ, ըստ Բ. Սարգսյանի նույնությամբ գտնում հնք նաև Ծիրակացու Տոմարի մեջ: Դա ճիշտ չէ և հակասում է փաստերին: Այսպիս Ծիրակացին իր «Զատկի» ճառում, քննադատելով իրոնի ժամանակագրությունն, ասում է. «Արդ մի՛ պատրիեցուք ճարտարութեամբ՝ արուեստին իրոնի հրուցություններին էլ կունեցուի լինել այսպիսի պատրիեցուք ճարտարութեամբ»:

ա. Աղամից մինչև ջրհեղեղ և այստեղից մինչև Քրիստոսի ծնունդը, որի մասին խոսվում է «Ժամանակագրության» մեջ, ըստ Բ. Սարգսյանի նույնությամբ գտնում հնք նաև Ծիրակացու Տոմարի մեջ: Դա ճիշտ չէ և հակասում է փաստերին: Այսպիս Ծիրակացին իր «Զատկի» ճառում, քննադատելով իրոնի ժամանակագրությունն, ասում է. «Արդ մի՛ պատրիեցուք ճարտարութեամբ՝ արուեստին իրոնի հրուցություններին էլ կունեցուի լինել այսպիսի պատրիեցուք ճարտարութեամբ»:

22 «Անանիա Ծիրակացու Մատենագրություն», էջ 38։

23 Անդ, էջ 39։

24 Տի՛ւ P. Lemerle, Note sur les données historiques de l'autobiographie d'Anania de Shirak, Revue des Etudes Arméniennes, Nouvelle série, t. I, 1964, p. 201—202.

25 Հմամատ. Աշ. Արքահամյան և մատենագրությունն, էջ ԺԲ.

26 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրությունն, էջ ԺԵ—ԺԲ:

մտահանութեան իւրոյ և ոչ ըստ ճշմարտութեան. Տանզի ի ժամանակագրութեան իւրումն թ՛՛ (5500) ասէ ի ծննդեանն Փրկչին»<sup>27</sup>: Ալսինքն ըստ իրոնի Աղամից մինչև Քրիստոսի ծնունդը անցել է 5500 տարի, որ Քրիստոսի առաջին տարին Համապատասխանում է 5501 թ., մի րան, որի հետ Անանիա Շիրակացին ամենեին էլ Համաձայն չէ, այդ թիվը Համարում է խաբեռթյուն, իրոնի մտահացումը: Շիրակացին քննադատում է իրոնին նույն ճառի մի այլ տեղում էլ, ասելով. «Բայց մեզ քաւ և մի՛ լիցի Հաւանել ժամանակագրութեանն իրոնի շփոթելոյ և յաճախելոյ արտաքրոյ աստուածային գրոց. և մի՛ ընդունել զթիւ տոմարի նորա զխարօղականս. և լիցոք ընդ նզովիք սուրբ Հարցն»<sup>28</sup>, կամ «Իրոն ոչ ճշմարտութեամբ խաւսեցաւ. և բանք նորա ոչ են Հաւատարիմք»<sup>29</sup> կամ «Արդ ի մէջ երկուց վատթարաց պատեհագոյն զերմոգենի ասացեալսն Համարին քան զիրոնի. թէպէտ և ի ճշմարտութենէ երկորեան վրիպեալք»<sup>30</sup>:

Այժմ տեսնենք, թե ինչ է ասում այդ կապակցությամբ «ժամանակագրությունը»: «Ժամանակագրության» մեջ աշխարհի արարշագործության թվականը Հիշատակվում է երեք անգամ: Առաջին անգամ այն բաժնում, որն ըստ ուսումնասիրողների Հիպակուլիտոսի գործի թարգմանությունն է: Այնտեղ գրված է. «Եւ յԱղամայ մինչև ի գերութիւնն Բարեղացոց՝ որ եղեւ յաւուր Յերոնիմաց ազգք հիսուն և մի, ամք ՏՊԽԲ (4842), ամիսք ինն: Եւ ի գերութիւնէն Բարեղացոց մինչև ի ծնունդն Քրիստոսի՝ ազգ չորեքտասան, ամք ՈՒ (660)»<sup>31</sup>: Հետևարար 4842 + 660 = 5502: Փաստորեն մենք ունենք իրոնի թվագրումը, որն ըստ Անանիա Շիրակացու սիսալ է: «Ժամանակագրության» մեջ վերևում բերված փաստից երեք չէ հետո գրված է. «Միանգամայն յԱղամայ մինչև ի շարշարանսն Քրիստոսի՝ ամք ՏՇԼԴ (4534)»<sup>32</sup>: Այսուղ կա պարզապես գրչի սիսալ. պիտի լինի ԲՇԼԴ (5534). գրիշը հազար տարվա սիսալ է թույլ տվել: Որ դա պարզապես գրչական սիսալ է Հաստատվում է շարունակությունից. ու ի հնգետասաներորդ ամէն Տիրերի կայսեր՝ մինչև ի Հալածումն եկեղեցեաց, որ եղեւ յիննուտասներորդ ամի Դիոկղեափանոսի, ամք Մ2Զ (276): Ժողովին ամենայն աւորքն և լինին ամք ԲՊԾ (5810): 4534-ին գումարած 276 շպետը է տա 5810, այլ 4810: Քանի որ վերջին գումարը 5810 է, ապա 5810-ից Հանած 276 մնում է 5534: Այսպիսով այս վերջին Հաշվի Համաձայն Աղամից մինչև Քրիստոսի խաչելությունը Հաշվվում է 5534 տարի: «Ժամանակագրությունը» Քրիստոսին տալիս է լի (32) տարի կյանք: Հետևարար, եթե 5534-ից Հանենք այդ 32 տարին, ստանում ենք 5502, այսինքն նույն այն թիվը, ինչ նշված է վերևում, առաջին օրինակի մեջ:

Եթե Շիրակացին անկասկած իրեն պատկանող Զատկի ճառում սուր քըն-նագատության է ենթարկում իրոնին՝ աշխարհի արարշագործության թվականի հարցում, ապա նա «Ժամանակագրության» մեջ (եթե, իհարկե, այդ երկի հեղինակը լիներ), չէր կրկնի իրոնի ասածք:

«Ժամանակագրության» վերջում կա Հոռոմեական-բյուզանդական կայսերաց մի երկրորդ ընդարձակ ցուցակ: Վերևում խոսք եղավ այն մասին, որ այս

27 «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 297:

28 Անդ, էջ 296:

29 Անդ, էջ 298:

30 Անդ:

31 Անդ, էջ 369:

32 Անդ, էջ 372:

բաժնում տեղ են գտել ուն Հայ Հեղինակի, ավելի ճիշտ բանաքաղի, որոշ ինքնուրույն նախաղասություններ: Ահա այստեղ մենք Հանդիպում ենք աշխարհի արարշագործության թվականի մի Հիշատակություն ևս, որը միանգամայն տարբերվում է վերևում երկու անգամ մեջ բերվածից: Այնտեղ գրված է. «Ղինին յԱղամայ մինչև ի ծնունդն Քրիստոսի ամք ԲՄԿԴ (5264)»<sup>33</sup>: Այդ առթիվ հայ նեղինակը տալիս է նաև բացատրություն. «Այս ի ստոյգ ժամանակագրական պատմութենէ ընդաւթինակեցաւ, իսկ ըստ այլոց՝ այսպէս ունի պատմութիւնը. ըստ Հրէից մինչև ի ծնունդն՝ ամք չորս Հազար. ըստ յունաց Եպիփանու Կիպրացոյ պատմութեանն ենթագ հազար Հարեւը իննուն և ութ»<sup>34</sup>: Անանիա Շիրակացին, որ մեր մատենագրության մեջ իրավամբ կոշված է «բանիրուն և հանճարեղ զիտող յոյժ ամենայն տոմարական արուեստից»<sup>35</sup>, կարո՞ղ էր արդյոք գրել. «Այս ի ստոյգ ժամանակագրական պատմութենէ ընդաւթինակեցաւ»<sup>36</sup>:

Բ. «Ի ժամանակորի, — շարունակում է Բ. Սարգսյանը, — 12 ազգերի անվանկուղությունը, որոնք դպրություն և զիր ունենին հնում, նույնն է Շիրակացու տոմարում և «Ժամանակագրության» մեջ:

Դա էլ չի Համապատասխանում իրականությանը: «Ժամանակագրության» մեջ երեք անգամ խոսվում է գպրություն ունեցող ժողովուրդների մասին, բայց և ոչ մեկը շի տալիս 12 գումարը: Եթե նույնիսկ այդ երեք Հիշատակությունների տվյալները իրար միացնենք, մենք կստանանք ոչ թե 12, այլ շատ ավելի ժողովուրդների անունները: Բայց չէ որ Շիրակացու մոտ դպրություն ունեցող ժողովուրդները 12 չեն, այլ շատ ավելի: Շիրակացին այդ մասին խոսում է իր «Պատմեն տոմարի Հայոց» աշխատության սկզբում, որտեղ ասված է, թե դպրություն ունեն հետեւալ ժողովուրդները. երրայնցինները, քաղցեացինները, ասորինները, պարսիկները, մարերը, հնդիկները, փյունիկեցինները, հունիները, Հայերը, փոյուղիացինները, Հոռմայեցինները, եղիպատացինները, աթենացինները, բյութանացինները, կապազվկացինները, վրացինները և աղվանները<sup>37</sup>, ընդունը 17 ժողովուրդ:

«Ժամանակագրության» մեջ կարդում ենք. «Եւ այս ազգը են որ գիտեն ի սոցանէ դպրութիւն. իրերացիք, զատինացիք՝ որով Հոռոմքն վարին, սպանիացիք, յոյնք, մարք, Հայք», այսինքն ընդամենք վեց ժողովուրդ: «Ժամանակագրության» մի այլ տեղում կարդում ենք ենք. «Եւ որ գիտեն ի սոցանէ դպրութիւն են:

33 «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 378:

34 Անդ, էջ 379:

35 Կ ի ա կ ս Գ ա ն ձ ա կ ց ի ս, Պատմություն Հայոց, էջ 62:

36 «Ժամանակագրության» թվական տվյալները այլ տնկերում ևս Հականում են սուսպահին Շիրակացուն պատկանող Երեկորի տվյալներից: Օրինակ. «Ժամանակագրության» կալսերց երկրորդ ցուցակում կարգում ենք Հետեւալը. «Ի որա (Հետեւալնուք) երեսներում ամի Հետեւալը... և բրեաց ի հիմանց զավաքին... պատմէ և Ցովսու ուղարք և սորքի պաշարից զերուազէմ... և բրեաց ի հիմանց զավաքին... պատմէ և Ցովսու ուղարք և սորքի բանին բառում ենք Հետեւալը» («Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 380): Շիրակացին իր «Զատկին» ճառում այս դեպքի կապակցությամբ գրում է: «Եւ մկրտէին (ասարքակին և թ. թ.) մինչև յամն երկրուդ Վեսպիանոսի Յառամ եղակ յարեն աւերում տաճա-րին և պաշարումն և գերութիւն երուաղեմիք» («Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 294), այսինքն Անանիա Շիրակացին երսաղեմիքի կործանումը դնում է Վեսպիանոսի բաղադրության երկրորդ տարում, եթե «Ժամանակագրության» մեջ այդ դեպքը թվարկում է Վեսպիանոսի յոթերորդ տարում: Նման փաստերը կարելի է բաղմապատճել:

37 «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 112.

այսոցիկ. փյունիկեցիք, եզիպտացիք, պամփիլացիք, փոխացիք», այսինքն շորս ժողովուրդ: Եվ վերջապես մի այլ տեղում. «Երբայցիք որ են հրեայք, պարսկք, մարք, քաղեացիք, հնդիկք, ասորեստանեայք». վեց ժողովուրդ:

դ. Ըստ Բ. Սարգսյանի 72 ազգերի հիշատակությունը՝ որ հանդիպում է «Ժամանակագրության» մեջ կա նաև Շիրակացու տոմարում: Մեզ շաշողվեց Շիրակացու, տոմարում գտնել այդ հիշատակությունը և եթե նույնիսկ կա Շիրակացու մեզ անձանոթ մնացած որեւէ երկասիրության մեջ և համբնկում է «Ժամանակագրության» տվյալների հետ, ապա զա էլ փաստ չէ, որովհետև այդ ավշալին կարելի է հանդիպել բազմաթիվ ժամանակագրությունների մեջ, որոնք սկսվում են Ադամից:

դ. Երուսաղեմի մեծադղորդ հրաշքի նկարագրությունը,— շարունակում է Բ. Սարգսյանը,— որ հանդիպում է նույնությամբ Շիրակացու Հայտնության և Զատկի ճառում, կա նաև «Ժամանակագրության» մեջ, ինչպես նաև «գնամք աստի, գնամք» բարբառը:

«Ժամանակագրության» բանաքաղն ու Շիրակացին օգտվել են մինույն աղբյուրից՝ Եփսերիոս Կեսարացուց. Նմանությունը այդուղից է գալիս, և ոչ թե նրանից, որ երկու գործերն էլ մի մարդ է շարագրել: Համոզվելու համար այդ բանում բավական է մեջ բերել այդ հրաշքի նկարագրությունը վերոհիշյալ երերից:

Եվսերիոս Կեսարացի  
(Մասն Բ, Քրոնիկոն  
կանոն, էջ 266.)

«Յովսեպոս պատմէ, թէ  
յաւորս պինտակոստէից դղրդին և սոսափին նախ զբանայիւրն պատէր. և ապա բարբառ յանկարծակի անտուստ ի ներքուստ ի տաճարէն լսելի լինէր զայս ձև օրինակի, թէ զնամքը աստի զնամքը»:

Շիրակացի  
Հայտնության ճառ  
(Ան. Շիր. Մատ., էջ 286)

«Յովսեպոս պատմէ, թէ  
յաւորս Պինտակոստէից եղե դղրդին և սոսափին: նախ զբանայիւրն պատէր, և ապա յանկարծակի բարբառ ի տաճարին՝ գովելոցն, ապա և բարբառ յանկարծակի անտուստ ի ներքուստ ի տաճարն անտի, որպէս ձև բանի ասելով. Գնամք աստի, զընամքը»:

«Ժամանակագրություն»  
(Ան. Շիր. Մատ., էջ 372)

«Յովսեպոս պատմէ, թէ  
յաւորս Պինտակոստէից եղե դղրդին և սոսափին: նախ զբանայիւրն պատէր, և ապա յանկարծակի բարբառ ի տաճարին՝ գովելոցն, ապա և բարբառ յանկարծակի անտուստ ի ներքուստ ի տաճարն անտի, որպէս ձև բանի ասելով. Գնամք աստի, զընամքը»:

Ինչպես տեսնում ենք Բ. Սարգսյանի այս փաստարկն էլ որևէ հիմք չի տալիս Շիրակացուն «Ժամանակագրության» խմբագիր համարելու համար:

4. «Ժամանակագրությունը» ընդորինակված է մի ձեռագրում (Մաշտոցյան Մատենադարանի № 2679) Շիրակացուն պատկանող այլ աշխատությունների շարքում: Չնայած Բ. Սարգսյանը զա համարում է «ողորավոր փաստ», սակայն զորություն չկա նաև նրա մեջ՝ քանի որ միջնադարյան ձեռագրերին չի կարելի մոտենալ որպես առանձին հեղինակների «երկերի» կամ «ընտիր երկերի» ժողովածուների: Նույն ձեռագրում կարող են իրար հաջորդել բոլորովին տարբեր հեղինակների երկասիրություններ<sup>38</sup>:

38 Նույն այդ № 2679 ձեռագրում կա նաև «Յաղագս» ամպոց և նշանաց «աշխատությունը, որը նույնպես վերագրված էր Անանիա Շիրակացուն, բայց ինչպես ցույց ենք տվել արդեն հույն հեղինակ Արատոս Սոլացուն է պատկանում: Տե՛ս «Բանիքը Մատենադարանի» № 7, 1964:

5. Մի գրչագրում հանդիպում է հայ պատմագիրների ցուցակ, որի մեջ հիշած է նաև Անանիա Շիրակացու անունը. «Անանիայ Շիրակացին. սկիզբն առեալ յԱղամայ, համառու գաւազանաւ իշանէ մինչև ի ժամանակս Անաստասայ կաթողիկոսի»: Սրա հիման վրա Բ. Սարգսյանը երգակացնում է, որ ցուցակի հեղինակը ի նկատի է ունեցել խնդրո առարկա «Ժամանակագրությունը»:

Ինչպես ցույց է տալիս ինքը Բ. Սարգսյանը, այս «Ժամանակագրությունը» օգտագործել են հետագայում բազմաթիվ հեղինակներ, այն է Սերեսու, Մագսես Կաղանկատվացի, Ուխտանես, Հովհաննես Դրասիանակերտցի, Ստեփանոս Ասողիկ, Սամելի Անեցի, նաև Անանիա Սանահնեցի, Սարկավագ վարդապետ, Վարդան, Կիրակոս, Միսիթար Ապարանեցի և ուրիշներ: Բայց վերօհիշյալ հեղինակներից և ոչ մեկը չի առում, որ «Ժամանակագրությունը» նշանավոր Անանիա Շիրակացու գործն է: Դա ապացուց է այն բանի, որ այդ հեղինակներից և ոչ մեկի ձեռքում եղած օրինակը չեր կրում Շիրակացու անունը: Եվ եթե XVIII դարի մի գրչագրում հայ պատմագիրների շարքում հանդիպում է Անանիա Շիրակացու անունը, որն «սկիզբն առեալ յԱղամայ, համառու գաւազանաւ իշանէ մինչև ի ժամանակս Անաստասայ կաթողիկոսի», ապա այդ վկայությունը չի կարող իր ստուգության մասին կասկածներ չառաջացնել:

Ահա համառու գծերով «Ժամանակագրությունը» Շիրակացուն վերագրելու Բ. Սարգսյանի առաջ բաշած կովանները: Բայց իրականության գեմ շմեղանելու համար պետք է ասենք, որ այնուամենայինիվ Բ. Սարգսյանը իր այդ երգակացությունները որոշ շափով թեական է համարել: Նա ի միջի այլոց գրել է. «Ժամանակագրության» խմբագիրը «ոչ միայն կրուտ և անվայելու լիզու մը կը դորձած է այն ժողովի (նկատի ունի Քաղկեդոնի ժողովը — Հ. Բ.) և գավանությանը նպաստող թագավորներուն և սրբակրոն հայրապետներու զեմ, այլ՝ որ զարմանալին է՝ մեծ Շիրակացվույն անհարմար և իրարու հակասող տգիտարանությամբ երբեմն պատմական ստուգ եղելություններն իսկ, ինչպես և անոնց գրավոր վարդապետության ուղիղ իմաստներն ևս կը խեղաթյուրի. և երբեմն երբեմն ալ... շինծու և ստահոդ առասպելները՝ որպես ճշմարիտ պատմություն՝ միամտորեն մեջ կը բերե կագուցանեն: Արդ՝ դիտելով որ այս պարագաներս նշգրիս հակապատկերը կկազմեն Շիրակացվույն, գժվար է ուրեմն, որ միննույն գրչի և մտքի ծնունդ ըլլան»<sup>39</sup>: Բ. Սարգսյանը «Ժամանակագրության» Շիրակացուն պատկանելու գեմ խոսող մի քանի այլ տվյալներ փորձում է բացատրել, բայց վերօհիշյալ փաստի համար նա բացատրություն չի գրտնում և բավարարվում է, ասելով. «Ես իսկ կը խոստովանիմ, որ խիստ ծանրակշիռ է նշգրիս հակապատկերը կկազմեն Շիրակացվույն, գժվար է ուրեմն, որ միննույն գրչի և մտքի ծնունդ ըլլան»<sup>40</sup>:

Բ. Սարգսյանից շուրջ բառասուն տարի անց «Ժամանակագրությամբ» գրավեց պրոֆ. Աշ. Աբրահամյանը: Նա ընդունեց «Ժամանակագրության» Շիրակացու կողմից խմբագրվելու մասին Բ. Սարգսյանի բոլոր կովանները և առաջ անցնելով պնդեց, որ Շիրակացին ոչ թե խմբագրել է «Ժամանակագրությունը» այլ հանդիսանում է նրա հեղինակը<sup>41</sup>:

39 Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, էջ 1:

40 Անդ:

41 Իշարկե ճշշտ չէ պրոֆ. Աբրահամյանը, երբ ասում է, թե Բ. Սարգսյանը «Ժամանակագրության» հեղինակ է համարել Շիրակացին էլ 142—143), Բ. Սարգսյանը Շիրակացուն պարագաներ այդ գործի ունեցին է համարել ի ժամանակը:

Պրոֆ. Աշ. Աբրահամյանը Բ. Սարգսյանի կովանների վրա ավելացնում է հետևյալները. «Առաջին փաստը, — գրում է նա, — դա Շիրակացու գեղի իր օգտագործած սկզբնապրյուրները քննադատական վերաբերմունք ցուցաբերելն է; Շիրակացին «Ժամանակագրության» մեջ Աղամի մասին խոսելիս գրում է. «Եւ ընդէ՛ր արդեւք զսա միայն որդոյդ անուամբ յորչորշեաց, իսկ զսան այլոցն ամեննեցուն պարզաբար ասաց՝ թէ ծնան... Ինձ քոփի, հանգուցանելն՝ դադարեցուցանել, իսկ դադարեցուցանելն զամբարշտութիւնս և զշարիս՝ սատակմամբ մարդկան երկրագործաց դարուն երկրորդի»<sup>42</sup>:

Պրոֆ. Աշ. Աբրահամյանը եզրակացնում է. «Քննադատական այնպիսի դարձվածքներ, ինչպիսին են՝ «Ես կարծեմ», «ինձ թուի», «Հաւանեալ եմ, և այլն, հատուկ են ինչպես Խորենացուն, այնպես և Շիրակացուն»: Այսինքն «Ժամանակագրության» մեջ հանդիպող վերոհիշյալ «ինձ թուի»-ն բատ պրոֆ. Աբրահամյանի Շիրակացուն է և վկայում է նրա քննադատական վերաբերմունքի մասին գեղի աղբյուրները: Բայց այդ «ինձ թուի»-ն ամեննին էլ Շիրակացունը չէ: Դա Մովսես Խորենացուն է. «Ժամանակագրության» այդ մասը հենց ձեռագրում, ինչպես վերևում ասվեց, վերնագրված է «Մովսիսի Խորենացոյ» և եթե պրոֆ. Աբրահամյանը այդ բաժինը համեմատեր Մովսես Խորենացու «Պատմության» համապատասխան հատվածի հետ կհամոզվէր, որ այդ «ինձ թուի»-ն պատկանում է Պատմահորը և միաժամանակ հնարավորություն կունենար սրբագրել բաղմաթիվ էական սխալներ, որոնք մուտք են գործել «Ժամանակագրության» մեջ գրիչների մեջքով: Այսպես.

#### Մովսես Խորենացի (Ա. 4)

«Եւ ընդէ՛ր արդեւք զսա միայն որդոյդ անուամբ յորչորշեաց, իսկ զսան այլոցն ամեննեցուն պարզաբար ասաց, թէ ծնան... ինձ քոփի՝ հանգուցանելն՝ դադարեցուցանելն՝ զամբարշտութիւնս և զշարիս՝ սատակմամբ մարդկան զարգացործաց դարուն երկրորդի»:

#### «Ժամանակագրություն» (Ան. Շիր. Մատենագր., էջ 358)

«Եւ ընդէ՛ր արդեւք զսա միայն որդոյդ անուամբ յորչորշեաց, իսկ զսան այլոցն ամեննեցուն պարզաբար ասաց թէ ծնան... ինձ քոփի, հանգուցանելն՝ դադարեցուցանելն՝ զամբարշտութիւնս և զշարիս՝ սատակմամբ մարդկան երկրագործաց դարուն երկրորդի»:

Վերոհիշյալ զուգահեռ մի ուրիշ հարցի կապակցությամբ մատնացուց է արել շուրջ վեց տասնամյակ առաջ Բ. Սարգսյանը<sup>43</sup>:

«Երկրորդ փաստը, — գրում է այնուհետև պրոֆ. Աշ. Աբրահամյանը, — այդ ժամանակագրության և Տիեզերագիտության տեսատերում հույսի և օգոստոս ամիսների անունների առաջացման պատճառը նման լեզվով և ձևով նկարագրելու փաստն է: Բայց այդ նկարագրության, հույսի ամսի անունն առաջացել է Հուլիոս կայսեր անունից, իսկ օգոստոսը՝ Օգոստոս կայսեր անունից»<sup>44</sup>: Եվ պրոֆ. Աշ. Աբրահամյանը զուգահեռ ձևով բերում է «Ժամանակագրության» և «Տիեզերագիտության» այդ հատվածները ու եզրակացնում. «Եղված փաստերի նմանությունն ամնքան ակնքախ է, որ կոմենտարիաները, կարծում ենք, ավելորդ են: Այդ նմանությունները, — վերջացնում է պրոֆ. Աբրահամյանը, — գա-

<sup>42</sup> «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 144:

<sup>43</sup> Բ. Սարգսյան, Խորենացոյ պատմագրության ուսումնասիրութեան ընթացքը և անոր հնութեան նոր ապացոյներ, «Բազմավիճակ», 1903, էջ 514:

<sup>44</sup> «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 144:

իս են նորից ապացուցելու, որ «Ժամանակագրության» հեղինակը Անանիա Շիրակացին է»<sup>45</sup>:

Բայց վերոհիշյալ նմանությունը բացատրվում է ոչ թե նրանով, որ այդ երկու բնագրերն են պատկանում են Շիրակացու գրչին, այլ այն պարզ հանգամանքով, որ և՛ Շիրակացին իր «Տիեզերագիտության» մեջ, և՛ «Ժամանակագրության» կազմողը օգտվել են նվազարձ կեսարացուցանքուն պատճենություններուն և ապահովություն ունենալու համար: Վերջինիս մոտ ի միջի այլոց մենք կարգում ենք. «Աւգոստոս Սեբաստոս անուաննեցաւ, և զսերսուս ամիս» աւգոստոս անուաննեցաւ»<sup>46</sup>:

Ինչ վերաբերում է վերևում մատնացուց արված Բ. Սարգսյանի կասկածներին՝ «Ժամանակագրությունը» Շիրակացուն պատկանելու հարցի շուրջը, ապա պրոֆ. Աբրահամյանը փորձում է դրանք փարատել պնդելով, որ իրը Անանիա Շիրակացին մոլեսանդ հակաբաղկեդունական է եղել և իրը ապացուց բերում է Սամվել Անեցու 712 թ. տակ հիշվող փաստը, որի մասին մանրամասն խոսք եղավ վերևում, փաստ, որի ստուգության վրա կասկածել է հենց ինքը պրոֆ. Աշ. Աբրահամյանը<sup>47</sup>:

«Ժամանակագրության» վրա մի այլ հարցի կապակցությամբ կանգ է առել նաև Հ. Անասյանը: Նա նույնական գտնում է, որ «Ժամանակագրությունը» պատկանում է Անանիա Շիրակացու գրչին: Իր «Թուգանդարանի ուսուերեն թարգմանությունը» ապակետիպ գրախոսականում Հ. Անասյանը դիմում է Անանիա Շիրակացու Զատկի ճառին, որտեղ ի միջի այլոց ասված է հետևյալը. «Եւ արար Յեսու ի իթ աւր ամսոյն առաջնոյ զատիկ. բայց անուանէ ի շորեթասասն ըստ աւորցն լուսնի. և առնէ նորոգումն կարգացն եղծելոց յանապատին. և առնէ իրը ի նորոյ սկիզբն կարգաց և արինաց որպէս և Մովսէս յելանելն յեզփատուսէ. քանզի և զանցանելն զՅորդանան գետով ելս կոչէ յեզփատուսէ: Որպէս և ի ժամանակական կանոնի» տակ բատ Հ. Անասյանի Շիրակացին նկատի է ունեցել ինդրու առարկա «Ժամանակագրությունը»<sup>48</sup>: «Իրոք, — ասում է նա, — այս ժամանակագրության մեջ խոսվում է Հորդանանի անցման մասին»<sup>50</sup>:

Զատկի ճառում Հետուն, Հրեաների եղիպատոսից գուրս գալը և Հորդանան գետն անցնելը հիշվում են զատկի օրը ճշտելու կապակցությամբ. այդ մասին է, որ Շիրակացու իսկ վկայությամբ խոսք է ասված նաև իր «Ժամանակական կանոնի նախապատում հանդիսի» մեջ: Բայց «Ժամանակագրության» մեջ նման բանի մենք չենք հանդիպում: Տիյալ բանում պարզապես հերթականությամբ տրված է Հրեա բահանայապետների պատմությունը, այդ թվում նաև Հետուի Հորդանան գետն անցնելու պատմությունը: Բերենք երկու տվյալները կողք կողքի:

<sup>45</sup> «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 145:

<sup>46</sup> Եւս երի Պատմությունը Կեսարացու պատմական բերկմանեալ, Մասն Բ, Քրոնիկոն կանոն, Վենետիկ, 1818, էջ 256:

<sup>47</sup> «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 40:

<sup>48</sup> Հ. Անասյան, Թուգանդարանի ուսուերեն թարգմանությունը, Երևան, 1954, էջ 8:

<sup>49</sup> Անդ, էջ 9:

<sup>50</sup> Անդ:

Անանիա Շիրակացի  
(Զատկի ճառ)

«Եւ արար Յեսու ի իմ ար ամսոյն առաջ-  
նոյ զատկի, բայց անուանէ ի շորեւտասան,  
ըստ առուրցն լուսնի. և առնէ նորոգումն կար-  
գացն եղծեւոց յանապատին. և առնէ իբրև ի  
նորոյ սկիզբն կարգաց և աւրինաց որպէս  
Մովսէս յելանել յեզփատուն. Տանիք և զան-  
ցանել զՅարդանան գետով ելու կոչ յեզփա-  
տուն. որպէս և ի ժամանակական կանոնի նա-  
խապատում հանդիսին մերոյ ճառեցաք».

Ինչպիս պարզ երևում է այս համեմատությունից, Անանիա Շիրակացին  
իր Զատկի ճառում ամեննեին էլ չի ակնարկում «Ժամանակագրության» մեջ հիշ-  
ված վերօնիշցալ փաստը:

Այսուհետև Հ. Անասյանը Զատկի ճառի «ի ժամանակական կանոնի նա-  
խապատում հանդիսին մերոյ» նախադասության՝ մեր կողմից ընդգծված բա-  
ռերը հասկանալով «նախադաս գրված ուսումնասիրություն», գտնում է, որ  
«Ժամանակագրությունը» գրված է եղել Զատկի ճառից առաջ, հետևաբար Զատ-  
կի ճառը նա թվագրում է 686 թվականից հետո ընկած ժամանակով:

Մեր կարծիքով Շիրակացու Զատկի ճառում հիշված ժամանակական կա-  
նոնը՝ ամենայն հավանականությամբ նույնանում է Ասողիկի հիշած «Քրոնի-  
կոնի» հետ. «Եսկ Անաստասայ խորհեալ Հայաստանեացս կարգել տօմար ան-  
շարժ ըստ այլոց ազգաց. և հրամայէ Անանիայի Շիրակացոյ կարգել զՔրոնի-  
կոն հրաշազան, յորում զամար մեր կարգեաց անշարժ»<sup>51</sup>; Եվսեբիոս Կեսա-  
րացու աշխատությունը վերնագրված է «Եւսեբի Պամփիկեայ Կեսարացուց Քրո-  
նիկոն կանոն որ և ժամանակական կանոն». այստեղից միանգամայն պարզ  
երևում է, որ Զատկի ճառի «Ժամանակական կանոնը» և Ասողիկի մոտ հիշա-  
տակված «Քրոնիկոնը» միևնույն բաներն են: Արդ, ըստ Ասողիկի այդ «Քրո-  
նիկոնը» այսինքն «Ժամանակական կանոնը» բովանդակում էր հայոց անշարժ  
տոմարը: Խնդրո առարկա «Ժամանակագրության» մեջ մենք տոմարի մասին  
ընդհանրապես և հայոց տոմարի մասին մասնավորապես և ոչ մի հիշատակու-  
թյան չենք հանդիպում, պարզ է, որ Քրոնիկոնը (ժամանակական կանոնը) ոչ  
մի կապ չունի «Ժամանակագրության» հետ:

Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակական կանոնը» իրենից ներկայացնում  
է ժամանակագրական աղյուսակներ, որոնց զուգահեռ տրվում է առանձին գեպ-  
քերի նկարագրությունը: Մեր կարծիքով ճիշտ է պրոֆ. Աշ. Արքա՞նայանը, որ  
Շիրակացու «Քրոնիկոնը» (այսինքն ժամանակական կանոնը) նույնացնում է  
Անանիայի Շլի աղյուսակի հետ: Այդ մասին վերենում մի այլ հարցի կապակ-  
ցությամբ ասվել է: Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն կանոն որ և ժամանա-  
կական կանոնը» ունի առաջարան, որը վերնագրված է Պրօվիաց առաջա-  
րան, նախաշավիդ, նախասացություն, որտեղ ցույց է տրվում, թե ինչ ձևով  
պետք է գտնել առանձին գեպքերի թվագրությունը և բերվում են առանձին օրի-  
նակներ: Ահա, վերօնիշցալ «նախապատում հանդիսի»-ի տակ մենք հասկա-  
նում ենք թե «նախապես շարադրված գործ», ինչպես բացատրում է Հ. Անաս-  
յանը, այլ «Ժամանակական կանոնի» (Քրոնիկոնի) «նախարան, ներածություն,

նախասացությունը— (Պրօվիաց), ինչպիսին ունի Եվսեբիոս Կեսարացու «Ժա-  
մանակական կանոնը» և ինչպիսին, անկասկած, ունեցել է Անանիա Շիրակա-  
ցու Շլի աղյուսակը:

\* \* \*

Ինչպես տեսանք, բոլոր ուսումնասիրողների մոտ այն համոզմունքը կա-  
որ «Ժամանակագրությունը» Անանիա Շիրակացու հեղինակությունն է և կամ  
էլ՝ ծայրաշեղ գեպքում՝ խմբագրվել է Անանիա Շիրակացու կողմից: Վերորե-  
րալ մեր կովանները մեզ հանգեցրին հակառակ եղբակացության որն առավել  
ևս ամբապնգում է, երբ վերլուծության ենք ենթարկում հենց «Ժամանակա-  
գրությունը», մի երկ, ուր իրար են կցված տարրեր աղբյուրների ու հեղինակ-  
ների գործեր, առանց նույնիսկ նկատելու, որ տարրեր տեղերից բանաբաղված  
այդ ավանդները հաճախ իրար հակառակ են: Բերենք փաստեր:

«Ժամանակագրության» մեջ երեք անգամ հիշատակվում է Ալեքսանդր  
Մամյա կայսրը: Առաջին անգամ Հիպոլիտոսին վերագրվող բնագրում, երկ-  
րորդ անգամ Հոռմեական կայսրերի առաջին ցուցակում, և երրորդ անգամ՝  
կայսրերի երկրորդ ցուցակում: Արդ, առաջին դեպքում ասված է: «Եւ ի շար-  
արանացն Քրիստոսի մինչև յամն Երկուտասաներորդ՝ բաներորդ առաջնորդի  
թագաւորին հոռոմոց Աղեքսանդրի առնին ամք երկերիւ հինգ եւ ամիսք վեց»,  
այսինքն ցույց է տրվում, որ նա թագավորել է առնվազն տասներկու տարի:

Կայսրերի առաջին ցուցակում գրված է: «Աղեքսանդր Մամէ՝ Երիս» այ-  
սինքն, որ այս կայսրը թագավորել է ընդամենը երեք տարի:

Եվ վերջապես ըստ կայսրերի երկրորդ ցուցակի՝ «Աղեքսանդրոս Մամեայ  
որդի ամս շորեքտասան»: Մեր համոզմամբ Անանիա Շիրակացու նման մի գիտ-  
նական նման բան գրել կամ խմբագրել չեր կարող: Կարո՞ղ էր, արդյոք, Շիրա-  
կացին մի տեղ գրել: «Վասն շարշարանացն տեսան մերոյ, որ եղկ յիննեւտաս-  
աներորդ ամի Տիբերի կայսեր», իսկ մի քի հետո՝ «յուրուտասն ամի տերութեան  
որուա (Տիբերի) շարշարեցաւ Քրիստոս»: Կամ թե մի տեղ գրել՝ «Յետ Հերովդի՝  
թագաւորէ Հրէից Արքեղաւու որդի նորա ամս ինն: Յետ որոյ Հերովդէս՝ եղբայր  
Արքեղաւուի՝ թագաւորեաց ամս բան և ութ»<sup>52</sup>, իսկ ընդամենը մեկ էջ հետո,  
«Յետ Արքեղաւուի թագաւորէ Ագրիպաս աւագ՝ ամս վեց: Յետ սորա Ագրիպ-  
ասա մանուկ՝ ամս բան և հինգ»<sup>53</sup>:

«Ժամանակագրության» բանաբաղը բյուզանդական Կոստանդ կայսեր գել  
ատելությամբ է լցված, հայոցոյն է նրան, որովհետ նա «Հնազանդեալ Արիո-  
սի մոլորութեան» «Հրաման ետ զարձուցանել զԱրիոս յարտասահմանութենէ  
և ընդունել յեկեղեցի»: Իսկ ի՞նչ է ասում իսկապես Շիրակացին Կոստանդ կայ-  
սեր մասին: «Ասեն հաւանեալ (Կոստանդի) հերձուածոյն Արիոսի. բայց ոչ հա-  
կառակ նշանաւութեան ինչ մատանկէր»<sup>54</sup>:

«Ժամանակագրության» մեջ հանդիպող Հոռմեական-բյուզանդական կայ-  
սրերի երկու տարրեր ցուցակները իրենց ավանդներով հաճախ հակառակ են  
միմյանց: Այդ հակառակությունների մասին որոշ պատկերացում կաղմելու համար

<sup>51</sup> Առ ո դ ի կ, է 2 99:

<sup>52</sup> Անանիա Շիրակացու Մատենադրությունը, է 2 371:

<sup>53</sup> Անդ, է 2 372:

<sup>54</sup> Անդ, է 2 285:

բավական է աշք ածել այդ երկու ցուցակներում կայսրերի թագավորության տարբերի վրա. կամ էլ կայսրերի թվի վրա:

Անանիա Շիրակացու նման մի գիտնական դժվար թե այսպիսի ապաշնորհ բանաբաղության հեղինակ լիներ: Ապաշնորհ լինելն երևում է ոչ միայն այն բանում, որ բանաբաղը չի նկատել իր կցկցած «Ժամանակագրության» մեջ առկա ազաղակող հակասությունները, այլև այն բանում, որ նա կատարել է թարգմանական ախտիսի սիմաներ, որոնք Շիրակացու պես մի ականավոր հունագետ չեր կարող թույլ տալ:

«Ժամանակագրությունը» Անանիա Շիրակացու գրին շպատկանելու մասին ունենք մի շարք, մեր կարծիքով բավականին ծանրակշիռ փաստեր և նկատառություններ ևս: Շիրակացին, որպես իր ժամանակի ամենաառաջավոր գիտնականներից մեկը, բնության երևույթներին մոտենում է միանգամայն գիտական տեսանկյունից: Նա ամենասուր քննադատության է ննթարկում տարրեր հեղինակների աստղաբաշխական հակագիտական և սնոտիապաշտական հայացքները, ծաղրի ենթարկում նրանց: Նա իր «Յաղագ շարժման թէ ուստի լինի» աշխատության մեջ փորձում է երկրաշարժին տալ իր ժամանակի համար գիտական բացարություն<sup>55</sup>: Բայց «Ժամանակագրության» բանաբաղը միանգամայն հեռու է գիտությունից: Նա հավատացած է, որ այն բանի համար, որ Հոռմայիցիք ըրնդունեցին Զենոն կայսեր «Հենոտիկոնը» և հավատարիմ մնացին Քաղկեդոնի ժողովի որոշումներին՝ «եղև սաստիկ շարժումն ի Հռովմ, մինչև նեխիցաւ երկիրն ի բաղմութենէ դիակացն»<sup>56</sup>: Բնական երևույթների նման «բացարություններ» «Ժամանակագրության» մեջ եղակի չեն:

Արդ, ո՞վ է «Ժամանակագրության» բանաբաղը և ո՞ւմ գրչին են պատկանում այս երկի վերջին բաժնի ինքնուրույն էջերը:

Մաշտոցյան Մատենագրաբանի № 5254 ձեռագրում (էջ 190ա—202բ) մենք հանդիպում ենք նույն այս «Ժամանակագրությանը» որոշ շափով համառոտագած (հատկապես Հիպատիոսին վերաբերող բաժինը, ինչպես նաև վերջին մասը, որտեղ մեծ մասամբ դավանաբանական վեճերն են շարագրված): «Ժամանակագրության» այս անտիպ բնագիրը, անկասկած, հրատարակված «Ժամանակագրության» բնագրից շատ ավելի բնտիր է:

№ 5254 ձեռագիրը բնդորինակել է Գևորգ գրիվը 1280 թ.: Պրոֆ. Աշ. Աբրահամյանի կարծիքով «Ժամանակագրության» այս բնագիրն արտադրված է Մաշտոցյան Մատենագրաբանի № 2679 ձեռագրից (այս վերջինից են կատարված Բարսեղ Սարգսյանի և Աշոտ Աբրահամյանի հրատարակությունները): Բայց դա իրականությանը չի համապատասխանում: № 5254 ձեռագիր բնագիրը շատ ավելի բնտիր է և սկզբնական: Այս բնագիրը, համարելով № 2679 ձեռագրում եղած «Ժամանակագրության» սոսկ համառոտումը, պրոֆ. Աշ. Աբրահամյանն ընդգծում է, որ նրանց միշտ եղած տարրերությունը «բնագրից լուզում է ասել № 2679 ձեռագրից — Հ. Բ.) կատարված շեղումներ են միայն և ոչինչ չեն ավելացնում տեսափի վրա»<sup>57</sup>: Բայց եթե այդ այդպիս է, ապա ինչպես կարող է № 5254 ձեռագիրն ունենալ տեղ-տեղ «ընտափի բնթերցվածքներ»<sup>58</sup> ինչպես հայտարարում է պրոֆ. Աբրահամյանը: Զէ՞ որ դա անհնարին բան է. այդ

<sup>55</sup> «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 321:

<sup>56</sup> Անդ, էջ 394:

<sup>57</sup> Անդ, էջ 357:

<sup>58</sup> Անդ, էջ 142:

հանգամանքը մի անգամ ևս ընդգծում է, որ № 5254 ձեռագիրը միանգամայն անկախ է № 2679 ձեռագրից:

Ահա № 5254 ձեռագրում բնդորինակված «Ժամանակագրության» սկզբում կարդում ենք. «Խօսք Փիլոնի»: Հակառակ այն բանի, որ այստեղ բնագիրը համառոտված է, կան հատվածներ, որոնք բնդարձակ բնագրում չեն հանդիպում, օրինակ՝ հայ Արշակունիների ցուցակը, որ գալիս է Սասանյան թագավորների ցուցակից անմիջապես հետո. այն վերնագրված է «Թագաւորք Արշակունիք, որ թագաւորեցին Հայաստան աշխարհիս» (էջ 199բ): Փիլոնի այս «Ժամանակագրությունը» այլ տեղերում ևս ավելի հզգրիտ է, քան հրատարակվածք: Կայսերաց առաջին ցուցակն, օրինակ, ավարտվում է ոչ թե Հերակլու, այլ նրա որդի Կոստանդինով, որն ըստ Փիլոնի թագավորելէ 28 տարի: Փիլոնի մոտ ավելի լրիվ է տրված նաև Սասանյան թագավորների ցուցակը. այն վերջանում է ոչ թե Խոսրով Փարվեզով (628 թ.), ինչպես № 2679 ձեռագրում առկա «Ժամանակագրության» մեջ է, այլ հասցնում է ցուցակը մինչև Սասանյան հարստության վերացումը:

Փիլոնի մոտ չկան № 2679 ձեռագրի «Ժամանակագրության» մեջ եղած և կույրադիրի տպագրություն թողնող «Մովսեսի Խորենացոյ»<sup>59</sup> «Եւսեբի ժամանակագրության» մուտքած է ցուցակը մինչև Սասանյան հարստության վերացումը:

<sup>59</sup> Պրոֆ. Աշ. Աբրահամյանը դտնում է, որ «Ժամանակագրությունը» Խորենացոյ վերցրել է մի հատված ևս և բերում է հետեւյալ զուգահեռոք. խոսքը հայ գրերի գյուտի մասին է.

#### «Ժամանակագրություն»

#### Տպիսես Խորենացի

«Թէ էղոս փոքր՝ որդի Արկադեայ՝ ամս երեսու և եւթե... ի սորա աւուս էր Սուրբ Սահմանի Հայոց Հայրապետ, յորոյ աւուրս զրարութիւն հայտերն լեզուի բան և ինն զրով ի Դանիէլէ փիլիսոփայէ Ասորուց կարգեցաւ. որո ևս բերել Վոամշապուն թագաւոր Վախրանայ նախարարի՝ ձեռամբ Հարէլի երիցու: Իսկ զեւթն զրոցն պակասութիւն Մեսրով երանէլի, ի Հացեկաց Տարանոյ, յագատ տանէ, ամսարեայ պահաւը և աղաւիթիք՝ հանդերձ աշակերտաւքն Հայրացեալ յԱստուծոյ, և ցուցաւ նմա ի տեսիւն: Այս լինէր յԱսորուց աշխարհին՝ նւ տեսանէ... թաթ ձեռին աջո՛՝ գրելով ի վերայ վիմի... և յարուցեալ յազօթիցն՝ նստեղ զնշանագիրս մեր, հանդերձ Հռովմանուի կերպահեւալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայք:

Այս կապակցությամբ պրոֆ. Աշ. Աբրահամյանը գրում է. «Շիրակացու (այսինքն «Ժամանակագրության» — Հ. Բ.) Խորենացոյ օգտվելու փաստը, մեր կարծիքով, միանգամայն անկատեած է» («Ան Շիր. Մատենագրությունը», էջ 146): Բայց դա պարզապես թյուրիմացություն է: Պրանք իրար միանգամայն հակասող շարադրանքներ են: Խորենացին հայոց ամբողջ ըորինում վերագրին, այն ժամանակ, երբ «Ժամանակագրության» բանագրը այդ պատիվը վերագրում է Դանիէլ ասորուն, իսկ Մաշտոցին վերագրում է ընդամենը յոթ տառիւր, տառեր, որ պակասում էին Դանիէլի ստեղծած այրութենից: Ստեփանոսի «Հոսունուսի» դրչի Սամուացոյ»:

մանակագրի», և «Եպիփանու» վերնագրված հատվածները և դա ավելի կուռ է դարձնում Փիլոնի բնագիրը<sup>60</sup>:

Փիլոնի համառոտողը ուրիշ աշխատանք էլ է կատարել: Նա կայսերաց երկու ցուցակների տվյալները տեղ-տեղ ձուկել է իրար. օրինակ՝ Թեոդոս Մեծի մասին երկու շարադրանքները:

Արդ, ո՞վ է այս Փիլոնը, որ հանդես է դալիս որպես «Ժամանակագրության» հեղինակ:

Հայ պատմագիրներից Ստեփանոս Տարոնացի Ասողիկը հիշատակում է Փիլոն Տիրակացուն: Նա գրում է. «Իսկ Անաստաս (Կաթողիկոսը — Հ. Բ.) խորհեալ Հայաստանեաց կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց և հրամայէ Անանիայի Շիրակացոյ կարգել զՔրոնիկոնն հրաշապան, յորում զտոմարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսոք հաստատել զքրոնիկոնն և վախճանի՝ կացեալ յաթուն ամս Զ: Ի սուրա ասուս էր և Փիլոն Տիրակացին, որ զՍոկրատայ պատմութիւնն բարգմաննեաց ի հայ լեզու»<sup>61</sup>:

Այս Փիլոն Տիրակացին, մեր կարծիքով, հենց «Ժամանակագրության» բանաքաղն է, նա Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմությունը» թարգմանելուց հետո կազմել է նաև «Ժամանակագրությունը», օգտագործելով նաև հենց իր թարգմանած Սոկրատը: «Կայսերը հոռոմոց» բաժնում մի ամբողջական հատված բառացի վերցված է Սոկրատի Եկեղեցական պատմության համառոտ բնագրից. այսպես.

Փոքր Ասկրատ  
(էջ 686—687)

«Ժամանակագրություն»  
(Ան. Շիր. Մատ., էջ 390—391)

«Յետ այսորիկ վախճանի երանելին Պրոկոդ, և ունի զաթոռ հայրապետութեան Փղարիանոս, և սկսաւ ուսուցանել ի զէմս նեստորի հայութեանն, իսկ եւտիքոս ուն, զանական ի կու կղզուց, առագրէր ընդդիմական Փղարիանոսի զի ընութիւն ասելով: Թանզի ոչ խոստովանի զբանն Աստուած առնուկ մարմին ի որրոյ կուսէն և լինել մարդ, այլ ասէ՝ Ոչինչ՝ էաւ ի կուսէն Մարիամայ, բայց միայն նմանութիւն մարդոյ և կերպարանօք գտեալ իրք զմարդ, ու ոչ ճշմարտութեամբ: Եւ ժողովեալ Փղարիանոսի զհոմախոն՝ հեղինակուոսու իւր լուծանէ ի բահանայութենէ զեւտիքէս: Եւ զիտացեալ զհակառակութիւն նոցա երանելույն թեոդոս թագաւորին, հրամայէ երկրորդ ժողով լինել յնիսոս, ի բան եւ հինգ ամի թագաւորութեանն իւրոյ, եւ թնել յաղագ Փղարիանոսի եւ եւտիքոսի, եւ տեսանել զտոմարն

«Յետ որոյ Փղարիանոս կալաւ զաթոռ հայրապետութեանն. և սկսաւ ուսուցանել զնեստորի հայությութիւնն: Իսկ եւտիքոս ուն, զանական ի կու կղզուց, առագրէր ընդդիմական Փղարիանոսի զի ընութիւն ասելով: Թանզի ոչ խոստովանի զբանն Աստուած առնուկ մարմին ի որրոյ կուսէն և լինել մարդ, այլ ասէ՝ Ոչինչ՝ էաւ ի կուսէն Մարիամայ, բայց միու խոստովանի զբանն Աստուած առնուկ մարմին ի սուրբ կուսէն եւ այն նմանութիւն մարդոյ: Եւ կերպարանօք գտեալ իրք զմարդ եւ ոչ ճշմարտութեամբ: Եւ ժողովեալ Փղարիանոսի զեպիսկոպոս զհամախոն՝ եւ լուծանէ զեւտիքէս: Եւ զիտացեալ զհակառակութիւն նոցա երանելին թեոդոս, հրամայէ կրիկն անդամ ժողով լինել յնիսոս, ի բան եւ հինգ ամի թագաւորութեանն իւրոյ, եւ թնել յաղագ Փղարիանոսի եւ եւտիքոսի, եւ տես-

60 Փիլոնի բնագրի համառոտողը տեղ-տեղ ավելացրել է առանձին նախադասություններ, որոնք զուրկ լնն հետաքրքրությունից: Օրինակ, երբ խոսք է լինում դպրություն ունեցող ժողովուրդների մասին, ավելացնում է. «Իսկ վիրը և աղուանք ոչ կատարեալ զիր ունին այլ խէլ ի հայոցն որպէս ասորին և իսմակելացին յերրածոց առին» (էջ 192ա). Կան և այլ՝ ծավալով փոքր հավելումներ:

61 Մ տ ե փ ա ն ո ս Ա ս ո դ ի կ, էջ 99:

Լոռի զշորեթասաներորդ զլուխոն զրեաւ առ Փղարիանոս վասն նւտիքոսի մոլորութեանն. Եւ յորման ենաս նորա պատուական հրամանըն, արտաքսեցին զեւտիքէս և զՓղարիանոս, և փախանակ նորա զննատողէս ձեռնադրեցին, լուծին և զթեղոդրիան թերեգոս քաղաքի եպիսկոպոսն, զնեամուս Անտիոքի եպիսկոպոսն, և փոխանակ նորա ձեռնադրեցին հրամայուս Մաքամման ի ժողովոյն: Եւ եղել խաղաղութիւն յաւորս թեոդոս թագաւորին բարեպաշտիք:

Աանել զառմարն Ղետպէնի, զշորեթասան զրութեան կրութամ զրեաւ առ Փղարիանոս վասն նւտիքոսի մոլորութեանն...

Ցայնժամ երանելին Դիոսկորոս՝ լուծանէր ի պատուու զհամանական նեստորի, զՓղարիանոս և զադատատան նպիսկոպոս: ...լուծանէր եւ զթեղոդրիան Կիրոս քաղաքի եպիսկոպոսն, ուրիս քաղաքի եպիսկոպոսն եւ զդուղվոյն: Եւ եղել խաղաղութիւն յաւորս թեոդոս թագաւորին բարեպաշտիք:

Մ. Տեր-Մովսիսյանը Երուսաղեմի մատենադարանում գտնվող ձեռագրի հիշատակարանի հիման վրա եկել է այն եղակացության, որ Փիլոն Տիրակացին Սոկրատի «Եկեղեցական պատմությունը» թարգմանել է 696 թ.: Գուցե զանիշտ է Մեծ Սոկրատի կապակցությամբ, որի բնագրի հենց սկզբում էլ հանդիպում է այդ հիշատակարանը: Բայց Փոքր Սոկրատը, ըստ երեսութիւնի, թարգմանվել է ավելի վաղ. այն ավարտվում է թարգմանչի հիշատակարանով, ուր զրված է. «Արդ, զհաման բռ, քահանայց Աստուծոյ, կատարեցին»<sup>62</sup>: Պարզ է, որ խոսքը հայոց կաթողիկոսի մասին է: Բայց ո՞վ է այդ կաթողիկոսը: Ստեփանոս Տարոնացին ասում է, որ Փիլոն Տիրակացին Սոկրատի Եկեղեցական պատմությունը թարգմանեց Անաստատաս կաթողիկոսի օրոք (661—667 թթ.): Փոքր Սոկրատի վերջում կա թարգմանչի հիշատակարանը, որտեղ ի միջի այլոց զըրված է. «Բայց մեր աստանօր ուրեք զպատմութիւնս զադարեցուցեալ, ով տէր ներսէն Կամսարական, ապոհիւպատ պատրիկ, որ եկեղեցեաց ես շինող... Զի որոց ցանկացար պատմութեանս թարգմանել, ընդ նոյն հանապարհ թագաւորաց զնացեած»<sup>63</sup>:

Ըստ Ասողիկի ներսէն Կամսարականը իշխուի է մինչև 691 թվականը. Ծին և 691 (140+551=691) թվականի տակ արդեն որպէս Հայոց իշխան հիշատակում է Սմբատ Բագրատունին<sup>64</sup>, որը հաջորդել է ներսէն Կամսարականին: Հետեարար Փոքր Սոկրատը 696 թ. թարգմանվել է էք կարող. այն թարգմանվել է ավելի վաղ, համենայն դեպս մինչև 686 թվականը, բանի որ այդ թվականով է ավարտվում Փոքր Սոկրատից մի մեծ հատված ներընկալած «Ժամանակագրությունը»:

Պետք է խոստովանել, որ բացառված չէ, գուցե ավելի հավանական է մի րուրուվին այլ բացառություն: Փոքր Սոկրատի բնագրում վերոհիշյալ հատ-

62 Բնագրերի նույնությունը առաջին անգամ մատնացուց է արել ն. Ազնացը (տե՛ս նրա հոդվածը՝ «Փոքր Սոկրատի Եկեղեցական» Սիս, 10 (1938) էջ 303): Ազնացը Փոքր Սոկրատի հերինակ է համարում Հակոբ Աւուացեցուն՝ XII զարի մի անձնավորություն: № 5254 ձեռագրում պահպանված «Ժամանակագրության» վերնագիրը (Խաւար Փիլոնի) և «Ժամանակագրության» մեջ պահպանված խնդրո առարկա հատվածը, որ կա նաև Փոքր Սոկրատի մեջ, շնչ հաստատում Ազնացը նեթագրությունը, այլ բատ երեսութիւն՝ Մ. Տեր-Մովսիսյանի, որի կարծիքով Փոքր Սոկրատի համառոտողն էլ Փիլոն Տիրակացին էր:

63 «Սոկրատայ Սբուաստիկոսի Եկեղեցական պատմութիւն», էջ 687:

64 Անդ, էջ 689—690:

65 Ա ս ո դ ի կ, էջ 101: Ա. Տեր-Զենոնյանը ներսէն Կամսարականի իշխանությունը դուռ է 689—693 թվականների միջեւ: Տե՛ս նրա «Հայոց իշխանը» արարական տիրապետության մանակաշրջանում, «Պատմաբանական հանդես», № 2, 1964, էջ 122, 130:

վածը կրծատված է. «Ժամանակագրության» մեջ այն հանդես է գալիս շատ ավելի ընդարձակ: Փոքր Սոկրատի այդ հատվածը հրատարակիչն առել է բառակուսի փակագծերի մեջ՝ ցույց տալով, որ Սոկրատի հունարեն բնագրից այն բացակայում է, ուստի ավելացված է թարգմանիչ Փիլոն Տիրակացու կողմից: Հնարավոր է, որ Փիլոն Տիրակացին «Ժամանակագրությունը» կազմած լինի նախքան Փոքր Սոկրատը թարգմանելը և թարգմանությունն ավարտելիս համառոտ կերպով մեջ բերած լինի «Ժամանակագրության» խնդրո առարկա հատվածը: Եթե զա այդպես է, ապա Փոքր Սոկրատի թարգմանության ժամանակն ընկնում է 686—691 թվականների միջն:

Փիլոն Տիրակացին չէր փայլում իր գիտելիքներով: Նրա գործերից մինչև օրս մեզ հայտնի էր միայն Սոկրատի «Եկեղեցական պատմության» հայերեն թարգմանությունը: Այս երկի մանրակրիստ ուսումնասիրությունը Մ. Տեր-Մովսիսյանին բերել է այն ճշշտ եղանակով՝ ուսումնասիրությունը Մ. Տեր-Մովսիսյանը կանգ է առել այդ հարցի վրա և ցույց տվել, որ Սոկրատի եկեղեցական պատմության «թարգմանությունը ունի մեծ թերություններ. թարգմանը հայերեն լեզվից ունի բառերի հարուստ պաշար, բիշ բացառությամբ ուղիղ կերպով է հասկանում հունարեն բառերը, բայց շատ թույլ է բերականության մեջ և անտեղյակ երկու լեզուների ոճական նրբություններին: Նրա թարգմանությունը կարդալիս, այն տպավորությունն է ստացվում, որ կարծես շարունակ օգտվել է այնպիսի մի բառորդով, որի մեջ յուրաքանչյուր հունարեն բառի հանդեպ նշանակված էր հայերեն բառի մեկ կամ երկու նշանակությունը առանց ոճերի. բնական է, որ այդ տեսակ թարգմանությունը բառացի, ստրկական է զուրու եկել: Նա առանց հասկանալու է թարգմանել հունարեն հայտնի և շատ գործածական ոճեր: Օրինակ «ըստ աշխարհին ասացուք» ոչու շահճառ էրօնքաց<sup>66</sup> կամ «լոտից հատանելք» — չնուօծն ուուցն<sup>67</sup>. Կան դարձված քննիր, որ ուղղակի չի հասկացել, չօւածն ոյուաց<sup>68</sup> հատուկ անվան տեղ է զնում «Ռուսիի Նիկոմիդացւոյ» Փ. Ա. «Ռուսիի Նիկոմիդացի» (Էջ 15), օւածն ոյուացն = Կոմիդինեաւ (Էջ 58), օնտօւ օւածն ոյուացն = Սա Կոմիդինակացի<sup>69</sup> զուրու (Էջ 355): Թարգմանիչը երբեմն հատուկ անունները հասարակ կարծելով թարգմանել է՝ օրինակ. «Ալուսուլս Արեգ քաղաք, նուրին Փ. Ա. (Էջ 52) Տերեւնիուս սիստմամբ Դքքիցն է կարդում և թարգմանում Սիստոն (Էջ 70)... Մի թեթև ակնարկ ձգելով հատուկ անվանց ցանկի վրա, կարելի է տեսնել, թե ինչքան անհասկացած և բամհաճոյական ձներ են ստացել հունարեն անունները հայերենի մեջ...»<sup>70</sup>:

Մենք Տեր-Մովսիսյանի մատնացուց արած Փիլոն Տիրակացու սիստմերի մի փոքր մասը միայն մեջ բերեցինք, բայց այդքանն էլ բավական է Տիրակացու գիտելիքների սահմանափակության մասին զաղափար կազմելու համար:

Երբ անդրադառնում ենք «Ժամանակագրությանը», ապա համոզվում ենք,

<sup>66</sup> «Սոկրատայ Սրուաստիկոսի եկեղեցական պատմութիւն», Էջ 29:

<sup>67</sup> Ճիշտ թարգմանությունն է՝ «իր տեղում կանենք»:

<sup>68</sup> Նշանակում է «նեռացնել, զնն շպրտել»:

<sup>69</sup> Նշանակում է՝ «շատ փոքր, մանուկ»:

<sup>70</sup> Նշանակում է՝ «նա շատ մանուկ լինելով»:

71 Մ. Տեր-Մովսիսյանը սիստմամի կատարել. նա գրում է «Սակո մի-նադացիս» (Էջ 26): Պիտի լինք՝ «Սա Կոմիդինակացի»:

72 «Սոկրատայ Սրուաստիկոսի եկեղեցական պատմութիւն», Էջ 29—32:

որ վերոհիշտալ կարգի թարգմանական սիստմեր կան նաև այնտեղ: Մենք համեմատեցինք միայն Հիպոկրիտոսի բաժինը՝ մեզ հասած հունարեն առանձին հատվածների հետ: Այստեղ եղած թարգմանական սիստմերը չէր կարող կատարել Ծիրակացին, որ, ինչպես մեկ անգամ առիթ ունեցանք ասելու, տասնամյակներ էր ապրել հունարենի մեջ և փալլուն կերպով գիտեր հունարեն լեզվի նրբությունները: Մեր ասածը համոզեցուցիլ դարձնելու համար ավելորդ չէ այստեղ կանգ առնել «Ժամանակագրության» թարգմանական մի քանի սիստմերի վրա, որոնք իրենց բնույթով, ինչպես ասացինք, հար և նման են Փիլոն Տիրակացու Սոկրատ Սրուաստիկոսի «Եկեղեցական պատմության» թարգմանության մեջ թույլ տված սիստմերին:

Հունարեն բնագրում կարգում ենք. չափ Մշտօսաւուս տղի առջնություն այսինքն «մինչև Արևելյում գտնվող Սաստուսիան»: «Ժամանակագրության» մեջ այն թարգմանված է. «Մինչև ի Մատուսիա, որ է Խηիովեն. Հունարեն դժուու բառը, որ տվալ գեպրում նշանակում է «Արևելյու» ընդունված է որպես հատուկ անուն:

Հունարեն բնագիրն ունի. ձոք Մշտօսաւուս է այս տօն էսպերիս, այն է «Մարաստանից մինչև Արևմուտք»: Հայերեն թարգմանությունն ունի. սի Մարաց մինչև ի Սպերիոն», այսինքն նախապես հիշատակված թարգմանական սիստմի հար և նմանը: «Էսպերիս բառը հայ թարգմանիչը ընդունել է որպես հատուկ անուն:

Հունարեն բնագիրն ունի. «Էլուս ծն անուու և սի սիստմաւ անդաւ. Կօրսարա...», ալիսինքն՝ «Նրանց հասարակաց կղզիները հետեւաներն են. Կորսայուրա...» և այլն: Հայերեն թարգմանությունն ունի. «Եւ այս են կղզիք նոցա. Եպիկենիա, Իգակորսուուա...», ալիսինքն հունարեն էպիչունու: Հասարակ գոյականը հաջորդ անուած գերանվան առաջին շի հիստին էպիչունու: Հասարակ գոյականը հաջորդ անուած գերանվան առաջին շի հիստին էպիչունու: Հասարակ գոյականը մնացած — սուա: տառերը կղզի են Կօրսար կղզու անվան և դրանով ստացվել է «Իդակորսուուա»՝ գյություն շունեցող կղզու անուն: Հիպոլիտոսի լատիներեն թարգմանության տեքստում կարգում ենք. Amisos libera. պարզ է, որ հունարենում այն պետք է հանդիս գար.՝ Արտօն էլեւնթերա ձեռով, ալիսինքն «Ամիսոս ազատ»: Հայերեն թարգմանությունն ունի. «Ամիսոս, եղելիքրա». պարզ է, որ հունարեն էլեւնթերա ածականը վերցվել է որպես հատուկ անուն և դարձել բաղաքի անվանում:

Հունարեն բնագրի «Ըստան տան և ալուսաւան ծն Տարօռառոնցւան...», ալիսինքն «Սպանիացիների, որ է Տլուրինացիները, որոնք Տարրակոնցիներ են կոչվում» հայերենուած թարգմանվել է. «Ազգը Սպանիացւոց որ էն Տլուրինացիք Գէտարակոնեացիքր...»: Տլուրը ամբողջությամբ խեղաթյուրված է, բացի գրանից հունարեն ծն շաղկապը հայ թարգմանիչը կցելով «Տլուրակոնեացիքը»:

Հունարեն բնագրի «Տարօռանցւան տան և ալուսաւան ծն Տարօռառոնցւան...», ալիսինքն «Տլուրինացիների, որ է Տլուրինացիները, որոնք Տարրակոնցիներ են կոչվում» հայերենուած թարգմանվել է. «Ազգը Սպանիացւոց որ էն Տլուրինացիք Գէտարակոնեացիքր...»: Տլուրը ամբողջությամբ խեղաթյուրված է, բացի գրանից հունարեն ծն շաղկապը հայ թարգմանիչը կցելով «Տլուրակոնեացիքը»:

Հունարեն բնագրի «Տարօռանցւան տան և ալուսաւան ծն Տարօռառոնցւան...», ալիսինքն «Տլուրինացիների, որ է Տլուրինացիները, որոնք Տարրակոնցիներ են կոչվում» հայերենուած թարգմանվել է. «Ազգը Սպանիացւոց որ էն Տլուրինացիք Գէտարակոնեացիքր...»: Տլուրը ամբողջությամբ խեղաթյուրված է, բացի գրանից հունարեն ծն շաղկապը հայ թարգմանիչը կցելով «Տլուրակոնեացիքը»:

մար, Սոկրատի թարգմանությունից դատելով, այդ կարգի սխալները բնական են:

Այսպիսով, վերը շարադրված փաստերը մեզ բերում են այն համոզման, որ Հրատարակիչների կողմից «Ժամանակագրություն» կոչված VII դարի բնագիրը ամենակի էլ Անանիա Շիրակացու երկասիրությունը չէ: Նրա հիմնական մասերը հունարենից կատարված թարգմանություններ են. չնշին մասը միայն կարելի է համարել Հայ հեղինակի ինքնուրույն աշխատանքի արդյունք: Եվ այդ ամբողջ աշխատության ամենահավանական բանարադ-թարգմանիչն ու ինքնուրույն էջերի հեղինակը՝ Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակից Փիլոն Շիրակացին է:

Р. М. БАРТИКЯН

### Կ ВОПРОСУ О «ХРОНОГРАФИИ», ПРИПИСЫВАЕМОЙ АНАНИИ ШИРАКАЦИ, И О ЕЕ КОМПИЛЯТОРЕ

#### Р е з ю м е

В начале XX века Б. Саркисяном была издана анонимная «Хронография», датированная 685/686 гг. Издатель, а вслед за ним ряд арменоведов данное произведение приписывали Анании Ширакаци. Однако содержание «Хронографии», которая представляет собой в основном компиляцию из трудов греческих авторов (в первую очередь Ипполита Римского, Евсевия Кесарийского и других), противоречит данным произведений, действительно принадлежащих перу Анании Ширакаци. На основании фактов автор статьи доказывает, что Анания Ширакаци не мог быть компилятором (об авторстве его не может быть и речи) «Хронографии».

«Хронография» была издана на основании текста, сохранившегося в рукописи Матенадарана имени Маштоца за № 2679, датированной 981 годом. В Матенадаране, в рукописи № 5254, датированной 1280 годом, сохранился текст той же «Хронографии» в более сокращенном виде. Хотя эта последняя рукопись на три столетия моложе рукописи № 2679, «Хронография» в ней представляется в более первоначальном и неискаженном виде. В заглавии «Хронографии» рукописи № 5254 указывается, что составителем ее является Филон, которого автор данной статьи отождествляет с Филоном Тиракаци, переведшим к концу VII века с греческого языка на армянский «Церковную историю» Сократа Схоластика.

Н. М. BARTIKIAN

### A PROPOS DE LA „CHRONOGRAPHIE“ ATTRIBUÉE A ANANIA CHIRAKATSI ET DE SON VÉRITABLE COMPILATEUR

B. Sarkissian publiait, au début du XX<sup>e</sup> siècle, une „Chronographie“ anonyme datant de 685/686 qu'il attribuait, comme le firent, par la

suite, nombre d'arménologues, à Anania Chirakatsi. Cette „Chronographie“ qui ne présente qu'une compilation d'ouvrages d'auteurs grecs (Hippolyte de Rome et Eusèbe de Césarée, en premier lieu, et d'autres) est en contradiction avec les ouvrages authentiques d'Anania Chirakatsi. Il nous est montré, à l'appui de nombreuses preuves, qu'Anania Chirakatsi, loin d'être l'auteur de la „Chronographie“, n'en est pas plus le compilateur.

La „Chronographie“ fut publiée sur la base d'un texte (Erevan, Maténadaran, no. 2679) datant de 981. Elle nous est parvenue également dans un manuscrit (Maténadaran, no. 5254) datant de 1280, sous une forme plus abrégée et plus proche de l'original que le texte du manuscrit 2679, de trois siècles plus vieux.

Le titre de la „Chronographie“ du manuscrit 5254 indique le nom de son auteur, Philon, que l'auteur du présent article identifie avec Philon Tirakatsi, traducteur arménien, à la fin du VII<sup>e</sup> siècle, de l'original grec de „l'Histoire ecclésiastique“ de Socrate le Scolastique.

ԽՈՍՔՈՎ ԹՈՐՈՍՅԱՆ

ԸՆԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայագիտության մեջ իշխում է այն տեսակետը, որի համաձայն դատական իրավասությունը, արդարագատության իրականացումը եղել է հայ հոգևորականության սեփականությունը, աշխարհական մարմինները կամ չեն ունեցել դատական իշխանություն, կամ երկրորդական է եղել նրանց դերը այդ բնագավառում<sup>1</sup>: Ընդունելով մի անգամ, որ աշխարհիկ իշխանությունը դատական իրավասություն չի ունեցել կամ ունեցել է սահմանափակ չափով, նրանք ված ուսումնասիրողները, իրավական համարյա բոլոր վեճերը կամ դրանց մեծագույն մասը, բնականաբար, համարելու էին ընդդատյա հոգենոր ատյաններին:

Արդ, միշնադարյան Հայաստանում աշխարհիկ իշխանությունը, իրո՞ք, չի ունեցել դատական իրավասություն կամ երկրորդական է եղել նրա դերը այդ բնագավառում:

Դատական իրավասությունը գլխավորապես հոգենոր բարձր իշխանությանը վերագրելու համար ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը և այլք առաջին հերթին հիմնվել են Փավստոսի հետևյալ վկայության վրա. «Բայց յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիէլ, այր սքանչելի: Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու և գլխավոր եկեղեաց<sup>2</sup> նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռական իշխանութիւնն կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութիւնն, ունէր զիշխանութիւնն զայն առանձինննց<sup>3</sup>, Այս վկայությունից Հ. Մանանդյանն<sup>4</sup>, օրինակ, եղրակացրել է, որ «Մեծի դատաւորութեան գործակալութիւնը» Գրիգորի սեփական իշխանությունն էր և, ուրեմն, դատական իշխանության բարձրագույն կրողը երկրում կաթողիկոսն էր: Հստ բնագրի, սակայն, Գրիգորի սեփական իշխանությունը չի վերաբերում «գործակալութեան մեծի դատաւորութիւնն»: Բնագրի քննվող հատվածը միայն մի բան է ասում. Դանիէլը վերակացու էր Տարոնի եկեղեցիների և այդ գավա-

1. Տե՛ս Վ. Թաստամյան անձը, Միիթարայ Գոշի Դատաստանագիրը Հայոց, Վաղարշապատ, 1880, Յառաջարանութիւն. Ա. Գարագաջան թիւ, Քննական պատմութիւն Հայոց, մասն թ, Թիֆլիս, 1895. Ա. Ճոնց, Արմենիա և ազգական պատմութիւն Հայոց, 1908. և. Սամուելյան, Միիթար Գոշի Դատաստանագիրը ու հին Հայոց բաղարացիական իրավունքը, Վիեննա, 1911. «Կանոնադատական հայոց», հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, Առաջարան և այլն:

2. Պատմության բոլոր յոթ հրատարակություններում՝ եկեղեաց: Ք. Պատկանյանը իր հրատարակության մեջ (1883 թ.) ծանոթագրում է՝ «թերեւս՝ եկեղեցեաց»: Նորայր Բյուզանդացին («Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնը», Տփղիս, 1910, էջ 247) ուղղում է՝ «եկեղեցեաց», որը և բնդունեցին Հ. Մանանդյանը, Ստ. Մալխանյանը և այլք:

3. «Փավստոսի Բուզանդացուց Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 36:

4. Տե՛ս «Ֆեռնալիզմը Հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 76.

ոի վրա տարածվող դատական իրավասությունը նրան էր տրված որպես առանձին իշխանություն:

Հուսավորչի տոհմը Հայաստանի մեծ ու ազգեցիկ տոհմերից էր և ընդարձակ տիրութիւներ ուներ երկրի այլևայլ շրջաններում։ Գրիգորյանները նախարարներ-ավատատերեր էին և իրենց տիրութիւներում իրականացնում էին իշխանությունը, այդ թվում և դատական իրավասությունը հայտնի շափով, ճիշտ այնպես, ինչպես Արծրունիները, Մամիկոնյանները, Բագրատունիները և այլք, իրենց շրջաններում։ Բայց, Գրիգորյանների նախարարական-ավատատիրական դատիրավասությունից գեռ չի բնում և չեր կարող բխել դատական բարձրագույն իշխանություն ամբողջ երկրի ծավալով։ Սակայն, Գրիգորյանները շահում էին նրանով, որ կաթողիկոսությունը նրանց տոհմի ժառանգական արտոնությունն էր, ինչպես օրինակ, սպարապետությունը՝ Մամիկոնյանների կամ ասպետությունը՝ Բագրատունիների։ Եթե Գրիգորյանները դատական իշխանություն ունեին ամբողջ երկրի վրա նաև աշխարհական գործերով, ապա դա կարող էր կապված լինել միայն կաթողիկոսության հետ։ Արդ՝ ընդունենք պայմանականորեն, որ «մեծի դատաւորութեան գործակալութիւնը» Գրիգորի, ուրեմն Կրիգորյանների, սեփական իշխանությունն էր որպես կաթողիկոսների։ Հետեւում է այսաեղից, որ դատական բարձրագույն իշխանությունը ամբողջ երկրի ծավալով պատկանում էր կաթողիկոսին։ Ամենավեց ոչ Ռւսունականորոշները, այդ թվում և ն. Աղոնցն ու Հ. Մանանդյանը, անշուշտ, նշում են, որ կաթողիկոսի այդ պաշտոնը Փավստոսն անվանում է գործակալություն, բայց անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել հենց այդ բառի վրա։ Մեծանուն Հ. Մանանդյանը՝ լավագույնս ցույց է տվել, որ գործակալությունները պետական կյանքի կառավարման որոշակի բնագավառներն էին համապատասխան հաստատություններով։ Դրանցից էին մարդակետությունը, հազարապետությունը, սպարապետությունը և այլն։ Գործակալությունները գլխավորում էին նախարարական խոշոր տների ներկայացուցիչները։ Բայց, գործակալությունները որքան էլ նախարարական տների ժառանգական արտոնությունը լինեին, այնուամենայնիվ գործակալները նշանակվում էին թագավորի կողմից, այլ կերպ՝ նրանք պետության բարձրաստիճան պաշտոնյաներն էին և որպես այլպիսիք ստորագրված էին թագավորական իշխանությանը, բազավորի գործակալներն էին։ Թվարկված գործակալություններից մեկն էլ «մեծ դատավորության» գործակալությունն էր։ Իրերի վիճակը չի փոխվում, եթե, նույնիսկ, ընդունենք էլ, որ այդ գործակալության գլուխը, դիցուք, կաթողիկոսն էր։ Գործակալը գործակալ է մնում։ Ուրեմն, ինչպես մյուսները, այնպես էլ արդարագատության բնագավառը ղեկավարող գործակալը ստորագրված էր թագավորին և ենթարկվում էր նրա գերագույն իշխանությանը։ Այսպիսով, դատական աստիճանակարգության գլուխը, դատական իրավասության բարձրագույն կրողը թագավորն էր։

Բայց, դատական աստիճանակարգության զլումը լինելով հանդերձ, թափավորը, գուցե, զիսավորում էր դատական մի այնպիսի համակարգ, որի յուրաքանչյուր օղակը վայրընթաց գծով գտնվում էր բացառապես հոգևորական-ների ձեռքում, ինչպես զրել են ումանք: Դարձյալ ո՞չ: Բերենք մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ փաստերից մի քանիսը:

Ագաթանգեղոս. «Իսկ թագաւորն Տրդատիոս... հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրացն իւրց... Եւ կուտեցան... մեծամեծը և կու-

սահկալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք և իշխանք, նախարարք և ազատք, դատաւորք և զօրագլուխք, և Հասեալ կային առաջի թագաւորինք<sup>5</sup>:

Փաւստու, «Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, աղաստք, զօռաւոխք, բարարք».

Այս վկայությունների համաձայն աշխարհական դատավորները կարեոր պաշտոնաներ են, որովհետև որպես կանոն հրավիրվում են աշխարհաժողովներին: Աշխարհական դատավորների հաստատությունը քրիստոնյա Տրդատի նորամուծությունը չէր. այն կար չին ժամանակներից և հարատևեց մինչև ուշ միջնադար: Պատմահայրը հաղորդում է. «Եւ օրէնս իմն հաստատէ ի տան թագաւորութեան իւրոյ, և ժամս որոշէ ելից և մտից և խորհրդոց և խրախճանութեանց և զբոսանաց: Եւ կարգս զինուորաթեանց, և նոցունց առաջինս և երկրորդս և երրորդս, և որ ի կարգին ...իրաւարարս ի տանն արքունի, իրաւարարս և ի քաղաքս և յաւանս»<sup>6</sup>:

<sup>5</sup> «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տիգիս, 1909, լ. 413. Ճ՛կ:

6 «Փաստուի Բովանդացոյ Պատմութիւն Հայոց», Վեհափառք, 1932, էջ 54, III հլ.

<sup>7</sup> «Մայսիսի եռորդնացոյ Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1913, էջ 117, 3-րդ 8:

<sup>8</sup> Տվյալ զետքում մեզ հնատարբերում է ո՞ւ թե անձն, որի հետ կապաւ են երեսութիւն, այլ հենց նրբ, երեսութիւն, որ պատմիշը, ընականաբար, կապելու էր որևէ անձի հետ։ Այս իմաստով հնագություն չունի Վաղարշակի պատմականության հարցը, այսինքն այն հարցը, թե ով է ներկացված նրա անվամբ՝ Տրդատը, ինչպես ընդունված է, թե պատմական Վաղարշակ Բ-ն, ինչպես իմաստում է Հ. Մանանյանը («Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Բ, մաս 1, Երևան, 1957, էջ 58)։ Տե՛ս նաև Գ. Խ. Սարկոսյան, Տիգրանակերտ, Մոսկվա, 1960, էջ 0-23։

<sup>9</sup> «Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության», Հ. Յ., մաս Ա, էջ 14.

կայացուցիչների ...որոնք ներքաղաքային հարաբերություններում հետապնդում էին թագավորի շահերը, այժմ այլև չեն թվում տեղ-աեղ գոյություն ունեցող և մենք ակնհայտորեն պետք է ենթադրենք, որ այդպիսի դատավորներ ծառայում էին ո՛չ միայն Դուրայում, այլև ընդհանրապես քաղաքներում, գոնե, սելեկյան պետության արևելյան մասում, ինչպես և պարթեական ամբողջ տերության մեջ<sup>10</sup>: Պարթեական պետության քաղաքներում թագավորական դատարանների ու դատավորների գոյությունը հաստատող այս արժանահավատ տեղեկությունը նոր լուս է սփռում Խորենացու Հազորգման վրա, որի համաձայն մեր թագավորը նշանակեց «իրաւարար» ի տանն արքունի, իրաւարար և ի քաղաքս և յաւանս»: Ուշադրություն դարձնենք. Խորենացու վկայությամբ էլ դատավորներ նշանակվել են քաղաքներում, և այս կողմից էլ Պատմահոր հազորդումը համաձնչյուն է Դուրայի փաստաթթվին: Հաստատվելով Հայաստանի գահի վրա և վերջինի ամրությունն ապահովելուց հետո, նոր Հարստության հիմնադիրը, բնական է, որ զրադվելու էր իր տերության ներքին գործերով: Հայ պարթեկի կողմից Հայաստանի քաղաքներում նշանակված դատավորները, բնականաբար, չեն տարբեկվելու նրա ավագ գահակիցների կողմից պարթեական քաղաքներում կարգված թագավորական դատավորներից:

Հահապիվանի ժողովի ժամանում կարդում ենք. «Եպիսկոպոս ոք կամ երեց, կամ ազատ ոք ի դատաւորաց»<sup>11</sup>: Այս կանոնից շատ պարզ երևում է, որ կային պաշտոնյաներ, որոնք հատկապես դատավորներ էին միայն և որ նրանք ազատներից էին, այսինքն՝ աշխարհականներից: Աշխարհական դատավորները քննում էին կամ նրանց մասնակցությամբ էին քննվում կարեւորագույն գործեր: Նույն ժողովի ի կանոնը սահմանում է. «Եպա եթէ յոստիկանի»<sup>12</sup> ի տան գոցի պղծութիւնն... Կալցին միաբան պղծագործ ընտանեաւքն հանդերձ եւ ի հրապարակ ածցեն եւ առաջի զիխաւոր եպիսկոպոսին եւ առաջի մեծամեծաց իշխանացն եւ այազ դատաւորաց, եւ միաբան վրէժիննիք լինիցին աւրինացն Աստուծոյ»<sup>13</sup>: Դարձյալ՝ բացի եպիսկոպոսներից ու իշխաններից, որոնք միաժամանակ նաև դատավորներ էին վարչակառավարչական իրենց լայն իրավասության ու լիազորությունների ուժով, և աշխարհական շարքային դատավորներից, կային նաև աշխարհականներից ավագ դատավորներ, որոնց գործ հենց դատավորությունն էր: Դատելով այն գործերից, որ քննում են սրանք, պետք է եղանակացնել, որ ավագ դատավորները արդարազատության իրականացման ընազավառում խաղում են նշանակալի դեր: Դա ընդգծվում է նաև այն հանգամանքով, որ դատական աստիճանակարգության մեջ ավագ դատավորների դատական իրավասությունը ներկայանում է նույն բարձրությամբ ինչ և իշխաններին ու եպիսկոպոսներին:

<sup>10</sup> Dura parchment 21. Hypothek und Exekution am Euphratufer in 1. Jahrhundert n. Chr. von C. Bradford Welles, ի Zeitschrift der Savigny-Stiftung für Rechtsgeschichte-Romanistische Abteilung, LVI Band, Weimar, 1936, էջ 105—106:

<sup>11</sup> «Կանոնգիրը Հայոց», հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, էջ 455:

<sup>12</sup> Դոկտոր Լ. Ս. Խաչիկյանը ուղղում է. «Ռուսիկան»-ը՝ «Ռուսանիկ» համաձայն մեր Մատենադարանի № 659 կանոնգրի (տե՛ս «Փոքր Հայրի սոցիալական շարժումների պատմությունից», Երևան, 1951, էջ 76, Ժամանակագիրը. 2): «Ոստիկան բառի նշանակության մասին միշնադարյան Հայաստանում տե՛ս Ա. Տեր-Ղոնողյանի ուշագրավ հոդվածը՝ «Դիտողություններ «Ռուսիկան» բառի մասին», «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 4, էջ 243—248, որտեղ Հոդվածագրը, սակայն, չի օգտագործել Շահապիվանի ժողովի ի կանոնը»:

<sup>13</sup> «Կանոնգիրը Հայոց», հ. Ա, էջ 465:

Վկայակոչված փաստերը, ինչպես և բազմաթիվ այլ տվյալներ ցույց են տալիս, որ Արշակունյաց Հարստության (նաև Մարզպանության) ժամանակ Հոգեոր-եկեղեցական ատյաններից բացի կային պետական (աշխարհական) դատարաններ երեք աստիճանով. գերագույն՝ թագավորական (մարզպանական), միջին՝ իշխանական և ավագ դատավորների, ստորին՝ դատավորների:

Աշխարհական դատարանների համակարգը կար ոչ միայն Բագրատունյաց, այլև Զաքարյանների շրջանում: Մխիթար Գոշի Դատաստանագրի համաձայն ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանի դատարանային համակարգը ներկայանում է հետևյալ ձևով. պետական դատարաններ (թագավորական, իշխանական, ստորին), ավատասիրական-ավատապետական դատարաններ (դասային, տերունական) և Հոգեոր-եկեղեցական ատյաններ (ժողով, կաթողիկոսական, եպիսկոպոսական, քահանայական)<sup>14</sup>: Դատարանային այս համակարգում թագավորական դատարանի առկայությունը տարօրինակ չպետք է թվա այն պատճառաբանությամբ, թե այն ժամանակ երբ գրվել է Դատաստանագրիքը, չկար թագավոր ոչ մայր Հայրենիքում և ոչ Կիլիկիայում: Նախ, ԺԲ դարի վերջերին ներքին և արտաքին իրադարձությունները զարգանում էին այն ուղղությամբ, որ կարող էին տանել և Կիլիկիայում, իրոք, արան գեպի թագավորության վերականգնում: Մխիթարն ընդպառազում էր ցանկալի գալիքին և Դատաստանագրիքը գրելիս, անշուշտ, նկատի ուներ հայկական թագավորության վերականգնման իրական հնարավորությունը: Երկրորդ, ճիշտ է, թագավորական դատարանը դեռ չկար, այն պետք է ստեղծվեր թագավորության վերականգնումով, բայց այդ դատարանը Մխիթարի երեսակայությունը արդյունքը չէր, այլ իր իրական օրինակն ուներ պետական-թագավորական կյանքի նախորդ շրջանում:

Ի մի բերենով վկայակոչված և շատ այլ փաստեր կարող ենք արձանագրել:

Հայկական պետականության պայմաններում դատական իրավասության բարձրագույն կրողը եղել է մարմնավոր գերագույն իշխանավորը՝ թագավորը: Հոգեոր ատյաններից բացի եղել է աշխարհական դատարանների համակարգը իր ընդդատության գործերով, որոնք ընդգրկում էին բրենեկան արդարադատության համարյա ամբողջ բնագավառը և քաղաքացիականի մի մասը:

Օտար տիրակալության ժամանակ, եթե, սակայն, պահպանվել է աշխարհական համազային իշխանությունը կամ երկրի այն շրջաններում, որտեղ մնացել են Հայկական իշխանություններ, դատական իրավասությունը բաժանված է եղել սրանց և Հոգեոր մարմնների միջև, ինչպես նախորդ գեպում, բայց կաթողիկոսի գերի նկատելի ուժեղացմամբ և երկուսի համար էլ այն ընդհանուր սահմանափառումով, որ պայմանավորված էր օտարակալությամբ:

Հայկական իրավունքի պատմության մեջ Հոգեորականությունը եղել է զատական իրավասության միակ կրողը այն շրջաններում և այն ժամանակ, որտեղ և երբ ազգային մարմնավոր իշխանություն չի եղել և որքանով այդպիսի իրավասություն արտոնվել է տիրողների կողմից:

Թվարկելով մի շարք գործեր, որոնք Մխիթար Գոշի Դատաստանագրի համաձայն ընդգատայա են աշխարհական ատյաններին, պրոփ. Խ. Սամուելյանը դրում է. «Հոգեոր դատարանները, որպես ավելի ազդեցիկ ու տարածված հիմնարկություններ, ընդունակ էին միշտ իրենց վրա վերցնել այդ տեսակ իրա-

<sup>14</sup> Այդ կապակցությամբ ավելի մանրամասն տե՛ս մեր Հոգեագույն՝ «Դատարանային համակարգը Միջնադարյան Հայաստանում բատ Մխիթար Գոշի Դատաստանագրիք», 1965, № 12:

վարանական կազուսների վճիռներն և յուրաքանչյուր բոպե անխափան ներս խուժել աշխարհական ու եկեղեցական դատաստանների իրավասությանց տարբերող սահմանների որոշման մեջ»<sup>15</sup>: Մենք շնչք կարող նշել ոչ մի փաստ Դատաստանագրում, ոչ մի հոդված, որից հետեւք, թե օրինակ՝ եպիսկոպոսական ատյանը իրավասու էր փոխել իշխանական դատարանի վճիռը, կամ իշխանական դատարանից վերցնելով կարող էր իր վարույթի տակ առնել մի գործ, որը նախապես արդեն ընդգատյա էր առաջինին և այլն: Դատաստանագրում ոչ մի հիմք չի տալիս ասելու, թե հոգևոր ատյանները իրավական (իրավական և ոչ թե «պատուի աղաքաւ») որևէ գերազանցություն ունեն աշխարհական դատարանների համեմատությամբ: Ընդհակառակը, հոգեոր և մարմնավոր ընդգատության գործերի քիչ թե շատ որոշակի սահմանաղագատումը, որ տվել է Միսիթարը, խոսում է այն մասին, որ այդ դատարաններից յուրաքանչյուրը ուներ գործունեության իր բնագավառը, որի սահմաններում նրանք անկախ էին իրարից իրավականորեն: Եթեու ընույթի այդ դատարանների իրավական գերազանցության հարցը ընթանում է յուրաքանչյուրի համար իր գծով, երկուսի վերաբերյալ էլ հանգելով աշխարհական բարձրագույն իշխանությանը: Այդպես էր իրավունքի համաձայն, ինչ վերաբերում է դատա-իրավական գործնական առողյալին, ապա այս դեպքում որոշիչը ոչ այնքան իրավունքն էր, որքան իշխող դասակարգի երկու դասերի ուժերի իրական հարաբերությունը ամրող երկրի ծավալով ընդհանրապես և յուրաքանչյուր տվյալ շրջանում՝ մասնավորապես:

Քանի որ Հայաստանում կային երկու բնույթի դատարաններ՝ հոգեոր և աշխարհական, ուստի տեսնենք, թե դրանցից յուրաքանչյուրը ինչ կարգի գործեր էր քննում: Հասկանալի է, որ ամենից առաջ պետք է հետաքրքրի բրեական գործերի ընդգատությանը: Մովսես Խորենացին հաղորդում է, որ Վաղարշակը նշանակեց «Եւ լիշեցուցանողս երկուս ի ձեռն գրոյ, այլ ոմն դրաբի լիշեղութիւնս առնելով, և այլ ոմն գվետինդրութիւնց»<sup>16</sup>: Պատմահայրը այսպես է ներկայացնում այդ պաշտոնյանների պարտականությունները. «Եւ բարույց լիշեցուցանողին հրաման տայ՝ ի բարկութեանն արքայի և յանիքաւ հրամանս լիշեցուցանել զիրաւն և զմարդասիրելն»<sup>17</sup>: Երկրորդ պաշտոնյայի կողմը, ինքնին, արդեն պարզում է այն բառը, որով Պատմագիրը բնութագրում է նրա պարտականությունը՝ վրեժինդրություն: Այս պաշտոնյան պարտավոր էր ամեն անգամ դրաբոր հիշեցնել արքային վրեժինդրության անհրաժեշտության մասին. այսինքն՝ հարց էր բարձրացնում բրեական հետապնդում սկսելու, գործ հարուցելու մասին: Վրեժինդրության մասին դրավոր հիշեցնողը, այսպիսով, ներկայանում է որպես մի զիմաստ դատախազ, որպես հանրային-պետական մեղադրող, որը ի պաշտոն, չո օֆիսօ պարտավոր էր հետապնդում սկսելու հանցագործի գեմ կամ հանցագործության փաստի առթիվ: Ի՞նքոքէ, շպետք է կարծել, թե հանրային-պետական մեղադրողը հետապնդում էր սկսում ամեն մի հանցագործության կապակցությամբ: Նրա հանդես գալու առիթները առաջին հերթին, հավանաբար, այն հանցագոր արարքներն էին, որոնք ուղղությամբ էին թագավորի «գանձի» ու գահի գեմ կամ ընդհանրապես բրեական այն

<sup>15</sup> «Միսիթար Գոշի Դատաստանագիրը ու Հին Հայոց բաղաբացիական իրավունքը», էջ 140—141:

<sup>16</sup> ՏՄովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», 2-րդ, 8, էջ 117:

<sup>17</sup> Անդ:

գործերը, որոնք ընդգատյա էին թագավորին: Միջնադարյան Հայաստանում իշխանությունների կողմից հանցագործին ի պաշտոնի հետապնդելը, ինքնին, շատ ուշագրավ երեսով է, որին այստեղ հանգամանորեն անդրագաւում չենք կարող<sup>18</sup>: Նշենք միայն, որ Խորենացւոյ վկայության համաձայն քրեական կարուր գործերը ընդգատյա էին թագավորական դատարանին:

Եղնիկ Կողբացին, անշուշտ, իր ժամանակի դատա-իրավական՝ առօրյան նկատի ուներ, երբ արձանագրում էր. «Արդ, յետ այսոր ամենայնի հաւանութեանց յամառեալ զնոյն ի մէջ բերեն, բնութեամբ նն՝ ասեն՝ շարիք, և ու կամածինը:

Ասեմք, եթէ բնութեամբ իցեն, ընդէ՛ր օրէնք ի թագաւորաց զնիցին, և սաստի ի լիշխանաց և պատիմք ի դատաւորաց, ո՞չ ապաքին վասն կարձելոյ շարեացն: Եւս, թէ բնութեամբ իցեն շարիքն՝ ոչ պարտի օրէնսդրին օրէնս զնել, և ոչ իշխանն պատիմք ի վերա շարագործին ածել ... իսկ եթէ տեսանեմք՝ թէ բազաւուն զիւոց օրինաց վրէծս պահանչէ, և պահանջմամբ վրիմուցն զինասն կարձէ, և դատաւուն զգոնն և զաւագակն պարկէ, և ենրէ վասն զվասակարութիւնն ի միջոյ բառնալոյ, և հայր զորդի զմնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ, և այլքն ամենեթեան զիւրաբանչիւր զանցնիւր զանարդանաց վրէծս պահանչեն՝ կամ անձամբ կամ իշխանօֆ»<sup>19</sup>: Այս վկայության համաձայն քրեական արդարագատությունը, հավանաբար նաև բաղաբացիականը նշանակալի շափով, վերը նշված երեք դատարանների իրավասությանն է ենթակա: Ինքը՝ թագավորն է վրեժ պահանջում իր սահմանած օրենքների խախտման համար, իշխանն է պատում և զատավորը՝ սաստում: Բոլոր գեպերում, առնասարակ, վրեժ են պահանջում ոչ թե «եպիսկոպոսօք», այլ «իշխանօք», ուրեմն քրեական գործերը ընդգատյա էին ոչ թե հոգեոր ատյաններին, այլ՝ աշխարհական:

Այդպես էր նաև Բաղրատունիների ժամանակ, նկատի ունենալով Ասողիկի վկայությունները և այլ փաստեր. այդպես էր նաև Զաքարյանների ժամանակ, ինչպես կտևսնենք ստորև, զիմնվելով զիմավորապես Դատաստանագրությունից:

Միակողմանի վինելու համար ծանոթանանք նաև այն փաստարկներին, որ բերել են իշխող տեսակետի կողմնակիցները: Այս գեպում ամենից առաջ պետք է նկատի ունենալ Վ. Բաստամյանցին, որովհետեւ նա առաջինն է, որ աշխատել է հիմնավորապես ապացուցել այդ տեսակետը. մյուսները՝ այսպես թի այնպես կրկնել են նրան: Նշենք նաև, որ Վ. Բաստամյանցը հայ իրավունքի պատմագիտության հիմնավիրն է, այդ գիտության սակավաթիվ ներկայացուցիչներից ու մեծ երախտավորներից մեկը: Մեծաթիվ չեն նրա գործերը, բայց բարձրարժեք են խիստ: Եվ եթե նրա ու այլոց որոշ տեսակետները վերանայելու փորձեր են արվում այսօր, ապա այն գիտակցումով, որ գրանք շակումներ են միայն ոչ-ձիշտ գրված մի քանի աղյուսների, այն շենքում, որ կառուցել են նրանք: Վ. Բաստամյանցը գրությունը պատմագիտության հիմնավիրն է, այդ գիտության սակավաթիվ ներկայացուցիչներից մեկը: Մեծաթիվ չեն նրա գործերը, բայց բարձրարժեք են խիստ: Եվ եթե նրա ու այլոց որոշ տեսակետները վերանայելու փորձեր են արվում այսօր, ապա այն գիտակցումով, որ գրանք շակումներ են միայն ոչ-ձիշտ գրված մի քանի աղյուսների, այն շենքում, որ կառուցել են նրանք: Վ. Բաստամյանցը գրությունը պատմագիտության հիմնավիրն է, այդ գիտության սակավաթիվ ներկայացուցիչներից մեկը:

<sup>18</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս մեր գիտության աշխատավորությունը — «Դատարանակազմությունն ու զատավարությունը միջնադարյան Հայաստանում ըստ Միսիթար Գոշի Դատաստանագրություն»:

<sup>19</sup> Եղ գն բ կ ա յ զ գարգաւոր գիտակցությունը նշանակությունը միշտ ավելի գոյն:

ներողամիտ էր և գործածում էր միշտ ավելի թեթև, միայն ուղղեցուցիչ պատիճներ—զանազան տեսակ ապաշխարանքներ»<sup>20</sup>: «Այս դատողությունը ավելի քան միամիտ է, — պատասխանում է Ն. Մելիք-Թանգանը, — սպանողի համար ճշմարիտ է, շատ նպաստավոր է հոգնոր դատարանին դիմելը, որովհետև միմիայն ապաշխարանք կրելով հանցանքից կազմատվի, բայց... ո՞ր մարդը կհամաձայնի յուր եղբոր սպանողին ազատ համարել պատժից... Հապա եթե հանցավորը պնդագուխ է և եկեղեցական ապաշխարանք կրելու ոչ հակամետ, ինչ պիտի անի եկեղեցական դատարանը, ոչինչ, նա պիտի այն ժամանակ նողովիք ենթարկի այդպիսի անձին: Է այսպիսով աշխարհն կարելի՞ է կառավարել, իհարկե ոչ»<sup>21</sup>:

Վ. Բաստամյանցն, այնուհետև, հենվում է Շահապիվանի ժողովի 20-րդ կանոնի և, մանավանդ, այնտեղ զործածված «շարագործ» բառի վրա: Ենթագրելով, որ այդ բառը կիրառվել է «ոչ անառակության իմաստով, այլ յուր պարզ և սովորական իմաստով», եղբակացնում է: «Հիրավիլ եկեղեցական իշխանության ձեռքին էր բրեական գործերի դատաստանը»<sup>22</sup>: Ն. Մելիք-Թանգյանը ոչ առանց հիմքի պնդում է, որ «շարագործ» բառի տակ կանոնում պետք է հասկանալ մծդնեականներին: Առաջմմ թողնենք, թե «շարագործ» բառի մեկնությունից որն է ճիշտ և ուշադրություն դարձնենք նույն՝ 20-րդ կանոնի հետեւալ հատվածի վրա, որը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: «Ապա եթէ եպիսկոպոսն ջանացաւ եւ վրէժինդիր եղեւ, եւ երիցունքն եւ այլ մարդիկն վկայեցեն զաշխատութենէ եպիսկոպոսին, որ զշարագործն յայտ արար իշխանութեան ուրում, եւ իշխանն, որ էր յաշխարհին եւ գեալց ուրում աւագ, նախարար՝ աւր գաւառին, կամի պղծութեանն թիկունց լինել եւ զշնացողսն դաւդի եւ բարուցանել կամ վասն կորուիչ արծաթոյ կամ վասն ակնառութեան եւ ծառայութեան, եւ ոչ ընտրեսց զբիստոս սիրել... եղիցի նղովեալ այնպիսին եւ յեկեղեցւոյ սրբոյ ի բաց կացցէ մինչեւ տացէ զպղծագործսն ի ձեռս եպիսկոպոսին»<sup>23</sup>: Ընդգծված տողերից ակնհայտ է, որ «շարագործի» մասին եպիսկոպոսն հայտնում էր մարմնավոր իշխանությանը՝ իշխանին, գեղշավագին, նախարարին և սրանք էին, որ պատժի միջոցներ էին կիրառում զանցառով նկատմամբ: Եթե «շարագործի» տակ հասկանանք հանցագործին, բառի բրեակավական իմաստով, ինչպես ընդունում կամ ենթադրում է Վ. Բաստամյանցը, ապա բրեական գործերը ընդդատյա էին մարմնավոր իշխանությանը: Իսկ եթե «շարագործի» տակ հասկանանք հանցագործին, բառի կրոնա-եկեղեցական իմաստով, տվյալ գեպքում աղանգավորին, ինչպես բացատրում է Մելիք-Թանգյանը, ապա նրան պատժելը դարձալ կախված էր աշխարհական իշխանությունից, որովհետև եթե վերջինս ինչ-ինչ պատճառներով կամենար հովանագորել-պատսպարել հանցագործին, հոգեոր մարմինները ոչինչ չեն կարող անել, բացի աշխարհական իշխանավորին նղովելուց: Այսպիսով, այս կանոնը ևս հաստատում է, որ բրեական գործերն ընդհանրապես և հոգեոր-եկեղեցական գործերով մարմնական-նյութական պատիժների կիրառումը՝ մասնավորապես, պատկանում էր աշխարհական իշխանության իրավասությանը:

20 «Յառաջարանութիւն», էջ 69.

21 «Հայոց եկեղեցական իրավունք», Բ գիրք, Եռուշի, 1905, էջ 225—226:

22 «Յառաջարանութիւն», էջ 73:

23 «Կանոնդիր հայոց», Հ. Ա. էջ 463—464:

Վ. Բաստամյանցը, վկայակոչելով ներսես Բ կաթողիկոսի Բ, Ժէ, Ի, ԻՓ, ԱԱ և ԷԳ (նաև Գրիգոր Լուսավորչի 15 և 16-րդ) կանոնները, գրում է: «Այս կանոնների մեջ հիշված բոլոր հանցանքները — մարդասպանություն, գողություն, ավազակություն, հրձիգություն և այլն, զուտ քրեական են, բայց երբ հոգեոր իշխանությունը նշանակում է դոցա համար եկեղեցական ապաշխարություն, ուրեմն դոցա դատաքննությունը նորա ձեռին էր»<sup>24</sup>: Ն. Մելիք-Թանգյանը առ այս նկատում է: «Այդ ոմն ներսեսի 42 կանոնն բոլորովին անվավեր են և անհիմն, կցկուոր և միմյանց հակասական... Սրանց վրա վստահանալ և սրանց հիմամբ եղբակացություն անել, չի կարելի...»<sup>25</sup>: Ավելացնենք, քննվող հարցի տեսանկյունից ամենակությունը չունի հակասական կամ վավերական են թե ոչ ներսես Բ-ի կանոնները: Միանգամայն վավերական և ոչ հակասական շատ կանոններ, թե՛ ազգային և թե՛ օտար ծագումով, քրեական մի շարք հանցագործությունների համար ապաշխարություն են սահմանում: Բայց, այդ կանոնների հիման վրա, այնուամենայնիվ, չի կարելի եղբակացնել, թե Հայաստանում, ինչպես Միփիթարից առաջ, այնպես էլ նրա ժամանակ, քրեական գործերն ընդգատյա էին հոգեոր ատյանին, այն պարզ պատճառով, որ նման գեպքում ապաշխարությունը միայն լրացուցիչ պատիժ է եղել: Վկայակոչենք մի քանի փաստ: «Եթէ այր զկին սպանցէ յաղագս պոռնկութեան, արեան դատաստան իիցի բովանդակ, զի ի տեսանէ արձակել հրամայեցաւ եւ ոչ սպանանել... իսկ եթէ կին զայր զեղօք եւ կամ այլ օրինակաւ, նոյն լիցի դատաստան: Եւ ապաշխարութիւն յաղագս տուգանին թերե լիցի: Բայց մի ոք զապաշխարութիւնն հայցից է ի զիրս դատաստանի, զի այդ կանոնաց է եւ է ոգայ, իսկ սա մարմնոյ...»<sup>26</sup>, կամ՝ «որք միանգամ իր դատաստանի են եւ տուգանին, պէտք են եւ ապաշխարութեան: Եւ քանի կանոնը եւ գատառությունը ապաշխարութիւնն ի կանոնն ըրդաք»<sup>27</sup> և այլն:

Ինչպես տեսնում ենք, Միփիթարն ասում է, որ դատաստանը, այսինքն՝ իրավական պատիժը կամ փոխհատուցումը չի վերացնում հոգեոր-եկեղեցական պատիժը՝ ապաշխարությունը: Պարզվում է միաժամանակ, թե ինչու կանոններում ապաշխարություն է սահմանված քրեական հանցագործությունների համար, որովհետև «որք միանգամ իր դատաստանի են եւ տուգանին, պէտք են եւ ապաշխարութեան»: Եվ որովհետև ապաշխարություն կարող է նշանակել միայն հոգեոր իշխանությունը, ուստի Դատաստանագիրը սահմանում է միայն նյութական-մարմնական պատիժը, ապաշխարությունը թողնելով եկեղեցուն:

Աստծու պատվիրաններից ամեն մի շեղում գործով, խոսքով, նույնիսկ՝ մտովի, քրիստոնեական վարդապետության համաձայն, համարվել է մեղք, այդ բառի կրոնա-եկեղեցական իմաստով: Առավել ևս մեղք է համարվել հանցագործությունը, մանավանդ՝ սպանությունը: Հանցագործությունը մի մեղանցանը է աստծու, աստվածադիր օրինականության դեմ: Մեղանչողը պետք է քամի իր մեղքը: Քավության գլխավոր միջոցներից մեկը ապաշխարանքն է:

24 «Յառաջարանութիւն», էջ 74—75:

25 «Հայոց եկեղեցական իրավունք», Բ գիրք, էջ 225:

26 «Միփիթարայ Գօշի Դատաստանագիր հայոց», էջ 115:

27 Անդ, էջ 361, տե՛ս նաև էջ 197, 349 և այլուր:

Ապաշխարողը իր մեղքի անկեղծ խոստովանությամբ, ամենօրյա չերմեռանդ աղոթքով, ի խորոց սրտի անխառն զզչանքով աստուծուց ներումն է հայցում: Ի վերջո, աստված ներում է նրան և վերագրաձնում եկեղեցու դիրէր: Մի խոսքով՝ ապաշխարությունը, հայտնի առումով, հաշտության միակողմանի պալմանագիր է աստծու և հանցագործի միջն, որի մեջ տուժողի շահերը անտեսված են: Բայց, աստծուն բավարարելուց բացի պետք է բավարարել և տուժողին, աստվածադիր օրինականությունից բացի՝ նաև մարդագիր օրինականությանը: Ապաշխարանքը անմիջական այդ գոհացումը տալ չի կարող և որպես հանրային անվտանգություն ապահովող միջոց նվազ գործոն է, ուստի այն չի կարող վերացնել կամ իրենով փոխարինել արարքի քրեա-իրավական հետևանքները: Դատաստանագրքի երեք խմբագրությունն էլ ընդգծում են այդ իրողությունը, չիմք տալով մեղ ասելու, որ ոչ միայն Միթիարի հայացքն է դա, այլև իրական կյանքի դատա-իրավական առօրյան: Դատաստանագրքում կարգում ենք. «Դիրսդատաստանի զնմանութիւն կանոնաց ունի ... Եւ արդ այսպէս ունին զնմանութիւն առ միմեանս. զի կանոնք հոգու ուղղիչ է և դատաստան մարմնոյ, եւ թէպէտելի միմեանց բաժանեալք են, բայց ի բազում իր միաւորին, որպէս եւ հոգի եւ մարմին, զի բնութեամբ երկու են եւ անշփոթ, խառնեալք ընդ միմեանս լինին մի եւ ի բազում իրս մի կամօք գործեն դիրսն: Նոյնպէս եւ կանոնքն եւ դատաստանս: Վասն այսորդի թէպէտել պատահի ի միասին խառնիլ երկուցն, բայց ոչ լուծանն զմիմեանս»<sup>28</sup>: Կանոնք հոգու ուղղիչն է, Դատաստանագրքը՝ մարմնին եթե պատահում է, որ կանոնականն ու աշխարհական-իրավականը միասին են հանգեն զալիս, ապա՝ «ոչ լուծանն զմիմեանս»: Կանոնական պատիժը չի վերացնում քրեա-իրավականը, ինչպես որ վերջինս էլ չի վերացնում կանոնականը, թեև կանոնականը հաճախ կամ երբեմն ածանցական է իրավականից:

Այսպիսով, քրեական ծանր հանցագործությունների համար կանոնների սահմանած ապաշխարությունը եկեղեցու իրավասությամբ պայմանավորված հոգեորդ-կանոնական լրացուցիչ պատիժն է լոկ ի վերա մարմնական նյութական այն պատիժի, որ նշանակում էին աշխարհական ատյանները, որոնց և ընդդատյա էին այդ գործերը:

Միջնադարյան Հայաստանում ընդդատության վերաբերյալ ավելի մանրամասն ու ամբողջական պատկերացում կարելի է կազմել Միթիար Գոշի Դատաստանագրքի հիման վրա, ուրեմն ծանոթանանք նրա տվյալներին: Այս դեպում, թվում է վստահելի ուղեցուց կարող է լինել Դատաստանագրքի Բ խըմքագրությունը, որտեղ, ի տարբերություն Ա.Գ խմբագրությունների, հոգվածները տարագատված են երկու մեծ բաժնի մեջ՝ եկեղեցական և աշխարհական դատաստան անվանումներով և նախադրության Ե գլխում էլ ասված է, որ թագովորն ու իշխանը «զաշխարհի դատաստան հոգայցեն... իսկ զեկեղեցուց դատաստան եականություն հոգայցէ»: Այս փաստերից արտաքուստ համոզիչ այն տպագրությունն է ստեղծվում, որ աշխարհական ատյաններին ընդդատյա էին Դատաստանագրքի աշխարհական մասում խմբավորված հոգվածներով նախատեսվող դիպվածները, իսկ եկեղեցական դատարաններին՝ եկեղեցական մասում նախատեսված դիպվածները: Որքան էլ վստահելի թվա այս ուղեցուցը, այնուամենայնիվ, միայն զրանով զեկավարվելը ճիշտ չէր լինի և թյուրի-մացությունների տեղիք կտար, որովհետեւ Դատաստանագրքի երկատումով

28 «Միթիարայ Գօշի Դատաստանագրքի հայոց», էջ 18—19:

մինչև վերջ ու հստակորեն շի լուծվել ընդդատության հարցը և երկու մասում էլ հանդիպում ենք հակառակ ընդդատության գործերի: Այսպիսի պայմաններում կողմնորոշվելու համար այլ կովաններ որոնք բարեբախտար կան և շատ ավելի վատահելի են: Դատաստանագրքի առանձին հոգվածներում են ուղղակի կամ անուղղակի ցուցումներ ավյալ դիպվածի կամ դիպվածների տվյալ խմբի ընդդատության վերաբերյալ, որոնք, անկախ Դատաստանագրքի բաժնում իրավություն են տակած ճշությամբ որոշելու համարյա բոլոր գործերի ընդդատությունը ըստ երկու ընույթի ատյանների: Մինչ այդ ցուցումներին անդրագանակը ծանոթանանք մի շատ կարենու սկզբունքի հետ, որ սահմանում է Միթիարը. «Գիտելի է զի ամենայն օրինագրութիւնը լուծեալ եւ զզչացեալ ոչ կարոտի դատաստանի, իսկ անզզիցն դատաստանի պէտք են... լուծեալ եւ զեղացեալ — ի ձեռն վարդպահետաց վերստին ուղղութիւնը. այլ անզզից դատաստանաց իրաւունքը»<sup>29</sup>: Այսպես, ուրեմն օրինագանցի զզման դեպքում ապաշխարություն, եթե զզչում տեղի չի ունենում՝ «դատաստանաց իրաւունք», բայց որում նշանակություն չունի, թե ինչ օրինք է խախտված՝ աստվածադիր թե՝ մարդագրի: Բայց, ի՞նչ հասկանալ օրենքի խախտման և զզման կամ չզզացնու տակ: Խախտել ու զզալ, նշանակում է գալ այն գիտակցության, որ ճիշտ չի եղել նման վարվելակերպը, իսկ այլ խայթ զզալ գրա հետեանքով որևէ մեկի բարոյա-իրավական կամ նյութական շահը ունանարելու համար և, որ ամենից կարենորն է տվյալ դեպքում, պատրաստակամություն հայտնել կամ փորձել վերականգնել նախկին վիճակը, փոխատուցել պատճառած վնասը և այն: Եթե օրինագանցի հոգարակամ պատրաստակամությունը միշե այլք այլևս իրավական վիճ չկա. իսկ այսեղ, ուր չկա իրավական վեճ, չի կարող լինել և դատաստան — դատաքննությունն, այս բառի խսկական, աշխարհական իմաստով, Գոհացնելով տուժողին, օրինագանցը արգելակում է այն դապանակները, որոնք պիտի շարժման մեջ դնեին աշխարհական դատական ատյանը, որովհետեւ գոյություն ունեցող դատավարական կարգի համաձայն, որին այստեղ անդրագանալ չենք կարող<sup>30</sup>, աշխարհական դատարանը, բացառությամբ որոշ դեպքերի, անտարբեր է օրինախտման նկատմամբ այնքան ժամանակ, քանի գեռ չեն դիմել նրան: Բայց, միջնադարում օրինախտմանը մեջը է երկու իմաստով՝ իրավական և կրոնական, ըստ այդմ մեղքի բավում էլ լինում է երկու ձևով՝ իրավական՝ պատիժ (ծեծ, տուգանք, անդամանական և այն) և կրոնական՝ պատշխարանք և այն: Տուժողին բավարելով, օրինախտման է իր պատախանաւությունը իրավունքը առաջ, թվում է իր մեղքը իրավունքի հանդեպ, բայց ամբողջությամբ չէ, որ թվում է իր մեղքը կրոնի հանդեպ. այդ պատճառով «լուծեալ եւ զզացեալ — ի ձեռն վարդպահետաց վերստին ուղղութիւնն»:

Իսկ խախտել օրենքը և չզզալ, նշանակում է իրավացի համարել սեփական վարվելակերպը, կամ ժխտել բուն արարքը, կամ հրաժարվել գոհացուն տալուց և այն, այլ կերպ՝ իրավական վեճի տեղիք տալ: Եկեղեցին այս գեղրում էլ, իհարկի, կարող էր ապաշխարություն գնել օրինախտման վրա և դանույթ գոհացնել աստծուն, ապահովել հանցագորի մեղքի բավումը կրոնի հան-

29 «Դատաստանագրքի հայոց», էջ 389—390:

30 Մահրաման տե՛ս՝ մեր «Դատարանակազմությունն ու դատավարությունը...»:

դեպ, բայց իրավունքի հանդեպ մեղքը քավելու, տուժողին բավարարելու կարող էր հարկադրել միայն մարմնավոր իշխանությունը: Հենց այս իմաստով է Մխիթարն ասում. «այլ անզղից — զատաստանաց իրաւունք»:

Այսպիսով, Մխիթարի սահմանած ընդհանուր սկզբունքի համաձայն, իրավական վեճերը, որպես կանոն, ենթակա են աշխարհական զատարաններին:

Այժմ ծանոթանանք Դատաստանագրքի առանձին ցուցումներին: Երկրորդ մասի 1-ին հոդվածում խոսելով գավաճանության, «աերունի գանձի» գողության և սպանության մասին, Մխիթարը գրում է. «Զայդոսիկ թագաւորն զատիցի ...իշխանաց մի լիցի սպանողն սպանանել առանց հրամանի թագաւորաց, իսկ զգողսն խրատել իշխան լիցին»<sup>31</sup>: Ըստ այդմ զավաճանության, սպանության, գողության վերաբերյալ գործերը ընդգատյա են աշխարհական զատարանին: Հոդված II, 123. «Այլ խարդախիցն խրատ ըստ հրամանի իշխանացն լիցի. գողիցն ի շափան եւ ի կշիռն հատուցանել շորերին եւ յանդիմանութեամբ նշաւակել ի զարհուրումն այլոց: Իսկ դահեկանահատիցն եւ դրամակոփիցն զձեռուն հատանել հրամանաւ իշխանաց...»<sup>32</sup>: Ըստ այս հոդվածի, առևտորի կանոնների խախտման հետ կապված գործերը, դրամանենգությունը, դրամահատությունը և այլն ընդգատյա են աշխարհական զատարաններին:

Ամփոփելով այս կարգի վկայությունները, կարող ենք արձանագրել, որ Մխիթարի Դատաստանագրքի համաձայն աշխարհական զատարաններին ընդդատյա էին հետեւյալ գործերը ըստ իրավունքի ճյուղերի.

### 1. Պետական իրավունք.

Թագավորի, իշխանների, ազատների, ավատատերերի ու շինականների փոխադարձ հարաբերություններ ու պարտավորություններ, հարկ, տուրք և այլն:

Պետական-հպատակային և տերունական-ենթակայական հարաբերություններ:

### 2. Քաղաքացիական իրավունք.

Գույքային և պայմանագրային հարաբերություններ, առ ու վաճառք և այլն: Հասցված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործեր:

Աշխատանքի անվտանգության պահպանությունից բխող գործեր:

Ժառանգական իրավունք՝ մասամբ:

Քաղաքացիական իրավունքի բնագավառին պատկանող գործերի մի մասը ընդդատյա է հոգեոր ատյաններին:

### 3. Քրեական իրավունք.

Դատավարակություն, լրտեսություն, սպանություն, ավագակություն, գողություն, մարմնական վնասվածքների պատճառում, դրամանենգություն և այլն: Բացառություն էին կազմում մի քանի գործեր, որոնք ընդդատյա էին հոգեոր ատյաններին:

Դատաստանագրքի համաձայն հոգեոր ատյաններին ընդդատյա էին այն գործերը, որոնք վերաբերում էին.

1. Եկեղեցու կազմակերպությանը, պաշտամունքին, ծիսակատարությանը և այլն:

31 «Դատաստանագրք Հայոց», էջ 311:

32 Անդ, էջ 434—435:

2. Հոգեորականության աստիճանակարգությանը, նրանց անձնական իրավունքներին ու պարտականություններին, զույքային փոխադարձ հարաբերություններին՝ կապված եկեղեցու սեփականության հետ, ծիսերի բաժանում, եկեղեցու զատավորների վարձատրություն և այլն:

3. Ամուսնությանը, ամուսնալուծությանը, ամուսինների անձնական հարաբերություններին, ընտանիքի բարոյական կողմին առհասարակ, երեխանների ու ծնողների հարաբերությանը, ժառանգական իրավունքին՝ մասամբ և այլն:

4. Այլն արարքները, որոնցում բացակայում է մեղքը քրեա-իրավական իմաստով և որոնք, հետևակես, հանցագործություն չեն, թեև ունեն զրա արտաքինիշները. օրինակ՝ սպանություն անմեղսունակության վիճակում, սպանություն անհրաժեշտ պաշտպանության ժամանակ և այլն, ու II 18-րդ հոդվածով նախատեսված գործերը:

Եկեղեցու ընդդատյա գործերի այս ցանկն արգեն ցուց է տալիս, որ հոգուոր զատարանը չի ունեցել այն դերն ու նշանակությունը, որ վերագրել են նրան: Եկեղեցական զատարանը զրազել է գերազանցապես եկեղեցու և հոգուորականության հետ կապված գործերով: Աշխարհական գործերի խիստ նեղ բնագավառն է ընդդատյա եղել նրան, սահմանափակված առավելապես ընտանիքի ու ամուսնության իրավունքով և քաղաքացիական իրավունքի մի մասով:

Հայկական թագավորության, կամ իշխանապետության, կամ իշխանությունների գոյության պայմաններում աշխարհական զատարանները առաջնակարգ գեր են խաղացել ոչ միայն այն փաստի ուժով, որ միաժամանակ զատարավորներ էին իրենք՝ մարմնավոր բարձրագույն ու տեղական իշխանության ներկայացուցիչները, այլև ցարդ արժանի ուշադրության շարժանացած այն կարևոր պատճառով, որ նրանց ձեռքին էր հարկադրանքի ուժը, այդ բառի զինական-ոստիկանական իմաստով: Հանգամանք առանց որի իրավունքը ոչխնչ է, և որով պայմանավորված էր իրեն՝ հոգեոր գատարանի գործոն նշանակությունը:

Հայաստանում հոգեոր գատարանների նշանակությունը հայկական մարմնավոր իշխանության շգոյության պայմաններում անհիմն կերպով բնդհանրացվել ու տարածվել է հայկական իրավունքի պատճության բոլոր շրջանների վրա և, այդպիսով, գերազանցատվել է նրանց դերը աշխարհական զատարանների նկատմամբ նաև աղգային իշխանությունների առկայության ժամանակաշրջաններում:

Խ. А. ТОРОСЯН

## ПОДСУДНОСТЬ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

### Р е з у м е

В статье пересматривается распространенное в арменоведении мнение, согласно которому судебная юрисдикция в средневековой Армении принадлежала духовенству и роль светской власти в этой области была второстепенной.

Путем тщательного исследования историографических данных и юридических памятников в статье показано, что в средневековой Армении существовали следующие светские суды: государственные—царский, княжеский и низшие; феодальные—сословный и господский. Этим судам были подсудны следующие дела: о взаимоотношениях и взаимных обязанностях царя, князей, азатов (дворян); дела о податях, налогах и т. д., о воинской повинности, дележе военной добычи и т. д. В компетенции этих судов были частично гражданские дела и почти полностью—все уголовные.

Духовным судам были подсудны дела, относившиеся к организации церкви, к культу, к вопросам чиноначалия духовенства, распределения приходов и т. д., частично гражданские, а также такие дела, где не было наличия вины в уголовно-правовом смысле и которые не считались преступлением.

Խ. А. THOROSSIAN

#### DE LA JURIDICTION DANS L'ARMENIE MEDIEVALE

L'article révise une opinion répandue dans les Etudes arméniennes, selon laquelle la juridiction formait, au moyen âge, en Arménie, l'apanage quasi-exclusif de l'Eglise, le pouvoir laïque n'ayant eu en ce domaine qu'une compétence très limitée.

L'auteur dresse, à la suite d'un examen détaillé des données historiques et des monuments juridiques, un tableau des tribunaux laïques de l'époque: tribunaux ordinaires ou d'Etat où l'on distingue la justice royale, la prévôté royale, le tribunal inférieur; tribunaux féodaux comprenant le tribunal des pairs et le tribunal seigneurial. Le ressort de ces tribunaux s'étendait aux affaires suivantes: rapports sociaux à tous les échelons touchant le suzerain, les „ichkhans“ (princes), les „azats“ (petite noblesse), les féodaux, les „chinakans“ (serfs), obligations qui s'ensuivent; taxes et impôts; obligations militaires; partage du butin de guerre, etc. Leurs attributions, partielles en matière de droit civil, étaient très larges au point de vue pénal.

Le pouvoir judiciaire de l'Eglise s'exerçait au moyen du tribunal synodal, d'une part, des tribunaux patriarchaux, épiscopaux et paroissiaux, d'autre part, qui ne connaissaient que des affaires ecclésiastiques: organisation intérieure, culte, questions d'hiérarchie, distribution des diocèses, etc. Le droit civil ne pouvait les concerner que rarement; le droit pénal ne leur réservait que les délits de moindre importance.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՍ ՄԻՒԽՈՏՐԵԲԻ ԱՊՎԵՏԻ ԱՓքման  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԵԿ ԶԵՐԱԳՐԵՐԻ ԽԵՍՏԱՑՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԳԱՐԱԿ»

ԲԱՆՔԵՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱԿՆ  
ԵՐԵՎԱՆ Ա. 8 1967

#### ՆԻԿՈՂՈՍ ԹԱՂՄԻՉՅԱՆ

#### ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՆՔԻ ՄԱՍԻՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԶԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ (X—XV դդ.)

Հայաստանում V—VI դարերում գիտական միտքը ու միայն ժանոթացել էր ներդաշնակության հենքի մասին անտիկ տեսությանը, այլև իր վերաբեր մունքն էր ցուց տվել այդ տեսությամբ իմաստավորվող երևույթի նկատմամբ, հատուկ շեշտելով դրա կարևորությունն ու նշանակությունը<sup>1</sup>.

Միջին դարերում, հատկապես X—XV հարյուրամյակների ընթացքում, էլ ավելի է խորանում հայ գիտնականների վերաբերմունքը դեպի ներդաշնակության հենքի երևույթը: Հայկական գիտական միտքը, որոշ ընդմիջություն հետո, այս շրջանում նորից խորամուխ է լինում ներդաշնակության հենքի երևույթի մեջ, ապա և՝ վերշինի հետ կապված հարցերի քննարկումը կատարելով երաժշտական ավելի հարուստ փորձի հիման վրա, հասնում է նրա առավել բազմակողմանի ըմբռնմանը: Այս բոլորի համար որպես ելակետ ծառայում է Դավթյան երաժշտատեսական դրույթը, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն (ըստ նրանում օգտագործված յուրահատուկ տերմինների), բավմից մեկնարանվում է X—XV դարերում ինչպես անանուն, այնպես էլ մի քանի հայտնի ու հեղինակավոր գիտնականների կողմից: Հենց այդ մեկնություններում էլ բյուրեղանում և X—XV դարերի հայ գիտնականների մեջ հետաքրքրող գաղափարները: Պիտի նշել, որ դրանց միակցությունը քննելիս մենք հանդիպում ենք՝ Դավթյան դրույթի բացարության տեսակետից՝ և առանձնապես փայլուն, և ավելի գորշ, և նույնիսկ պարզապես թյուր մտքերի և ասույթների: Եվ սակայն, այստեղ անհրաժեշտ է ծանոթանալ այդ մտքերի հանրագումարին, երկու պատճառով: Նախ, որովհետև միշնադարյան մեր հեղինակների՝ սույն հարցին վերաբերող դրեթե յուրաքանչյուր ասույթ արժեքավոր գիտողություններ է պարունակում գործիքային նվազի, ձայնեղանակների դրույթան և այլնի մասին: Եվ երկրորդ, ասույթների համակողմանի քննությունից է որ պարզվում է, թե միջնադարյան հայկական երաժշտատեսական միտքը ներդաշնակության հենքի մասին ուսմունքին վերաբերող գաղափարների ընկալման ու դրանց զարգացման ասպարեզում ինչպիսի ուղի է անցել, և թե այդ ուղղությունը վրա ինչպիսի դժվարություններ է հաղթահարել: Խսկ վերջիններս, պետք է ասել, իրենց որոշակիութեն զգացնել են տվել, պայմանավորված լինելով մի քանի կարեռ հանգամանքներով: Դրանք են. ա) ներդաշնակության հենքի անդամների հին հայկական անունների՝ հունարենից պատճենված տերմիններ լինելու պարագան (որը, մի կողմից, հունարենից անտեղյակ մտավորականին կաշկանդել է, իսկ մյուս

<sup>1</sup> Տե՛ս «Ներդաշնակության հենքի ուսմունքը միջնադարյան Հայաստանում (V—VI դդ.)» մեք Հոգվածը. «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1966, Ա. 1, էջ 75—92:

կողմից, Հունարենին տիրապետած զիտնականին թույլ է տվել բավականին աշ-պատ վարփելու հիշյալ տերմինները մեկնաբանելիս կամ օգտագործելիս). թագթյան մեղ զրագեցնող դրույթի երկիմասատությունը՝ ըստ «Սահմանքի» Հունական բնագրի. զ) և, վերջապես, հին զրույթների մեկնության հարցում միջ-նադարյան սխոլաստիկական մատածողության խաղացած բացասական գերը: Կանգ առնենք, նախ, նշված Հանգամանքներից առաջին երկուսի վրա:

Մեզ Հետաքրքրող տերմինների փոքր-ինչ ազատ օգտագործմանը հանդի-պում ենք զենև Փիլոսի աշխատությունների հայկական թարգմանություննե-րում: Այսպիս, օրինակ, քառյակի հնդյան հարաբերությունների մա-սին Փիլոնի ասույթները քննելիս մեկ կարդում ենք՝ «չորիւքըն, մակեռակին, Խ.-նին առ Լ.-նն» և «Հնդին, կիսահոլով բանին, Լ.-նին առ Խ.-նն»<sup>2</sup>. ու մեկ էլ՝ «ի ձեռն չորիցն, ի մակեռորդի բանի, չորիւքն առ երիս» և «ի ձեռն Հնդին, ի կիսարուրին՝ երիւք առ Բ.-ուս»<sup>3</sup> (ընդգծումները մերն են — Ե. Փ.): Պետք է ասել, որ «չորեակը» (կվարտան) «մակեռակ» անվանելը՝ «ինչ-մի աւելի քան զերորդ» իմաստով<sup>4</sup>, թյուրիմացության տեղիք կարող է տալ, իսկ «մակե-ռորդ» տերմինը տալիս է ձիշտ նշված իմաստը<sup>5</sup>: Ինչ վերաբերում է «կիսահո-ւով» և «կիսարուր» տերմիններին, ապա այստեղ երկուն էլ ցույց են տալիս 3:2 հարաբերությունը, և, հետևաբար, հնդյակ ձայնամիջոցը. առաջինը՝ «ըստ կիսոյն հոլովեալ» իմաստով, իսկ երկրորդը՝ «քանակ», որ ունի ի վերայ երկ-մասնեալ բոլորին իւրու և բզկէսն բոլորին» նշանակությամբ<sup>6</sup>: Բայց «կիսարո-ւրը» ունեցել է նաև՝ «կէս բոլորի» նշանակությունը, և, որպես այդպիսին, մեր միջնադարյան մեկնողական գրականության մեջ բացարվել է երկու կերպ: Նախ՝ Հենց որպես 5-րդ ձայնաստիճան (լարային կոթավոր գործիքի), «ամե-նակատարյալ» կամ «բոլոր» թիվն նկատվող տասի կեսի իմաստով, ինչպես զա պարզաբանվում է մեր միջնադարյան գործիքային երաժշտության տեխնոլո-գիան շոշափող հետևյալ կարեռը տեղեկության մեջ. «և ըստ երաժշտին՝ ութ փարդա, կամ տաս, ոնց ձայն ածէ. գիտես թէ երկու է, կամ երեք, կամ բոլոր, որ է տաս, կամ կիսարուր, որ է Հինգ, և այլ»<sup>7</sup>: Ապա և՝ թյուրիմացար՝ քը-սանի կեսի նշանակությամբ ես. ինչպես երևում է միջնադարյան մի ժողովա-ծովի հետևյալ հատվածից, որտեղ անասելի շփոթ է առաջացած մեկնաբանվող բոլոր չորս տերմինների նկատմամբ. «Բոլորն՝ բասն, կիսարուրն՝ տասն, մա-կեռակն՝ երեսուն, մակրառակն՝ բառասուն»<sup>8</sup>: Բացի սրանից, ժամանակին, ըստ երևույթին, թյուրիմացության տեղիք է տվել նաև «Սահմանքի» Հունական բնա-գրի մեղ հետաքրքրող ու արդեն ծանոթ հատվածը, ամբողջությամբ վեցրած, ինչպարելով նույն աշխատության հայերեն բնագրի նույն հատվածի իմաստի

<sup>2</sup> «Փիլոնի այնցիկ որ ի լինելութեան խնդրոց և լուծմանց», Գիրք Բ, բան գ (խն. իէ), Մաշ-տոցիան Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 57ա:

<sup>3</sup> «Փիլոնի Յաղակ տառն բանիցն», անդ, էջ 128բ:

<sup>4</sup>ՏԵՇ «Նոր բառգիրք Հայկակեան լեզուի», Վենետիկ, 1836:

<sup>5</sup> Անդ:

<sup>6</sup> Անդ:

<sup>7</sup> «Յաղակ բերականութեան լուծմանք», Մաշտոցիան Մատենադարան, ձեռ. № 1931, էջ 89ը (նույնը, անեղան տարբնթերգվածներով, տե՛ս նաև՝ ձեռ. № 4132, էջ 93ա և № 55, էջ 467ա): «Փարդա» կամ «փերդե» ասածը, ի միջի այլոց, բնդհանուր արեւելան (պարսկա-արաբական) մի տերմին է, որը տվյալ կապակցության մեջ նշանակում է՝ լարային գործիքի կոթի վրա տե-զարգած մատնատեղ (ուսու՝ լածօք, ֆրանս՝ ligature):

<sup>8</sup> «Նոր բառգիրք Հայկակեան լեզուի», Վենետիկ, 1837 (տե՛ս «մակրառակ»):

միշտ ումբոնմանը, և ահա թե ինչու: Արդեն զիտենք որ Դավիթ Անհաղթը ներ-դաշնակության մասին «Սահմանքի» Հունական բնագրում խոսելիս, հենքի չորս անդամներից հիշատակում է երկուսը միամն՝ ծովածուն (կրկնապատիկ) և դամուլուս (կիսաբոլոր): Արդ, անտիկ երաժշտագիտության մեջ սույն տերմիններով նշանակվել են նաև մետրո-սիթմական կատեգորիաների սեռերը, ինչ-պես դա ըստ ամենայնի պարզաբանեց թեոդոր Ծենյախը, կազմելով հին հու-նական թանաստեղծական ոտքերի տեսակներին համապատասխանող երաժշ-տական կշույթական համապատասխանություններում: Այսուհետու համապատասխան մասին կառուցված մի-տախտակ: Վերջինից պարզ երևում է, որ տաղաշափական 12 անտիկ կատեգորիաների երաժշտական հա-մարժեքները, ըստ իրենց երկայն ու կարճ մասերի (վոկալ երաժշտության մեջ՝ վանկերի) հարաբերակցության, նույն բաժանված են եղել երեք սեռի՝ ա) շնորհուած կառուցված մի-տախտակ: Վերջինից պարզ երևում է, որ տաղաշափական 12 անտիկ կատեգորիաների կառուցված մասին դավիթյան դրույթը, ըստ «Սահմանքի» Հունական բնա-գրի, հավասարապես շոշափում է անտիկ երաժշտության և լաղո-ինտոնացիոն, և մետրո-սիթմիկ կողմները: Եվ դա արդարացված էլ է: Որովհետև այդ գրույ-թում խոսքը, վերջին հաշվով, վերաբերում է երաժշտության մեջ քանակի կա-տեգորիայի վճարական դերին, իսկ քանակի կատեգորիան հավասարապես դր-սեռորդում է ձայների և՛ բարձրության, և՛ ժամանակային հարաբերություննե-րում: Հարցն այն է սակայն, որ «Սահմանքի» հայերեն բնագրում դավիթյան նույն դրույթը վերաբերում է միայն ներդաշնակության հենքին, որ և ապացու-ցվում է հետեւյալ կերպ: Ինչպես գիտենք, Դավիթ Անհաղթը այստեղ բնագրի կողմները: Երգը հայերեն շարադրելիս, երաժշտական տերմիններից օգտագործում է նաև մակեռակին ու մակրառակիր: Արդ, այս վերջիններս չեն առնչվում երա-ժշտական մետրո-սիթմի անտիկ սիստեմին: Այսպիս, եթե մակեռակի կապակ-ցությամբ «Հայկաղեան» բառարանը տալիս է նաև ինչ-որ տաղաշափական նշանակություն ևս<sup>10</sup>, ապա նույնը չի կարելի ասել մակրառակի մասին, որը երաժշտական մետրո-սիթմի և կամ տաղաշափության հետ որևէ ձևով չի առն-ըլվի<sup>11</sup>: Ասվածը հաստատվում է մակեռակ և մակրառակ տերմինների նախատիպերը հանդիսացած հին հունական եպիտրուս և եպիտետարուս բառերի նշանակության ստուգումով ևս<sup>12</sup>: Այս նրբությունները Հայաստանում գիտակ-ցությամբ են եղել անշուշտ V—VI դարերում (երբ գեռ Անհաղթը գործում էր այս-տեղ) ու առավել ևս՝ VII դարի կեսերին: Առավել ևս՝ որովհետև ներդաշնակու-թյան հենքի մասին ուսմունքը հնում սերտորեն կապված էր երաժշտության ա-կուստիկական հիմքի մասին ուսմունքին, իսկ վերջինս մեղ մոտ առանձնապես

<sup>9</sup> Th. Reinach, La musique grecque, Paris, 1926, օգտվել ենք պրոֆ. Գրուբերի աշխատությունից, տե՛ս „История музыкальной культуры”, т. I, часть первая, стр. 318.

<sup>10</sup> Նոր բառգիրք Հայկաղեան լեզուի, Վենետիկ, 1837:

<sup>11</sup> Անդ:

<sup>12</sup> ՏԵՇ Դ. Ադրբեյջանական լուծման տառապահության շահագույն աշխատավայրը, Մեջքական աշխատավայրը, 1950, էջ 2874 և 2885: Անհրաժեշտ է նշել նաև որ, ինչպես ցույց են տալիս դիտողությունները, սույն և ևպիտրուս տերմինների նշանակությունը բյուզանդական յատենագրության մեջ, միջին դարերում, զգալի փոփոխվել է. մինչ հայ մատենագրինը պահ-պանել են այդ տերմինների (դրանց հայկական համարժեքների) հին նշանակությունները, դրանց տակ հասկանալով (համապատասխանարար) 6 թվանշանով արտահայտվող ձայնաստիճանը (3+3 քանակի իմաստով) և 8 թվանշանով սահմանվող (4+4 քանակի իմաստով):

ծաղկած էր VII դարի կեսերին, Անանիա Շիրակացու շնորհիվ<sup>13</sup>: Դրանք մոռագության են տրվել արաբական ավերիչ արշավանքներից հետո միայն, երթ Հայաստանում գիտության, այդ թվում և երաժշտական գիտության զարգացման առաջընթացը միաժամանակ խափանվեց, անտեսական-քաղաքական գժվարագույն պայմանների հետևանքով: Եվ զայտ գիտակցել են զարգացած ավատափության շրջանի մեր գիտնականներն ու նշել մասնավորապես երաժշտագիտության բնագավառում ևս հին (մինչև VII դարի կեսերի) նվաճումները որպես ելակետ ընդունելու ճիշտ ուղին:

Վերջինս մատնացուց անող առաջին խոչոր մտածողն է բազմահմուտ Գրիգոր Մագիստրոսը: Այսպիս, «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ նամի ասիթով գովում է արաբներին այն բանի համար, որ նրանք «Հզաւոր» են եղել «ամենայն բոլոր արհեստից» և առաջին հերթին՝ «թուականութեան, երաժշտականութեան, երկրաչափութեան, աստեղաբաշխութեան» բնագավառներում<sup>14</sup>: Դա Մագիստրոսը իրավացիորեն բացատրում է նրանով, որ «քաղաքականը էին և հարստութիւն իսմայէլական ազգին տակաւին բազում, վոյթ կալեալ յանձին (զուսմանց)»<sup>15</sup>: Հետո հեղինակը այն միտքն է զարգացնում, որ իր ժամանակ հայերս (հուների հետ միասին), արաբների համեմատությամբ, ետ ենք մնացած եղել «ուսումնականի» շորս ճյուղերից. ընդ որում հայկան մշակութային կյանքին մոտիկից ծանոթ մտածողն իր մեծ զարմանքն է հայտնում հատկապես «երաժշտականի» (այստեղ՝ տեսական երաժշտագիտության) բնագավառում հայոց և հունաց<sup>16</sup> ետ մնացած լինելու կապակցությամբ: «Նոյնպէս և ի վարժարանն և ի դպրոցն ի բազում տեղիս, — գրում է Գրիգոր Մագիստրոսը, ավարտելով իսմայէլացիների՝ հայրենասիրական բարի նախանձով առլցված գովարանությունը, — զոր այժմ մերոյս սակաւ ինչ խափանեալ, յունաց ասեմ և մերոյս ազգի, եթէ ի ծովութենէ և եթէ յառաջնորդաց մերոց քամանելոյ յարուեստից յայսցանէ, կաղացեալ եմք յաստեղաբաշութենէն, որ քաղէւացոցն էր գիտ և յերկրաչափութենէն, որ լեզիստացոցն... բայց զարմանամ թէ զիարդ յերաժշտականէն ամենին պակասեալ գտանիմք<sup>17</sup>, զոր ի թրակիա գտեալ, և միայն զթու-

13 Այդ մասին տե՛ս մեր Հոդվածը՝ «Մի էջ հայկական վաղ միջնադարյան երաժշտական տեսությունց», «Բաներ Մատենագրանի», № 5, Երևան, 1960, էջ 60—62:

14 «Գրիգոր Մագիստրոսի Մեկնութիւն քերականին», տե՛ս Հ. Ածոնց, Դիոնիսի Փրակից և արմանական տոլկօթական աշխատանքները, 1951, էջ 232—233:

15 Անդ, էջ 233:

16 Հարկ է ընդգծել, որ սույն պառմաշրջանում «երաժշտականից» նաև բյուզանդացիների ետ մնալու մասին Գր. Մագիստրոսի հազորած տեղեկությունը հաստատվում է ինչպես երաժշտության ընդհանուր պատմության, այնպես էլ ներկայ միջնադարյան հունական ազգությունների ընձեռած ավանդներով: Տե՛ս Egon Wellesz, A History of Byzantine Music and Hymnography, Oxford, 1961, էջ 62—63:

17 Նիկողայոս Աղոնցի հատարակած գիտահամեմատական բնագրում այս խոսքը կարգավում է քանին, որը, մեր կարծիքով, ակնհայտ գրչական կամ տպագրական վրիպակ է: Բայց քանի որ մեր կատարած ուղղումից (զանիմք) իմաստային կարգի կարևոր գոփությունն է առաջ գալիս, անհրաժեշտ ենք համարում տակ հնտեյալ կարճառու բացատրությունը: Գր. Մագիստրոսն այստեղ համեմատում է հայերին ու հուներին (միաբն վերցրած)՝ արաբների հետ, որոնք տղյալ ժամանակամիջոցում, գիտության ու արվեստի մի շարք ճյուղերում, այդ թվում և «երաժշտականի» ասպարեզում, ավելի առաջագեծ են եղել: Առաջի յերաժշտականէն ամեննին պակասեալ գտանին» արտահայտությունը, արաբների նկատմամբ անիմաստ է գտանում: Բայց այդ արտահայտությունը չի կարող վերաբերի նաև, ասինք՝ լոկ հույներին, թեկուզ և այն պատ-

ականութիւնն պահեալ յաղագս գանձուցն արքունիք<sup>18</sup>: Մեր զիտնականը, սակայն, միայն իրավիճակներ հաստատագրելով չէ, որ զբաղվում է: Նա իր «թղթերում» առաջ է քաշում ուսման մի մեծ ծրագիր, որտեղ «ներքին» շատ առարկաների կողքին պատվագոր տեղ է տալիս նաև «երաժշտականին»: «Զի յամենայնի իմաստատէրն խոստովան լիցի զգիտութիւն և ուրացեալ զանգիտութիւն մանաւանդ ըստ կարողութեան քարփցն արհեստից՝ թուական, երաժշտական, աստեղաբաշխական»<sup>19</sup>: Եվ վերջապես, ուսման հիշյալ իր ծրագրում հատուկ նշելով «Սահմանքն» էլ<sup>20</sup>, Մագիստրոսը ուղղակի մատնացուց է անում այն հին աղբյուրը, որը պարունակել է «ուսումնականի» շորս ճյուղերի հիմքը կազմող տեսական գիտելիքները, այն է՝ «զիրս Անանիայի Շիրակայնոյ... յորում և ենթակայցեալ են ոչ միայն քառություն արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունն... յորում մթիքեալ են առողորք աստուծածին և ենթակայցեալ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն»<sup>21</sup>: Եթէ հաշվի առնենք, թե Գրիգոր Մագիստրոսը, ունենալով իր դպրոցը, սույն գաղափարները ևս արմատավորում էր աշակերտների գիտակցության մեջ, ապա պետք է հաստատենք, որ ուսումն ու գիտությունը նորոգելու այս շարժումը իր արտացոլումը գտել էր նաև տեսական երաժշտականության բնագավառում:

Ինչպես հայտնի է, Գր. Մագիստրոսի սկսած բարենորոգչական գործը շարունակեց և ի կատար ածեց Հովհաննես Սարկավագ վարդապետը<sup>22</sup>, որ և երաժշտականութիւնը է նղել: «Յառաջազոյն տուալ ի վարժու երաժշտական հոգեոր ուսմանց, — գրում է Սարկավագ վարդապետի անանուն կենսագիրը, — և ապա, յերևման մեծին ի նմա ծածկելոյ գանձին, աւանդեցաւ և յանձնարարու ի քեռոյն իրմէ Ուռնացի վարդապետին...»<sup>23</sup>: Բայց այս հանգամանքը պատճառ չէր կարող լինել անշուշտ, որ Սարկավագը հետ այսու աշքաթող աներ երաժշտական պարապմունքները: Ընդհակառակը, նա Գնորդ Ուռնացու մոտ, ըստ երևութիւն, ուստիարական պատմունքները: Հովհաննես ուստի նաև որպես ապագա բանասեղծ-երաժշտական գաղափար կամ աշխատական գովարդիկ շարականը, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին<sup>24</sup>: Բայցի այդ, Սարկավագը հմտացած է եղել նաև՝ երաժշտական ձայներն ու սրանց փոխհարաբերությունները (ըստ բնական ձայնաշարի ձայների հարաբերությանց) թվերով արտահայտելու գիտության մեջ, որ պարզ երևում է Փիլոնի աշխատություններում հանդիպող «մէջն ձայրիցն» ուրաքանչեալ գուգամասամբն» խոսքին նրա տված հետեւյալ լուծումից: «որպէս և է՛ տեսանել գուգամասամբն» խոսքին նրա տված հետեւյալ լուծումից:

Հառովդ, որ Մագիստրոսը տվյալ կապակցության մեջ հայերի և հույների մասին խոսում է որպիս մշակութափն կապակ մի ամբողջության («յունաց ասեմ, և մերուս ազգի»): Ուստի խոսքը առարկա խոսքը բոլոր գեղարքությունն պատճիմ է, և ոչ զոտնին:

18 «Գրիգոր Մագիստրոսի Մեկնութիւն քերականին», տե՛ս Առ Առ ն ց, նշի. աշխի., էջ 233:

19 «Գրիգոր Մագիստրոսի թղթերում», ի լույս ընծայեց Գ. Կոստանդնյան, Արքայի պատու, 1910, թղթ. ԽԵ., էջ 105:

20 Անդ:

21 Անդ, (թղթ. Բ.), էջ 8:

22 Գ. Ա ի ի շ ա ն, Յուշիկը հայրենեաց հայոց, Հատ. Բ, Վենետիկ, 1870, էջ 295—296:

23 «Հանդէս բանի վասն երանեալ առնեն աստուծով՝ Սարկաւագին կենաց և մահու», (տե՛ս Դաւեցին Ա. կարողիկոս, Յշշատակարանը ձեռագրաց, Ա, և զարից մինչև 1250 թ., Անթիւսա, 1951, էջ 335):

24 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 113:

ի լարս քնարից և ի ձայնս եղանակաց, առաջինն սուր լինի և միշինն բութ և եզերին կակուղ, և այնպէս յարմարին ընդ միմեանս, որպէս Զ-ն առ Դ-ն և Դ-ն՝ առ Գ-ն<sup>25</sup>, Այստեղ, ուրեմն, Սարկավագը պարզաբանման կարգով օրինակ է բերում իրեն ծանոթ հայկական երեքարանի մի քնար, և հաստատում, որ վերշինս ունեցել է կվարտ-կվինատային տիպի յուրահատուկ լարվածք, ասենք՝ կոնտր-սկամավի «զո» ձայնը որպէս հիմք ընդունելով՝ G (=3)-c (=4)-g (=6) լարվածքը<sup>26</sup>:

Նախընթացը պետք է որ օգնի հասկանալու, թե շնորհիվ Դրիգոր Մագիստրոսի, տպա և Սարկավագ մեծիմաստ վարդապետի ջանքերի, հայոց առավելություննատենչ երիտասարդները, XI—XII դարերում տեսական երաժշտագիտության բնագավառում արդեն իսկ բարձրացել էին այն մակարդակին, որը ձեռք էր բերվել Հայաստանում արարական արշավանքներից առաջ:

Դա երկում է հաջորդ՝ XIII դարում ձեւակերպված ու մեր նյութին անմիջականորեն վերաբերող կոնկրետ գատողություններից էլ: Անցնելով վերջիններին քննարկ՛ւանը, ասենք, որ գրանք կապված են XIII դարի մեր խոչորագույն գիտածանության մեջ՝ Հովհաննես Երզնկացու (Պլուզի) անվան հետ: Եա զարգակիորեն անվրագարձել է ներդաշնակության հենքի երեսութին, իր Քերականի մեկնության մեջ: Այստեղ հեղինակը որոշակի մի գիտավորությամբ ազատ մեջ բերումներ է կատարում երաժշտության բանակային կողմի վերաբերյալ դավադրությունը (առանց հիշատակելու Անհաղթին), և իր սեփական մաքերը զարգացնելուն զուգընթաց տալիս է մեծ իմաստասերի օգտագործած յուրօրինակ տերմինների բացատրությունը: Երզնկացին ուզում է ցույց տալ, թե երաժշտությունը առաջնային է քերականության նկատմամբ, և թե այս երկու արվեստների միջև մի շարք երեսութների համանմանություն (անալոգիա) է առաջդալիս նաև քանակի կատեգորիայի խաղացած դերի հիման վրա: «Համեմատիարհեստ քերականութեանս,— գրում է Երզնկացին, — երաժշտականին և ի նմանէ առեալ ունի, և է այսպէս: Կրկին են գործիք երաժշտականին՝ ի նիւթական կազմածոյ անշնչից, որպէս քնար և փող, և մարմին բանաւոր կենդանույն, յորում ծածկեալ կա ձայնն անմարմին և ի շարժեալ արուեստաւորին բացակատարէ զնշումն: Նոյնպէս գրականութեանս է նիւթ քարտիսին, և որակ սեակետաւորեալ, և զորութիւն բանի և ձայնի ունակացեալ ի նմա, և ընթեռնով արուեստաւորին կամ երգել՝ երկի զորութիւն բանին և ձայնի: Իսկ հետո, «Երաժշտականն թիւ և քանակ ունի համարոյ, բանզի խնդրի, թէ որ է, որ զերկպատիկ բանն ունի, և որ է, որ կիսաբոլորն, և որ զմակեռակն, կամ զմակբառակն: Նոյնպէս քանակ է և գրականութեանս ի մասուն բանին յանուն և ի բայ և ոյլուն, զի խնդրի, թէ որ է եռավանկ անունն, և կամ քառավանձնն և այլն: Են և

<sup>25</sup> «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի իմաստասիրի Երբայեցույթ, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 263ր: Սեկնողական այս աշխատության հեղինակային պատկանելության մասին տե՛ս Բրաբիոն զրշունու կարծիքը (անդ, էջ 241ր), Ա. Արքաւ համար, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 58—59 և 9. Գրիգոր յորյան, Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները, «Բանքեր Մատենադարանին» № 5, էջ 99—101:

<sup>26</sup> Նկատելի է, որ այս լարվածքը ևս շատ մոտիկ է ներդաշնակության հենքի տիպի լարվածքին, հիմնված լինելով մաքրութեալիքի, հեղինակի և բառյակի կազուն հարաբերությանց վրա:

ամանակեաց թիւք՝ երկամանակ, եռամանակ, բառամանակ»<sup>27</sup>: Երզնկացու այս վերջին դատողություններում թերմս տեղ են գտել այն թյուրիմացությունները, որոնք ծագած պիտի լինենքին՝ «Սահմանքից» հայկական բնագրում ներզաշնակության հենքին վերաբերող տերմիններին հունարենի օրինակով ինչ որ բերականական իմաստ վերագրելու փորձերից: Սակայն, բերված գատողությանը համապատասխան վերջին կանխելու համար, թէ՝ մի այլ պատճառով, խորաթափանց երզնկացին իր հիմնական ասելիքից նույնիսկ մի փոքր շեղվելով, խնդրո առարկա գավթյան տերմինները հատակորեն մեկնաբանում է որպես երաժշտական ձախաստիճանների անուններ: «Է և այլազգի իմանալի զերկապատիկն, զեկութեալորն և զայն, զի աշտիճանը են երաժշտական ձայնիցն, է որ մի-մի, եւ է որ երկու-երկու, և երեք-երեք, նույն որ հիմնի բարձրանակ կամ մակարության մեջ թյուրիմացությունը կանխելու նպատակով շտապում է որ կիսաբոլոր, կիսաբոլոր, մակեռակ և մակրառակ տերմինները ներ նշանակում են ոչ այլ ինչ, եթե ոչ երաժշտական ձայնաստիճանները: Սակայն, ինչպես վերաբերյալ բարձրանակ ասիստանը ասուն ի համար ապահով է ավելացնել նաև, թե մեր բազմագիտ հեղինակը հիշարք ասացի և նշանակության մեջ «Համեմատկա» հնչուններ, այլ մոնողիկ երաժշտամտածողության պայմաններում ինտոնացիայի նենակետային նշանակությունն ունեցող հանգուցակետեր (և դա նշանակալից է նրանով, որ հենց այդ հանգուցակետերի բացատրությունը կամ ապահով է ոչ թե «Համեմատկա» հնչուններ, այլ մոնողիկ երաժշտամտածողության պայմաններում ունեցող հանգուցակետերը (կամ ապահով է ուղիղ ավագությունը կամ ապահով է ուղիղ ավագությունը): Վերկի մեջբերումից պարզ երեսում է, որ ուղիղ Երզնկացին՝ երկամատիկի (ուղիղակի, օկտավի) ու կիսաբոլորի (հնգակի, կվինուի) մասին խոսում է որպես ձայնամիջոցների, որոնք կազմված են ոչ թե դիմատոնիկ ձայնաշարի (որ վերացական մի հասկացություն է), այլ մեղեդիական կոնկրետ շարժումների տեսակետից հենակետային նշանակությունն ունեցող հայտներից: Դրանց միջև էլ հենց («յորս»), մեղեդիորեն ավելի շարժումն ունեցունները, «յորդեկալ ձայնի բարձրանակ և իշխանն մեղմապատիքան համար համար համար» համարակարը (սեկունդային) ամաստիջոցներով: «Երկու-երկու», յոցներով: «Երեք-երեք», որ նշանակում է՝ երեքական աստիճանով, այսինքն եռյակ (տերցիալիքն) ձայնամիջոցներով: «Երկու-երկու», յոցներով: «Երեք-երեք», որ նշանակում է՝ երեքական աստիճանով, այսինքն եռյակ (տերցիալիքն) ձայնամիջոցներով: Ի դեպ, վերջին (քառյակ) ձայնամիջությունը ցույց է տալիս, որ Երզնկացին այստեղ հատկապատիք ականական է լոկրիական ձայներն ու գրանցից բաղկացած բառյական ականական ականականի պատիպատիքը, իր «Լաստաշտիք» մեջ ունեցել է ներդաշնակության մեջ հենքի սահմանական ամսականության գուրսու եկող մեղեդիական լայն շարժումները ևս: Որովհետեւ եթե հենհայտ է, թե հեղինակը տվյալ կապակցության մեջ խոսում է մեղեդիական հենակետների միջի տարածությունը լրացնող ձայների մասին (իսկ զա իրոք ակենհայտ է), առաջ պարզ է, որ նա «Երեք-երեք» ասելով նշում է ոչ թե ներ-

<sup>27</sup> Հոգ հաննես երկամատիկ աշակեալու մեջ աշակեալու մատուցյան Մատուցյան, ձեռ. № 2329, էջ 44ա—45ա:

<sup>28</sup> Զեռազրում՝ «յորսում», որ գրյական վրիպակ է անշուշտ:

<sup>29</sup> Անդ:

դաշնակության հենքը կազմող հաստատուն քառյակները, այլ՝ իրար հետ միահյուսված հենքերից էլ դուրս մնացող լոկրիական քառյակները: Դրանց հաջորդականությունը մանավանդ, Երգնկացին կարող էր ընդնշմարած լինել Հայկական միջնադարյան գործիքային երաժշտության մեջ: Եվ իրոք, Երգնկացու քննարկվող խոսքերից երևում է, որ նա ընդհանրապես ի նկատի է ունեցել գործիքային երաժշտությունը և վերջինիս հատուկ՝ երկյակ, եռյակ ու քառյակ ձայնամիջոցների վրա Հիմնված վերընթաց ու վարընթաց սեկվենցիոն վիրտուոզ շարժումները: Ուշագրավ է, այս տեսակետից, որ Երգնկացին հիշյալ սեկվենցիոն շարժումների, ասենք, տիպական օգակները թվկախ, քառյակ ձայնամիջոցից այն կողմ չի անցնում: Հենց որ հասնում է հնգյակին (կվինտային), նա չի ասում «Հինգ-Հինգ» (նախորդների օրինակով): Այլ վերադառնում է ներդաշնակության հենքի մասը կազմող հաստատուն ձայններին ու ձայնամիջոցներին, նշելով «Հինգ, որ ասի կիսաբոլոր»: Խսկ մակեռակի ու մակրառակի կապակցությամբ հաստատում է, որ դրանք պարզապես նշանակում են՝ համապատասխանաբար՝ 6 և 8 թվանշաններով արտահայտվող ձայնները: «Եւ այս՝ ըստ բարձրութեան և նուաստութեան ձայնիցն ասի», եղրափակում է Երգնկացին, առավել հստակություն մտցնելով հարցում: Այսպիսով՝ Հովհաննես Երգնկացու վերը բերված ու քննարկված ասույթն իր մեջ արտացոլում է Հայկական միջնադարյան տեսական երաժշտագիտության զարգացման այն աստիճանը, եթե ներդաշնակության հենքին վերաբերող գավթյան նշանակալից դրույթն ըստ էության հասկացված, մեկնարանված ու նաև որոշ շափով հարստացված էր արդեն՝ անմիջականորեն երաժշտական փորձի բնագավառում արված սուր դիտումների հիման վրա:


Տեսական երաժշտագիտության բնագավառում վազուց սկսված այս առաջընթացը սակայն, միառժամանակ խափանվում է միջնադարյան սիոնատիկ մտածողության ստվերի տակ. մտածողություն, որ խոր հետքեր է թողնում ինչպես մի շարք երկրորդական, այնպես էլ կարկառուն ու նշանավոր հեղինակների ստեղծագործության մեջ: Ի նկատի ունենք մասնավորապես Առաքել Մյունեցուն, որն հատուկ զբաղվեց Անհաղթի գաղափարների, այդ թվում և նրա երաժշտատեսական մտքերի վերլուծությամբ, ինչպես նաև միջնադարյան մի քանի անհայտ հեղինակների, որոնցից մեզ հասել են «Սահմանքի» կարճառություններ: Վերջիններս, որ վերաբերում են XIV դարի առաջին կեսին, ոչ մեծ և նույնիսկ հաստվածական բնույթ կրող աշխատություններ են, որոնց մեջ զրեթե միշտ կարենոր տեղ է հատկացվում գավթյան մեզ ծանոթ երաժշտատեսական զրույթին: Դրանք, ըստ երեւութին, շորս տարբեր, բայց իրարից այս կամ այն շափով օգտված հեղինակների աշխատություններ են, և զրցագրերում հաճախ հանդիպում են հետեւյալ խորագրերի տակ. «Սահմանք ասացեալ ի Դաւթէ», «Պատճառ Սահմանաց գրոց», «Սահմանք իմաստասիրականք իբր հարցմամբ» և «Լուծմունք Սահմանաց Դաւթի»: Մեզ զբաղեցնող տեսական զրույթին սրբած բացատրությունների տեսակետից, սակայն, մենք տարբերում ենք միայն երկու բնադիր: Դրանցից առաջինում հետեւյալն ենք կարգում. «Բաղազան, այսինքն մին և այլ, որպէս շաշթա, դ աղի, որ լարերն ե ձայնն բաղին, միանան, լիրար խառնին և զանազան երկին: Յ պատիկ, թ

---

Digitized by srujanika@gmail.com

Հայնչափ: Կիսաբոլոր, Ե, որ Ժ-ինն, որ բոլոր է, կէսն է, Ե: Մակեռուկ, Գ Հայնչափ ձայն: Մակբառուկ, Գ Հայնչափ: Այս ամենայն ի յլ ձայնին փարտային երևի, որ երաժշտական գուսանն, զշաշթայն, զՓ աղին, կամ զԼ աղին, կամ զՄատն աղին հնչեցնէ<sup>30</sup>:

Հնարավոր է կարծել նաև, որ հենց հիշատակված չորս մելիքական տներին ննթակա գյուղերի տանուտերերն են, իրենց մելիքների հետ միասին, Տաթևի վագերագրի տակ ստորագրողները. այդ գեպքում այս չորս մելիքների տիրույթները զրավել են պատմական Գեղարքունիքի Զորք և Կողարքի գավառները (Նոր Բայազետի և Մարտունու), բայց զյուղ գյուղերի թիվը ավելի քան կրկնակի չափով կմեծանա: Նրանց սահմանը կմտենա մելիք Շահնաղարյանների տիրույթի սահմաններին. դա ավելի հավանական է թվում մեզ<sup>57</sup>:

Այժմ տանուտերերի հարցը.

Հայկական այդ հին տերմինը պատմության ընթացքում գործածվել է բազմաթիվ նշանակությամբ. մեզ զբաղեցնող XV—XVII դարերում, ինչպես այն հիմնավոր կերպով բացատրել է լ. Խաչիկյանը, տանուտեր բրկու հիմնական իմաստ ունի. ա) զերգաստանի ավագ — տանուտեր, որոնց թիվը մինույն գյուղում կարող էր տասնյակների հասնել. բ) գյուղի բնարարի տանուտեր. կոչվել է նաև ոևս ու քյոխվա (բայտ արձանագրությունների նաև տոպանորդ), որը մեկ հատ էր լինում յուրաքանչյուր գյուղում: Առաջինի իրավասությունը սահմանափակվում էր իր գերդաստանի ներքին և արտաքին հարաբերությունների կառավարմամբ, իսկ երկրորդինը՝ ամբողջ գյուղի<sup>58</sup>:

<sup>57</sup> Ի տարրերություն Գեղամա Երկիր, Գեղարքունիք Երկիր Հին Հասկացությանը, որն ընդգրկում էր Սևանա լմի ամբողջ ավագանք, միջին զարերում Գեղարքունիք գավառ Հասկացությունը ընդգրկում էր Հիմնականում ներկա Կամոյի և Մարտունու շրջանները, առանց Սոթքի (Բայարգելարի) շրջանի: Գեղարքունիք այսպիս անդամականացնելու համար մի կարևոր գործարք էր, որի արժեքը կախված էր ստորագրողների իրավասության չափից:

<sup>58</sup> լ. Խաչիկյան, XIV—XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին, «Պատմաբանական հանդես», 1958, № 1, էջ 113—117, տե՛ս նաև նոյնի՝ «Ժեղարքունիք գավառ» վերնակարքը հիշատակարանները, մասն թ, Երևան, 1958, էջ LXXXVIII—XCIII:

Մեր ձեռքի տակ եղած արձանագրական բազմաթիվ նյութերը լիովին համբեկնում են տանուտերերի այս բնորոշմանը և ավելորդ ենք համարում դրանց մեջ բերելու: Բայց ի հաստատություն կ. Խաչիկյանի այն ճիշտ կուհման, որ ընտրովի տանուտերերը ժառանգական դառնալու միտում ունեին, ուղում ենք երկու խոսք ասել և փաստ նշել: Ֆեոդալական իրավակարգում տնտեսական ու պաշտոնի բերումով ձեռք բերած մի գերգաստանի հեղինակությունը միշտ էլ ժառանգական դառնալու այդ միտումն ունի: Գեղարքունիքի մեր հավաքած արձանագրությունների մեջ կան բազմաթիվ փաստեր, ուր տանուտերի 3—4 սերունդ շարունակում է այդ պաշտոնը, այս հոգլածի մեջ էլ նման օրինակներ կան, օրինակ Շաղուրաթ Գավառնեցու տոհմը: Մենք ունենք արձանագրություններ, որ ասված է ննջեցյալի մասին, որ 60 տարի տանուտերություն է արել. Բասարգելարի շրջանի Ղամիշլու գյուղի գերեզմանաբարեր կան, որոնք պատկանում են գյուղի տանուտեր ընտանիքներն, հետաքրքիրն այն է, որ այդ ընտանիքի մի կին անդամն էլ գյուղի տանուտեր եղել. նրա տապանաքարի վրա գրված է.

### ԱՅՍ Է ՀԱՆԳԻՄԱ ԱՏԻՄԻՒՆ, ՈՐԱ; (30) ՏԱՐԻ ԱՌԱՋՆՈՒՐԴ ԷԿԱՅ ԳԵՂԱՅՍ:

Կողքի ուրիշ տապանաքարերից երկում է, որ Ատիսը կին է, մայր Մելիքունիքի, որը նույնպես գյուղի առաջնորդն է եղել: Ատիսի անունը հիշատակող մի այլ տապանագիր թվագրված է 1550 թվականով:

Մելիքների ժամանակ տանուտերերի ընտրովի լինելու վերաբերյալ, թեև ուշ ժամանակի, բայց մի կարևոր փաստաթուղթ է մնացել. այն գրել է Արցախի Մելիք Հաթամը. Մաղավուզ գյուղի Հասարակությանը հայտնում է, որ հաստատում է նրանց ընտրած Մելիքունիքի որպես իրենց գյուղի քյոխվա, պատվիրում է հնագանգվել նրան. Հայտնում է նաև, որ եթե փոշմաննեն՝ ինքը հաշվի չի առնելու նրանց տրաունջը: Փաստաթուղթը գրված և կնքված է 1779 թ. փետրվար 15-ին<sup>59</sup>:

Մելիքների հետ միասին Տաթևի փաստաթուղթն ստորագրած տանուտերերը, անշուշտ, ամբողջ գյուղի լիովորությունը ներկայացնողներն են: Այդ փաստաթուղթն իր ժամանակի համար մի կարևոր գործարք էր, որի արժեքը կախված էր ստորագրողների իրավասության չափից:

С. Г. БАРХУДАРЯН

МЕЛИКИ И ТАНУТЭРЫ (СТАРШИНЫ) ГЕХАРКУНИКА  
СОГЛАСНО ОДНОМУ ДОКУМЕНТУ ТАТЕВСКОГО МОНАСТЫРЯ

### (Պ Ե Յ Մ Ե)

В находящейся под персидским владычеством Восточной Армении в XVI—XVIII вв. известную роль играли местные армянские меликства.

<sup>59</sup> Մակար Եպ. Բարխուդարյան, Արցախ, Բագրու, 1895, էջ 221: Այս փաստաթուղթն օգտագործել է նաև Լեռն, տե՛ս «Խոչայական կալվածալ», Երևան, 1934, էջ 166:

Невелика была их роль в политическом отношении, но весьма значительна в смысле защиты местного армянского населения и его древней культуры. В меликствах государственные налоги взимались своими средствами, суд и расправа чинились согласно старым народным обычаям. Меликства впоследствии оказывали содействие армянским освободительным движениям и поддерживали в них надежду на реальную помощь.

Меликства Гехаркуника остались вне поля зрения исследователей (мы не имеем в виду исследования о Мелик-Шахназарянах, так как они княжили в гаваре Сотк, в нынешнем Басаргечарском районе).

Важный документ о меликах Гехаркуника сохранился в четырех рукописях Матенадарана им. Маштоца. Согласно этому документу группа меликов и танутэротов (старшин) Гехаркуника прибыла в 1513 г. в Татев и, ознакомившись с древними документами и устными свидетельствами братии монастыря, вновь подтвердила принадлежность гавара Гехаркуник епархии Татевского Монастыря. Документ подписали 10 человек. Спустя некоторое время добавили свои подписи еще несколько человек.

В настоящей статье рассмотрены вопросы, относящиеся к личностям, подписавшим документ, установлены место нахождения их резиденций и границы их владений. Автор собрал на месте богатый лапидарный материал, на основе которого выяснил, что из десяти лиц, подписавших документ, меликами являются лишь четыре человека, а остальные были танутэраторами (старшинами). Автор составил родословное дерево нескольких поколений меликов, установил, где находились их резиденции и восстановил исторические названия нескольких сел.

S. G. BARKHOUDARIAN

#### LES MELIKS ET LES TANOUTERS DE GUEGHARKOUNI D'APRES UN DOCUMENT DU COUVENT DE TATHEVE

Le rôle, politiquement insignifiant, des méliks arméniens, sous la domination perse en Arménie orientale aux XVI<sup>e</sup>—XVIII<sup>e</sup> siècles, fut néanmoins remarquable en ce qui put concerner la population arménienne tant par la préservation du patrimoine culturel national et l'exercice des fonctions administratives (leyée des impôts et justice) d'une part, que, plus tard, par la contribution des méliks à la lutte émancipatrice, qu'ils voulurent réelle, des Arméniens, d'autre part.

Quoique l'histoire des méliks arméniens en général ait fait l'objet d'études sérieuses, celle des méliks de Guégharkouni (sauf pour Mélik-Chahnazarian du canton de Sod dans la région actuelle de Bassarguéchar) n'a jamais été abordée.

Quatre manuscrits arméniens du Maténadaran d'Erévan renferme un précieux document relatif aux méliks de Guégharkouni qui, accompagnés par plusieurs tanouters, se rendirent, en 1513, au couvent de Tathève. Y

ayant pris connaissance de documents anciens et entendu les témoignages des moines, la délégation décida de placer le canton de Guégharkouni dans le diocèse de Tathève. Le protocole établi porte la signature de dix personnes. D'autres signatures y furent rajoutées ultérieurement.

L'auteur de l'article s'attarde sur la personnalité de chacun des signataires dont il détermine la situation sociale. Un voyage d'études entrepris sur les lieux mêmes lui a valu de recueillir un grand nombre d'inscriptions lapidaires dont il ressort que les dix premiers signataires se componaient de 4 méliks et de 6 tanouters.

L'auteur propose de même un tableau généalogique et donne des précisions sur la résidence respective de chaque mélik et les anciens noms de plusieurs villages.

ՀԱԿՈԲ ՓԱՓԱԶՅԱՆ

ՔՈՒՐԴ ՃՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՆՈՐ  
ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՆԻՐ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արևելագետների մոտ մեծ հետաքրքրություն է առաջացել քուրդ ժողովրդի մոտակա և հեռու անցյալի պատմության նկատմամբ: Պատմաբաններին առավելապես հուզում են քրդերի եթեղենեղի հետ կապված հարցերը: Թեև այս ուղղությամբ վերջին տարիներս զգալի աշխատանք է տարված, սակայն եղած ուսումնասիրությունները դեռևս շատ հեռու են գոհացուցիչ լինելուց: Պատճառն այն է, որ գեռևս լրիվ կերպով չեն ուսումնասիրված և հրապարակ հանված քուրդ ժողովրդի պատմության համար առավել կարևոր նշանակություն ունեցող սկզբնաղբյուրները, որոնք հիմնականում գրված են արաբերեն, թուրքերեն, իսկ ավելի շատ պարսկերեն լեզվով<sup>1</sup>:

Քրդագետները առանձնապես ընդգծում են, որ սելջուկյան ու իլխանական և Հատկապես նրանց հաջորդող շրջանների պարսկալեզու պատմագրությունը հանդիսանում է այն հիմնական ատաղձը, առանց որի հնարավոր չէ տալ քուրդ ժողովրդի միջնադարյան շրջանի պատմության սիստեմատիկ շարադրանքը: Քրդերի մասին մեծ շափով կարենոր տվյալներ և Հատկապես պատմական որոշ հիմքի վրա ստեղծված լեզենդներ կամ գասթաններ կամ ցրված նաև պարսկական գեղարվեստական գրականության էջերում: Բավական է նշել միայն, որ քրդերի միդիական ծագման մասին հնագույն լեզենդը մեզ է հասել Ֆերգովու «Շահնամեի» միջոցով:

Քրդական ուսումնական ցեղերի պատմության վերաբերյալ հարուստ տվյալներ պարունակող ընդարձակ պատմական երկասիրություններից բացի, XV—XVI դարերից սկսած հանդիս են զալիս մի քանի պարսկալեզու քուրդ հեղինակներ, որոնք իրենց երկերով բացառապես փորձում են տալ ինչպես ամբողջ քրդերի, այնպես նաև առանձին ցեղախմբերի ծագման և Քուրդիստանի ու Պատճական Հայաստանի տերիտորիայի վրա տեղի ունեցած ցեղային տեղաշարժերի պատմությունը:

Քուրդ պատմիչները մեծ մասամբ սերում էին ֆեռդալական հայտնի ընտանիքներից: Դրանցից առավել նշանավորները, որոնք թողել են ուշադրու-

1 Այնք ի նկատի ունենք, ի՞նչորէ, առաջին հերթին, ամբողջական, պատմական երկասիրությունները: Այլապես, պակաս կարևոր նշանակություն չունեն նաև XIV—XVIII դդ. հայ պատմիչների երկերում, տարբեր հեղինակների գրչին պատկանող ժամանակադրություններում, ձեռագրաց հիշատակարաններում և այլ ժամանակական աղբյուրներում ցրված բազմաթիվ, երբեմն նույնիսկ խիստ մանրամասն տվյալները: Հայկական աղբյուրները չափազանց մեծ և հարուստ կարող են մատակարարել քրդերի, ինչպես վաղ շրջանի, այնպես նաև վերջին հարյուրամյակների պատմության ուսումնասիրման համար:

թյան արժանի պատմական երկասիրություններ, Մոլլա հդրիս և Շարաֆ խան Բիթլիսիներն են՝ թաղեշի Ռուզակի ցեղից, և Մահմուդ խան ու Արդ-ալ-Ռազզակ քեկ Դումբուլիները՝ Խոյի Դումբուլի ցեղից: Մոլլա հդրիսը գրելէ Օսմանյան պետության պատմությունը, սկզբից մինչև Սուլթան Սելիմ Ա-ի ժամանակները, որ վերնագրված է «Հաշթ-թեհեթթ» կամ «Թարիխ-ե ալ-ե Օսման»: Շարաֆ խանի «Շարաֆնամե» խորագիրը կրող երկշատոր պատմական երկասիրությունը, որի առաջին հատորն ամբողջությամբ նվիրված է բրդական ցեղերի պատմությանը, իսկ երկրորդը 1290—1596 թթ. Իրանի, Թուրքիայի և Միջին Ասիայի քաղաքական անցուղաքերի ժամանակագրությունն է, լայնորեն ծանոթ է արեւելյանագիտությանը, ունի մի քանի հրատարակություններ և ֆրանսերեն, թուրքերեն և այլ լեզուներով կատարված թարգմանություններ:

Դումբուլի պատմիչները սակայն այդքան մեծ ճանաչում չունեն, դրանցից ավելի հայտնի է Արդ-ալ-Ռազզակ բեկը (1762—1827), որը որդին էր Նադիրի հայտնի դորավարներից, Խոյի Դումբուլի ցեղի առաջնորդ Նաջաֆ-կուլի խանի, որ հետո նշանակվել էր Թավրիզի բեկլարեկիության բարձր պաշտոնում: Արդ-ալ-Ռազզակի անոնույլ հայտնի են մի քանի ծավալուն աշխատություններ, որոնցից առավել ճանաչված է Ղաջարների վաղ շրջանի պատմությունն ընդգրկող և «Մուսափիր-ե սուլթանիյյե» խորագիրը կրող երկշատոր երկասիրությունը, որ լույս է տեսել 1826 թ. Թավրիզում և հանդիսանում է պարսկական տպագրության առաջնեկը: Անտիպ երկերից հայտնի են Ֆաթհ-Ալի շահի պալատական բանաստեղծներին նվիրված «Նիզարիսիան-ե Դարա» և իր անձնական հուշերը պարունակող «Թաջրիբաթ ալ-ահրար վա թասլիաթ ալ-արրար» խորագրերով ձեռագրերը<sup>2</sup>:

1937 թ. Հրատարակած մի հոդվածում արևելագետ Վ. Մինորսկին տեղեկացնում էր, որ Արդ-ալ-Ռազզակի գրչին է պատկանում նաև մի այլ աշխատություն, որը պետք է նվիրված լինի բրդական Դումբուլի ցեղի առաջնորդներին, այսինքն հեղինակի նախնիների պատմությանը<sup>3</sup>: Ավելի ուշ Իրանի մեջլիսի գրադարանի ցուցակից պարզվում էր արդեն, որ իրոք կա այդպիսի աշխատություն, որ վերնագրված է «Թարիխ-ե դանարիե»<sup>4</sup>, Ազգարիի հաղորդմամբ այդ աշխատությունը կոչվում է նաև «Միագ-ալ-Զաննա»<sup>5</sup>: 1949 թ. լույս տեսած մենագրական աշխատության ներածական դիմում պրոֆ. Ի. Պ. Պետրովշեսկին, խոսելով Արդ-ալ-Ռազզակի հիմնական աշխատության «Մուսափիր-ե սուլթանիյյե»-ի աղյուրագիտական նշանակության մասին, հիմք ունենալով Մինորսկու հոդվածը, հիշում է նաև «Թարիխ-ե դանարիեն», տողատակում տեղեկացնելով, որ Օ. Լ. Վիլհելմու վկայությամբ, այդ աշխատության մի ընդօրինակությունը պահպանվում է Երևանի Մատենագրաբանում<sup>6</sup>:

<sup>2</sup> C. A. Storey, Persian Literature. A bio-bibliographical survey, London, 1953, v. I, part 2, p. 334.

<sup>3</sup> BSOS, IX/1, 1937, էջ 254, հմտ. C. A. Storey, Persian Literature... v. I, part II, p. 1299.

<sup>4</sup> فهرست کتابخانه مجلس شورای ملی تألیف یوسف اعتصامی، تهران:

315, 1311، ص 1311

<sup>5</sup> C. A. Storey..., էջ 1299:

<sup>6</sup> И. П. Петрушевский, Очерки по истории феод. отнош. в Азербайджане и Армении в XVI—начало XIX вв. Л., 1949, стр. 43.

1957 թ. Մատենագրարանի ձեռագրատան ամբողջ Արաբատառ ֆոնդի ձեռագրերը մեկ առ մեկ ստուգելուց հետո, պարզվեց, որ հիշյալ ձեռագրից բոլորին այլ վերատառությամբ և սխալ նկարագրությամբ գրանցված է հայկական ֆոնդի 7938 համարի տակ:

Ձեռագրի ուշադիր ուսումնասիրությունից հայտնի դարձավ, որ իրոք 251 թերթերից բաղկացած այս ստվար մատյանի վերջին 229թ—249թ էջերում կա Արդ-ալ-Ռազզակի Դումբուլի ցեղապետների տոհմական պատմությանը նվիրված մի աշխատության գեղեցիկ նասխ գրությամբ կատարված ընդօրինակությունը:

Սույն բնագրի, ինչպես նաև ամբողջ ձեռագրի, որ այժմ գրանցված է արարատառ ֆոնդի 622 համարի տակ, համառոտ նկարագրությունը առաջին անգամ տվել ենք 1957 թ. Տաշքենդում գումարված Սովետական Արևելագետների առաջին կոնֆերանսին ներկայացված զեկուցման մեջ<sup>7</sup>:

Թեև առայժմ մեր տեղեկությունները «Թարիխ-ե դանարիեի» մասին սահմանափակվում են միայն մատենագրական տվյալներով, առանց մատնանշելու որևէ ձեռագրի, և մեր բնագրին էլ որևէ վերնագրի կամ անվանում չունի, սակայն այն հանդամանքը, որ այստեղ շարագրված է Դումբուլիների տոհմական պատմությունը, թույլ է տալիս ասելու որ տվյալ դեպքում մենք գործ ունենք «Թարիխ-ե դանարիեի» մի ուշագրավ ընդօրինակության հետ:

Բովանդակության որոշ նմանությունն է նկատվում նույն հեղինակի անձնական հուշերը պարունակող «Թաջրիբաթ-ալ-ահրար վա թասլիաթ ալ-արրար»: և սույն բնագրի միջև: Սակայն ուշադիր համեմատությունը Բրիտանական թանգարանում պահպանվող ձեռագրի Չառլս Ռիփոյի կողմից ցույց տվեց, որ դրանք բոլորում այլ կառուցվածքը ունենք դեմքերի մասին տեղեկությունները մատուցված են նյութերի այլ դասավորությամբ ու միանգամայն տարրեր շարագրությամբ:

Մեր բնագրը սկսվում է հետևյալ խոսքերով.

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ. بَازْنَوْدَنْ أَحْوَالِ قَبِيلَةِ وَاجْدَادِ جَامِعِ نَسْخَةٍ بَدِيعِ  
بَنْيَادِ يَقُولُ حَلْوَى الْأَوْرَاقِ الْمَنْمِسَكِ بِجَبَلِ النَّبِيِّ وَالْوَصِيِّ ابْنِ نَجْفَقَلِ الدَّنْبَلِيِّ...  
عَبْدُ الرَّزَاقِ عَفْيُ اللَّهِ تَعَالَى عَنْهُ...

«Հանուն գթառատ և ողորմած աստծոն: [Սա է] սկիզբը այս նորաստեղծ մատյանը կազմողի և ինչպես ասված է գրքի էջերում, մարգարեի սերնդի հետ կապված, նաշաֆկուլի Դումբուլիի որդի Արդ-ալ-Ռազզակի տոհմի և պապերի պատմության,— թող ամենակարողն աստված ների նրան» (էջ 224թ):

Այդ պատմությունը Արդ-ալ-Ռազզակն սկսում է Սեֆյան հարստության սկզբնավորման շրջանում Կուրմանջի բրդերի խոշոր ցեղերից մեկի՝ Դումբուլի մուսուլմանական շիա աղանդին հարելու մասին տրվող համառոտ նկարագրությամբ: Ապա անմիջապես անցնում է իր մեծ պապի՝ երկրորդ Սալման-խալիֆեի պատմությանը, ընդգելով նրա խաղացած մեծ դերն ու կատարած

<sup>7</sup> ՏԵ՛ս Պապայան Ա. Ճ., Իсториографическая ценность персидских рукописей Гос. Матенадарана, «Материалы I Всесоюзной конференции востоковедов», Ташкент, 1958,

<sup>8</sup> Փափազյան, Մատենագրանի պարսկ. ձեռագրերի պատմագրական արժեքը, «Բանգեր Մատենագրանի», № 4, Երևան, 1958, էջ 234:

քաջագործությունները XVII դարի սկզբներին, թուրքերի գեմ մղվող կոխվների ընթացքում (էջ 226ա—226բ):

Այնուհետև խոսում է իր պապի՝ Շահրազ խանի մասին, որ Խոյում իշխում էր մինչև 1724 թվականը և սպանվեց թուրքերի ձեռքով քաղաքի պաշարման և ավերման ժամանակ (էջ 226բ—227ա): Արդ-ալ-Ռազզակը մեծ վարպետությամբ շարադրված տասնյակ էջեր է նվիրում հատկապես իր հորը՝ Նաշաֆկուլի-խանին, որը նադիր շահի անվանի զորավարներից էր: Նա մասնակցել էր նադիրի բոլոր արշավանքներին և ապա նշանակվել թափրիզի բեկլարքեկի (էջ 228ա—228բ):

Առանձնապես կարևոր են պատմության այն էջերը, որոնք վերաբերում են նադիրից հետո մինչև Ղաջարների իշխանության գլուխ անցնելն ընկած ժամանակաշրջանի քաղաքական անցքերի նկարագրմանը: Մանրամասն նկարագրված են Մուրթուզակուլի-խանի նադիրի ձեռքով սպանության հանգամանքները: Առաջի խանության նրա որդի՝ Շահրազ-խանին հանձնելը, Շահրազ-խանի հավատարմություն հայտնելը Աղա-Մուհամմադ խանին, նրա մահը և այլն: Մեծ տեղ է հատկացված նաև Արդ-ալ-Ռազզակի եղբոր՝ Ֆազլ-Ալի բեկի Շիրազից վերաբարձի նկարագրությանը և այդ կապակցությամբ Զանցանի Զուքֆեղարխանի հետ նաշաֆկուլի-խանի մղած կոխվների պատմությանը, որն առարտվում է Թափրիզի 1780 թ. մեծ երկրաշարժի և եղրոր զոհվելու նկարագրությամբ:

Ահա այս գեղքերից հետո է, որ Արդ-ալ-Ռազզակը նորից մեկնում է Շիրազ, ըստ երկութին, եղբոր ընտանիքի գործերը տնօրինելու, որին նա ցանկացել է հատուկ գլուխ նվիրել, վերնագրելով այն այսպես. وَرَدْ مُؤْلِفُ


بشير ازو بیان الـ مهاجرت همدمان و اظهار سوز و گداز در جدائی پاران  
«Տողերիս գրողի մուտքը Շիրազ, բարեկամների տեղափոխման, նրանց սպուտնիկ և դառն վշտի և հարազատներից անշապիկելու պատմությունը» (էջ 249ա): Սակայն հենց այստեղ էլ, 249բ էջի սկզբում ավարտվում է մեր բնագիրը:

Պարզ է, որ աշխատությունը այսպես չէր կարող ավարտված լինել: Այս վերնագրից հետո ըստ պարսկական միջնադարյան պատմագրության ավանդների, որոշ այլարանական ներածական խոսք է ասված, որին պետք է հաջորդեր բուն պատմությունը: Այնինչ բնագիրը ավարտվում է հետեւյալ բեյթով՝

بیال مرغ بستم نامه سردارم سوی پارش  
گر انبار است مینترسم بــشاید بمنقارش

և կնքված է Ահմադ-խանի որդի Ռուստամ-խանի կնիքով: Դժվար է ասել հեղինակն է կիսատ թողել գործը, թե՝ ընդօրինակությունն է թերի: Պարզ է, սակայն, որ մենք գործ ունենք անավարտ բնագրի հետ:

Արդ-ալ-Ռազզակի այս գործը ևս, իր մյուս աշխատության նման, շարադրված է պարսիկ դասական պատմագրությանը հատուկ շափականց խրթին և վերաբարձ ոճով և խիստ ծանրաթեռնված է քաղում էջեր զրադեցնող ներքողագրությամբ և արարական խթնարանությամբ: Բնադիրը բազմիցս ընդմիջարկվում է ընդարձակ շափածող հատվածներով:



«Թարիխ-ի դանարիելի» առաջին էջը (ձև. № 622, էջ 222բ)

\* \* \*

«Թարիխ-և դանաբիլիք» բնագրի որոնումը առիթ հանդիսացավ մի նոր հեղինակի՝ Ահմադ-խան Դունբուլիի որդի Ռուստամ խանի երկու ստվար աշխատությունների բնագրերի հայտնաբերման, որոնք նշված ձեռագրի հիմնական մասն են կազմում և գրադեցնում են 1ր—220ր էջերը:

Այդ երկու աշխատություններն էլ ընդօրինակված են հեղինակի պատվերով թէհրանի Միրզա Սալեհի մադրասեում, նույն մադրասեի աշակերտ Ալի-Աբրամ Թաֆրիշիի ձեռքուլ, հիջրեթի 1266 (1850) թվականին, բավական անվարժ նախաթղթի գրությամբ և ուղղագրական կոպիտ սխալներով:

Զեռագրի սկզբի 173 թերթերը ընդգրկում են Ռուստամ-խանի «Իշարաթ-ու-մազահիր՝ Անկարիներ հավատքների մասին») պատմա-դավանաբանական աշխատությունը: 174ա—178ա էջերում պատկերված են աստղագուշակության գանազան տախտակներ և աղյուսակներ: 178բ էջում տրված է գրքի հեղինակի բախտի գուշակությունը, կատարված վերոհիշյալ թվականի դիհաջան. ամսի սկզբին (1850. X. 8):

صورت زایچه طالع واقف و مؤلف هذ الكتاب رستم خان ابن احمد خان الد نبیلی انشا الله بدرو پسر و مادر بعمر طویل بر سند بدرو مادر از اولاد برخور دار باشند.

«Այս է պատճենը գրքիս հեղինակ և նվիրող (վակի անող) Ահմադ-խան Դունբուլիի որդի Ռուստամ խանի ծննդյան գուշակության: Աստծո կամեցողությամբ թող հայրը, որդին և մայրը երկար տարիներ ապրեն և ծնողները իրենց որդիներից գո՞յ և երջանիկ լինեն»:

178ա-220ր էջերում Ռուստամ-խանի երկրորդ՝ զուտ դավանաբանական աշխատությունն է, որ վերնագրված է «Իշարաթ-ու-մազահ» («Անկարիներ կրոնների մասին»): 221ա էջը մաքուր է, 221բ, 222ա էջերում կա հեղինակի բախտի մի ավելի ընդպրձակ գուշակություն, որի սկզբում տրված է:

صورت زایچه طالع واقف هذ الكتاب رستم خان ابن احمد خان الد نبیلی يعى كرد كرمانچ عيسى بکلو شمسگی و يرمکى روز دوشنبه غرة رجب المرجب موافق (!) بلدة طيبة دارالصفاى خوى مطابق ايت ايل تر كى سننة هزار و دوبيست و شصت از [ين] فرار است اوضاع كواكب كه در ذيل مرقوم گشته انشا الله بعمر طویل برخور دار باشد و قدومش بروالدين مبارك و ميمون گردد بحق نبى و الوصى آمين يارب العالمين ...

«Այս է գրքիս նվիրողի՝ Ահմադ-խան Դունբուլ-Յահյայի որդի, Կուրմանշի քուրդ, Խասրեկլու, Շամսեկի և Բարմաքի Ռուստամ-խանի բախտի գուշակության պատճենը: Գրված ուշաբ ամսի սկզբին, եկուշարթի օրը, աղնվարար և գեղածիծաղ Խոյ քաղաքում, թուրքաց շան տարում, որ համապատասխանում է հիջրեթի 1266 և հազկերտյան 1219 թվականին (1850.IV.12): Իսկ աստղերի դասավորությունը այնպէս է, ինչպէս ստորև նկարագրված է: Աստուծու

կամեցողությամբ թող երկար տարիների արժանանա և ծնունդը ծնողներին շնորհավոր լինի»:

Զեռագրի 222բ—249բ էջերն ընդգրկում են Արդ-ալ-Խազզակ իրն-նաջաֆ-կուլի-խան Դունբուլիի մեղ արդեն ծանոթ աշխատությունը: 249բ էջի աղատ մասում կան Դունբուլիների նախնիներին վերաբերող շափածո տողեր, իսկ 250ա—253բ էջերում, որոնցով ավարտվում է ձեռագիրը, հավանաբար Ռուստամ-խանի ձեռքով, գրանցված են մի քանի ճանապարհորդական նոթեր:

Զեռագիրը մի քանի տեղ կնքված է Ռուստամ-խանի կնիքով. Հատկապես առանձին բնագրերի սկզբից և վերջից: Երկու աշխատությունների սկզբում, զրի նվիրման կամ ժառանգման մասին կատարված է վակիֆային արձանագրություն, համարյա նույն բովանդակությամբ: Ահա այդ արձանագրություններից մեկը, որ դրված է «Իշարաթ-ու-մազահիր» սկզբում:

این کتاب مسمی بالشارات المذاهب راوفق اولاد نموده و صيغه صحیحة شرعی جاری شده رستم خان ابن احمد خان باین شرط که دائم در خانه اولاد خود باشد باحدی امانت ندهند هر کس خواسته باشد نسخه از روی این بردارد باید بازاز خانه بیرون نبرند در خانه اعلم اولاد باشد انسا الله تعالى عالم همبشه در خانواده بوده اند و باشند بقدر قوه علاوه نمایند و عبارات را آرایش دهند و علاوه نمایند و هر کس که خیانت نماید بلعنت خدا گرفتار شوند اميد وارم که [در] صحت این وقفيت را بردارند بلعنت خدا گرفتار شوند اميد وارم که [در] صحت این کتاب کوشند در کمال عزت نگاه دارند و وقفيت اجرا (!) دارند از فرار نوشته عمل نمایند.

تحریر آفی پنجم شهر ذیقعدة الحرام روز پنجشنبه مطابق ایت ایل سنه ۱۲۶۶  
مهر—عبده الراجی رستم ابن احمد

«Իշարաթ-ու-մազահիր» («Անկարիներ հավատքների մասին») վերնադրով այս զիրքը Ահմադ-խանի որդի Ռուստամ-խանը, Ճշմարիտ շարիաթական սիղայով անցկացնելով, կտակեց (վակի արեց) իր ժառանգներին, պայմանով, որ միշտ իր որդիների տանը մնա, որևէ մեկի մոտ պահ շտրվի, և ով որ ցանկանա ընդօրինակել, պետք է տնից գուրս շտանի: Գիրքը պետք է մնա բոլորից պահելի ուսյալ ժառանգի տանը: Ծնորհիվ աստուծո ուսյալ մարզիկ միշտ էլ մեր կերպաստանում եղել են և կլինեն: Թող իրենց ուժերի ներածի շափով [զոր-ծը] շարունակեն և լեզուն զեղեցկացնեն: Ովքեր որ հակառակեն և այս վակիֆը անտես առնեն կամ արձանագրությունը չնշեն, այդպիսիք թող աստծո անեծքներին արժանանան: Հուսով եմ, որ կաշխատեն սրբագրել գիրքը, սրբությամբ կպահպանեն իմ այս կտակը և կվարվեն համաձայն այս գրության: Գրվեց 1260 թ. զիկا'ن ամսի 5-ին, հինգշարթի օրը (1850.XI.12): Կնիք՝ «Հուսուցուցող ծառա Ահմադի որդի Ռուստամ» (Էջ 1ր):

Գրքի հեղինակի մասին մեր տեղեկությունները սահմանափակվում են միայն «Իշարաթ-ու-մազահիր» 60ա-62ա էջերում, իր իսկ հեղինակի հաղորդական գրանցում կորցնում է հորը և մնում է մոր խնամքի տակ: Վերջինս էլ

իր հերթին նրան հանձնում է խորասանցի Հասան անունով մեկի խնմակալությանը: Հինգ տարեկան հասակում, քառասուն օրվա ընթացքում նա սովորում է կարդալ պարսկերեն: Պատանեկան տարիքում մեծ հետաքրքրությամբ ընթերցում է կրոնական գրականություն և խորանում կրոնա-բարոյագիտական հարցերում:

Ուշագրավ են կրոնական հարցերի վերաբերյալ Ռուստամ խանի մտորումները որոնք ի վերջո հանգում են կրոնի, որպես պետությունների ձեռքում գաղափարական գենքի, սոցիալական էության բացահայտմանը:

Ահա թե ինչ է զրում նա այդ մասին.

در طلب مردحق بودم اوصافشان را در کتابها دیده بودم راه مرد خدارا بی پایان دیدم سراسر تنک و خطرناک در ظاهر رهبری ندیدم در کتب ادیان بر هانی نبود که عقل قبول نماید بیا و بین حرف [ایشان] بی اعتبار بنظر آمد و رفتم ندیدم باز رفتم صلاح در آن دیدم که علمای ملل مختلف را به بینم اختلاف بی پایان احوال اخلاق بی معنی زیاد دیدم بعضی بطريق میراث دست بشاخ ضعف زده طایفة بجهت پی روی خاطر و بیم جان پای بر کن لرزان نهاده جماعتی که علمای عربیان باشند برای مالدنیا و بلندی مرتبه تکیه باستخوان پوسیده کرده و مرده چندرأ پیشوای خود ساخته و نام دین داری برخود بسته و اختلاف در شناختن خالق و ابتدای خلقت و انتهای کار بی نهايت بعضی... بهيج اكتفانموده منبع الوجود رانقی کرده بت بزرگ از نیستی ساخته بعضی نیستی راه هر یمن گفته هستی رایزدان بعضی که دارند و بر آرند (؟) که حضرت نوربخش عالم را که از هر آن هزار آن جلوه دارد ملک طاؤس گفته اند قومی بعد ادوات اورا شبیطان میخواند دیدم که اول تکلیف که بر جمیع مخلوقات که شده است شناخت خداست اول بنای عدالت را بعد ادوات یکدیگر بخدای یکدیگر گذاشته اند... بعد ادوات و ضدیت یکدیگر راهی گرفته که من راه حق را گرفته ام و دیگر باطل در آرایش خود و نکوهش دیگران حرف میزند از دین داری اثری ندیدم در مدت قلیل یکصد و هشتاد شهر ازو لايت روم و روس و ایران و هش و زنک و عرب گردیدم فرار دادم که علمای هر مذهب به بینم دیدم که حرف بگوش ایشان نمی رود دائم در مشاطگی خود و برهم زدن کیش دیگران می باشند که تخریب گار بی قاعده آسان است در همین بلا مبتلا مانده اند ثواب یکی و گناه دیگری و حلال آن و حرام این هردو لغو باطل بنظر آمد اول جمیع مذاهب نظر گردم حیله یادشاهان دیدم...

«Փնտրում էի իսկական մարդկանց, որոնց գովքը գրքերում էի միայն հանդիպել: Աստծո մարդու հանապարհը անվերջ և ծայրից ծայր նեղ ու վտանգավոր տեսա և առանց ուղեցույցի: Կրոնական գրքերում ես մարդկային միտքը

համոզող խոսքեր շտուա, և արի տես որ նրանց խոսքը ևս իմ աշքին անարժեք թվաց: Ուստի ես որոշեցի տարբեր կրոնների գիտունների հետ հանդիպել, մեծ հակասություններ և շատ անիմաստ բարբեր տեսա: Ոմանք ժառանգաբար ձեռք են նետում անզորության ճյուղին, ուրիշները մտքին հնթարկվելու համար և վախիսնարով հսկուց, երերուն հիմքի վրա են կանգնած, իսկ մի այլ խումբ, որ «մերկ գիտուններն» են, աշխարհիկ հարստության և բարձր դիրքի համար հենվում են փտած ուկորների վրա և մի քանի մեռյալների իրենց առաջնորդն են զարձրել ու հավատացյալներ են անվանում իրենց: Եվ առհասարակ մեծ է նրանց տարածայնությունը արարշի և արարշագործության և աշխարհի վախճանի հարցում: Ոմանք էլ ունայնությամբ են բավարարվել, գոյության ակունքն են սրբացրել և ունայնությունից իրենց համար մեծ կուռք են սարբել, իսկ ումանք անգոն անվանում են Ահրիման, գոն՝ Ցաղդան: Ոմանք որ... ունեն երկիրը լուսավորողին, որ ամեն վայրկյան տարբեր գույններով է փայլում, Մաւաբ-Թափուս են անվանում, իսկ ուրիշները նրանց թշնամաբար սատանա են կոչում: Տեսա նաև, որ բոլոր արարածներից պահանջվում է միայն ճանաչել աստծուն, սակայն մարդիկ իրար նկատմամբ ունեցած թշնամանքը միմյանց աստծու նկատմամբ են գրւեռում... մեկը մյուսին թշնամի և հակառակ ճանապարհով են ընթանում և յուրաքանչյուրը պնդում է, որ իր ուղին ճիշտ է, իսկ մյուսինը սխալ: Իրենց գովում են և հակառակորդին պարսավում, և այսպես շշմարիտ հավատացյալ են շտեսա:

Կարճ ժամանակի ընթացքում ես եղա Ռուսի (Թուրքիա), Ռուսաստանի, Իրանի, Հարեկստանի, Զանդիրարի և արարական երկրների 180 քաղաքներում: Իրաշել էի, որ բոլոր կրոնների առաջնորդների հետ հանդիպեմ: Սակայն տեսա, որ նրանցից ոչ մեկը խոսք լսել չի ուզում: Նրանք միայն իրենց գեղեցկացնելով և հակառակորդին սեացնելով են զրաված: Եվ քանի որ անկարգ գործը խանդակել էնշատ է, նրանք բոլորն էլ ենթարկված են այդ պատուհասին: Մեկի արդարացումը և մյուսի դատապարտումը, մեկի ընդունումն ու մյուսի դրժումը, երկուսն էլ ինձ մերժելի թվացին, և երբ լավ ուսումնասիրեցի բոլոր կրոնների արժանապարհը, դրանց բոլորի հիմքում թափավորների բռնությունն ու նենգությունը տեսա:

Այս եղրակացությունից հետո Ռուստամ խանը պաշտպանում է կյանքում միշտ բարուն հետեւելու սկզբունքը, լավ իմանալով, որ «կյանքի քաղցրությունները միշտ զառնությամբ շաղախված պետք է լինեն»: Ինքն իրեն խրատում է ցանկությունների գերի լինել. նշելով միաժամանակ, որ «այսպիսի մտորումները նման են աղի ջրի, որքան խմես, այնքան ծարավդ կսաստկանա»: Այնուհետև երկար խոսում է աշխարհի սահմանության, կյանքի անցողիկության մասին, մերթընդմերթ այս հետաքրքիր խորհրդածությունների արանքում տալով նաև որոշ կենսագրական տեղեկություններ:

... آنچه երամ رسیدե աստ احدى راشر يك خود نمی داند که نوکري چهل ساله نان یك روزه رانداد دایم سفری در جنگهای روم و روس و افغان و ازیز و عرب و خدمت چهار پشت سلاطین عظام نمودن باعث آسایش یکروزه نشد و در یکروز املاك مورو شی عوض خدمات چهل ساله ضبط دبوان گشته قوت لا یمومت که از بابت اجراء املاك باسم مواجب میدادند قطع نموده اند و از دو کرور دولت موروثی حبه خرج ننموده شکر منت باری که آنچه اهل عالم

از نکاپوی آن می باشند نصیب شدمدت عمر بایار و فادار بی مانند پاک بسرشد و اولاد خوب خداوند عالم داد و عروسیهای خوب از برای انان و ذکور او لاد نمود و عمار نهای عالی ساختم و باغات مینونشان نشاندم و رساندم و ثمرش را ندیدم و نخوردم و تمامی زیارتگاههای عالم را زیارت نمودم و بخدمت بزرگان ظاهری و باطنی مشرف شدم...



Ռուստամ խան իրն-Ահմադ խան Գունըլի (ձեռ. № 622, էջ 61ա)

«Եյն ինչ որ կյանքում բաժին է ընկել տողերիս գրողին, թող ու որ այդ քանում նրան շընկերակցի: Որովհետև քառասուն տարվա ծառայությունը ինձ մեկ օրվա հաց անգամ չտվեց: Միշտ մասնակցել եմ արշավանքների, մերթ թուրքաց, մերթ ոռուների, աֆղանների, ուզբեկների կամ արաբների դեմ մղվող պատերազմների ժամանակ: Իրար հաջորդող շորս թագավորների եմ ծառայել և փոխարենը մեկ օրվա հանգիստ ծեռք շեմ բերել: Եվ ահա մի օր էլ իմ հայրենիք մուկքերս իտրիտուր իմ քառասուն տարվա ծառայության հարքունիս զրավշեցին և օրապահիկս, որ որպես ոռնիկ ստացվում էր մուկքերի վարձակալական գումարներից, կտրվեց: Եվ այսպես 200.000 հայրական ժառանդրւյունից ևս մի հատիկ անգամ չեմ ծախսել:

Փառք աստծո, սակայն, որ այս բոլորով հանդերձ, այն ինչի որ մարդիկ ձգտում են ունենալ աշխարհում, աստված շնորհել է ինձ: Ամբողջ կյանքս անց եմ կացրել աղնիվ և հավատարիմ կնոջ հետ: Աստված լավ զավակներ է պարգևել ինձ և բոլորին էլ, թե՝ տղաներիս, և թե՝ աղջիկներիս հաջող ամուսնության եմ արժանացրել: Շքեղ սպարանքներ եմ կառուցել և դրախտակերտ այդինք:

տնկել, որոնց պատուղները սակայն չեմ տեսել և չեմ հաշակել: Շրջել եմ աշխարհի բոլոր սրբավայրերը և տեսել բազմաթիվ անվանի մարդկանց»:

Վերը մեջբերված կենսագրական տեղեկությունները, և ձեռագրում ցրված այլ տվյալներ հիմք են տալիս ենթագրելու, որ Ռուստամ-խանի հայրը եղել է Խոյի Ահմադ-խան Գունըլին, որը նազիրից հետո մինչև 1886 թվականը իշխում էր Խոյում և շրջակայրում, հանդիսանալով Ատրապատականի ամենաաղղացիկ խաններից մեկը և քրդական Գունըլի ցեղի առաջնորդը: Նշված թվականին նա եղրոք՝ Սալման-խանի և մեծ որդու հետ դավադրաբար սպանվեց Հարեւան աղբքեցանական խանների ձեռքով:

Սակայն աշխատության այն մասում, որտեղ Ռուստամ խանը խռոսում է իր անմիջական նախնիների մասին և թվարկում է Ահմադ-խանի որդիներին, նա իր անունը այստեղ չի հիշատակում, ըստ մեր աղբյուրի Ահմադ-խանի սպանությունից հետո «աշխարհում նրանից 8 որդի մնաց» (էջ 88բ), իսկ երբ նա թվարկում է, հիշում է միայն 7 անուն: Հուսեյն-կուլի խան, Զահվար-կուլի խան, Ալի-Մուրադ խան, Քյալբ-Ալի խան, Քյազիմ բեկ, Հաջի Շեյխ-Ալի խան և Ալիր-Ասլան խան: Պարզ չէ, 8-րդը նա հաշվում է սպանված ավագ որդուն՝ Հուսեյն փաշային, որի անունը նա մի անգամ է հիշում թավորիկի պաշարմանը մասնակցելու կապակցությամբ (էջ 87բ), թե՝ այստեղ պետք է ավելացնել հենց իր՝ Ռուստամ խանի անունը: Եթե ի նկատի ունենանք, որ խոսքը Ահմադ-խանի սպանությունից հետո մնացած որդիների մասին է, ապա կարելի է մտածել, որ 8-րդը հերք հեղինակն է, քանի որ ավագ որդին այդ ժամանակ արգեն չկարելի թիշտ պայմանական կերպով ընդունենք, որ Ռուստամ-խանի հայրը վերոհիշյալ Ահմադ-խանն էր, իսկ նրա մահվան ժամանակ Ռուստամը 2 տարեկան է եղել, ուրեմն նա պետք է ծնված լինի 1784 թվականին: Այն փաստը, որ հիշքի 1216 (1801—1802) թ. տեղի ունեցած կոփների մասին Ռուստամ խանը խռոսում է որպես ականատեսի (էջ 92ա), իբրոք կալիս է վկայելու, որ նա պետք է ծնված լինի 1784—1785 թվականներին: Մի այլ տեղ նա վկայում է, որ 17 տարեկանից նա եղել է զինվորական ծառայության մեջ: 40 տարի ծառայել է իրար հաջորդող 4 թագավորների (էջ 62ա): Եվ իրոք, եթե դարասկզբին նա արդեն քառասուն տարվա ծառայության անցյալ ուներ, որը վերաբերում էր Աղա-Մուհամմադ խանի, Ֆաթհ-Ալի շահի, Մուհամմադ շահի և Նասր-Էղ-դին շահի ժամանակներին:

Հեռագրի 51ր էջում Ռուստամ խանը տվել է վերջին Գունըլիների հայտնական անվանացանկը: Ակսած իր ժամանակներից մինչև XVI դարի սկզբը ներին Շահ Խսեյխիլի օրոք հայտնի դարձած Մալման խալիթին: Հետագա մի ընթերցողի կողմից չնշված է այս ցուցակի առաջին անունը և տեղը գրված «Ահմադ խանի որդի Ռուստամ խան», որից հետո կա մի անընթեռնելի անուն, իսկ շարունակությունը այնպես է, ինչպես ձեռագրում նախապես գրված է եղել: Ռուզումը հավանաբար կատարվել է Ռուստամ խանի որդիներից մեկի ձեռքով, որը քիչ հետո լուսանցքում այլ հավելումներ է կատարել: Սրբագրողը նըսպատակ է ունեցել այդ ցուցակի վերջում զնել Ռուստամ խանի անունը, ինչ որ հեղինակը համեստորեն հիշատակության արժանի չի համարել և Գունըլիների առաջնորդների ցուցակն ավարտել է Հուսեյն կուլի խանի որդու՝ Սալման խանի անունվ, որը 1842 թ. վերադարձավ Ռուստամ խանից և նշանակվեց խոյի հարիմ

(էջ 91ա): Այնպես որ կատարված ուղղումը ճիշտ չէ և ոչնչով չի օգնում ճշգրտելու նույտամ խանի հոր ինքնությունը:

Կարդալով նույտամ խանի այս գույք աշխատությունները, մենք տեսնում ենք, որ զինվորականի պաշտոնը չի խանգարել նրան զբաղվելու նաև հին կրոնների ուսումնասիրությամբ և, ինչպես ստորև կտևսնենք, խորանալու հատկապես հին իրանցիների՝ յաղղանիների կամ յաղղանփարասթների համատալիքների ուսումնասիրության մեջ:

Մեր ձեռքի տակ գտնվող երկու բնագրերի վերնագրերից կարելի է կռահել, որ դրանք երկուսն էլ գալանարանական-կրոնական բովանդակություն ունեն: Իրականում սակայն, դրանցից երկրորդն է միայն, որ բովանդակում է հին իրանական հավատալիքների մասին բավական ընդարձակ քաղվածքներ զանազան աղբյուրներից և հատկապես զբաղացտական գրականությունից: Անշուշտ այս աշխատությունը որպես XIX դարի առաջին կեսում թրանում կատարված ուսումնասիրություն, ուշագրության արժանի երևոյթ է, սակայն որպես պատմական սկզբնաղբյուր՝ առանձին հետաքրքրություն չի ներկայացնում:

Այլ բնույթ ունի, սակայն, առաջին աշխատությունը, որ անհամեմատ ավելի ընդարձակ է ու բազմաբովանդակ: Այս աշխատության սկզբի և վերջի մասերը նույնական են հին իրանական կրոնի պատմությանը: Նախապես իրանի առասպեկտական թագավորների շարքը, ըստ Շահնամեի թվարկելուց հետո, հատուկ գլխում, որ վերնագրված է «Պարսիկ թագավորների կրոնի մեկնությունը, որոնց Ասրհուշանդ. Ահուշանդ, Հուշանդ կամ Ահուշ-Մեհաբադ էլ են ասում»<sup>8</sup>, մեկնարանում է հին Իրանի նախաղրադաշտական հավատքը Հաջորդ գլուխը վերնագրված է «Գունըովիների և պարսիկների կրոնի մեկնության սկզբը, որոնց կոչում են նաև իրանցիները»<sup>9</sup>: Հեղինակը նախապես հավասարացնում է, որ ինքը մեկ առ մեկ ուսումնասիրել է բոլոր աղբյուրները. «Այսպես է ասում զրբիս աշխատասիրողը, — զրում է նա, — ոչ ոք չի կարող դիտողություն անել, թե այսինչ նյութը այնինչ տեղից է վերցված, որովհետեւ հեղինակը մեկ առ մեկ հիշատակում է բոլոր զրբերի անունները»<sup>10</sup>: Այս զիմում է ահա, որ նույտամ-խանը փորձում է ապացուցել, որ Դունրուի քրդերը շատ երկար ժամանակ պահպանել են հին իրանական կրոնը:

Նույտամ-խանի աշխատության այս մասը կարելոր է նաև այն տեսակետից, որ զրավոր աղբյուրների օգտագործմանը զուգահեռ նա անձամբ շրջել է Քուրդիստանի կենտրոնական շրջաններում և ծանոթացել քրդերի մոտ պահպանված բազմաթիվ աղանդերի հետ: Այսպես, խոսելով Սփասյան (Սիասիան) կողմուն աղանդի մասին, նա զրում է. «Տողերիս զրողը երկար ժամանակ նրանց

<sup>8</sup> էջ 21ա. Հայոց մذهب سلاطین فرس که ایشانرا اذر هوشنگ و اهوشند.


و هوشنگ و اهوش مهاباد گویند

<sup>9</sup> էջ 21բ. Աغاز ذکر مذهب دنبليان و بارسيان که ایشانرا ايرانيان.

نیز گویند

<sup>10</sup> گرداور نامه میگوید اگر کسی بحث نماید و ایراد آورد که فلان.

مطلوب درفلان جاست خود را فرم بفرجه نام کتابهارا بیان نموده



«Իշարաթ-ուլ-աղյանի» առաջին էջը (ձեռ. 122, էջ 178ր)

Հետ է եղել հարցուփորձ է արել, ուշադրությամբ ուսումնասիրել է նրանց առաջնորդների գրքերը, կարդացել և վերահասու եղել նրանց գաղտնիքներին և ներքին էությանը։ Նրանց հավատքը ամբողջապես համապատասխանում է յագանախարասթների հավատքին<sup>11</sup>։

Քրդական ցեղերի մեջ տարածված աղանդներից դժվար թէ որևէ մեկը վրիպած լինի նրա ուշագրությունից: Բոլորին էլ նա անդրադարձել է առավել կամ նվազ շափով: Հիշված են Ահլ-ե Հակի, Բեկթաշի, Յաղիդի, Սեփասի և մի շաբթ այլ աղանդներ:

Ուսումնասիրելով քրդական աղանդների ակունքները և կանգնելով այն հաստատ տեսակետի վրա, որ քրդերը դեռ Խոլամից հետո էլ երկար ժամանակ պահպանած են եղել Հին իրանական կրոնը, Ռուստամ-խանը պատմական բազմաթիվ սկզբնաղբյուրների հիման վրա փորձում է ապացուցել, որ երբ Արքայանների օրոք Խալիֆաթի արքունիքում մեծ կշիռ ունեցող, ծագումով պարսիկ Յաջյա Բարմաքի որդի Մուսա Բարմաքին Մամունի կողմից նշանակվում է Միրիայի և Հյուսիսային Միջագետքի կառավարիչ, նաև իր Հովանավորության տակ է առնում այն ժամանակ դեռևս իրենց հին հավատքը պահպանած Յաղգանի քրդերին և հոծ քրդական ընակլություն ունեցող Սանջարի լիոներում հիմնում է Դումբուկ բերդը, այն գարձնելով իր ամրոցը: Այս բերդի անունով էլ ահա Նրա և հետագայում նրա որդիների ու նրանց հաջորդների իշխանության ներքո միավորվող քրդական ցեղերը սկսում են կոչել «Դումբուկի»:

Այնուհետև գլուխ առ գլուխ շարադրում է այս ընտանիքից ճյուղավորված բրդական բազմաթիվ նոր ցեղերի և դինաստիաների պատմությունը, այդ ընթացքում կարենոր տեղեկություններ տալով նաև բրդական ցեղերի բռնի տեղահանումների և միջրացիաների վերաբերյալ։ Անա այստեղ է, որ չունենալով հանդերձ Արդ-ալ-Ռազզակի լեզվական հմտությունն ու պարսից դասական պատմագրությանը հատուկ բարձր ունի, նույստամ-խանը կարողացել է տալ իր նախնիների շատ ավելի ընդարձակ պատմությունը վաղ միջնադարից սկսած մինչև իր օրերը, ընդգրկելով դոնրովիների ոչ միայն մեկ ճյուղի, այլ ավելի վաղ ժամանակների մի խոշոր ցեղից ճյուղավորված բոլոր ցեղերի իշխանության պատմությունը սերնդից սերունդ:

Հստ մեր աղբյուրի, դռնբուլիներից են սերում քրդական թարմաքուր, Դունքուլի-Ցահյա, Շամսեգի, Խսաբեկլու, Ալամշահբեկլու Զաաֆարանլու, Այյությանի, Շահնավազբեկլու, Խրտըլլու, Խալիլբեկլու, Երկակի և այլ ցեղեր, որոնք մինչ XVI—XVII դարերը, իսկ ոմանք նույնիսկ մինչև գրքի շարադրման ժամանակներու, ուն յառանինեռ էին<sup>12</sup>:

Հավանական է, ի՞նչ արեկ, որ այստեղ զբանորված լինեն հեղինակի, եթե կարելի է այսպես ասել, մեծապետական հայացքները: Նա փաստորեն Կուրմանցի օրոքնոի մեծ մասին գեղաեկո է համառում Գունըուինեռին:

Մանրամասն քննության առնելով Դումրութիների ընտանիքից ձյուղավոր-պատ բոլոր ցեղերի անցած պատմական ուղին, Ռուսամամանը վերին աստի-նահի կարևոր տեղեկություններ է տալիս ինչպես Քուրդիստանի տառենոր շր

نامه‌نگار مدتها با این طایفه خجسته قلسی منش باهم بودند تحقیقات .<sup>۱۱</sup> ۳۲۰

<sup>12</sup> Եզ. 95բ-96ա. Այս դեպքում կարծես և նոր, որ նա ի նկատի ունի եղիղիներին:

շանների, այնպես էլ Պատմական Հայուստանի հարավային նահանգների վերաբերյալ: Աւշադրության արժանի են Հատկապես այն տողերը, որոնք նվիրված են Կորմանջի բրդերի բնակության վայրերի նկարագրությանը, Տերզի լեռներից մինչև Ատրպատականի արևմտյան շրջանները ներառյալ, որի մեջ մըտնում է Հին Կորդովը կամ Կորդվաց աշխարհը: Մեծ տեղ է հատկացված Խոյի և շրջակայթի նկարագրությանը, որպես իր հայրենի քաղաքի, նշելով որ իր այն եղել է Հայուստանի մայրաքաղաքներից մեկը<sup>13</sup>:

Ավելի ուշ շրջանում թրդական ցեղերի լայպաղների շարքում նա առանձնապես շեշտում է Եղեգիսի ձորը, Կապանն ու Բարգուշտը, Ալաղաղն ու Բերկրին, Աղբակն ու Հաբեարին և Հայաստանի այլ լեռնալին շրջանները<sup>14</sup>:

Առանձին հիացմունքով է Նկարագրված Դուռըովլի քրդերի բնօրբանը Համարվող Սանչարի և Տերզնի բնությունն ու հարստությունները։ Այսպես օրինակ, Տերզնի մասին գրում է.

خد اوند عالم آنکوه را بنظر دیوان دهر پنهان نگاهداشته است راقم  
اکثر آنکوه را گردیده است نعمت عالم در آن کوه تمام است چندان  
شهرهای عظیم در آن کوه هست احدی نفهمیده است قله جبال برف در پائین  
کوه خرما و زارنج همه آن کوه تاکستان و درخت نوت ابریشم است کوهها  
عفل بندی شده دره ها پرآب و بکشتنی تردد دارند...

«Արարին աստված Տերպնի լեռները հեռու է պահել դեկրի աշքից: Տողերիս գրողը շրջել է այդ լեռների մեծ մասում: Այդ երկիրը լի է աշխարհի բոլոր բարիքներով: Քիչ մարդիկ զիտեն, որ այդ լեռներում մեծ քաղաքներ կան: Լեռների գագաթները ծածկված են հավերժական ձյունով, իսկ ստորոտում արմավունարինց է հասնում: Ամբողջ լեռները ծածկված են այդիներով և թթենիներով: Բարձրունքներում ամրություններ են կառուցված: Գետերը ջրառատ են: Նրանցով նավեր են երթևեկում» (Էջ 56ա):

Ամենատարբեր ազբյուրներից թուստամ-խանը կարողացել է գտնել դուռը ովհներից ձյուղավորված մի շարք քրդական դինաստիաների ժառանգական հաջորդականությունը պարզող տվյալներ և հշտել նրանց խանության, թեկության կամ բեկարբեկության թվականները:

Գրքի գլուխները մեծ մասամբ բաժանված են ըստ առանձին իշխողների անունների: Այսպես մի քանի գլուխ հաջորդաբար վերնագրված են. «Շահրապ խան Դունբուլի որդի Նաջաֆկուլի խանի մասին», «Նաջաֆկուլի-խան բեկլարցեկի որդի Ամիր Խուզադադ-խանի մասին», «Ամիր Խուզադադ-խան Դունբուլի որդի Ամիր Ֆաթհ-Ալի բեկի մասին», «Ամիր Խուզադադ-խանի որդի Ամիր Ֆաթհ-Ալի բեկի որդի Նաջաֆկուլի խանի մասին» և այլն: Պատմությունը Հիմնականում հյուսված է առանձին պատմական դեմքերի, առավելապես քրդական տարրեր ցների առաջնորդների կենսագրության հենքի վրա, որի սնթառ-

**شیوه خوی که مایتخت سلاطین ارمن بوده** ۱۳ t ۵۶p, 68m

**د. علی‌اکبر خواجهان از کتاب ارساله مغان و فیلان و**

ـ زر المیس سعیدوں اور دروں کی  
ـ، کشیداً فِ ابَاغْ كوهستانات حکاری و الاداعَ يُلَاقَ آنها بوده...

քուրդ, սակայն, Հեղինակը հաճախ ծավալվելով խորանում է պատմաբանին հուզող բազմազան հարցերի մեջ:

Մինչև XVIII դարը ներառյալ, պատմության շարադրման համար Ռուսամ-խանը օգտագործել է շուրջ 800 տարվա պատմություն ընդգրկող պարսկերեն, թուրքերեն և արաբերեն մի քանի տասնյակ պատմագրական երկասիրություններ: Այս առումով, ի՞նչարկե, նրա աշխատության այս հատվածը մասմաս կոմպիլատիվ բնույթ է կրում: Սակայն օգտագործված աղբյուրների մեծ մասը անտիպ է, ձեռագիր օրինակները խիստ հազվագյուտ, հետեւարար Ռուսամ-խանի վկայակուլումները շատ դեպքերում մեզ համար սկզբնաղբյուրի արժեք ունեն:

«Իշարաթ-ուլ-մազահիրի» առանձին գլուխները շարադրելիս Ռուսամ-խանը ձեռքի տակ է ունեցել պարսկական պատմագրության հարուստ գանձարանը: Բազմաթիվ են բառացի, կամ ինչպես Հեղինակն է ասում «առանց տառից շնդվելու» (بی تحریر یق حروف) մեջբերումները Միքայոնդի «Ռուզզաթ-ուսաֆայից», Խանղամիրի «Հարիր-ուս-սիարից», Կաղի Ահմադ Ղաֆֆարիի «Թարիխ-ե Զհանարայից», Խոքանզար Մումչու «Թարիխ-ե Ալամարային Արբասից», Արու-Արդուլա Բեյզավիի «Նիզամ-ալ-Թավարիսից», Արու-Սահիդ Բեյզավիի «Զամե-ուլ-Թավարիսից» և Արու-Հանիֆե Դինվարիի «Թարիխ-ե Անսար-ե Արբադ վա Ազամ», Ամին Ահմադ Ռազիի «Թարիխ-ե Հաֆթ իկլիմ», Շարաֆ խան Բիթլիսիի «Շարաֆնամե», Մուհամմադ իրն-նասրուլլայի «Թարիխ-ե Ալփի», ինչպես նաև «Թարիխ-ե Սալահ», և թուրք պատմիչ Քյաթիր Զելեբիի «Թարիխ-ե Զհաննումա» և այլ պատմագրական ու ժամանակագրական գործերից:

Ռուսամ-խանը ավելի մեծ տեղ է տալիս և XVII—XVIII դարերի պատմության վերաբերյալ արժեքավոր տվյալներ է մեջ բերում Մահմուդ-խան իրն-Մուհամմադ-խան Դունքուլիի «Թարիխ-ե անսար-ե սալաթին-ե աքրադ» և Արդ-ալ-Մազզակի «Մուասիր-ե Մուլթանիյե» աշխատություններից:

Բազմաթիվ պատմագրական երկերից բացի, Ռուսամ խանը իր աշխատության համար նյութեր է որոնել նաև գեղարվեստական գրականության էջերում: Նրա գրքում հաճախ են վկայակուլած Ֆերդովսու, Սաադիի, Զալալ-է-դղին Ռումիի, Կաթրան Թաբրիզիի, Շեյխ Աթթարի, Բաբա Թահերի, Խաքանիի և պարսից գասական գրականության այլ ներկայացուցիչների արձակ և շափածութեղծորդությունները:

Իր աշխատության այն հատվածում, որ վերաբերում է XVIII դարի վերջերին և XIX դարի առաջին կեսին, Ռուսամ խանը արգեն հանդիս է գալիս որպես ժամանակակից և ականատես պատմիչ: Պատմության այս մասում մեծ տեղ է հատկացված Ահմադ-խան Դունքուլիին և նրա օրոք տեղի ունեցած քաղաքական անցուղարձերի նկարագրությանը: Արձանագրված են այնպիսի մանրամասնություններ, որոնք նոր լույս կարող են սփռել նախադաշտարյան իրանի և հատկապես Զենդ Քյաթիմ խանի ժամանակ Ատրպատականում ու Անդրկովկասում ստեղծված խառը վիճակի պատմության վրա: Բավական մութ և անորոշ բացատրություն է տրված Ահմադ-խանի կյանքի նկատմամբ կազմակերպված գավադրությանը:

Հիշատակված են նաև Ատրպատականի ու Անդրկովկասի ավելի քան 17 խաների անուններ, որոնք ենթարկվում էին Ահմադ-խանին և արշավանքների ժամանակ զինված զոկատներ էին տրամադրում նրան:



«Իշարաթ-ուլ-մազահիրի» առաջին էջը (ձև. 622, էջ 1r)

Ուշագրության արժանի է, որ Ահմադ-խանը շարունակ կապ է պահպանել Հյուսիսային Միջազգետքի, Հատկապես Սանչարի և Տերզի շրջաններում բնակվող Կուրմանջի բրդերի հետ: Մեծ աղղեցության տեր այս անվանի իշխանի սերտ կապերը բուն Քուրդիստանում բնակվող իր ցեղակիցների հետ չի կարելի դիմել որպես քաղաքական բովանդակությունից բոլորովին զորկ մի երևոյթ:

Խուստամ-խանը ընդարձակ է չեր է նվիրում Հատկապես Ահմադ-խանի այն որդիներին, որոնք 1805 թվականից հետո անցան Անդրկովկաս և ծառայության մեջ մտան ուստական բանակում: Դրանցից առաջինը Զահվարկովի-խան Գունրուկին էր, որ ուստական իշխանությունից ստացավ Շաքի խանությունը: 1814 թվականին նրան հաջորդեց եղբայրը՝ Քյալբ-Ալի խանը, որը 1828 թվականին ուստական զորքերի կողմից Խորի գրավումից հետո կարև ժամանակով նշանակվեց իր հայրենի երկրի կառավարիչ: Խոկ երբ ուստական բանակը մտավ Երզրում, նա մասնակցում էր Թուրքերի ղեմ մղվող կողմներին և նշանակվել էր Երզրումի նահանգապետ:

Զահվարկովի խանի և Քյալբ-Ալի խանի մասին խոսելիս, Խուստամ խանը հիշատակում է նաև այլ գումրուկիների անուններ, որոնք եղել են զինվորական ծառայության մեջ Խուստամտանում և մասնակցել եղբողական մայրցամաքում ծավալված պատերազմական գործողություններին, արժանանալով կառավարական բարձր պարգևների: Նրանցից ոմանը, ինչպես օրինակ՝ Մուհամմադ-թաղի խանը ուստական բանակում հասել է մինչև գեներալության աստիճանի: Խոկ նրա որդին՝ Շիր-Ալին 1850 թվականին որպես սպա ծառայելիս է եղել Պետրոգրադի կայազորում և պարգևատրվել է Վարշավայի համար մղվող մարտերում ցուցաբերած խիվախության համար:

Ուստի քրդական հարաբերությունների պատմության ուսումնասիրությամբ գրաղվող մասնագետը այս և նման շատ ուրիշ ուշադրության արժանի տվյալներ կարող է գտնել «Իշարաթ-ու-մազահիրի» էջերում:

\* \* \*

Մենք փորձեցինք համառոտ կերպով բնութագրել և մասնագետների ուշադրությանը ներկայացնել Մատենադարանի արարատառ ֆոնդի № 622 ձեռագիրը, կանգ առնելով Հատկապես ձեռագրի ազբյուրագիտական արժանիքների վրա և ցույց տալով նրա նշանակությունը բուրդ ժողովրդի պատմության ուսումնասիրման համար: Ներկա հոդվածի նպատակներից դուրս է սպառել գրչագրի ուսումնասիրության ընթացքում բարձրացող քաղմաթիվ տերստարանական և պատմա-բանասիրական բնույթի հարցերը:

Վերը կատարված մեր նախնական ուսումնասիրությունների արդյունքները սակայն բավարար են արձանագրելու, որ խնդրո առարկա ձեռագիր մատյանը պարունակում է երեք բնագիր, որոնցից մեկը մասնագետներին իր վերնագրով միայն ծանոթ և չափազանց հազվագյուտ Արդ-ալ-Ռազզակ Դունրուկի «Թարիֆի-ե Դամարիլե» 1850 թ. մի անավարտ ընդօրինակությունն է, խոկ մյուս երկուսը՝ բոլորովին նոր հեղինակի՝ Ահմադ խան Դունրուկի որդի Խուստամ-խանի գրչին պատկանող պատմա-դավանաբանական աշխատություններն են, որոնք ցարդ հայտնի չեն եղել իրանագետ-քրդագետներին:

Քուրդ ժողովրդի պատմության այս կարեսը սկզբնադրյունները քրդագիտական լայն շրջաններին մատչելի դարձնելու համար որոշվել է 1968 թ. Մոսկվայում Հրատարակության հանձնել այս ունիկալ ձեռագրի լուսանկարա-

յին պատճենը (Փոտո-Փաքսիմիլե), օժտելով այն պատմա-բանասիրական առաջարանով, ծանոթագրություններով և անհրաժեշտ անվանացանկերով:

Ա. Դ. ՊԱՊԱՅԱՆ

## НОВЫЙ ИСТОЧНИК ПО ИСТОРИИ КУРДСКОГО НАРОДА

## Р е з ю м е

Рукопись № 622 арабского фонда Матенадарана содержит три уникальных текста. Два из них: «Ишарат-ул-мазахиб» (стр. 16—173б) и «Ишарат-ул-адян» (стр. 178а—220б), принадлежащие перу автора первой половины XIX века Рустам-хана, сына Ахмед-хана Дунбули, до сих были неизвестны востоковедам.

Оба эти сочинения Рустам-хан Дунбули посвятил изучению исторического прошлого курдов дунбули и их верований. Первый из них представляет собой обширный труд, где автор, рассказав вкратце историю царей Ирана доисламского периода, переходит к более подробному изложению истории Бармакидов, удостоившихся высокого положения при халифах Аббасидах, и высказывает мнение, что курды Дунбули-курманджи происходят от Бармакидов. Он ссылается на многих персоязычных авторов, некоторые из которых неизвестны нам. Особую ценность представляют страницы, посвященные истории конца XVIII и начала XIX веков, которые автор описал как очевидец и участник важных политических событий.

Второй текст ценен обстоятельным исследованием древнеиранских верований и их пережитков у курдов «яздани».

Последние страницы рукописи содержат неоконченную копию сочинения одного из последних представителей средневековой персоязычной историографии Абд-ал-Раззак Ибн-Наджуфкули-хана Дунбули «Тарих-е-Данабиле»—сочинения, известного востоковедению лишь по заглавию. Копия сделана в 1850 году и скреплена печатью Рустам-хана Дунбули.

В нашем тексте история Дунбули начинается с XVII века с краткого описания того периода, когда в начале XVII века курды дунбули, один из крупных племенных союзов курдов Курманджи, примкнули к мусульманской секте шиа, и доводится до времен Надир-Шаха.

Рукопись датирована 1266 годом хиджры (1850 г.), переписана в Тегеране, в медресе Мирза-Салеха, учеником того же медресе Али Акбаром Тафреши. Текст многократно скреплен печатью автора и отдан в вакф его наследникам мужского пола. В тексте имеются поправки, добавления и комментарии, сделанные рукой автора, что придает рукописи ценность автографа.

Ввиду уникальности рукописи, готовится к печати фото-факсимиле текстов Абд-ал-Раззака и Рустам-хана Дунбули, оснащенное филологическим предисловием, индексами и вспомогательным научным аппаратом.

H. D. PAPAZIAN

## UNE NOUVELLE SOURCE DE L'HISTOIRE DU PEUPLE KURDE

Le manuscrit no. 622 du fonds arabe du Maténadaran d'Erévan renferme trois textes uniques encore inconnus des orientalistes.

Deux de ces textes sur lesquels s'ouvre le manuscrit appartiennent à la plume d'un seul et même auteur de la première du XIX<sup>e</sup> siècle Roustam-khan fils de Ahmad-khan Dounbouli et concernent l'histoire et les croyances des kurdes de Dounboul. Le premier est une longue étude historique intitulée „Icharat-oul-mazahib“ (ff. 1 v — 173 v) qui, introduite par une histoire abrégée des rois de la période préislamique d'Iran, rapporte toute l'attention sur les hauts dignitaires barmakides de la période des califes abbassides, desquels seraient issus les Kurdes kourmandjis de Dounboul. L'ouvrage puise dans de nombreuses sources perses du moyen âge, dont quelques-unes ne nous sont pas parvenues. Les pages retracant l'histoire de la fin du XVIII<sup>e</sup> siècle et de la première moitié du XIX<sup>e</sup> siècle sont d'authentiques témoignages de l'auteur qui prit part à d'importants évènements politiques. Le second texte „Icharat-oul-adian“ (ff. 178 r — 220 v) présente un intérêt incontestable quant à l'étude des anciennes croyances iraniennes et des vestiges conservés chez les Kurdes „yazdanis“.

Les dernières pages du manuscrit reproduisent l'ouvrage d'un des ultimes représentants de l'historiographie médiévale perse Abd-al-Razzaq ibn-Nadjaskoulli-khan Dounbouli, intitulé „Tarikh-e-Danbile“ et qui ne figure dans les Etudes Orientales que par le titre. Cette copie, en belle écriture naskh et revêtue du sceau de Roustanm Dounbouli, date de 1850.

C'est par une brève relation de la conversion au début du XVII<sup>e</sup> siècle de l'une des grandes tribus des Kurdes kourmandjis à la foi shiite des Dounbouis musulmans que le manuscrit du Maténadaran commence l'histoire des Dounbouis qui s'y arrête sous le règne de Nadir-Chah.

Ce manuscrit qui date de l'an 1266 de l'Hégire (1850) a été exécuté au Madrasé de mirza Saleh à Téhéran par Ali-Akbar Tafréchi, élève de cet établissement. L'auteur y a apposé son sceau en plusieurs endroits et l'a consacré vakouf à ses héritiers mâles. Des corrections, notes et additions, personnelles de l'auteur complètent le texte, qui prend ainsi valeur d'autographe.

La publication prochaine, avec introduction historico-philologique, index et notes, des fac-similés des trois textes de ce rare manuscrit viendra enrichir les études relatives à l'histoire et aux croyances du peuple kurde.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈԼ ՄԻՒԽԱՏՐԵԲԻ ԱՊՎԵՏԻ ԱԹԵՅԹԻԲ  
ՄԱԾՏՈՒԻ ԱՆՎԱՆ ՀԻՒ ԶԵԽԱԿԻԲԻ ԽԵՍՏՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱԿԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱԿԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 8

1967

ՀԱՅՈ ԽԱԶԱՏՐՅԱՆ, ԼԵՎԱՆ ԽԱԶԵՐՅԱՆ

## ՍԵՐՈՎԲԵ ԿԱՐՆԵՑՈՒ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ\*

1965 թվականին Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային նյութերի ուսումնասիրության ժամանակ մեր ուշագրությունը գրավեց անկազմ և անառուն մի ձեռագիր. այն գրված է սովորական կապույտ թղթի վրա, սև մեխանով, ֆրանսերեն լեզվով, թղթի չափերն են՝ 34×22,5 սմ, լշերը հեղինակի կողմից համարակալված են՝ 1-ից 40. ձեռագիրը պահպատ է Մատենադարանի արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի վավերագրերի մեջ։ Դատելով ձեռագրում նկարագրվող զեպքերից և հեղինակի կողմից նյութի շարադրման մեջ հաճախակի կրկնվող «1812 թվական»-ից, դժվար չէ հետեւնել, որ գրության ժամանակը հենց 1812 թվականն է։ Եթե նկատի շունենանք ձեռագրի տիտղոսաթերթի և հեղինակի անվան անհայտացումը, ապա պետք է ասել, որ այն պահպանվել ու մեզ է հասել բավականին լավ վիճակում։ Դա ուղեգրություն է՝ Բաղդադից էջմիածին անցած մի հայ ճանապարհորդի կողմից գրված։ Երբ է անհայտացել այդ ձեռագրի տիտղոսաթերթը, որի վրա ամենայն հավանականությամբ գրված է եղել Ուղեգրության հեղինակի անունն ու մականունը, — անհայտ է։ Այդ ձեռագրի մասին աղբյուրներում որևէ տեղեկություն չկամաց 1958 թվականին ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը իր՝ «Присоединение Закавказья к России и Международные отношения в начале XIX столетия» ուսումնասիրության մեջ, իրեն հետաքրքրող մի հարցի՝ անգլո-իրանական հարաբերությունների պատմության լուսարանման առնչությամբ, հղում է արել այս ձեռագրին, համարելով այն Բաղդադում մահացած Հակոբ արքեպիսկոպոսի մի ուղեկցի հեղինակությունը<sup>2</sup>։ Իսկ տարիներ առաջ Մատենադարանի արխիվային բաժնի ֆոնդերի փաստաթղթերը նկարագրելիս այն ուղղակի վերագրվել է XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին Հնդկաստանի հայկական գաղթօջախներում մի քանի տարի էջմիածինի վանքի նվիրակի հանգամանքով գործած Հակոբ կրոնավորին։ Հենց այդ ժամանակներից էլ այն գրանցվել է Մատենադարանի ցուցակներում «Հնդկաստանի Հակոբ վարդապետի ճամփորդական օրագիրը» վերնագրով։

Սույն ձեռագիր աշխատության հեղինակի հարցը վերջնականացնելու պարզելու համար, սակայն, անհրաժեշտություն էր զգացվում բանասիրական ման-

\* Տպագրելով սույն հաղորդումը Անդրբեկ Կարնեցու ձեռագիրը (ինքնադիրը՝ ֆրանսերեն լեզվով) աշխատության մասին, մեր պատրաստած բնագրի հայերեն թարգմանության հրատարակումը թողնում ենք մի այլ առիթի։

<sup>1</sup>Տե՛ս Մաշտոցի մատենադարան, արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթապահնակ 23, գրադարձ 171։

<sup>2</sup>Ա. Ռ. Իօաննիսյան, Ակադ. տրվ. էջ 337։

բակրկիտ հետախուզումներ կատարել տվյալ ժամանակաշրջանի արիստային նյութերում, ամենից առաջ ճշգրտել, թե Հակոբ վարդապետը (հետագայում արքեպիսկոպոս) ե՞րբ է եղել Հնդկաստանում և ինչպիսի՞ն է եղել նրա ձակատագիրը:

Հակոբ վարդապետի իսկ վկայությամբ, նա որպես էջմիածնի նվիրակ, Հնդկաստան է գնացել Գուկաս կաթողիկոսի հրամանով՝ XVIII դարի վերջերին, իր հետ պաշտոնակից ունենալով Վրթանես վարդապետ Աշտարակեցուն։ Մաշտոցյան Մատենադարանում 3322 համարի տակ պահպան Հակոբ վարդապետի «Գիրք քարոզից» ինքնագիր ձեռագրի<sup>3</sup> առաջարանում այդ մասին կարդում ենք. «Յաւուրս գերիշխանական պետութեան տեսան Գուկասու սրբազն կաթողիկոսին ամենայն հայոց, որոյ հրամանաւն գուրով ի Հնդիկս՝ վասն գործոյ նոփրակութեան սրբոյ Աթոռոյն։

Յամի փրկութեան մերոյ 1799 և թուականիս հայոց ԾՄՒՅ ի բազմամարդաշխարհն Հնդկաց»<sup>4</sup>:

Մեզ հասած վավերագրերից իմանում ենք, որ Հայրենիքից հեռու, օտար ափերում էջմիածնի նվիրակը այնքան էլ հանդիսաւ կյանք չի ունեցել։ Այսպես, 1805 թվականին Հնդկաստանի Բոմբեյ քաղաքում նրա հորինած «Երգարան»-ի ընդարձակ առաջարանում, Հնդինակը անդրադառնալով այն հանգամանքերին, որոնք հարկադրել են նրան զրադիւ երգեր գրելով, ասում է. «Գոլով մաշեցեալ բազում ամս անհանգիստ տառապանօք և աշխատութեամբ ի պանդուստ և հեռարնակ աշխարհի ի կողմանս Հնդկաց ի ծովու և ի ցամաքի, ոչ անդէպ համարեցաք հանդիսաւ տալ մերս մտաց և թշվառակիր անձին ի պէս պէս արտմութեանց և կսկսալի անակնկալ դիպւածոց որք անցին զմեօք։ Ռւստի հարկ նղկ մեղ յօրինել զբանի մը երգս գուարձալիս և ուրախարարս...»<sup>5</sup>։ Ի գեա՞ նը-կատենք, որ «Երգարանում» զետեղված 17 տաղերից մեծ մասում արտահայտված է Հնդինակի հայրենիքի հանդեպ ունեցած սերն ու կարուք։ Այդպիսիք են, օրինակ, նրա «Տաղ երգեալ ի գէմս սիրելոյ բարեկամի հեռացելոյ յերկիր անձանօթ», «Ի դէմս հեռաւոր բարեկամի», «Տաղ երգեալ ի գէմս վարդին և պիկապիլին» և մյուս երգերը<sup>6</sup>։ Առաջարանի վերջում Հնդինակը խնդրում է ընթերցողին հիշել իրեն «իբր կոչեցեալ նուիրակ կողմանց Հնդկաստանի զշարահիւսօղն երգոց զՅակորոս... ընդ իս հաւասար վշտակից և ցաւակից, բազմաշ-խատ... զՎրթանէս հանձարիմաստ վարդապետն Աշտարակեցի»<sup>7</sup>։

Հնդկաստանի հայկական գաղթօջախում էջմիածնի օգտին հանգամակած նյութական մեծ հարստությամբ Հակոբ նվիրակը, Վրթանես վարդապետի հետ, անապարհվում է զեափի էջմիածնին։ Հասնելով Բաղդադ, տեղեկություն է ստանում, որ էջմիածնում տիրում է խառնաշփոթություն և կաթողիկոսական զահին

<sup>3</sup> Այս ձեռագիրը ամփոփում է իր մեջ Հակոբ վարդապետի երկու ինքնուրուց գործերը։ Գրանցից առաջինը կրում է «Գիրք քարոզից» խորագիրը (թթ. 1—268), ուր տեղ են գտել Հնդինակի 50 քարոզիներ՝ «Յօրինեալ ի Յակորայ նուաստ վարդապետ...», իսկ երկրորդը՝ «Երգարան» է, որը ներկայացնում է զեղարքեատական որոշ հետաքրքրականություն և արժանի է ուշադրության (թթ. 269—281)։ Այդ երգարանը հորինված է նույն Հակոբի կողմից՝ «1805 թուին ի Բումբայի ի Հնդիկս։ Զեռագիրն ունի նաև 12 առջից բաղկացած չափած հիշատակարան, զրված՝ Վրթանես վարդապետի կողմից, որպես Հակոբ արքեպիսկոպոսի տապանագիր։

<sup>4</sup> Զեռ. Ա. 3322, թ. 1ա։

<sup>5</sup> Նույն տեղում, թթ. 269։

<sup>6</sup> Նույն տեղում, թթ. 269—281։

<sup>7</sup> Նույն տեղում, թթ. 270։

տիրելու համար պայքար է մղվում Դանիելի և Գավթի միջև։ Այդ պայքարը, որը մեր պատմության մեջ հայտնի է Գավթի-Դանիելյան անունով, քաղաքական սուրբ բնույթ էր ստացել՝ ընդգրկելով Հայաստանն ու նրա սահմաններից դուրս գտնվող հայ գաղթօջախները։ Մեր նպատակից գուրս է, անշուշտ, հանդամանորեն քննության առնել այդ իրադարձությունների հետ կապված հարցերը, սակայն նշենք, որ դա հեռու էր գուտ կրոնական բնույթի միջագեալ լինելուց։

Հայաստանը զարձել էր հակամարտ պետությունների քաղաքականության ասպարեզ, «ուր թեպետ որպես գործող անձինք երևում էին հայ գործիչները, սակայն ի ներքուատ ղեկավարում էին բոլորովին այլ հաշիվները»<sup>8</sup>։ Իրերի իսկական դրությունը պարզելու նպատակով նվիրակ Հակոբը երկու անգամ Վրթանես վարդապետի առաջամարտի դեպի երկիր է ուղարկում, նրա միջոցով էլ ուղղակի կապ հաստատում Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ (ապագա կաթողիկոս) եփրեմի հետ<sup>9</sup> և վերջինիս խորհրդով առժամանակ հետաձգում է իր մեկնումը շեպի էջմիածնի<sup>10</sup>։ Ապարդյուն էն անցնում Հակոբ արքեպիսկոպոսին, հավաքած հարստության հետ, էջմիածնին բներելու համար Դավթի կաթողիկոսի և պարսկական թագածառանգ Արքաս-Միթրայի գործադրած ջանքերը։ Նա շարունակում է մնալ Բաղդադում։ Հննց այստեղ էլ 1809 թվականի Հոկտեմբերի 21-ին, Հակոբ արքեպիսկոպոսը հանկարծամաշ է լինում։ Այս մասին նույն թվի Հոկտեմբերի 26-ին, նրա վշտակից և ուղեկից Վրթանես վարդապետի հատուկ նամակով Հանգամանորեն լուր է հաղորդում էջմիածնի Հոգեոր խորհրդին<sup>11</sup>։ Այդ է հաստատում նաև Հակոբ արքեպիսկոպոսի շիրմի տապանագիրը<sup>12</sup>։

<sup>8</sup> Գ. Ա. Ա. Խ. ան լ. ան ց. «Փիվան Հայոց պատմության», Թիֆլիս, 1893, հ. Ա. էջ 2։

<sup>9</sup> Հակոբ նվիրակը Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ եփրեմ արքեպիսկոպոսին իր վիշտի մասին նամակներ է գրել զես տարիներ առաջ։ Այսպես, 1808 թվականի ապրիլի 15-ին Բաղդադից, Վրթանես վարդապետի միջոցով եփրեմին Հայած նամակում այդ մասին կարգում ենք. «Յաւուզ քայլ յանցեալ թիւ 1804 և ի նույնեմբերի 29 երկու միօրինակ թուզթու և մը մասուցաւ ի սպաս սրբութեան ձերու, մինն ձեռամբ պարուն Յովհան Աղարարովին և միւսն ի վերայ Պալսու Սրբամբա Չելեպոյն, յուսած ըստ ժամանակին ընկաւեալ իցիք և իմացեալ զդրեալս մեր ի մմին. զան որոյ աստ չերկենեմ դնոյնս» (Մաշտոցյան մատենադարան, Կաթողիկոսական զիվան, թղթ. 19, վագ. Անբագրե 34ա, 53, 59 և այլն)։

<sup>10</sup> Մաշտոցյան մատենադարան, արխիվային բաժին, Կաթողիկաստական զիվան, թղթ. 19, վագ. Անբագրե 34ա, 53, 59 և այլն։

<sup>11</sup> Նույն տեղում, թղթապահակ 21, վագ. 105ա և 105բ։

<sup>12</sup> Այն գտնվում է Մատենադարանում պահպան Հ 3322 ձեռագրի հիշատակարանում, էջ 282ա.

«Իմ Յակոբայ Արքի դի-	տիս,
Հնդկաց երկիր նուիրա	կիս,
ի յաւարատի գործոյն որ	իս,
Զենն Տեառն միսեցաւ	իս,
Մինչ սորր զահիս և ծն-	իս,
եթող կարօտ ողորմե-	իս,
ի ննչամնէս մինչ վեց	ամիս,
Մնացի ի դաշտին Բարիլո-	իս,
Ապա շնորհի իմ որդե-	կիս,
Տէր Վրթանէս վարդա(պէ)	տիս,
Հնդափոխնալ եղայ շիր-	միս,
Հանգեայ փեսայս ի ծոց Հար սիոն-	—

<sup>13</sup> Այն համար շնորհ 21, ի Բարիլուն։

Այս բոլորից հետեւում է, որ 1812 թվականին զրված Ուղեգրության հեղինակը չէր կարող լինել Յ տարի առաջ մահացած Հակոբ արքեպիսկոպոսը: Ավելին, եղակի դեմքով շարադրված Ուղեգրության առաջարանում էլ հեղինակը, Հակոբի մասին խոսում է որպես Երրորդ մի անձնավորության, այսպիս: «Հակոբը, ոգերդված Դանիելի վերահաստատումից, արամադրվում է գնալ էջմիածին: Սակայն վրա է հասնում մահի և կանխում իր մտադրությունը: Հետեւապես ևս մնացի մենակ՝ Հակոբ արքեպիսկոպոսի գույքերի հետ միասին, անգլիացիների հովանավորության տակ»:

Կարելի էր, ի՞նչարկե, ենթադրել, թե այդ Ուղեգրության հավանական հեղինակը նվիրակ Հակոբ արքեպիսկոպոսի հետ Հնդկաստան ճանապարհորդած, նրա հետ «Հաւասար վշտակից և ցաւակից, բազմաշխատ...» Վրթանես վարդապետ Աշտարակեցին է: Սակայն մի կողմ թողնենք ենթագրությունները և զիմենք փաստերին:

Ինչպես դժվար չէ նկատել, Ուղեգրության հեղինակը եղել է գործին տեղյակ անձնավորություն, որը Հակոբ արքեպիսկոպոսի մահից հետո Բաղդադում նրա թողած հարստությունը էջմիածին հասցնելու հարցի շուրջը աշխույժ նամակագրություն է ունեցել Հայոց նորընտիր Եփրեմ կաթողիկոսի հետ: Նա ճանաչված ու վստահված է եղել նաև Բաղդադի անգլիական դեսպանատան կողմից:

Այսպիս, իր Ուղեգրության առաջարանում հեղինակը ասում է, որ երբ Եփրեմը էջմիածին հասավ՝ «Ինձ գրեց, որ նրան թերեմ Հակոբ արքեպիսկոպոսի գույքերը...»: Այսուհետեւ, ավելի որոշակի դարձնելով իր ասելիքը, հեղինակը մատնացուց է անում նաև գետի էջմիածին կատարած ճանապարհորդության հիշտ թվականը: 1811 թվականի օգոստոսի 22-ին Եփրեմ կաթողիկոսի «Ինձ ուղարկած կարգադրությունը, — գրում է նա, — ես կարողացա իրագործել միայն Հայորդ գարնանը»: Ավելին, նա մանրամասնություններ է հաղորդում նաև այն մասին, որ իր «անվտանգության համար» ինքը Բաղդադից գետի էջմիածին է ուղերվել «որպես Հնդկական ընկերության... անգլիացի հանձնակատար..., օժակած լինելով անգլիական անձնագրով»:

Ուղեգրության առաջարանի այս ուշագրավ տեղեկությունները մեզ համար պրատունների նոր ճանապարհ բաց արին: Այս կապակցությամբ որոնումներ կատարեցինք Մատենադարանի ֆոնդերում: Դրանցում արժեքավոր տեղեկություններ գտանք մեզ հետաքրքրող Հարցի վերաբերյալ, որոնք ոչ միայն Հնարավորություն են տալիս մեկնաբանությունը Ուղեգրության հեղինակի անձնավորությունը, այլև ստուգելու փաստերի ճշմարտացիությունը, կատարելու հրատարակված պատմագիտական աշխատություններում տեղ գտած որոշ փաստերի ճշգրտումներ:

Արխիվային հավաստի փաստաթղթերը վկայում են, որ 1811 թվականի օգոստոսի 22-ին Եփրեմ կաթողիկոսի Բաղդադ ուղարկած կարգադրությունը ուղղված է եղել «արժանաւոր օրհնութեանց զգօնամիտ որդույ սիրեցելոյ պատուիլի Սերոբէ վարդապետի Կարնեցոյ»-ն: <sup>13</sup>

Որ իրոք, Եփրեմ կաթողիկոսը Սերովը Կարնեցուն հրավիրում է էջմիածին, հաստատվում է նաև Սերովի իսկ 1812 թվականի հունվարի 22-ին Բաղդադից Հնդկաստան՝ Հարություն Սահակյան-Աղանուրյանց նոր Զուղայեցուն

<sup>13</sup> Մատենադարան, Արխիվային բաժին, ֆոնդ Ա, Երիցյանի, թղթ. 159, վագ. 59:

հղած նամակից: Հեղինակը հաղորդում է, որ Եփրեմ կաթողիկոսը իրեն «կոնդակ գրեաց և Հայրական սիրով հրաւիրեալ խուճապեաց ելանել, զիմել անյապաղի ի սուրբ Աթոռն... զորոյ հրամանն սիրով ընդգրկեալ յետ միոյ հանդիբձեալ եմ ընդ բարձրապատի եղբօր իմում Վրթանէս վարդապետին զնալ ի սուրբ էջմիածին»<sup>14</sup>:

Բաղդադում նվիրակ Հակոբ արքեպիսկոպոսի թողած հարստությունները էջմիածին, Սերովի Կարնեցու միջոցով, տեղափոխելու փաստը Հավասարի լինելու վերաբերյալ անառարկելի վկայություն է 1812 թ. մայիսին էջմիածին՝ ներսիս արքեպիսկոպոսին Բայազետից աղա Հակոբ Արծրունու հղած նամակը: Նամակի հեղինակը հաղորդում է, որ Սերովի և Վրթանէս վարդապետները իրենց քերած ապրանքներով Բայազետից ճանապարհ են ընկել զետի էջմիածին. «Սուրբ աթոռի ընշցցն՝ կարդում ենք այնտեղ, — դավայօվ Զ (6) պես Բ(2) թէմպելիք ձիյօվ ճանապարհ ձրիք...»<sup>15</sup>

Այս տեսակեաից ուշագրավ է նաև Եփրեմ կաթողիկոսի 1812 թվականի սեպտեմբերին Բաղդադի և Բասրայի անգլիական դիվանագիտական ներկայացուցիչ Կլավդիոս Զեմս Ռիշին գրած նամակը: Էջմիածնի վանքի՝ 1812—1820 թվականների գրագրությունների մատյանում պահպանված այդ նամակի համառու շարագրանքում կարդում ենք. «Չնորհակալութիւն յաղագս զանապահարարաբութեանց առ մեզ..., այլև շնորհակալութիւն վասն Սերովի վարդապետին, զոր մեք խնդրեցամ, և նա առաքեաց»<sup>16</sup>:

Մի քանի ամիս հետո՝ 1813 թվականի հունվարի 26-ին, Եփրեմ կաթողիկոսը մի այլ գրությամբ Հնդկաստանի հայ գաղթօջախի ազգային գործիներին և էջմիածնի նոր նվիրակ Փիլիպոս արքեպիսկոպոսին ծանուցել է Հետեւալլը. «Ոյ Հնդկաստանու նուիրակ Հանգուցեալ Յակոբ արքեպիսկոպոսի հոգենոր որդի Վրթանէս վարդապետն... եկն եհաս ողջամբ և խաղաղութեամբ աստ ի սուրբ աթոռու հանդերձ ընշցիք մնացելով, ընդ որում էր և զիտնական վարդապետն Սերովի անուն, զորմէ գուցէ լուեալ իցես...»<sup>17</sup>:

Որ Ուղեգրության հեղինակը Սերովի Կարնեցին է, անառարկելի է դառնում նաև Հնագրագիտության ընձեռած տվյալներով: Այդ ուղղությամբ կատարած աշխատանքները միանգամայն դրական արգունք տվեցին. ներկա ձեռնագիրը համեմատեցինք Մատենադարանում պահպան՝ ոռուական ցար Նիկոլայ առաջինին, գեներալ Պասկելիշին, Լազարյան եղբայրներին և այլոց տարբեր ժամանակներում ֆրանսերեն լեզվով Սերովի Կարնեցու գրած և ստորագրած փաստաթղթերի հետ. պարզվեց անհրկարայորեն, որ դրանք գրված են միննույն անձնավորության կողմից<sup>18</sup>:

Նկատենք, որ զեռ անցյալ գարի վերջերին վաստակավոր հայագետ Ալեքսանդր Երիցյանը բացատրության մեջ նույնպես հավաս-

<sup>14</sup> Կաթողիկոսական դիվան, թղթապետական թղթ. 19, վագ. 8:

<sup>15</sup> Էջմիածնի օգտին Հնդկաստանի հայ գաղթօջախիներում Հակոբ Նվիրակ Հավաստությունների ամրողական ցուցակը տե՛ս Մատենադարանի արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանում, թղթ. 31, վագ. 227:

<sup>16</sup> Կաթողիկոսական դիվան, թղթ. 23, վագ. 59, 68:

<sup>17</sup> Նույն տեղում, թղթ. 44, վագ. 356, էջ 45:

<sup>18</sup> Նույն տեղում, Ա. Երիցյանի ֆոնդ, թղթ. 159, վագ. 67:

<sup>19</sup> Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վագ. 258թ, Լազարյանների արխիվ, թղթ. 104, գործ 8, վագ. 149 և այլն:

տում է, որ Հնդկաստանից Բաղդադ բերված էջմիածնի հարստությունը տեղ է հասցեի ոչ այլ ոք, քան Հենց ինքը Սերովը Կարնեցին:

Սակայն հարկ է նշել, որ «Կովկասանայք»-ում Բաղդադից էջմիածնի տեղափոխված հարստության առնչությամբ թույլ է տրվել փաստական երկու անձաւություն. առաջին՝ շփոթված է Հնդկաստանի նվիրակ Հակոբ արքեպիսկոպոսը Վրթանես վարդապետի հետ: Այսպես, այնտեղ կարդում ենք. «...Հընդկաստան նուիրակ ուղարկած Վրթանէս եպիսկոպոսը մեծ գանձով վերադառնալիս է եղել էջմիածնի, բայց Բաղդադ հասնելով վախճանվել է...»<sup>20</sup> (ընդումը մերն է): Երկրորդ՝ թյուրիմացարար հայտարարվում է, որ այդ հարստության տեղափոխումը Սերովը Կարնեցու միջոցով, որպես թե, տեղի է ունեցել 1811 թվականին<sup>21</sup>: Մինչեռ, իրականում, ինչպես երևում է նորահայտ արևիվային տվյալներից ու ներկա Ուղեգրությունից, այդ փաստը կատարվել է 1812 թվականի գարնանը: Նշված սխալները հետագայում նույնությամբ կրկնվել են նաև 1931 թվականին «Հանդէս ամսօրեալ»-ում տպագրված Ռ. Սբրահմյանի՝ «Կարնեցի Սերովը վարդապետի նամակները Պրիմեցի Յովհաննէս վարդապետին» հոդվածաշարում<sup>22</sup>:

Այսպիսով, վերը բերված փաստերը անհերքելիորեն հաստատում են, որ Հակոբ արքեպիսկոպոսի մահից հետո Բաղդադում թողնված հարստությունները էջմիածնին է տեղափոխել Սերովը Կարնեցին, ուղեկից ունենալով Վրթանես վարդապետ Աշտարակեցուն, ուստի և աներկրա է դառնում, որ Սերովը Կարնեցու գրչին է պատկանում Ուղեգրությունը:

\* \* \*

Սերովը Կարնեցին<sup>23</sup> բոլորովին էլ անծանոթ անձնավորություն չէ մեր մշակութի պատմության մեջ: Դեռ անցյալ դարի առաջին տասնամյակում հեռանալով Մխիթարյան միարանությունից, նա դառնում է լուսավորչագալան, գալիս էջմիածնին և ավելի քան երեսուն տարի՝ մինչև իր կյանքի վերջը, ակտիվ մասնակցություն է ունենում ժամանակի հայ քաղաքական-նկեղեցական ու մշակութային կյանքին՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, մասնավորապես Մոսկվայի, Պետրոգրադի, Աստրախանի հայկական գաղթօջախներում: Այդ են հաստատում ժամանակակիցների թողած նամակներում, պաշտոնական թղթերում, Հայագիտական աշխատություններում ու Հայաստան այցելած օտար ճանապարհորդների ուղեգրություններում պահպանված ուշագրավ տեղեկությունները:

Սակայն նշենք, որ Սերովը Կարնեցու մասին մեզ հասած տեղեկությունները խիստ հակասական են ու իրարամերժ: Նկատենք նաև, որ հետագա բանասերներից շատերը նույնպես Սերովը Կարնեցուն գնահատելիս անկողմնակալ չեն եղել: Ասկածից անհրաժեշտաբար հետեւում է, որ ժամանակն է աղը-

20 Ա. Ե. Ի. ի. յ. ա. ն. Կովկասանայք, Թիֆլիս, 1894, հ. Ա, էջ 551—552:

21 Նույն տեղում, էջ 552:

22 «Հանդէս ամսօրեալ», 1931, № 1—2, էջ 72:

23 Ակատենք, որ արխիվային փաստաթղթերում 1814—1817 թթ. Սերովը Կարնեցին ստորագրել է նաև «Ինկենեան» և «Արքատակեան» ազգանուններով, առանձին դեպքերում կցելով դրանց «Կարնեցի» մականոնը (տե՛ս Մատմագարան, Էտղարյանների արխիվ, թղթ. 104, վակերագրեր 156, 160, 161, 177, 195 և այլն):

յուրների համակողմանի ուսումնասիրությամբ վերագնահատման ենթարկել նաև Սերովը Կարնեցու անձն ու գործունեությունը: Մակայն տվյալ դեպքում դա մեր ներկա քննության սահմաններից գուրս է մնում: Միայն ասենք, որ Եվրոպայում մեծացած, Հոռոմում կրթություն ստացած, ապա կաթոլիկական դավանանքից հրաժարված Սերովը գիտնական վարդապետ Կարնեցին մի բանի տարի Բաղդադում հաջողությամբ կատարում էր անգլիական դեսպանի երեխաների դաստիարակի դերը:

Հակոբ Նվիրակի մահվանից հետո Բաղդադում անգլիական դեսպանատան հովանավորության տակ գտնվող հարստությունները էջմիածնին ապահով տեղափոխելու համար ուղղվել է մոռնում, և առաջ հենց այդ ժամանակի էլ Սերովը Կարնեցին դիմում է Եփրեմ կաթողիկոսին՝ խնդրելով իրեն ընդունել Հայաստանյաց եկեղեցու գիրկը: Այսպիսով, գտնվում է այն հարմար մարդը, որը կարող էր Հակոբ Նվիրակի կուտակած հարստությունները էջմիածնին հասցնել: Ինչպես երևում է արխիվային փաստաթղթերից և Սերովը Կարնեցու Ուղեգրության առաջարանից, այդ գործում ակտիվ դեր է կատարել Բաղդադի անգլիական դեսպանությունը: Հազիվ թե Հարկ լինի կասկածելու, որ դա թելազրված էր անգլիական դիվանագիտության շահերով: Հայտնի է, որ 1809 թվականի անգլո-իրանական նոր պայմանագրի կնքումով Պարսկաստանում անհամեմատ ուժեղացած էր անգլիական ազգեցությունը: Սակայն չնայած գրան, անգլիական դիվանագիտությունը, ինչպես խոստովանում է անգլիացի դիվանագետ գեներալ Սըր Ջոն Սակոլմը, անհանգստացած էր այն բանի համար, որ ուսումները, կարև ժամանակի ընթացքում, Կովկասի Հյուսիսից իրենց սահմանները տարածել էին մինչև Արաբսի ափերը<sup>24</sup>: Ուստի Ռուսաստանի ազգեցությունը այդ մասերում, եթե ոչ իսպատ վերացնելու, ապա զեթ թուղացնելու խնդիրը անգլիական դիվանագիտության համար առաջնահերթ նշանակություն ուներ: Դրան հասնելու նպատակով, անգլիական դիվանագետները ուղիներու էին որոնում Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի հետ կապեր ստեղծելու, հայ աշխարհիկ ու Հոգեոր վերնախավին սիրաշահելու համար: Իրենց մտադրությունների իրագործման ճանապարհին ոչ միջոցներ էին խնայում և ոչ էլ խտրություն գնում կիրառվող մեթոդների մեջ, ամեն անդամ հրապորիչ, կեղծ հավաստիացումներ տալով «Հայոց ազգը և եկեղեցին» հովանավորելու մասին:

Անգլիական (ինչպես և ֆրանսիական) դիվանագիտությունը ձիշտ զնաւելով, մի կողմից, պետականությունից զրկված հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կյանքում հայ Հոգեոր կենտրոնի խաղացած դերը, մյուս կողմից՝ օգտագործելով թագավորության սահմաններում եղած հայ գաղթօջախների սեալ Հայրավորությունները, ջանում էին իրենց ազգեցությանը ննիարկել, էջմիածնին ու նրա միջոցով փոխել հայ ժողովրդի քաղաքական կողմուրումը, խզել հայ և ոռու ժողովրդների միջև եղած դարավոր քարեկամությունը: Այս նպատակով նրանք մի շարք գործնական քայլեր կատարեցին՝ սիրաշահել փորձելով հայ աշխարհիկ ու Հոգեոր վերնախավին: Այդ կարգի ձեռնարկումների մեջ բոլորովին էլ վերջին տեղը չէին գրավում հայ առնտրական կաթոլիտյանի ներկայացուցիչներին տրված գարավոր քարեկամությունը տալու միջոցառումները: Այսպես, իրավունք էր տրվում, իրենց գերիշխանու-

24 Հ. Ե. Ի. ի. յ. ա. ն. Ուղեգրություններ, 1934, Երևան, հ. Զ, էջ 53:

թյան տակ գտնվող տերիտորիաներում եղած հայկական զաղթօջախներում, էջմիածնից եկած նվիրակների միջոցով կազմակերպել հանգանակություններ։ Ավելին, «Հոգատարություն» էր ցուցաբերվում նաև հավաքած այդ հարստությունները ապահով էջմիածնի հասցնելու մասին։ Ասվածը հաստատելու բազմաթիվ օրինակներ կան։ Սակայն բավարարվենք միայն սույն Ուղեգրության և նրա հեղինակի հետ անմիջական առնչություն ունեցող երկու բնորոշ փաստերի մատնանշումով։ Այսպես, Վրթանես վարդապետ Աշտարակեցու նամակներից իմանում ենք, որ Բաղդադի անգլիական գեսպանը 1810 թվականին նույնիսկ զբաղվել է Հակոբ արքակիսկոպոսի անցյունի տեղափոխման հարցով։ Այդ ապահով էջմիածնի ուղարկած իր նամակում Վրթանեսը գրել է. «Անդդիացոց ազգին գեսպանն ի մէջ այլ բազմապատիկ բարերարութեանց... նա առ աղինս մեր արարելոց զգերազանցն արար յայսոսիկ աւուրս. հարամանաւ բաղաքիս (Բաղդադի) բղեշխին, զինի չորից ամսոց զպարկելատակենցաղ մարմինն (Յակոբայ արքեպիսկոպոսի), զոր վասն խառնակութեանց ժամանակին այնորիկ, զայն մարմինն բարեյշխատակ սրբազնի իմոյ ի հասարակ զերեղմանս արտարոյ բաղաքին թաղեալ էաք, հոչակաւոր պատուվ ի բաղաք բերեալ՝ ի փառաւորապէս յեկեղեցին թաղելով...»<sup>25</sup>։ Այսուհետեւ Վրթանեսը խնդրել է «օրհնութեան և երախտագիտութեան ոսկեզօծ և զեղեցկագիր նամակ» ուղարկել գեսպանի անունով<sup>26</sup>։ Երկրորդ ինչպես երկում է ներկա Ուղեգրության առաջարանից, նույն գեսպանը խնամքով նախապատրաստել, անգլիական գրոշի ներքո, Սերովք Կարնեցի և Վրթանես Աշտարակեցի վարդապետների ուղեկցությամբ էջմիածնին է ուղարկել Հակոբ նվիրակի կուտակած մէծ հարստությունները։ Սրանք ոչ պատահական էին և ոչ էլ հայերի նկատմամբ անգլիացիների ունեցած «բարյացակամ» վերաբերմունքի արդյունք, այլ ժեսու՝ սիրաշահելու համար հայ ազգեցիկ շրջաններին, իրենց իսկ անգլիացիների հեռուն զնացող գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին։ Դա, համենայն դեպք, բխում էր Անգլիայի արքելյան բաղաքականությունից, որի իրականացման համար, անտարակույս, որոշ հույսեր էին կապվում նաև Սերովք Կարնեցու առաքելության հետ։

Սերովք Կարնեցին մի քիչ այլ կերպ է բացատրում էջմիածնի գնալու իր նպատակները։ Այսպես, Հնդկաստանում բնակվող մի հայ բանասերի՝ Հարություն Սահակյան նոր ջուղայեցի Աղանուրյանցին հղած նամակում նա հաղորդում է, որ ինքը պատրաստվում է էջմիածնին գնալ։ «Ուր գուցի ի հոգնոր տեսանէն ընկալաց զտպարանն... հանգուցեալ Յովսէփ կաթողիկոսին, որ ի Ռուսաստան», որպեսով էջմիածնում կազմակերպի տպագրական գործը։ Այսուհետեւ նա գրում է. «Ըսպասեա ուրիմն եթէ հաճիս, զի կատարել այսորիկ կարի հնարաւոր խորհրդոյս գոնէ մատեանք քո վայելչական տպագրութեամբ ի լոյս ընծայեցին»<sup>27</sup>։

Էջմիածնի հասնելուց մեկ տարի հետո՝ 1813 թվականի հունիսի 22-ին իր այս մտագրության մասին Թիֆլիսից նա գրել է նաև Մոսկվա՝ Հովհակիմ Լազարյանին։ Այդ նամակում կարդում ենք. «Ակն ունիմ, եթէ վեհապնութիւնդ յաստուածարեալ գրուածոց գերեզանիկ սրբազն հովհոր Տեառն մերոյ ունիք բաւական տեղեկութիւն զանձինս հանգամանաց ի վաղուց հետէ ստացեալ.

25 Կաթողիկոսական դիվան, թղթ. 22, վագ. 18.

26 Նույն տեղում, թղթագ. 19, վագ. 8.

27 Նույն տեղում:

ուրիմն յայսորիկ կրկնութենէ լաւ ևս է ինձ ի բաց հրաժարիլ. զայս միայն այժմ ձերումդ վեհապնութեան ծանուցեալ, եթէ երկու ամսօք յառաջ ի սրբազնակատար վեհապնութեամբ մերմէ առաքեցայ աստ. և ունիմ ժամանակի ինչ բնակիլ ի Թիֆլիզ. մինչև Աստուած այց արասցէ տառապեալ Մօր Արոնյ մերոյ, որո վիճակին այժմեան, բայ ուրոյ քաջ զիտակ է, և կարի ողբախիլ։ Համանգամայն ի հարկէ վերահասու լեալ էք փոքր ի շատէ, թէ բանի ըզակերտ և ըստ իմումս կարեաց ի ձեռու բերել զտպարան իմն կանգնեալ ընդ հովանաւորութեամբ հզօր և բարեփափաքանի ուրուք. ուրանօր կարող լիցիմ ամենակին հանգարատութեամբ փութաջան վաստակօք ի լոյս ընծայել ի մէջ օրհնեալ ազգի մերում գեղեցկիմաստ և ուսումնասիրական գրեանս. զմեծազոյն մասն թարգմանեալս ի գաղրոց յանգիփացոց, յատիւացոց և ի լատինաց գիտնական լեզուացն (զորոց գրաւական տեղեկութիւնն պարզեալ է ինձ աստուած), որով մարքացի ազգս մեր ի խորին հուն աղիտութեան տակալին ննջեալ բանալ զաշ մտաց, և նաեաչել վեհական զիւր եղելութիւնն և զանպատոր այսորիկ կենաց երջանկութիւնն բանական կարողութեամբ ամեննեին ծառայել աստուծոյ և կենցաղավարեալ յայսմ աշխարհի»<sup>28</sup>.

Այս հարցերը, որքան հնտաքրքիր են, նույնքան էլ կարու են համակողմանի ուսումնասիրության։ Այսուղեղ ասենք միայն, որ Սերովք Կարնեցին շուտով տեղափոխվում է Մոսկվա և նշանակվում կաղարյան ճեմարանի առաջին ուեկտոր։ Ի գեա՞ կաղարյան ճեմարանի զոյության առաջին 50 տարիներին պաշտոնավաճած տեսուչների և ուեկտորների թվում Սերովք Կարնեցին ճանաշվել է ու գնահատվել որպես «ականավոր ուեկտոր»<sup>29</sup>.

Այդ մասին վկայում են նաև Հովհաննես և Խաչատրյան եղբայրները։ 1827 թվականի հունիսի 18-ին նրանք Պետերուրպետից Թիֆլիս և ներսին Սշտարակեցուն հղած նամակում գրել են. «Գրաքես այս բարձր արժանապատի Սերովքէ վարդապետ մեր՝ զոյության հրամակալ ի հանգուցեալ ծնողէ մեր յառաջս յուսուցանել զմանկումս ուսումնարանի մեր ի Մոսկվի ամենայն շերմեռանդութեամբ և զարգացմամբ հանապաղորդեալ զայն պաշտոն իր զամս եօթն...»<sup>30</sup>։ Այս հենց այսուղեղ էլ՝ կաղարյան ճեմարանում, ուսումնական պրակտիկ աշխատանքների հետ միաժամանակ նա զբաղվել է նաև զիտական գործունեությամբ։

Առ այսօր հայագիտական աղբյուրներում Սերովք Կարնեցին հիշատակվել է միայն իրեն հայկական գպրոցների համար կազմած ու 1819 թվականին Մոսկվայում լույս տեսած «Մազիկ զիտութեանց» խորագրով ստվարածավալ աշխատության հեղինակ<sup>31</sup>։ Սակայն այս տեղեկությունները խիստ թերի են ու պակասավոր, ինչպես անգլիական գրեանքավագան գրագրությունները ի հերի մեր ի Մոսկվի ամենայն շերմեռանդութեամբ և զարգացմամբեալ զայն պաշտոն իր զամս եօթն...»<sup>32</sup>։ Այս հանց այսուղեղ էլ՝ կաղարյան ճեմարանում, ուսումնական պրակտիկ աշխատանքների հետ միաժամանակ նա զբաղվել է նաև զիտական գործունեությամբ։

28 Նույն տեղում, կաղարյանների արխիվ, թղթագ. 104, գ. 8, վագ. 148.

29 Ա. Յինօվեև, Իсторический очерк Лазаревского института восточных языков, 1863, Москва, էջ 103.

30 Մատենարանի արխիվային բաժն, կաղարյանների արխիվ, թղթագ. 104, գ. 5, վագ. 243.

31 Գ. Զարեհ Հայութ, Հայութ աշխատանքների համար պատրաստած է եղել նաև «Մահմեդի պատմութիւն» վերնագրով ընդարձակ մի ուսումնասիրություն՝ շարադրված պատ-

մական փաստերի հիման վրա, Հեղինակի իսկ վկայությամբ՝ «զոր աւանդին ամենայն գրիչք մեր և օտարք»<sup>32:</sup> Նկատենք, որ այս ուսումնամիրության առաջին մի քանի տետրակները ոչ միայն տպարանում շարված են եղել, այլև տպադրոված մամուկները պատրաստ են եղել կազմելու համար։ Հեղինակը էջմիածին՝ Եփրեմ կաթողիկոսին է ուղարկել իր գրքի տպագրված ավելի քան 160 էջերը, որպեսզի վերջինս տա իր համաձայնությունը այն լույս աշխարհ հանելու համար։ Սակայն այդ գրքի լույս ընծայումը արգելում է հենց էջմիածինը։

1820 թվականի հունվարին Եփրեմ կաթողիկոսը Մոսկվա, Սերովի Կարնեցուն ուղարկած իր պատասխան նամակում գրել է. «զի որպիսաւայտ գիրքը ընդ ծաղկափունջ գիտելեաց բազմաց ի մասնաւորի, զորս փնջեալ էր քո աշխատամիրութեամբ ի միում գրքական և ի տիպ իսկ արձանացեալ։ Թէս թերապէս տակաւին հաս ի ձեռս մեր, առ որ թախանձեալ սրտի հոտունցաք ըստ աղջու աղջու իւրաքանչիւր ոք ծաղկանց ընթերցանութեամբ և գտաք ի նոսա ինչ ինչ մեր և սինօթ սուրբ մեծի աթոռուս որոց վասն ի ճաջ երեկի ասել ինչ, որով մնալ համարիմք անրամբաս և անվրդով աղջուին։ Սրան հետևում են «Պատմութիւն Մահմեդի» աշխատության վերաբերյալ Եփրեմի հինգ դիմողությունները։ Այնուհետև Եփրեմը հանդիմանում է Սերովի Կարնեցուն, որ առանց նախօրք համաձայնեցնելու տպագրության է հանձնել այս գործը, ուստի և ինքը արգելում է զրա լույս ընծայումը։ Վերջացնելով իր թուղթը, Եփրեմը նաև մխիթարում է Հեղինակին՝ «Իսկ յաղագ յամեցման պատասխանուոյս մի լիցի քեզ ամբոխիլ կամ գժուարիլ իւիք. այն զի գամազամ հոգօք ներքինք և արտաքինք յոր ընկղմեալս կամք բոլորովին, գրէմի բազմաց լինին գործոց և պատասխանեց խափանիլք կամ յամեցուցիւք»<sup>33:</sup>

Ապարգուն անցան նաև Սերովի Կարնեցուն այդ ժամանակ էջմիածնի գործերում վճռական գեր խաղացող ներսես Աշտարակեցուն արած խնդրանքները՝ գրքի լույսընծայմանը օգնելու մասին։ Այդպես էլ այդ գիրքը լույս աշխարհ հեղափակված տետրակները, ինչպես և Հեղինակի ձեռագիրը, առ այսօր մնում են անհայտ<sup>33a:</sup>

Եփրեմ կաթողիկոսի Մոսկվա, Հովակիմ Լազարյանին հղած 1817 թվականի մարտի 5-ի նամակից իմանում ենք նաև այն մասին, որ Ռուսաստանի ցարական կառավարության դավանանքների և լուսալորության մինիստր կընյալ Ալեքսանդր Նիկոլաևի Գոլիցինը՝ «առաջարկեալ է յիշեալ Սերոբէ վարդապետին թարգմանել զնոր կտակարանն հայոց ի տաճկական բարբառ առ ի զիրիմաց լինելոյ այնց հայոց, որք մոռացեալ զհայրենի լիզու իւրեանց, վարին տաճկական լեզուաւ»<sup>34:</sup>

Բացի այդ, այժմ պարզվում է նույնպես, որ Սերովի Կարնեցին, երբ իրադեկ է զառնում Հնդկաստանում Ղուկասի ավետարանը շափառոյի վերածելու մասին, պատրաստակամություն է հայտնում զրելու զրա առաջարանը։ Այդ գործի հեղինակ, Հնդկաստանի թումբի քաղական հայքածին՝ Հանապատակ Հայոց մատենական լաւագայության վերաբերյալ գործությունը բարեկարգ է առաջարկական կամ առաջարկական լաւագայությունը։

32 Մատենագարանի արխիվային բաժին, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 158, գալ. 160.

33 Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 36, գալ. 23.

33a. Մանոթ ըլինելով այս փաստին, Սերովի Կարնեցուն «Պատմութիւն Մահմեդի» դրած ուսումնամիրությունը շորջ մեկ հարյուրամյակ հնտու, քանակը Բ. Կյուկներյանը 1925—1926 թվականներին «Հանդիսա ամսորեայում» (№ 5—5, էջ 256) հրատարակած «Իսլամը Հայ մատենագրության մեջ» Հոգիածաշարում իր արածը զնա՞ւտեն է որպես «Նորություն մը Հայ մատենագրության բայրովին անկախ մի մարգին վրա...»։

34 Մատենագարան, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գործ 9, գալ. 10.

բություն Սահակյան — Աղանուրյանցին 1811 թվականին Բաղդադից գրած նամակում կարգում ենք. «Եթէ հաստատեալ ես տպագրութեամբ ի լոյս ընծայել զԴուկասու շափարերական աւետարանդ յայտնեա ինձ պարզապէս զնիւթ առաջարանութեան գործոյդ, բանզի ցանկամ նուաստս ի սէր պատուական անձիդ հիւսել զհամառու յառաջարանութիւն համամիտ մտոյդ կ գուցէ աբժանաւոր մատենանիդ»<sup>35:</sup> Իրականացրել է արդյոք յուր այս մտահղացումները Սերովին Կարնեցին, — առայժմ դժվար է ասել։ Սակայն անկախ դրանից, նըշված փաստերը վկայում են նրա մտավոր կարողությունների մասին։ Ուստի պատահական չի կարելի համարել ու առաջարար աշխարհ առաջելած օտար մատապարհություններում նրա մտավոր գրել են. «այդ գիտնական՝ որ ուսմամբ իւրով գերազանցէր բան զայլ ամենայն կարգակիցս իւրա»<sup>37:</sup>

\* \* \*

Ուղեգրությունն ընթերցողին անշուշտ կհետաքրքրի այն հարցը, թե ինչու նրա Հեղինակը՝ Սերովի Կարնեցին, որը քաջ գիտակ է եղել մայրենի լեզվին, իր գործը գրել է օտար լեզվով՝ ֆրանսերեն։ Այդ հարցի պատասխանը ավել է ինքը՝ Հեղինակը Ուղեգրության առաջարանում։ Սերովի Կարնեցին Հայաստան էր զալիս անզիվական անձնագրով, որպես Հնդկական առևտրական ընկերության հանձնակատար։ Ավելին, նա ճանապարհ է դուրս գալիս Բաղդադից զեպի էջմիածին «Մոռզրօր» կեղծանունով<sup>38:</sup> Ուստի ընական է, որ ճանապարհությունը ընթացքում օրը օրին գրի առնված զեպիքիրը շէր կարելի գրել հայերեն, որը կմատներ Հեղինակի ազգային պատկանելությունը։

Երկրորդ հարցը, որ էական նշանակություն ունի, Ուղեգրության նպատակադրումն է, և, որ կարենըն է, դրա իրականացումը։ Հեղինակը իր գործի առաջարանում նշում է, որ «Աշխարհի տարբեր մասերում կատարված ուղեգրությունների նկարագրությունները միշտ էլ նպաստել են հարստացնելու պատմությունն ու աշխարհագրությունը նորանոր տեղեկություններով»։ Հենց այս մտասեենումամբ էլ Հեղինակը գրում է իր Ուղեգրությունը։

Որպես սականատեսի գրչի արդյունք, Ուղեգրությունը, անտարակույս, ունի անվիճելի առավելություններ։ 55 օր տևող ճանապարհությունը ընթացքում Ուղեգրության Հեղինակը անցել է իրաքի, Փարսկաստանի ու Թուրքիայի տիրապետության տակ զանվող քաղաքների ու գյուղերի միջով։ Նշենք, սակայն, որ Հեղինակը չի բավարարվել իր տնեսած ու լած փաստերի միջայն արձանագրումով, այլև հաղորդում է պատմական, աղջապարական և աշխարհագրական շատ տեղեկություններ իր անցած ճանապարհին՝ հանդիպած ցեղերի ու ժողովություններուն։

Որպես սականատեսի գրչի արդյունք, Ուղեգրությունը, անտարակույս, ունի անվիճելի առավելություններ։ 55 օր տևող ճանապարհությունը ընթացքում Ուղեգրության Հեղինակը անցել է իրաքի, Փարսկաստանի ու Թուրքիայի տիրապետության տակ զանվող քաղաքների ու գյուղերի միջով։ Նշենք, սակայն, որ Հեղինակը չի բավարարվել իր տնեսած ու լած փաստերի միջայն արձանագրումով, այլև հաղորդում է պատմական, աղջապարական և աշխարհագրական շատ տեղեկություններ իր անցած ճանապարհին՝ հանդիպած ցեղերի ու ժողովություններուն։

35 Նույն տեղում, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 19, գալ. 8։ Մատենացույց արվող շափառոյի վերածված Ղուկասի ավետարանը ձեռագիր վիճակում պահպան մատենագրանում Ա. 169-ի տակ։

36 Կաթողիկոսական դիվան, թղթ. 36, գալ. 23։ Լազարյանների արխիվ, թղթ. 104, գործ 8, գալ. 118, ֆոնդ Երիցյանի արխիվ, թղթ. 159, գալ. 67 և այլն։

37 Խաչատրյան Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 159, գալ. 67 և այլն։

38 Կաթողիկոսական դիվան, թղթ. 23, գալ. 59։

վուրդների կենցաղի և սովորութիւնների, մասնավորապես այդ վայրերում ապրող հայկական բնակավայրերի, դրանց բնակչության թվի, զքաղմունքի, հարեան ժողովուրդների հետ ունեցած հարաբերությունների, ինչպես և տիրող քաղաքական իրադրության, սոցիալական երևութների և այլնի մասին։ Նկատենք, որ Իրարից՝ Պարսկաստանի և Թուրքիայի տերիտորիաներով նրա անցած ու նկարագրած հանապարհը մինչ այդ դեռ քիչ էր տրորված ելքոպացի ձանապարհորդների կողմից։

Սերովբե Կարնեցու նորահայտ այս Արևելյան իր բովանդակությամբ հարուստ տեղեկություններ պարփակելով Սերծալոր Արևելքի վերաբերյալ, անշուշտ, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, և սկզբնաղբյուր է ինչպես հայագետների, այնպես և արևելագետների համար։

Ա. ԽԱՅԱՏՐՅԱՆ, Լ. ԽԱՅԵՐՅԱՆ

### ПУТЕВЫЕ ЗАПИСКИ СЕРОВБЕ ԿАРНЕЦИ

#### Р е з ю м е

В архивном отделе Матенадарана хранятся путевые записки, изложенные на французском языке. Автор этих записок подробно описал этапы совершенного им путешествия из Багдада в Эчмиадзин. Произведя филологические изыскания, авторы статьи обнаружили, что автором «Путевых записок» является известный церковный и литературный деятель и педагог первой половины XIX в. Серовбе Карнеци.

Он предпринял это путешествие инкогнито, рекомендуясь англичанином, комиссионером индийской торговой компании, чтобы иметь возможность перевезти через Ирак, Персию и Турцию в Эчмиадзин огромные материальные ценности, принесенные индийскими армянами в дар Эчмиадзинскому собору.

Путевые записки содержат сведения по истории, этнографии и географии.

Н. KHATCHATRIAN, L. KHATCHERIAN

### LA RELATION DE VOYAGE DE SÉROVBÉ KARNÉTSI

Le Fonds des Archives du Maténadaran renferme une relation de voyage détaillée en français, datant de 1812 et concernant l'itinéraire suivi de Bagdad à Etchmiadzine.

Les auteurs du présent article en ont déterminé l'auteur qui n'est autre que Sérovbé Karnétsi, homme d'Eglise, littérateur et pédagogue célèbre de la première moitié du XIX<sup>e</sup> siècle, qui, dans le but de faciliter son voyage à travers l'Irak, la Perse et la Turquie à destination du couvent d'Etchmiadzine auquel il devait remettre de la part des Arméniens de l'Inde des présents de grande valeur, prit le travesti d'un agent anglais de la Compagnie des Indes.

Ladite relation fournit des renseignements d'ordre historique, géographique et ethnographique.

### Բ Ա Գ Ր Ե Ր

ՆՈՐԱՅԻ ԵՊՍ. ՊԱՊԱՐՅԱՆ

(Երուաղեմ)

ՆՈՐԱԳՅՈՒՏ ՀԱՏՎԱԾ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ  
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

Երուաղեմի ս. Հակոբյանց վանքի մատենադարանի 1419 թվականին՝  
ընդօրինակված № 1 հսկայակերտ ճառընտիրին երկրորդ հատորին մեջ, էջ  
720ր-728ր, հանդիպեցանք ընդարձակ հատվածի մը, առնված զագար Փար-  
պեցիի Պատմութենեն, որ կներկայացնե Առաջին դրագին կեսեն ավելին.  
Տփղիսի 1904 թվի տպագրության համաձայն էջ 12—28:

Այս նորագյուտ հատվածը մեծ արժեք կներկայացնե նկատելով որ այն  
զրի առնված է Փարպեցիի ծանոթ առաջին ձեռագրեն երկու և կես դար առաջ:

Հատվածիս գրչությունը ուղղագրական տեսակետ ունի թերություններ և  
ճառընտիրներու գրիշներուն հատուկ սովորության համաձայն կատարված են  
նաև զեղումներ նշանակիլի քանակությամբ: Այնուհանդերձ հատվածս կպա-  
րունակե բազմաթիվ ընթերցումներ, որոնց շնորհիվ Փարպեցիի բնագրին մեջ  
կկատարվին կարեւոր սրբագրություններ: Ատոնց մեջ ամենեն նշանավորն է  
«Հմուտ երգողական տառիցն» ասության փոխարեն ձեռագրիս տված ընթեր-  
ցումը, «Հմուտ քերթողական տառիցն»: Այս և ուրիշ սրբագրությանց մասին  
ավելի ընդարձակ գրություն մը պատրաստած ենք արդեն:

Հատվածիս ընդօրինակությունը կատարեց օր. Արփինե Հ. Սրճունի՝ մեր  
առաջնորդությամբ: Բնագրեն ներս կատարեցինք շատ քիչ միջամտություն,  
կարգը մը սխալներ առնելով կոր փակագիծներու մեջ, և երբեմն ավելացնելով  
անհրաժեշտ բառեր անկյունավոր փակագիծներով:

Այս հատվածին առանձին հրատարակության նպատակն է ընծայել նպաստ  
մը Դ. Փարպեցիի Պատմության բնագրի սրբագրության:

ՎԱՅՆ ՆՇԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԻՆ ԳՐՈՑ Ի ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆՆ  
ՎՐԱՄՄՇԱՊՀՈՅ Ի ԶԵԽՈՆ ԽՆԴՐՈՅ ՍՍՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՎԹԱՅ

Իսկ յետ ժամանակի ինչ անցանելոյ, բերեալ ատելութիւն նախարարացն  
Հայոց, որ ընդ Պարսից իշխանութեամբ էին, ընդ թագաւորին իւրիանց՝ Խոսրո-  
վու, վասն երթալոյ տակաւին և նուազելոյ թագաւորութեանն յազգէն Արշակու-  
նեաց, յաղագս առաւելեալ ի նոսա գործոց իւրիանց շարեաց, ըստ բանի սուրբ  
քահանայապետիցն առաջնոցն եւ այլոց եւս բազում առաքինի արանց, որք  
անլուր բերանովք բողոք բարձեալ յանդիմանէին զանարժան գործս նոցա, և  
զմատնումն ընդ լծով խիստ և անաւրէն ծառայութեանն Պարսից, նախատելով  
բարբառէին: Երթեալ այնուհետեւ առնէին բանսարկութիւն առ Շապհոյ ար-  
քային Պարսից, եթէ Խոսրով կարծեցուցանէ զինքն քեզ միամիտ սիրելի և

Հնազանդ. և է այս ամենայն ցուցակութիւն նորա առ քեզ ատելութիւն և ոչ ստուգութիւն, բայց իւր ուստ և խորհուրդ ընդ թագաւորին Յունաց է, և միշտ հրովարտակաւք, երթեւեկ պատգամաւորաւք, խաւափ ընդ նմա ի խաղաղութիւն. բայց դուք որպէս իմանայք հատուցանել նմա ըստ նորա խարէութեանն զայն դուք իշխէք: Եւ կարծէին բանսարկութն յիւրեանց անմիտ խորհրդոցն կորուսանել զնա, և անձանց և աշխարհի բարոյ իմիք և շինութեան լինել պատճառ, և ոչ զիտէին եթէ տակաւին ի մաշումն և ի շար ծառաֆութեան վասն մեղաց իւրեանց մատնեալք լինէին լԱստուծոյ:

Իսկ զայն լուեալ խնդութեամբ և ախորժելով ունկնդրութեամբ Շապէոյ արքային Փարսից՝ հրաման տայր վաղվաղակի հրովարտակաւք զեռորով ի դուռն կոշել: Եւ նորա ոչ զգացեալ զրանսարկութիւնն Հայոց իշխանացն, վաղվաղակի որպէս առ իւր իշխան և բարեկամ ի դուռն հասանէր: Եւ Շապէոյ թշնամնեալ զնա պատուհասէր. այլ թերեւս և վասն յաւարութեան մերժել զնա ի թագաւորութենէն, և յանդիման կամեցեալ առնել զնա շարախաւացն, վաղվաղակի մերժեալ ընկենոյք զեռորով յիշխանութենէ թագաւորութեան իւրոյ, և ուխտէր այլ ոչ եւս տեսանել զաշխարհն Հայոց, անդ արգելեալ յաշխարհին Պարսից պահէր:

Իսկ իւրեւ մերժեալ լինէր Խոսրով ի թագաւորութենէն, խնդրէին Հայք ի Շապէոյ այլ թագաւոր իւրեանց. և նորա հաւանեալ թագաւորեցուցանէ նոցա զեռամշապուշ զեղբայր նորին Խոսրովու, յազգէն Արշակունեաց և արձակէր ի Հայու:

Ի ժամանակս սորա թագաւորութեանն տուան շնորհը Հոգույն Սրբոյ յամենախնամէն Աստուծոյ, առն միում ճշմարտի Մեսրոր անուն կոշեցեալ, որ էր ի գաւառէն Տարանոյ, ի Հացեկաց գեղչէ, որդի առն որում անուն էր Վարդան. ի տիս մանկութեան իւրում ուսեալ զգարութիւն յոյն, զինուրեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովու, կարգեալ յերամ մատեան արքային դպրացն, վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործս թագաւորացն արքունի զպիրքն, զվնաց և զհրովարտակաց: Եւ սպասաւորեալ անդ ամս կարգաւորապէս առանց եպերանաց: Յետ այսորիկ տենչացեալ կարգի վանականութեան և երթեալ ի վանս բազմութեան եղբարց, և ընկալեալ ըգկերպարան վանականութեան, լինէր ընդիր յամենայնի երեւելի, հրաժարեալ յամենայն աշխարհազբաւ երկրաւոր զբաղմանց: Ապա յանապատական կրամսն փոխեալ, և զարմանալի և երեւելի և հոչակաւոր, և կայր յանապատ, ի բազում տեղիս քարանձաւաց, մեծաւ առաքինութեամբ և խստամբեր վարուք, բազում և այլ կրամսաւոր և աղաւաթէր եղբարք: Մինչեւ յամն հինգերորդ արքային Հայոց Վուամշապէոյ, եղբար Խոսրովու: Եւ զայս եթէ ոք կամեցի զիտէլ հաւաստեալ ի պատմութենէ զրոց առն ցանկալոյ Կորեան, աշակերտի երանելոյն Մեսրորայ, կարդացեալ տեղեկացի զվարս կենաց նորա, և զգիր Հայէրէն նշանագրացն թէ երբ, և կամ յոյր ուրուք ի ձեռին գտան:

Եւ այսպէս բազմաժամանակէա զմտածութիւն երանելոյ առն Մեսրորայ ընկալեալ ամենախնամ մարդասիրին Աստուծոյ, զաւրացոյց զնա հոգով ոլորմութեամբ իւրով: Քանդի հոգացեալ յարաժամ տրտմէր երանելի այրն Աստուծոյ Մեսրոր, մեսանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանցն Հայատան աշխարհիս, որք բազում թաւշակաւք, հեռագնաց ճանապարհաւք, և բազմաժամանակէա զեղերմանբ մաշչին զաւրուք իւրեանց ի դպրոց աստրի զիտութեանն: Քանդի պաշտան եկեղեցոյ կարգացմունք զրոց սրբոց ասորի

ուսմամբ վարէին ի վանաւրեայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոց, յորմէ ոչ ինչ էին կարող լսել և աւկտել ժողովուրդք այսպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտանէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորոց: Զայս ի բազում ժամանակաց ըզմտաւ ածեալ երանելոյ առն Մեսրորայ, և փղձկացեալ յանձն իւր իշխանացն զայս ի վարէի լուեալ թէ զոյ նշանագիրք Հայէրէն լիկուիս: Զաւրացեալ Սուրբ Հոգույն յորդորմամբ և եկեալ առ Սուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ, զեկուցանէր և նմա զիւրոյ զրազմաժամանակէա մտածութեան խնդիրս, և ընկալեալ ի նմանէ քաջալերութեան աւետիս, թէ զաւրացեալ պինդ կաց, առեալ ընդ քեզ այլ այրս աւգնականս ի քահանայից զոր ես հրամայեմ, և ուր տկարանայք ի հենգենայսն բերեալ առ իս ուզզեմ զայն, քանզի յոյժ զիւրին է զիւտ իրացդ զոր հայցեսդ: Բայց նախ արժան է մեզ սպացուցանել թագաւորին զպէտս այտպիսի մեծ և կարեւոր խնդրոյդ Վասն որոյ յառաջ քան զաւրուք ինչ ոչ բազում, ճառեալ յեկեղեցեալ յաղագս կարաւութեան այդպիսոյ պիտոյից ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի նշանագիրս Հայէրէնս առ ումենմն եպիսկոպոսի ի գեաւոյ միում, և թագաւորն յիշէ զասացեալսն, քանզի և ինձ նա պատմեաց:

Եւ մտեալ Սուրբ կաթողիկոսին Սահակայ հանդերձ երանելաւն Մեսրորաւ առ թագաւորն Վուամշապուէ, և իմացուցեալ նմա զպէտս իրացն յիշեաց և ինքն արքայն զիսաւեցեալսն վանականին վասն նորին իրաց ընդ նմա, զոր և նոցա պատմեալ ուրախացոյց: Եւ նոցա լուեալ զայս ի թագաւորէն փութացուցանէին ասելով, թէ ճեպեալ յաղագս մեծ աւգտարեր աշխարհիս Հայոց զիւտի այսորիկ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայսն բերէ քեզ յիշատակ անմուաց և աւգուտ երկրաւոր վայելիցս, քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո, և կամ որք յառաջ քան զեղեզ քո նախնիքն էին յազգէն Արշակունեաց:

Եւ թագաւորին լուեալ զայս ետ փառ Աստուծոյ, և խնդալից եղեալ, որ ի ժամանակս թագաւորութեան նորա զայսպիսի հոգեւոր կենաց փափագ ժառանգեաց աշխարհս Հայոց:

Վաղվաղակի ստիպով զեսպանս առաքեալ զվահրիճ ոմն անուն կոշեցեալ ի ծնողաց իւրոց, հանդերձ հրովարտակաւ, առ այր մի երէց Հարել անուն, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցարքայն, որ և մերձաւորն էր առն բարէպաշտի Դանիէլ եպիսկոպոսի, առ որում նշանագիրք Հայէրէնք կային: Եւ երանելոյն Հարելի ընկալեալ զրովարտակն ի Վահրճալ, և լուեալ զ(գ)իրսն փութանակի հասանէր առ եպիսկոպոսն Դանիէլ Եւ նախ անդէն ի նմին Դանիէլէ ինքն տեղեկանայր զկարգ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առ թագաւորն և առ Սուրբ Հայրապետն Հայոց Սահակ, և առ երանելին Մեսրոր հասուցանէր: Իսկ արքայն Հայոց սուրբ Հայրապետան Հայոց Սահակաւ և երանելաւն Մեսրորաւ, ընկալեալք զնանագիրսն ի Հարելի ուրախ եղեն:

Եւ այսպէս զիւտի հնշանագրացն, ձեռն ի գործ արկանէր երանելին Մեսրովք երիւրելով զնա Սուրբ Հայրապետն Հայոց Սահակ, և զիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգազրութեան գրերոյն և հեղենային ուղղաձայնութեան, աալով նմա աւգնականս և այլ այրս բանիբունս և մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին առ սակաւ մի, որպէս եւ երանելին Մեսրոր, մերձաւորէալ յունարէն հեղենային, որում առաջնոյն անուն էր Յոհան, ի գաւառէն Եկեղեցաց, և երկրորդին Յոհանային, ի Պաղսայ տանէն, և եր(կ)րորդին Տէր ի Խորձնոյ, և չորրորդին Մուշէ ի Տարաւոյ, որոց աւգնելով կարգացմունք զաւրուք ի Հայէրէն լԱստուծոյ:

բայիցն յունացն, ստէալ հարցմամբ և ուսանելով ի Սուրբ Կաթողիկոսէն Սահմանական պատուի առջեցն գարդիւք անցուցանէր զբազում գիտնականաւքն յունաց, եղեալ կատարելապէս հմուտ քերթողական տառիցն և հոետորական յորդասաց յայտարանութեանն, ևս առաւել տեղեակ լեալ փիլիսոփիայական արհեստիցն:

Կարգեալ այսուհետեւ փրկչին առաջնորդութեամբ զգիր գրելոյն հայերէն զհեգենայիցն ուղղել յաւրինուածս, ցանգային կարգել զպրոցս և ուսուցանել բազմութիւն մանկաց. քանզի ամենայն անձն յորդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեանն, որպէս ի խաւարէ, յասորի տանշանացն զերծեալը, ի լոյն փութային: Բայց տարակուտեալը կասէին յանչըութենէ զրոց սրբոց. քանզի զիս եւս ոչ գոհէին հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանը եկեղեցոյ: Եւ երանելին Մեսրոբ և որ ընդ նմա պատուական քահանայք էին, ոչ զաւրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարեւոր գործ, թարգմանել զիրս ի յոյն չեղուէն ի հայ բարբառս, վասն զի ոչինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգից յունական ուսմանն:

Ապա ժողովեալ ամենայն քահանայք աշխարհին Հայոց, հանդերձ երանելաւն Մեսրոբս, և ամենայն նախարարք աշխարհին Հայոց, և մեծամեծ տանուտէրաւք առ թագաւորն Վոամշապուհ, և հանդերձ թագաւորաւն սկսան աղաշել զուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ արկանել զանձն յաշխատութիւն հոգեւոր, և թարգմանել զԱստուածաշունչ կտակարանս ի յոյն [լեզուոյ] ի հայ բարբառս. և ասէին թէ որպէս սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահեալ ի խոշտանգանս անվնաս աշով հզաւրին ի լուսաւորութիւն գիտութեան աշխարհին Հայոց տուաւ պահել, շնորհեցաւ և քեզ նորուն շառաւեղի, վիճակ պայծառութեան պաշտամանս այսորիկ, սկիզբն ուսման գործոյ մշակութեան, և ինել նմանող սուրբ նախնոյն քո, որ յանգիտութենէ ի ճշմարիտ Աստուածութիւն առաջնորդեաց աշխարհին Հայոց: Եւ արդ գոյնով զպակասութիւն զայս, մնացեալ ի սուրբ նախնոյն քո, զոր պահեաց քեզ Աստուած, որ նմանեալ ճշգրտապէս աւրինակեցեր ի քեզ զվարս սուրբ հաւրն քո ներսէսի:

Եւ լուեալ զայս ամենայն՝ բարեացապարտ կաթողիկոսն Հայոց Սահակ ի թագաւորէն և յամեննեցունց, զուարճացաւ յոգի իւր, փառաւորելով զփրկիչն ամեննեցուն զՏէր Յիսուս Քրիստոս: Եւ կամաւոր յաւժարութեամբ ես զանձն իւր ի գործ, պանծացեալ Աստուծոյ աւզնականութեամբն, և անվեհեր ջանալով զցայդ և զցերեկս՝ թարգմանէր զկտակարանս ամենայն, զիսաւեցեալս ճըշմարիտ մարգարէիւք Սուրբ Հոգուոյն, և զհաստատեալս և զկնքեալս երջանիկ առաքելաւք զնորոց կտակարանաց զլուսաւոր և զկինսաստու քարոզութիւնն ովլին [Հոգուով]:

Եւ տարեալ ի գլուխ սրբոյ Հայրապետին Սահակայ զգործ մեծ Հոգեւոր վաստակոյն, կարգեցան վաղվաղակի զպրոցը հայերէն ուսմանն. բազմացան դասք գրացն, երեւելս առնելով զմիմեամբք. զարդարեցան պաշտամունք եկեղեցոյ, յորդորեցան բազմութիւնք ժողովրդոց արանց և կանանց ի տաւս փրկչին և ի ժողովս մարտիրոսաց պայծառացան եկեղեցիք, շուր առին վկայարանք սրբոց: Եւ զի միանդամայն ասացից ըստ բանի Սուրբ Մարգարէին նսային, թէ լցաւ երկիր ամենայն Հայոց գիտութեամբ Տեսոն ի Հոգեւոր վաստակոց սրբոյ Հայրապետին Սահակայ, եւ շնորհի ամենախնամ փրկչին Քրիստոսի, կատարեալ այս ամենայն ի ժամանակ Վոամշապուհոյ, ըստ յառաջադոյն զրելոյն, և լուսաւորեալ աշխարհս Հայոց՝ եկաց յետ այսորիկ թա-

գաւորն Վոամշապուհ ամս բազումս, և հասեալ յերկար ծերութիւն վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանգատիւ յաշխարհին Հայոց, յիշատակնորա աւրհնութեամբ:

Յետոյ մեռաւ Շապուհ արքայն Պարսից, և թագաւորեաց Վոամ որդի նորա, որ էր Կրմանձ արքայ, յորմէ խնդրեցին Հայք իւրեանց թագաւոր զնոյն միւս անգամ զիսուրով զեղբայր Վոամշապուհոյ, զոր յառաջնումն բանսարկութեամբ ետուն մերժել զնա Հայք Շապուհ Արքային Պարսից ի թագաւորութեանէն Հայոց: Եւ նորա կատարեալ զինդիրս նոցա թագաւորեցուցանէ նոցա զիսուրով, զայր յոյժ ծերացեալ: Եւ եկեալ խոսրով յաշխարհս Հայոց, և կեցնալ ամիս ութ վաղվաճանեցաւ:

Եւ եկեալ իշխանք աշխարհին Հայոց առաջի Վոամայ Արքային Պարսից, խնդրեցին իւրեանց թագաւոր յազգէն Արշակունեաց և նա թագաւորեցուց ի վերայ նոցա զԱրտաշէս զորդի Վոամայշապուհոյ, յազգէ թագաւորացն Հայոց:

Եւ էր Արտաշէս այր մանուկ և եղամու, և բազում անառակութեամբ վարուր զթագաւորութիւնն: Եւ չկարացեալ այսպիսի զիդի և մոլական վարուց թագաւորին Արտաշէսի տանել նախարարացն Հայոց. ժողովեցան միահամուռ ամեններեան առ մեծ քահանայապետն Հայոց Սահակ, որ էր յազգէն պարթեաց, որդի սրբոյն ներսէսի, և ասեն ցնա. ոչ եւս կարեմք այսպիսի անաւրէն և պիղծ զործոց թագաւորին համբերել. վանս զի լաւ համարիմք մեռանել քան զայսպիսի անհարին ազէտից խնդրել հնարս, և բառնալ ի միջոյ զայսպիսի ամբարշտեալ թագաւոր:

Եւ լուեալ զայսպիսի բանս սրբոյն Սահակայ ի նախարարացն Հայոց, պատասխանի տուեալ ասէք. իբրու թէ ոչ նոր ին[չ] լսելով այսաւր ի ձենչ ճանաշեմ զասացեալս ձեր, այլ զիտեմ, զի զկտեալ սրտիւք խասափ զայսպիսի խաւսս: Բայց արդ որպիսի հնարիւք ըստ արժանի[ի] Հոգեւոր մարդկան զել իրացդ գտանել մարթացուք, զայն արժան է խորհել և առնել ամեննեցուն:

Եւ նոցա առ հասարակ պատասխանի տուեալ ասեն ցսուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ թէ մեք ամեններեան և ոչ մի ինչ ելս և հնարս իրացդ գտանել մարթացուք: Բայց բողոքել թագաւորին Պարսից և ի բաց բառնալ զայր ի թագաւորութեանէ այդի, որում ոչ եղեւ արժանի ժառանգելոյ. այլ մեզ քան զայր ոչ իմանալ ինչ է, և ոչ առնել: Եւ զբեզ աղալեմք միաբանել ընդ մեզ այսմ խորհրդոյ:

Իսկ սուրբ և հոգեւոր կաթողիկոսն Հայոց Սահակ, իբրեւ լսէր զայս ամենայն ի նախարարացն Հայոց, և ստուգիւ ճանաշէք, եթէ ի նոյն միտս և ի նոյն խորհրդոյն հաստատեալ են բաւանդակ աւագանի աշխարհին Հայոց, ի մեծ տրտմութիւն և յանմիսիթար սուրբ ընկղմեալ լինէք. և զեղեալ արտասուաց վտակս առաջի բազմութեան նախարարացն Հայոց, հրաժարէք առնել պատասխանի բանից նոցա մինչեւ ցաւուրս բազումս: Եւ արգելեալ զինքն ի սենեակ, ողբոց միայն և արտասուաց լսէին ձայնք, մերձեալք ի դուրս սենեկին. քանզի տեսանող ակամք ի զարութեանէ սուրբ Հոգեւոյն հայէք այրն Աստուծոյ, ի սպառ սպուր կործանումն աշխարհին Հայոց: Իսկ զհետ բազում աւուրց հայմարձակեալք ումանք յեպիսկոպոսացն, որք հանապազ պարապէին առ դուրս սրբոյն, չկարացեալք և առ վայր մի տուեալ յառատաբուզին և ի շնորհալից վարդապետութեանէ առն Աստուծոյ, և այլք ի պատասխան երիցանց և ի սարկաւագացն, որք ի նորին սուրբ ուխտէ հայրապետին էին, և ոմանք յազատ աղա-

տայնոյն համարձակեալք մտանէին ի ներբռս, և խաւեին ընդ նմա բանիք ողոքանաց: Բնդ որս սփոփեալ սակաւ մի սուրբ Հայրապեան ըստ Հոգեւոր գիտութեան և խրատու, զոր միացեալ ունէր յինքեան ի մանկութենէ իւրմէ, լոեալ զադարէր առ վայր մի:

Իսկ յետ բազում աւուրց ժողովեալ դարձեալ առ նա ամէն ազատագումդ աշխարհին Հայոց, և զնոյն բանս երկրորդեալ առաջի կաթուղիկոսին Սահակայ, խնդրէին ստիպով ի նմանէ և զնորա միաբանութիւնն ընդ ինքեանս: Իսկ իրեւ տեսանէր սուրբն, թէ ոչ ինչ են կասեալք յառաջին կամացն և խորհրդոցն, վասն զի աւր ըստ աւրէ յաւելուած աղտեղի զործոց թագաւորին առաւել քան զառաւել աճեցուցանէր զկորստեան անձին իւրոյ զմիաբանութիւն իշխանացն, ձայն բարձեալ մեծաձայն ողբալով ասէ ցամենեսեան առասարակ. եթէ ես, ասէի, եթէ զուր իսկ, որպէս ուսեալք յԱստուծոյ խորհիք հոգեւորապէս և տարեալ վայր մի թերութեան առն, եւ արտասուաւ թախանձեցուցանէր զամէնողորմն Փրկիչն մեր, զՏէր Յիսուս Քրիստոս, յաղագս գիտի կորուսելոյն խնդրել հնարս. զի ըստ առաջանին ծնընդեանն, թէպէտ և մեղաւոր է, սակայն եղբայր և մարմին մեր է, յիշելով զվարդապետութիւն առաքելոյն Պաւոսի, զի եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան և ամենայն անդամքն ընդ նմա. և եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա: Յիշել պարտ է և զմտաւ ածել զվիշտսն և զնեղութիւնն, զբանդ և զկապանս սրբոյն Քրիստոփի, զպաղատանսն և զաղաւթսն, զոր վասն ամենայն աշխարհիս փօրդութեան խնդրել յԱստուծոյ եղիտ: Եւ (զ)ձեզ ըստ նմին աւրինակի պարտ է ի վերայ մեղուցեալ անդամոյն խնդրել զմողութիւն, և ոչ անաւրինաց մատնել ի ծաղր, և յայլպանումն տալ զսուրբ խորհուրդ հաւատոյս մերոյ:

Յիշեցէք զսուրբ հայրն իմ և զձեր վարդապետն, և զփոխեալն յանասնական ընութեան կերպարանս, հառաջանաւ և անդագար խնդրուածովք զցայդ և զցերեկ, ածել ի զութ զամենեցունց արարիչն Քրիստոս՝ ի նոյն հառատեաց ի մարդկային ընութիւնս: Եւ զութ աշակերտք նորին հոգեւոր վարդապետին էք, եթէ բոլորով սրտի խնդրիցէք յԱստուծոյ ամենեքեան, և զերմ հաւատով հառաջեցէք և անթերի յուսով, զամենայն հայցուածս կատարէ Աստուած:

Այլ վասն իմ որ ասէքդ, եթէ միաբանեա ընդ մեզ, ինձ քաւ լիցի մատնիշ լինել ճշմարիտ հաւատոցն մերոց, և անհաւատից զիմ մոլորեալ ոչխարն մատնել յայլպանումն: Զի թէպէտ և մեղաւոր է՝ այլ զրոշմեալ է Սուրբ Աւազանին ծնընդեամբ, հմուտ է փրկութեան խորհրդոյն, լուսեալ է զքարոզութիւն աւետարանին կենաց: Զի թէ էր հաւատացեալ թագաւորի առաջի տանել զայսպիսի յանդիմանութիւն՝ թերեւս համարձակէի յուսով գիտի կորուսելոյն, այլ կշամբել զհաւատացեալ առաջի անհաւատից ոչ հաւանիմ, այլ ինձ քաւ լիցի մեռանել, քան թէ զոր ի հաւատացելոց՝ վասն անարժան գործոց մատնել անաւրինաց: Զի թէպէտ և ից, պոռնիկ, այլ զկնիք հաստին Քրիստոսի կրէ յանձին իւրում, զիշացեալ ասէք մարմնով, այլ ոչ անհաւատ և հեթանոս, զեղիսնեալ է՝ այլ ոչ կրակապաշտ, տկարացեալ է ի կանայս՝ այլ ոչ ծառայէ տարեց. միով ախտանայ ցաւով՝ այլ ոչ վարակեալ ամենայն ախտիք իւրեւ զամբարիշտ: Եւ զի՞ արդ զսակաւամեղն ամբարշտելոցն մատնել խորհրդիք ի սատակումն: Քաւ լիցի ձեզ որդիք, մի՞ խորհիք զիսորհուրդ զայդ, և զընիկ զձեր զտեարսն, որպէս ոմանք ի ձեր նախնեացն, կորուսանել մի զանայք:

Զայս, եւ առաւել քան զսոյն բանս և զիսրատս, բազում աղերսիւ և արտասուաւեալ խաւսեցեալ անձանձրոյթ Սուրբ կաթուղիկոսին Սահակայ ընդ աւագանին Հայոց, ոչինչ կարաց զնոսա յառաջին միաբանութենէն և ի խորհրդոյն, զոր հաստատեալ էին ի միտս իւրեանց, ի բաց զարձուցանել: Քանզի եկեալ հասեալ էր ի վերա նոցա նզովք սրբոյ առն Աստուծոյ ներսէսի՝ ի գլուխ զգործն հանէր: Միաբանութեամբ պատասխանի արարեալ ամենեցուն քահանայաւ սպետին սրբոյն Սահակայ և ասեն. փոխանակ զի ոչ լուար բանից մերոց, և ի միաբանութենէս մերմէ զանձն քո ի բաց զարձուցեր, գիտասչիր, զի որպէս եղեալ ի մտի չթագաւորել նմա եւս ի վերա մեր, զանձնմք զքահանայանալ և ոչ թեղ առ յերկարսն ի վերայ աշխարհիս մերում: Եւ զայս այսպէս ասացեալ ամենայն աւագ տանուտերաց աշխարհիս առաջի սրբոյ հայրապետին Սահակայ՝ ելին զայրագնեալք ի խրատուէ սրբոյն, և այլ ոչ եւս կամեցան դառնալ առ երանելի հայրապետն. զի էր զնոսա շրջափակեալ և պաշարեալ անիծից երանելոյ քահանայապետին սրբոյն ներսէսի:

Եւ այնուհետեւ միաբանեալ զնացին ի գուռն արքային Պարսից, և երեխալը անդ յանդիման եղեն թագաւորին Պարսից վուամայ, ընդ որս էր և երէց մի Սորմակ անուն, ի գաւառէն թզնունեաց, ի գեղջէ որ կոչի Արձկէ, ի տոհմէ քահանուցից զաւառին մեկուսանեայր, որոյ միաբանեալ ընդ նախարարսն Հայոց, ճեղքեալ ի խրատուէ սրբոյ հայրապետին Սահակայ խաւեր զրանս [անհանձարս] և առաւել աղտեղիս քան զամենայն նախարարսն Հայոց զթագաւորէն Արտաշէսէ առաջի աւագորերոյն Պարսից. շնորհ առնելով նախարարցն Հայոց, յաղագս խոստանալոյ նմա ոմանց յաւագանոյն Հայոց զաթոռ կաթուղիկոսութեան աշխարհիս Հայոց: Եւ ծանուցեալ նախագույն զպատճառու տրտնչելոյն իւրեանց Սուրբնայ և այլ աւագանոյն Պարսից. քանզի Սուրբնան Պալհաւա՛ էր ի ժամանակին յայնմիկ հայդարապետ ի դրան արքունի. և հանդերձ նովաւ և այլ մեծամեծաւ արքան հասուցին զրան ամբաստանութեան առ Վոամ արքայն Պարսից:

Եւ լունալ արքային զայսպիսի բողոք յաղատանոյն Հայոց՝ ոչ թոյլ տայր նոցա խաւել առ վայր մի առանց զալոյ ոսուին ի գուռն: Վաղվադակի զնսպանս արձակէր զթագաւորէն Հայոց Արտաշէսէ առ ինքն ճեղքով զալ հրամատէր: զալ ընդ նմա գրէր մեծի քահանայապետին Սահակայ:

Եւ եկեալ նոցա ի գուռն հարցանէր նախ առանձինն արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրտաշէս, թէ զինչ են իրեղ, յաղագս որոյ ամբաստանեն զքէն նախարարքդ Հայոց: Եւ նորա պատասխանեալ ասէր, թէ ամեննեին ոչ զիտեմ զինչ խաւենդ և շարախաւենդ զդքա զինէն, այլ որպէս սովոր են ի բնէ թշնամանի զտեարս իւրեանց՝ ըստ նմին աւրինակի և այժմ [կամին] կատարել զշար կամաց իւրեանց զինզրիս. քանզի միշտ իշխանափոխք լինալ են և տիրատեացք: Եւ թագաւորն արեաց կուամ հրաման տայր միայն ընդ միայն կոչել առ ինքն զսուրբ կաթուղիկոսն Հայոց զՏէր Սահակ, քանզի մեծարէր զնա, նախ, վասն տօհմականութեան առն, և զեղքեալ՝ զի առաջի անհաւատիցն յարդոյ և պատուական ցուցանէ զսուրբ ծառայս իւր Տէր: Եւ հարցեալ շերանելի կաթուղիկոսն կամէր լսել ի նմանէ զնմանս բանիցն շարախաւացն թագաւորին Հայոց: Եսկ նորա պատասխանեալ ասէր. եթէ ոչ գիտեմ զինչ խաւեին նոքա զնմանէ. նոքա իսկ ասացեն, և գուր լուարուք ի նոցանէն. և որպէս ասեն առաջի ձեր յանձինս իւրեանց զհատուցումն. զիս ինչ յայդպիսի խըն-

դիրս բանից մի հարցանէք. զի ոչինչ լսելոց էք յինչն յաղագս շարախաւութեանդ այդորիկ շար և կամ բարի:

Ապա կոչէր առ ինքն թագաւորն զՍուրեանն Պահակաւ, զիւր զհաղարապետն, որ ազգական և տոհմակից էք մեծի քահանայապետին Սահակայ, որպէս զի միաբանեալ և նորա ընդ այլ նախարարսն Հայոց վկայեսցէ շարախաւութեան նոցա, և պատուեալ բազում պարզեւաւք և մեծապէս շքեղութեամբ դարձի յիշխանութիւն կաթուղիկոսութեան իւրոյ աշխարհն: Եւ Սուրենայ բերեալ զպատգամս արքայի առ երանելին Սահակ խոստանայր նմա ըստ ասացուածին Վուամա, և շքեղութիւն մեծ գտանել ի թագաւորէն, թէ հաւանեալ ասէ. կամաց նորա [տացես վկայութիւն] նախարարացն Հայոց՝ մեծարեալ բազում պատուաւք դառնաս յիշխանութիւն քո. ապա եթէ այլազգագոյնս ինչ խորհիս յամառեալ և զրո կաթուղիկոսութեան տունն կորուսանէս ի քէն, և յիշխանութենէդ զոր ունիս մերժեալ լինիս. և վասն զի ազգակից քո եմ և զբարին քո կամիմ, և ոչ զթեթենութիւն, քանզի և տամ քեզ սիրով զայսպիսի խրատ: Եւ այսպիսի բանիւք ջանայր հաւանեցուցանել զուրբ հայրապետն Սահակ: Քանզի կամէին ի միջոյ բառնալ զթագաւորութիւնն Հայոց:

Իսկ սուրբն և բնաւ իսկ յանձն ոչ առնոյր այսպիսի բանից տալ վկայութիւն իշխանացն Հայոց, այլ հաստատեալ ի միաս ասէր, եթէ ևս զերտաշէսէ այսպիսի ինչ վատիթարութիւն իսկ ոչ զիտեմ, որով արժան է ի ձէնչ զատելոյ և անարգանաց. զի թէպէտ և ըստ սրբաւոր մերոյ աւրինացն անարգանաց արժանի է և անգոսնելոյ, այլ ըստ հրամանի ձեր աղտեղասէր աւրինացդ գովութեան արժանի է և մեծարանաց:

Եւ լուեալ զայս պատասխանի Սուրենայ ի մեծ հայրապետէն Հայոց Սահակայ յիւրմէ տոհմակէն, և պատմեալ թագաւորին արեաց՝ ի ցասումն զայրացման գրգուեալ թագաւորն՝ հրաման տայր այնունետեւ բազմամբոխ ատենին հարցանել զնախարարսն Հայոց և զԱրտաշէս: Եւ կոտեալ իշխանացն Հայոց բազում աղտեղարանութիւն և ազգի ազգի խաւ անարժանութեան ի թագաւորն իւրեանց. քանզի ոչ եթէ զեղեալսն ենթ ի նմա զիրսն խաւէին այլ եւս յաւելուածովք ըստ աւրինի թշնամութեան կուտէին ի վերայ նորա բազում վնասս, որ թէպէտ և յուրաստ եղեալ Արտաշէսի, թէ չէ այդպէս, ոչ հաւատային լսողին, եղեալ զկամս իւրեանց բառնալ ի միջոյ զթագաւորութիւնն յԱրշակունեաց ազգէն. մանաւանդ զի լուաւ եւս թագաւորն արեաց ամենայն աւագանով դրանն ի դատախազցն Արտաշէսէ, թէ բնաւ զի իսկ պիտոյ է մեզ թագաւոր. այլ իշխան պարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լիցի մեզ, որ զիւրաքանչիր ուրուք ի մէնչ ժանութեալ զհպատակութիւն և զանհպատակութիւն ցուցցէ ձեզ:

[Եւ լուեալ զայս վուամայ] հանգերձ աւագանով դրանն՝ յոյժ [ուրախանայր] և այնունետեւ հրաման տայր վաղվազակի ի քաց առնով զթագաւորութիւնն յԱրտաշէսէ. ընդ նմին և զտունն կաթուղիկոսութեանն ի սրբոյն Սահակայ (և) յարքունիս ունել, փոխանակ զի ոչ միաբանեցաւ տալ վկայութիւն ընդ նախարարսն Հայոց: Եւ այսպէս զճարեալ հրաման թագաւորին Պարսից ի զուխ ելանէր: Եւ յայնմէնետ բարձաւ թագաւորութիւնն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամին Արտաշէսի, ըստ բանի երանելոյ առն Աստուծոյ մեծի քահանայապետին ներսէսի, և անկաւ աշխարհն ընդ լծով շար ժառայութեան անաւրէն իշխանութեանն Պարսից: Եւ առեալ զինս իշխանացն Հայոց ի թագաւորէն Պարսից ընդ մատնութեան Արտաշէսի, պատիւս և մեծութիւնս, նման արծաթոյն զոր

առին ընդ զովսէփայ եղբարքն, ընդ մատնութեանն յիսմայելիաց ի վաճառականացն, և այսպէս հրաժարեալ ի զրանէ եկին յաշխարհն իւրեանց:

Եւ տանուտէրացն Հայոց, որոց խոստացեալ էին զկաթողիկոսութիւնն Սորմկայ Արձեկի երիցու, նստուցին զնա յաթու քահանայապետութեանն Հայոց: Յորում, յետ սակաւ ժամանակի ինչ անցելոյ, ընդդիմացեալ ոմանց ի զարաւոր իշխանացն Հայոց՝ մերժեցին յիշխանութեանէ կաթուղիկոսութեան: Եւ յայնմէնետ առաքեցաւ նախ ի Վուամայ արքայէն պարսից յաշխարհն Հայոց մարզպան պարսիկ. և յայնմէնետէ եղեն [ի սպառ սպուտ] ընդ լծով ժառայութեան անաւրէն ազգին պարսից եւ կատարեալ ել ի զուխ [բանն] անիծից մեծի քահանայապետին ներսէսի, զոր յաղագս առաւելապէս անցեցեալ աւր քան զաւր ի թագաւորական տոհմին Արշակունի գործք անաւրէնութեան շարեացն, զոր կամակարութեամբ համարձակեալ միշտ գործէին անամօթեալք: Մանասանդ յորժամ ետես սուրբն ներսէս զման արդար, զոր հատոյց Արշակ ի վերայ Գնելոյն եղբաւոր որդոյն իւրոյ, և զկարացեալ հանգուրժել այնպիսի անաւրէն գործոց սուրբ այրն Աստուծոյ ներսէս, զայրագնեալ սրբի, ըստ գրեցելոց ի պատմութեանն (ի պատմութեանն) երկրորդումն ճառին ճնգէտասաներորդի, որ ասաց թէ փոխանակ զի յաճախեցեր ի շարիս մեծամեծս առաւել քան զհալըն, քո Տիրան, և քան զայլ նախնիսն քո որք եղեն չարք եւ ամբարժշտք յազգէն Արշակունեաց, և ոչ նախանձեալ նմանեցեր բաւացն եառաքինի արանցն եղելոց ի տոհմին քում, որոց ժառանգեալ զպատի թագաւորութեանն հարցն իւրեանց առաւել եւս փութացան լինել ժառանգորդք բանը և ահազին, զոր ասացեալ է սրբոյ քահանայապետին ի վերայ ազգին Արշակունեաց:

Ենդրեցին այնունետեւ իւրեանց կաթուղիկոս յարքունուստ նախարարն Հայոց, և թագաւորն Վուամ ետ նոցա զթարդէ զոմն անուն, այր Ասորի յազգէ, որ եկեալ յաշխարհն Հայոց իւրովք գաւառակցաւք, որք կէին լոյժ կրանիւր, եկեալքն ընդ նմա յԱսորեստանէ, ըստ սովորութեան իւրեանց աշխարհն իւրեանց աղութիւնն իւրկի իւրեան արդար արեան եղրաւորորդոյն քո Գնելոյ, արդ եղիցիս զու ճնգեալ յերկիր իւրեալ զզուր լուալեաց, և ի լարել աղեղանց բարձրելոյն տկարասչիր: Եւ կործանումն, որ բերանով մարգարէին ասացաւ, հասեալ է ի վերայ ձեր, բրբել ազգի Արշակունեաց զյետին բաժակն և արցիք և կործանեսչիր: Հանգերձ և այլեւս յաւելուածովք ժանր և ահազին, զոր ասացեալ է սրբոյ քահանայապետին ի վերայ ազգին Արշակունեաց:

սուրբ եկեղեցոյ: Եւ վռամայ արքային հաւանեալ կամաց խնդրոյ նոցա՝ տայր նոցա առաջնորդ դարձեալ այլ ասորի, որում անուն էր Շմուէլ, որ եկեղեց յաշխարհս Հայոց կայր և նա նոյնպէս լոյժ կրանիւր ըստ կարգին Բարդիշոյի, և սակաւ ինչ ժամանակ կեցեալ վախճանէր յաշխարհս Հայոց:

Եւ տեսեալ ամենայն տանստերց աշխարհին Հայոց աւագ սեպհաց և բաւրդակ բազմութեան ուխտէ եկեղեցոյ, և ժողովրդոց ի միասին արանց և կանաց, զուրոր և զանարատ և զառաքելաշնորհ վարդապետութիւն, զոր սերմանեալ ածեցոյց ի նուաս սուրբն Գրիգորիոս, և նորին զաւակըն, որք ուսուցին զծշմարիտ և զարդար ուսումն ամենայն լսողացն. որ զինքեանք նման երանելի առաքելոցն ընկալան, ոչ ի մարդկանէ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ յազդեցութենէ Սուրբ Հոգույն շնորհաց: Քանզի զարձեալ ժողովեցան միահամուռ և դիմեալ բուռն հարկանէին զոտից Սրբոյ առն Աստուծոյ Սահակայ, աղերս թախանձանաց և բազմազեղ արտաւար արկեալ առաջի ճշմարիտ քահանայապետին, և ասէին. մեղաք յերկինս և առաջի քո. թող մեզ մեղուցելոցս և ձեւացոյ զքեղ բատ աւրինակի բարէպաշտ քաջ նահատակին Գրիգորի, նախնոյն քո, որ ոչ լիշեաց զայնչափ տանջանսն և զքերանսն, զոր անցուցին ընդ նա նախն մեր. այլ նմանեալ արարշին ամենեցոն և հատուց բարի փոխարքնս փոխանակ չարեացն, զոր հատուցին ի վերայ նորա. Եւ ծանուցեալ ամենեցուն հաւանելոց նմա վարս երկնաթոփշն և ճանապարհու Աստուծացիւս, և ուսուց ամենեցուն ասել հանապազ. թող մեզ զպարտս մեր բատ մեր թողլոց մերոց պարտապանաց:

Արդ եղեր և դու անդադար վարդապետ մեր սորին փառատրութեան, տպաւորնաց ի քո անձդ զնոյն համբերութեան աւրինակ, և թող մեզ զպարտս մեր եւ քանս եղեալ խնդրեմք ի դրանէ հաստատել զքեղ ի բնիկ հայրենի աթոռ կաթուղիկոսութեան սուրբ կեղեցոյ, յորմէ լրսաւորեալ տեսաք զայս անմատուց արդարութեան արեգակն: Եւ մի խառնեսցի պղտորումն ընդ յստակ և ականակիտ վարդապետութեան սրբոյ առաքելանման հայրապետին Գրիգորի. քանզի աճա զեն թուղացեալ մեղին լոյժ առաջնորդաց կնիք հաւատոյ անարատ քարոզութիւն սրբոյն, և աճա կործնչմք մեք և ծնեալքս ի մէնչ զյաւուենական կորուստն:

Այսպէս և առաւել քան զոյն բանս աղաշանաց խաւեցեալ միաբանութեամբ ամենայն բազմութեանն ի բազում աւուրս ընդ սրբոյն ի տուէ և ի զիշերի անդադար ամեննին ոչ կարացեալ խոնարհեցուցանել զմիտս առն ճշմարտի ի քանս խանդադատականս պատասխանաց իւրեանց: Այլ խաղաղական պատասխանատրութեամբ ասէր ցամենիսնան, եթէ ես ոչ ուսայերենաւոր արարշն և ի վարդապետէն Քրիստոսէ բարկանալ ումեր, որ եւ ի խաշին յաղադս խաչահամուացն աղաշէր զհայր շհամարել նոցա զայն մեզո. որ և մեզ ցանկ բողոքէ ասելով. Այրհնեցէք զհալածիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց: Այլ քահանայանալ ի վերայ տիրաննենդ և տիրասպան և մատնիլ ժողովրդոց ոչ կարեմ. քանզի Սուրբ Հոգին, որ ծնամն զմեզ աւաղանաւն ժառանգակիցս լինել Քրիստոսի, նոյն ասաց երկնաթաղաքացի արամբն Պաւոսի, թէ մի՛ զատիք, զի մի զատապարտեսցիք. և դուք որ կարողէ էք զտկարութիւն տկարացն բարձէք. և դարձեալ՝ թէ իմ են վրէժինդրութիւնք, և ես հատուցից, ասէ Տէր: Արդ դուք ձեղէն եղէք վրէժինդիր թագաւորին ձերլ զործոցն, և զայրացեալք նմա զուրբ հաւատ ուխտին մերոյ մատնեալ ծաղը ելաւը առնել անաւրինին: Եւ զիս ի՞ւ արդիւաք շանայցէք միիթարել, և կամ ում թախանձե-

շուցանէք քահանայանալ, որ զվիրաւոր ոշխար հաւատին Քրիստոսի տեսանեմ ու պատել ձիթով, և զինով աւծեալ զվիրսն և եղեալ ի վերայ գրաստու, և տարեալ ի պանդոկոցն, այլ յաւշեալ յանխնա [եւ] առաջի զիշակեր զազանացն ընկեցեալ յաւծուումն: Երթեալ յինէն ի բաց և թուլ տուք ինձ ողբալ ընթանուր զկորուստ աշխարհին Հայոց, զոր տեսանեմ աշաւք մտաց ի զաւրութիւնէ վերին ցուցակութեանն: Բազում անգամ աղաշեցին զուրբըն Սահակ գալ յաթոռ Հայրապետութեան իւրոյ և ասէ. մի՛ բռնագատէք զիս ի վերայ բեկման ժողովրդեան իմոյ, վասն զանցս աղետիս այսորիկ յառաջ քան զծեռնագրելն զիս յեպիսկոպոսութիւնն եցոյց ինձ վերին կանխատեսութեանն գիտութիւնն յանուրչս, բատ աւրինակի մարգարէական տեսութեանն, որ ցուցաւ սուրբ նահատակին Գրիգորի, ի գիտութիւն իրացն առ յապա եղելոցն: Զոր և ձեղ պատմել այսաւր բռնադատիմ առն եղեալ սրտի իմոյ, և ցուցանիմ անզգամ, որպէս սուրբ առաքեալն Աստուծոյ Պաւոս, յաղագս սուտ առաքելոցն և անաւրէն մշակացն զրեաց պարձելով առ կորընթացիս յիւր ճնութեանցն հանդէսն:

Հ. ՅՈՂԱՐՅԱՆ

(Իերուսալիմ)

### НОВООТКРЫТЫЙ ФРАГМЕНТ „ИСТОРИИ АРМЕНИИ“ ЛАЗАРЯ ПАРБЕЦИ

#### Р е з ю м е

Полный список „Истории Армении“ выдающегося историографа V века Лазаря Парбеци относится к XVII веку. Однако в Гомилиарии хранилища манускриптов Иерусалимского Армянского патриархата (рукопись № 1), переписанной в 1419 году, нами обнаружен пространный отрывок из „Истории Армении“ Л. Парбеци, который соответствует 12—28 страницам научного издания 1904 года. Этот отрывок имеет интересные разночтения.

Данный фрагмент публикуется полностью в целях использования его разночтений при последующих изданиях текста „Истории“ Л. Парбеци.

N. BOGHARIAN

(Jérusalem)

### UN FRAGMENT RECEMMENT DECOUVERT DE „L'HISTOIRE D'ARMENIE“ DE LAZARE PARBETSI

„L'Histoire d'Arménie“ du célèbre historien du V<sup>e</sup> siècle Lazare Parbétsi nous est parvenue dans un manuscrit datant du XVII<sup>e</sup> siècle.

Il nous a été donné, récemment, de découvrir dans le Recueil d'Homélies, recopié en 1419 (ms no. 1 de la Bibliothèque des manuscrits du Patriarcat arménien de Jérusalem), un long fragment de l'ouvrage précité.

Ce fragment, qui présente d'intéressantes variantes, correspond aux pages 12—28 de l'édition critique de 1904.

Nous le publions intégralement aux fins d'utilisation de ces mêmes variantes dans les éditions ultérieures de „l'Histoire“ de Lazare Parbetsi.

ՀՈՅԱԿԱՆ ՍՈՒ ՄԻԵՒՍՏՐԵՐԻ ԱԽՎԵՏԻ ԱԹՐԵՎԵՐ  
ՄԱՇՏՈՒ ԱՆԼԱՆ ՃՐ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԽԱՏԻՏՈՒՏ-«ՄԱՏԵԽԱԴՐԱՐԱՆ»

ԲԱՆՔԵՐ ՄԱՏԵԽԱԴՐԱՐԱՆԻ

Խ 8

1967

ԱՐՄԵՆ ԱՆԱՍՏԱՆ

### ԹՈՎՄԱՍ ԿԻԼԻԿԵՑՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհագրական գիտովյունը հին Հայաստանում բավականին զարգացած է եղել: Դրա փայլուն վկայություններից մեկն է Հանրածանոթ այն «Աշխարհացոյցը», որը մի ժամանակ վերագրվում էր Սովուս Խորհնացուն, ապա Անանիա Շիրակացուն, իսկ այժմ էլ Համարվում է VII դարի սկզբի մի անառուն հեղինակի գործ: «Աշխարհացոյցը» Համաշխարհային ընդգրկում ունի և ներկայացնում է Եվրոպայի, Լիբիայի (Աֆրիկայի) և Ասիայի աշխարհագրությունը: Այն հետաքրքիր տեղեկություններ է Հաղորդում զանազան երկրների պատմական, ֆիզիկական ու տնտեսական պայմանների մասին:

Ինչպես Հայտնի է, «Աշխարհացոյցը» ժամանակի ընթացքում փոփոխությունների ու վերամշակումների է ենթարկվել, որի հետևանքով և առաջացել են նրա ընդարձակ և համառոտ խմբագրությունները:

Սույն Հաղորդումով մենք նպատակ ունենք ուշադրություն Հրավիրել աշխարհագրական մի փոքր աշխատության վրա, որը կապ ունի «Աշխարհացոյցի» համառոտ խմբագրության հետ:

Դա թովմաս Կիլիկեցու «Տեսակը աշխարհաց և համանգամանք երկրի» վերնագրով աշխատությունն է, որը բաղկացած է երեք հիմնական մասերից՝ Ասիա, Մեծ Հայք և Կիլիկիա: Առաջին երկու մասերում հեղինակը տալիս է Ասիայի երկրների և պատմական Հայաստանի աշխարհագրությունը, իսկ երրորդ գլուխը ամբողջապես նվիրված է Կիլիկիային:

Այդ գործի մասին առաջին անգամ տեղեկություններ է տվել Ղ. Ինձիձյանը իր «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի» աշխատության մէջ, պարզելով նրա հեղինակի անունը՝ Թովմաս Կիլիկեցի, և բնութագրելով գործը: Նա հիշատակում է, որ այդ բնագրի առաջին երկու մասերը բաված են «Աշխարհացոյցից», իսկ Կիլիկիային նվիրված մասը ինքնուրույն է: Հենվելով ձեռագրի վերջում եղած «Թումայ Բարոնի» անվան հիշատակության վրա, նա եզրակացնում է: «Այս բան յայտնի ցուցանէ զթովմաս լինել ի Կիլիկիոյ յոյը սակա և առաւել բան զայլոց աշխարհաց՝ զիւրոյ հայրեննացն յիշեաց զբերս»<sup>1</sup>:

Հետագայում այս ձեռագրին անդրադաել է նաև Ղ. Ալիշանը՝ իր «Միւսուան» աշխատության մէջ: Նա ևս նշում է, որ ավյալ գործի հեղինակը՝ Թովմա Բարոնի Կիլիկեցին է: Ալիշանը միաժամանակ որոշում է նաև հեղինակի ապրած ժամանակը՝ XIV դար<sup>2</sup>:

<sup>1</sup> Ղ. Ի ն ձ ի ձ լ ա ն, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի, Հատ. 4, Վենետիկ, 1835, էջ 315:

<sup>2</sup> Ղ. Ա լ ի շ ա ն, Ալիշան, Վենետիկ, 1885, էջ 9:

Մեր մատենագրությունը չի պահպանել Թովմաս Կիլիկեցու վերաբերյալ կենսագրական տեղեկություններ: Մկրտիչ Աղավնունին իր աշխատություններից մեկում տալիս է մի քանի տեղեկություններ ոմն Թովմաս արեղա Հռոմեացինցու մասին՝ նույնացնելով նրան մեր հեղինակի հետ: Ըստ նրա՝ 1292 թվին, Հռոմեացին անկումից հետո, Թովմաս արեղան Հռոմեացից գալիս է Կիլիկիա: Թովմաս արեղա Հռոմեացին եղել է գրիշը «Գիրք թղթոցի», որ նա ընդորինակել է Կիլիկիայում 1298 թվականին<sup>3</sup>: Մ. Աղավնունու հիշատակած՝ ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ի առաջարանում և «Գիրք թղթոց»-ի հիշատակարանում զգտանք որևէ լրացուցիչ տեղեկություն, որը հիմք տար մեզ նույնացնելու վերոհիշյալ անձնափորությանը մեր աշխարհագրի հետ: Այնպես որ, միայն ենթագրաբար կարող ենք սակ, թե Թովմաս արեղա Հռոմեացին տվյալ աշխատության հեղինակ Թովմաս Կիլիկեցին է:

Թովմաս Կիլիկեցուն անցողակի կերպով հիշել են նորայր Թյուզանդացին<sup>4</sup> և Հ. Անառյանը<sup>5</sup>: Թե՛ Ինձինյանը, թե՛ Ալիշանը և թե՛ մյուսները Թովմաս Կիլիկեցու մասին խոսելիս նկատի են ունեցել Վենետիկի Միհիթարյան մատենագրանում գտնվող ձեռագիրը, որի վերաբերյալ, սակայն, նրանք տեղեկություններ չեն տալիս: Ըստ Հ. Անառյանի՝ վենետիկյան ձեռագրի համարը 632 է, բայց զա հավանաբար սխալ է: Վենետիկյան ձեռագրերի այն ցուցակում, որ հրատարակել է թ. Սարգիսյանը, Թովմաս Կիլիկեցու այդ բնագիրը գտնվում է «Ոսկեփորիկ Դ» ձեռագրում, որը կրում է 243 (Հին՝ 947) համարը<sup>6</sup>: Թովմաս Կիլիկեցու գործը մինչև օրս օգտագործվել է միայն քաղվածարաբ, իսկ բուն բնագիրը մնացել է անտիպ:

Մաշտոցյան մատենագրանի ձեռագիր ֆոնդերում պահպանվող աշխարհագրական նյութերի մատենագիտությունը կազմելու մեր աշխատանքի ընթացքում պարզվեց, որ այդ երկից երկու օրինակ էլ գտնվում է մեզ մոտ (ձեռ. № 1518, 163ա—165ա, № 1770, 87թ—90թ):

Մեր այս օրինակներից առաջինում բնագիրը կրում է «Տեսակը աշխարհաց և համանգամանը երկրի» խորագիրը, իսկ երկրորդում՝ վերնագիրը մի փոքր աղավաղված է: Առաջին բնագիրը ընդօրինակված է 1594, իսկ մյուսը՝ 1589 թվականին: Ներկա օրինակներում չկան նշումներ հեղինակի մասին: Համեմատելով այս երկու օրինակների բնագիրն իրար, ինչպես նաև ինձինյանի և Ալիշանի կատարած մեջբերումների հետ, տեսնում ենք, որ դրանք համընկնում են վենետիկյան օրինակին: Համեմատությունները ցույց են տալիս, որ Թովմաս Կիլիկեցին, քաղելով «Աշխարհացոյց»-ից իր աշխատության առաջին երկու մասերը (Ասիա և Մեծ Հայք), երեմն բաց է թողել տեղանուններ, կատարել է որոշ կրամատումներ, իսկ երեմն էլ՝ ավելացումներ: Մեծ մասամբ անունները այստեղ երեան են գալիս աղավաղված ձեռով:

Պարզելու համար այն հարցը, թե արդյոք Թովմաս Կիլիկեցու մոտ եղած տեղանունների տարրերությունները սոսկ աղավաղումներ են հանդիսանում,

<sup>3</sup> Մկրտիչ և պ. Աղավնունի, Միաբանք և այցելուք հայ երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 156—157:

<sup>4</sup> Նորայր Թյուզանդացի, Հայկական բառաքնութիւն, Կ. Պոյիս, 1880, էջ 108:

<sup>5</sup> Հ. Անառյան, Հայոց անձնանունների բառարան, Հատ. Բ, Երևան, 1944, էջ 322:

<sup>6</sup> Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միհիթարեանց ի վենետիկ, Հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 632:

թե դրանք Թովմաս Կիլիկեցու ժամանակ օգտագործված ձեւեր են, մենք նախ և առաջ ստուգումներ կատարեցինք Մեծ Հայքի նկարագրությանը վերաբերյալ մասում՝ Հ. Հյուրշմանի «Հին հայոց տեղույթ անունները» ուսումնասիրության օգնությամբ, Այս աշխատության մեջ Հյուրշմանը VII դարի «Աշխարհացոյց»-ում առկա պատմական Հայաստանի տեղանունների մասին խոսելիս, միաժամանակ նշում է նաև ժամանակի ընթացքում նրանց կրած ձեւափոխումները, եթե այդպիսիններ եղել են:

Արգունը (կամ Արգինը), որ կա Թովմաս Կիլիկեցու մոտ, Հյուրշմանի տրված տեղեկության համաձայն՝ Աղձնյաց նահանգի Արդն կամ Արձն Կովկած զավաոփ ասորական ձեռն՝ Վերջինս XII—XIII դարերում գործածել են Մատթեոս Ուուշայեցին<sup>8</sup>, Միք. Ասորին<sup>9</sup> և Ասողիկը<sup>10</sup> (վերջինիս մոտ Ազրուն ձեռվ է): Փաստորեն Թովմաս Կիլիկեցին այստեղ օգտագործել է հենց իրեն ժամանակակից մի ձեւ: Սակայն ժամանակակից ձեւի օգտագործման այլ օրինակը համարյա միակն է: Կան մի քանի ուրիշ անվանաձեւեր, որոնց գործածությունը թեև Թովմաս Կիլիկեցուց որոշ ժամանակով առաջ ապահանակ աշխարհացոյց»-ի ժամանակակից շատ ուշ են հանգես գալիս: Օրինակ՝ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության տարրերակների մեջ Վասպուրականի նահանգի Արովիտ և Յոտիղովիտ անունները իրար են համապատասխանում: Թովմաս Կիլիկեցու մոտ այդ անունների դիմաց հանգես է գալիս Բառողովիտ (առար. Բառողովիտ) ձեւը, որն ակնհայտուեն կապ ունի Յոտիղովիտ ձեւի հետ: Թովմաս Կիլիկեցու մոտ եղած Բառողովիտը հիշատակվում է նաև IX դարի հեղինակ Թովմաս Արծրունու մոտ՝ Բառիլովիտ ձեռվ<sup>11</sup>: Այս անվան համար Հյուրշմանը տեղ չի գտել տեղադրելու, ասելով, որ «Աշխարհացոյց»-ում չկա<sup>12</sup>: Ալինին՝ մեր կատարած ճշտումով այն պետք է մտներ Արովիտի նկարագրության մեջ: Այսպիսի օրինակներից է նաև Թովմաս Կիլիկեցու օգտագործած Առնիուտն անվանաձեւը, որը համապատասխանում է «Աշխարհացոյց»-ում պատահող Առնիուտն ձեւին (Վասպուրականի նահանգ): Առնիուտն ձեւը մի անգամ գտնում ենք նաև Թովմաս Արծրունու մոտ, որը համապատակն օգտագործել է նաև Առն Առնոյ ձեւը: Ըստ Երեսուլիթին Առնիուտն ձեւը աղավաղում չէ, այլ ինչպես մտածում է Հյուրշմանը, ներկայացնում է սեռական հոլովի տարրեր ձեւը (Առնոյ-ոտն և Առնի-ոտն)<sup>13</sup>:

«Աշխարհացոյց»-ից շեղվող այսպիսի օրինակներն էլ կարելի է համարել հետագա ժամանակների ձեւափոխումներ, որոնք հասած կարող են լինել մինչև Թովմաս Կիլիկեցու ժամանակները: Մենք համեմատության առանք Սյունյաց նահանգի զավառների այն ցուցակը, որը գտնվում է Թովմաս Կիլիկեցուն ժամանակակից հեղինակ՝ Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիստեման» աշխատության մեջ<sup>14</sup>: Այստեղից պարզվեց, որ Սյունյաց նահանգի գա-

<sup>7</sup> Հ. Հյուրշման, Հին հայոց տեղույթ անունները, Վիեննա, 1907, էջ 168:

<sup>8</sup> Մատթեոս Ուուշայեցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1869, էջ 70:

<sup>9</sup> Միխայիլ Ասորիս պատրիարքի ժամանակակիցներ, Երուսաղեմ, 1871, էջ 255:

<sup>10</sup> Ա. Ասողիկ, Պատմութիւն, Պետերբուրգ, 1885, էջ 195:

<sup>11</sup> Թովմաս Արծրունու, Պատմութիւն, Պետերբուրգ, 1887, էջ 251:

<sup>12</sup> Հյուրշման, նշվ, աշխատ., էջ 214:

<sup>13</sup> Հյուրշման, Հյուրշման, էջ 216:

<sup>14</sup> Պատմութիւն նահանգին Սիստեման, արքեպիսկոպոսի Սիստեմաց, Բիթլիս, 1911, էջ 509—523:

վառների անունները «Աշխարհացոյց»-ի ժամանակից մինչև թովմաս Կիլիկեցու ժամանակը ոչ մի փոփոխություն չեն կրել: Հետեւաբար թովմաս Կիլիկեցու մոտ եղած վերոհիշյալ նահանգի գավառների անունները ձեւերը ոչ թե փոփոխված ժամանակակից անվանաձևեր են, այլ աղավաղզված ձեւեր:

Մենք, միաժամանակ, ներկայացող փաստերը մի առ մի ստուգեցինք Դ. Ալիշանի «Տեղագիր Հայոց մեծաց»<sup>15</sup> և Ս. Երիմյանի «Հայաստանը բատ Աշխարհացոյց-ի»<sup>16</sup> աշխատությունների օգնությամբ:

Այս բոլորից հետո կարելի է հանդի այն եղբակացության, որ, հակառակ ժամանակակից որոշ ձեւերի առկայությանը, թովմաս Կիլիկեցու մոտ շատ հն նաև աղավաղզված ձեւերը: Գաղափար տալու համար եղած աղավաղումների մասին, մինք կհիշենք մի քանի ակնառու օրինակներ՝ փակագծում նշելով ուղիղ ձեւերը՝ ըստ «Աշխարհացոյց»-ի: Օրինակ՝ Կապրաստ (Կապուտան), Աղիծ (Առի), Ազուր (Մզուր), Արշակոնդի (Արմիշակոնդիս) և այլն: Կան նաև անունների համառոտված ձեւեր՝ Ապիանք՝ Ա օրինակում կամ Ապիանք՝ Բ օրինակում՝ (Պիանք), Արմզզան (Որմզզապերոժ), Սպանտարան (Սպանդարանպերոժ) և այլն: Այս են Մեծ Հայքի տեղանուններին վերաբերող մեր կատարած ստուգումների արդյունքները:

Սակայն եթե հեղինակը Ասիայի և Մեծ Հայքի աշխարհադրության գլուխները վերցրել է VII դարի անանուն «Աշխարհացոյց»-ից, ապա Կիլիկիայի վերաբերյալ մասը, ինչպես նշեցինք, ինքնուրուն է: Այս մասը, որքան էլ համառոտ, մեծ արժեք է ներկայացնում Կիլիկիայի աշխարհագրության համար: Նա հետարքիր տեղեկություններ է տալիս Կիլիկիայի բնական հարստությունների, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի մասին: Դ. Ալիշանը բարձր է գնահատում հիշյալ բնագրի՝ Կիլիկիային վերաբերող մասը: Այս փոքրիկ բնագրի հարուստ տեղեկությունները նա որոշ շափով օգտագործել է իր «Միսուան» աշխատության մեջ, տալով մի շարք անծանոթ կամ կասկածելի բառերի բացատրությունները<sup>17</sup>:

Ալիշանը թովմաս Կիլիկեցու բնագրի նկարագրությունը շի տալիս, բայց մի քանի առիթներով նշում է, որ իր ձեռքի տակ եղած օրինակը ունեցել է աղավաղումներ: Որոշ բուսերի և կենդանիների անունները բննելու ժամանակ նա կանգնում է դժվարությունների առաջ, զտնելով, որ դրանք աղավաղված են: Օրինակ՝ մի առիթով նա ասում է, որ իր ձեռքի տակ եղած այդ բնագիրը «ոչ թուի սառուցագիր յամենայնի»<sup>18</sup>: Մի ուրիշ կապակցությամբ նա կասկած է հայտնում, թե «սառուց իսկ իցէ գրուածն»<sup>19</sup>: Որոշ աղավաղումներ կան նաև մեր օրինակներում:

Մենք հարկ ենք համարում ներկայացնել թովմաս Կիլիկեցու աշխատությունը ամբողջությամբ, Մաշտոցյան Մատենադարանի վերոհիշյալ № 1518 (Ա օրինակ) և № 1770 (Բ օրինակ) ձեռագրերի համեմատությամբ:

<sup>15</sup> Դ. Ալիշան, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1855:

<sup>16</sup> Ս. Երիմյան, Հայաստանը բատ Աշխարհացոյցի, Երևան, 1962:

<sup>17</sup> Դ. Ալիշան, նշվ. աշխատ., էջ 9, 13, 14, 17, 30—32:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 31:

### ՏԵՍԱԿԻՔ ԱՇԽԱՐՀԱՅ ԵՒ ՀԱՄԱՆԳԱՄԱՆՔ ԵՐԿՐՈՒ

Ասորիք<sup>1</sup> յերի կայ իւրում ծովուն հիւսիոյ ի Հրէաստանի: Ունի ինքեան և յերինք անուանիք՝ զկիրանան, զԿարմեղոս<sup>2</sup>, և գետ հզօր զՅորդանան, և քաղաք բաղումս և մայրաքաղաք զԱնտիոք և զԴամասկոս: Ունի և զրում թ և վայրս ընդարձակա:

Հրէաստան ելից կայ Փինայդան<sup>3</sup> Պիղագոսին<sup>4</sup> մինչև ի սահմանս եզիապոսին, և ապառաժն Արարիա՝ Ասորովք: Եւ ունի աշխարհն Դ՝ զԳալիիա, զՄամարիա և զԵղոմիա. Եւ լիճն Բ՝ զՏիբերիա<sup>5</sup> և զՄեռեալ ծովն: Եւ գետ Ցորդանան անցանէ ընդ նայ: Ունի և քաղաք բաղումս և զմայրաքաղաքն Երուսաղէմ: Եւ է Հրէաստան քաղցրաբեր և պտղալից, որ բղսէ<sup>6</sup> զկաթն և զմեղրն:

Ապառաժն Արարիա յերի կալով նզիպտոսի և յարևմտից Ճիղիլայ և Կարմիր ծովուն, որ էանց իսրայէլ, յերի կալով Ասորոց և Հրէաստանի: Արարիա փոքր ունի աշխարհն Դ՝ զՏամկաստան, զՓռանդիա, զՄաքար, զոր տուն Արքամու կոչեն. գետ և ոչ մի:

Միշագետք յելից կայ Հայոց առ եփրատ գետով և ի մտից Ասորեստանին առ Դկլաթ գետով և յերի Մեծ Հայոց<sup>8</sup>: Ունի լեառն Բ և գետս Բ՝ զԴկլաթ և զԵփրատէս, և քաղաք բաղումս յորոց<sup>9</sup> մինն<sup>10</sup> է յլուհայ, յորում է պատկերն իրկշական:

Բարեկացիք յերի կալով Միշագետաց առ Դկլաթաւ<sup>11</sup> մինչև զՊարսկային ծովն, և ունի աշխարհն Դ՝ զԱկո... անցանէ<sup>12</sup> ընդ նա գետն եփրատ<sup>13</sup> և Դկլաթ<sup>14</sup>, մենի և այլ ազգս և քաղաքս: Եւ գտանի ի սահմանս նորա ակն սարդիոն: Եւ Քասրայ է ամենալի վաճառօք և ելք նաւուց<sup>15</sup> ի նա ի Հնդկաց, որ է կողմ արեելից:

Անապատն Արարիա յերի կայ Միշագետաց ի մտից<sup>16</sup> խուստնի և ունի ազգս թ, բայց լեառն և ոչ մի:

Երշանիկն Արարիա յերի կայ Ապառաժն Արարիայ և մտանէ ընդ մէջ խորշց Կարմիր ծովուն, որպէս ցամաքամուտ կզզի: Ունի ազգս բաղումս և քաղաք Ծ և յերինս Ժ և գետս Դ և աղբիւր Ա և կղզիս բաղումս և աշխարհն ամենաբարի, է որ յիւրմէ, է որ ի վաճառէ եկելոց ի Ճենաց և ի Հնդկաց: Գտանի անդ ոսկի և ակունս<sup>17</sup> պատուականս, եղս անոյշա, փայտ[ս] անփուս և անտի էր և տունն Սարայ: Եւ բնակիչք աշխարհն ոմանք քաջ սեաւք, ոմանք կիսով, ոմանք սպիտակք և գործին ի նմա եւղը<sup>18</sup> մնոյցք<sup>19</sup> ժեց ցեղ:

Կապողը<sup>20</sup> յելից կայ Հայոց և երի կայ Կասրից<sup>21</sup> ծովուն: Ունի աշխարհն աշայսոսիկ, զԱտրպատական<sup>22</sup>, զՄէտ, զԳեղիան<sup>23</sup>, զՄուկան<sup>24</sup>, զԴէմս, զԱհմատանս<sup>25</sup>, զԴումբան, զՏամպաստան, զԱմրին<sup>26</sup>, զԱրան: Ունի լերինս և գետս և զծովն որ կոչի Կապրատաւ<sup>27</sup>. ունի և քաղաք բաղումս յորոց մինն կոչի Գանձական:

Արուաստան, որ է Ասորեստան, այսինքն՝ Մծրին, յելից կայ Միշագետաց, առ եղերը Հայոց: Ունի լերինս և գետս և քաղաք զնինուէ:

<sup>1</sup> Ե այսոքիկ Հ զկարմեղս Յ Ա Փիլական Հ Ա Պիլաթոս Յ Բ բաշխէ

<sup>2</sup> Ա Մուքիա Յ Հիք և ի մտից Ասորեստանին առ Դկլաթ զետով և յերի մեծ Հայոց

<sup>3</sup> Ա յոր Հ հինն է Հ Դկլաթեաւ Յ անէ Յ եփրատէս Հ Բկլադ Հ Ա նավուց

<sup>4</sup> Ա մտաց Յ ականս Յ մեղք Յ անոյշ Յ Ա Տապողք Յ Կազրից Յ Ա կազրից

<sup>5</sup> Ա զԱտրպատակ Հ զկիլան Հ Ա զԱմուկան Հ Ա զԱհմատան Հ Ա զԴէմս

<sup>6</sup> Ա զԴումբան Հ զՏամպաստան Հ Ա զԱմրին Հ Ա զԱմրին Հ Ա զԱմրին

Ելիմացիք, որ կոչին Խորասան, յելից կալով Դկլաթայ<sup>28</sup> և ի կից Պարսկաց: Եւ ունի Ելիմայ աշխարհս փորունս՝ զեռժաստան, զՄաղմս<sup>29</sup>, Ապաստան, զՄեջրանքատակ, զԳուրմական<sup>30</sup>: Ունի և գետս գ և քաղաքս, յորոց մինն է Գուրսինքուր, յորում զաղնիւ շաքարն դործեն: Ունի և կղզիս թ ի Պարսկային ծովուն:

Պարսք են որ կոչեն Քուսմանդիմ, յելից կայ Խուժաստանի և յերի Մարաց: Ունի աշխարհս՝ զՊարսս, զԱսպահան, զՀակար, զՊանարտաշիր, զԿրման, զՏուրան, զՄանդրան, զՄնդ<sup>31</sup>, զՄպետ<sup>32</sup>, զՎեշտ, զՍագստան, զԱպաստան<sup>33</sup>, զԳեր, զՄշհամիկ, զՄազօն<sup>34</sup>: Ունի գետս և կղզիս և քաղաքս բազումս, յորոց մինն է Շերիմարան քաղաք, յորում աղնիւ մարգարիտն ելանէ և այլ գաւհարք<sup>35</sup>: Եւ գաւհար<sup>36</sup> մարգարիտն ալսէ է: գրագն Զ գանգեանն արժէ ԽԶ գրամ, զամեայն ալս է և մելայն, գ գանգեանն, Տ պարզմուշքա, պարզմուշիթ, Հօթ գրամ, նուա գրամ, դաս դրամ:

Ասորիք, որ կոչին Թրիարտի Խորասան, յերի կայ ծովուն և աշխարհը են նորա այսորիկ. Կոշտ<sup>37</sup>, Ջրկան, Ապրշահատ<sup>38</sup>, Մրուալ, Մարոստ, Հրկ<sup>39</sup>, Կատշան<sup>40</sup>, Սղակ, Ողակ, Անգեպատ, Պերողի<sup>41</sup>, Ազճիր, Գզնի, Նուզան, Վարչան, Բահզ, որ են Պարթևք, Ջարմուկան<sup>42</sup>, Շերմուկան, Գողբան: Ունի յերինս և գետս, և կղզիս, Ե, և ի հեշմուկ կղզի մի հանդէպ Արեաց ի Հնդկաց ծովին, որոց ընակիլքն թղկունք են Գ թղեան հասակաւ և պատերազմին հաւուցն խորգուց՝ վասն Հարակելոյ նոցա զերկիր նոցա:

Սկիթայ, որք Ապախտաւրք այսինքն թուրքն. սկսանի սահմանք նոցա իշԱթ գետոց մին ի Մօրն լեառն և ձգի մինչև ի Ճենս: Եւ Եմաւոն<sup>43</sup> լեառն բարձր և երկայն: Եւ ունի աշխարհս ԽԳ՝ Սողիկ, Թուխարիկ, Հերթախք<sup>44</sup> և այլ խուժադուժ անուանք, և յերինս և գետս և գաշտս անապատս չերմայինս և անջրդիմիս: Եւ են մարդիկ երկրին հաստ անձամբ, որ են ի թուրքաստանի:

Հնդկաստան ելից կայ Նաւաց աշխարհն և յերի կայ Սկիթայ<sup>45</sup>. և են Հընդիկ բաժանեալ աշխարհս, զոր բաժանէ Գեհոն գետ. և ունի արկմտից կողմն աղզս ՄԵ, իսկ արեելից<sup>46</sup> կողմն աղզ ՃԲ: Ումանք ի նոցանէ մարդակերք, ոմանք ագեռք, ոմանք կարճահասակ տափարիթք, լայներեսք, ըսպիտակք. ոմանք մերկիմաստունք, որ գործ անիրաւութեան ոչ դործեն և զմարմինս կենդանեաց ոչ ուտեն, և երկարկեայք: Ունին յերինս և գետս և կղզիս, լինի և երեէ ամրնւնս (?), ունի որս եղջիւրն, նա սպանէ զառիւն, և կորանզն և կապմայմունք, աքաղաղք<sup>47</sup> փետրամորուսք և փեղզ և վագերք և վիշապք և մեծ մրջիւնք և մրջմնափիւծք հեղզ, մկոնք, բղամշկայք և երկրադար գաղան, միեղջերվի, որ մեծ է քան զփիդ և ի վեր աղինն նանք, և զփիդ լեզուան սպանանէ, և հաւն փասկուն և մաշկերանոյ և լիս եղջիւրայ: Լինի և ոսկի ընտիր և մարգարիտ, և ակն ամենագուհար. լինի և պղպեղ և սինգուղեղ և ոռովի ճառք, հալուեայ, փղանգեայ մուշի, քաֆուր, ճանդատակ, դարսենիկ:

[Տ]արարուիուն<sup>48</sup> է մեծ կղզի՝ ԾՃ մղոն երկայն, ԾՃ լայն, յերի կալով Հընդկաց, և ունի շուրջ զիւրք այլ կղզիս մասունս ԾՑՀ: Ունի յերինս և գետս և աղզս ԺԲ: Լինի ի նմա ոսկի և ակունս պատուական, և գաղանք՝ փիդ և զագր: Եւ արք աշխարհն վարսիւք կնոշ պսակն զգլուխս իւրեանց:

<sup>28</sup> Ա թկլադա <sup>29</sup> Բ զՄաղմս <sup>30</sup> Բ զԳումական <sup>31</sup> Բ զՌնդ <sup>32</sup> Ա զՄպետ <sup>33</sup> Ա զԱսպաստան <sup>34</sup> Ա զԱղոն <sup>35</sup> Ա զոնարք <sup>36</sup> Ա զոհարք <sup>37</sup> Ա կշառ <sup>38</sup> Ա Ապրշահայ <sup>39</sup> Ա ՀՅ <sup>40</sup> Ա Կատշատ <sup>41</sup> Ա Գողոց <sup>42</sup> Ա Զարմական <sup>43</sup> Բ Եմաւոն <sup>44</sup> Բ Հերթաշք <sup>45</sup> Ա Սկիթա <sup>46</sup> Բ յարսմակ <sup>47</sup> Բ խոսք աղաղակ <sup>48</sup> Ա Զարարուիուն

Ճենաստան<sup>49</sup> յերի կալով Սկութայ և մինչև յանծանօթ յերկիրն: Եւ է Ճենաստան ընդարձակ դաշտ տարածեալ, յորում բնակեալ են յաղզ իթ, յորոց Ա մարդկեր է: Ունի յերինս և գետս. և լինի նմա զարիձանիկ և կատիմոն և Հրեշմուկայ և հաւ սիրամարգ, տատ և քրքում յոլով, և ապրիշում շատ և աղնի, որոց արքայն կոչի Ճենարկուր, որ նստի ի քաղաքին Սիւիփայ<sup>50</sup> և հասարակաց զգեստ երկրին կերպասեղին է:

Իսկ անծանօթ երկիր Սինէացցոց<sup>51</sup> առ յերի կալով Ճենաց, յորում են աղզ Ե, բայց պատմի զանցանէ անծանօթ մարդկեկն և գտուարայհաւատալի, զի են, ասեն, անընդելք, մարդակերք, կիսանձունք, վիշապուտոնք, հաւակտուցք, կիսագազանք, կիսամարդիք անգլուխք, այլաձեք, ահարկուք, անպատմելիք ի մարդկանէ:

### ՍՈՀՄԱՆՔ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԵՐԸՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Բարձր Հայք ունի գաւառս Թ. զԴարանաղի, զԱղիճ, զԱզուր, զԵկեղեց, զՄանանշի, զԴերշանչ, զՄպեր, զԵազգամք, զԿարին: Ունի յերինս Գ. և երէս բազումս, հաւ պիտանիս և չերմուկս և աղմ<sup>54</sup>, և է բարձր բան զամենայն երկիր, քան զի ընդ Գ կողմանէ արձակէ գետս. և քաղաք է սորա Կարին, որ Թէոդուպոլիս կոչի:

Երկրորդ Հայք յերի կայ բարձր Հայոց, ունի գաւառս Ը. զԽորձէն, զՀաշտէնս, զՊաղնատուն, զԲալուհովիտ, զՌոփաք<sup>55</sup>, զԽանձիթք, զԳովզէք, զԴեղիկ: Ունի բերդ, գետս և յերինս. ունի երէս և ձկունս, և ի գաղանաց՝ զափիւն:

Աղձնիք առ Տիգրիս<sup>56</sup> գետով կայ. գաւառս ունի Ժ. զԱրգին, զԱնփառներտ, զՔեղ<sup>57</sup>, զԿեթիկ, զՏարիկ, զՄալնուանս<sup>58</sup>, զԽերհեթ, զԳեղ, զԱլուածոր, զՄասուն. և ունի նոյզ և երկաթ, զթղոր և ունի հաւ զգեցոն:

Տուրաբերան<sup>59</sup> յերի կալով Զորրորդ Հայոց գաւառս ունի ԺԶ. զԽոյթ, զԱսպակունիք, զՏարօն, զԱրշամունիք, զՄարդաղիմիք, զՄանանաղի, զԴաստնաւորր, զՏուարծատափ<sup>60</sup>, զԴաշ<sup>61</sup>, զՀարք, զԿարդունիք, զԵրիվարք. զՊղունեամք Ճ մղոն և լայնութեամք Կ: Լինի ի նմա զազպէն և մեղր, նաւթ<sup>63</sup> և երկաթ, մաշկամիք և պատակք<sup>64</sup>:

Մողք<sup>65</sup> յելից կայ Աղձնեաց յամուր ստորոտ լերինն, գաւառք ի նմա Թ. իշայք, իշոց գաւառս, Առնենից Ճոր, Միջա<sup>66</sup>, Առանձնակ<sup>67</sup> Մոզս, Արքայից գաւառ, Արգաստեացովիտ, Զերմածոր<sup>68</sup>. ունի մրգոյ խնձոր<sup>69</sup> և մանրագոր և ընկոյզ. ի գաղանաց՝ զինձն զեղեցկախայտ, հաւ, զկաքաւ<sup>70</sup>:

Կորձայք<sup>71</sup> յելից կա Մոկաց առ Ասորեստաննեալք<sup>72</sup>, գաւառք նորա Թ. Կորդիս<sup>73</sup>, Կորդուն, Ասուանդ, Ազմոթղանս, Որսիրսն<sup>74</sup>, Կարսպաւնիս, Մախուկն ելի, Փոքր Ազքակ: Ունի զափիկ և պառլու աղնիւ:

Պարսկահայէն յելից կուտէ կայ Կորձայք առ Աստրապատականաւ. գաւառս ունի Թ. Աղու, Կուռիան, Մարի, Թիափիու<sup>75</sup>, Եսաոնայ<sup>77</sup>, Տամրատ, Զարհան<sup>78</sup>, Զարուանդ, Հեր: Ունի երէ, ցիս և այծեամն:

<sup>49</sup> Ա մենաստան <sup>50</sup> Ա Կոփայ <sup>51</sup> Բ Նախեացցոց <sup>52</sup> Ա Մեծաց Հայոց <sup>53</sup> Ա զԴերջանան

<sup>54</sup> Ա աղու <sup>55</sup> Բ զՌոփաք <sup>56</sup> Բ Տիգրիս <sup>57</sup> Ա զԹիշ <sup>58</sup> զՄալնուանս <sup>59</sup> Ա Զուրառբերան

<sup>60</sup> Ա զՄպիւզ <sup>61</sup> Բ զՏուարծափափ <sup>62</sup> Ա զԳզաւ <sup>63</sup> Ա նօթ <sup>64</sup> Բ պսակ <sup>65</sup> Ա կող

<sup>66</sup> Բ Միջակ <sup>67</sup> Բ Առանձուկ <sup>68</sup> Ա Զերաձոր <sup>69</sup> Ա չիր ունի մրգոյ խնձոր <sup>70</sup> Ա զայքաւ

<sup>71</sup> Ա կորճ <sup>72</sup> Բ Ասորեստաննօթ <sup>73</sup> Բ Կողրիս <sup>74</sup> Ա Որսիրսն <sup>75</sup> Բ պաւդ <sup>76</sup> Բ Բամփիու

<sup>77</sup> Ա Եսաոնայ <sup>78</sup> Բ Զարհանդ

Վասպուրական ի մտից կոյս է Պարսկայայոց յերի Կորձայից: Գաւառը ևն նորա լջ. Ռշտունիք<sup>79</sup>, Տուսպ, Բզունիք<sup>80</sup>, Արշակովիդ, Բառողովիա<sup>81</sup>, Գառնի, Ասրերանի, Բուժունիք, Կղանովիտ, Հայոց ձոր, Սոնիոտն, Անձևացիք, Տրավառունիք<sup>82</sup>, Երուանթունիք, Մարգաստան, Արտազ, Աղրակ մեծ, Անձահից<sup>83</sup> ձոր, Մոռնաւան<sup>84</sup>, Ճուաշ, Կրանունիք, Վրձունիք<sup>85</sup>, Պալունիք, Արտաշիպան<sup>86</sup>, Արտաւենան, Բարան<sup>87</sup>, Գաւաքան, Գաղրիկան, Մագանդ, Վարժունիք, Գողթն<sup>88</sup> գինաւուր, Նախուան<sup>89</sup> քաղաք:

Մինիք յելից կայ Այրարատոյ<sup>90</sup> ի մէջ Երասխայ և Արցախայ: Գաւառը ևն նորա ժի. Երնչակ<sup>91</sup>, Ճաճուկ, Վայոց ձոր<sup>92</sup>, Գեղարքունիք, յորում է ծովն, Կոտայք, Աղաչէճ, Ծղուկը, Հարրանդ<sup>93</sup>, Բաղր, Զորք, Արկիք<sup>94</sup>, Կոսական: Լինի ի նմա մուրտ և գերայիք<sup>95</sup> և նուռն. և ամուրք ևն:

Արցախ<sup>96</sup> յերի կայ Սիսնեաց: Գաւառը ունի ժի, զոր Աղուանք անուաննն. ոՄիւս Հիւրանդն, Վակունիք, Բերդանոր, Մեծիրան, Մեծկուանիք, Ապիանք<sup>97</sup>, Պածկանք, Սիսականք, Կոտայք<sup>98</sup>, Քուտիփառնէս<sup>99</sup>, Կողթ, յորում լինի բարախունին:

Փայտակարան յելից կայ Ուտիայ, առ Երասխաւ: Գաւառու ունի ժի (sic) դոյր (sic) այժմ Ասրապատական ունի. է փորտկէ, Հրակարտափերուժ<sup>100</sup>, Վարդանակերտ, Քրական, Խոսրաշայ, Քաղանդում<sup>101</sup>, Խանի Թաշ, Բագաւան<sup>102</sup>, Սպանդարան, Որմզդան, Կաղրք: Լինի ի նմա բամբակ<sup>103</sup> անրաւ և գարի բնաւոյս:

Ուտա ի մտից կայ Երասխայ ի մէջ Արցախայ և Կոր գետոյ<sup>104</sup>, զոր Աղուանքն ունին: Գաւառըն նորպ է. Առաստղոտ, Ասիգուտ<sup>105</sup>, Փայեակ, Գարդմանք. Շագուշէն, Ուտի առանձակ, յորում է Պարտաւ քաղաք: Լինի ի նմա ձիթանիք և յասմիկ, և ունի հաւ զկատակ:

Գուգարք ի մտից կայ Գուգարաց<sup>106</sup>, ամրոցովք իրովք և բերդօզք (sic): Ունի գաւառու թ. Կող, Բերդախտ, Պարտիզափոր<sup>109</sup>, Գուրազս, Ճակատս, Արսեց փոր: Ունի թուղ և նուռն, աղտոր և նուշ:

Այրարատ ի միջի կայ յառաջասացելոց աշխարհացք: Գաւառը ևն նորա թ, զոր Վիրք ունին. Բասեան<sup>110</sup>, Գարեղեանք<sup>111</sup>, Արեղեանք, Ապահունիք, (Աշարունիք)<sup>112</sup>, Բարիաւանան<sup>113</sup>, Սաղկուն, Կողովիտ, Ճակաղնէ, Ծծումք, Շիրակ, Արագածոտն, Մասեացոտն, Նիգ, Կոտայք, Մագազ, Վարտանիք, Աշոտս, Ոստանն Շարուր և Դինի բաղար զոցա: Ունի լերինս զԱրագած, զԿորուզ, զՄասիս՝ տապանական, և գետս և դաշտս պիտանիս և ամենալիս, Երէս<sup>114</sup>, Հաւս բաղումս աղգի աղգի և գեղեցկատես և բաղդր ի ճաշակս. և ունի զմայր եկեղեցեաց որ ի Վաղարշապատ քաղաք, որ է էջմիածին, և զուրբ Շողակաթն:

<sup>79</sup> Ա Բուշունիք <sup>80</sup> Ա Բզունիք <sup>81</sup> Բ Բառովովիտ <sup>82</sup> Բ Արպատունիք <sup>83</sup> Ա Անձահից  
<sup>84</sup> Ա Բոռնաւան <sup>85</sup> Ա Վրնչունիք <sup>86</sup> Ա Արտաշիպան <sup>87</sup> Բ Բագան <sup>88</sup> Բ Գողդն <sup>89</sup> Բ Նախուան <sup>90</sup> Ա Արտոոյ <sup>91</sup> Բ Երժնչակը <sup>92</sup> Ա Վայոց ձոր <sup>93</sup> Ա Հարրանտ <sup>94</sup> Ա Արէնիք  
<sup>95</sup> Ա գերատի <sup>96</sup> Ա Արցախ <sup>97</sup> Ա Ապիանք <sup>98</sup> Բ Կուտայք <sup>99</sup> Բ Քութիփառնէայ  
<sup>100</sup> Բ Հրակարտափերուժ <sup>101</sup> Ա չիք Բոտրաշայ, Բաղանդոտ <sup>102</sup> Ա Բագուան <sup>103</sup> Ա բանպակ  
<sup>104</sup> Ա չիք և զարի բնարոյս Ուտա ի մտից կայ Երասխայ ի մէջ Արցախայ և Կուր գետոյ <sup>105</sup> Ա Առիրոտ <sup>106</sup> Բ Կողբակիքոր <sup>107</sup> Բ Բունեզ <sup>108</sup> Ա Գուգարաց <sup>109</sup> Բ Պարտիզիփա  
<sup>110</sup> Բ Բասան <sup>111</sup> Բ Գարբեղեանք <sup>112</sup> Բ օրինակում չկա <sup>113</sup> Ա Բաւէտանդ <sup>114</sup> Ա Էրէս

## [ԱՆԽԱՐԺ ԿԻԼԻԿԻՑ]

Կիլիկիայ ի միջի կայ Ասորոց և Գամբաց: Ունի գաւառու և բերդու և գետու աղպումս և աղբերս<sup>115</sup>. Երէս<sup>116</sup>, զարզ<sup>117</sup> և զինձ<sup>118</sup>, Աղն, պլատան<sup>119</sup>, այծեամն և մաքիս վայրի, վիթ և վամեց և հաւ սիրամարգ և սալամ, կաքաւ և տուռէճ, արաւու<sup>121</sup>, արաւու, բազէ և լոր: Ունի միրգա<sup>122</sup> զինձոր<sup>123</sup> և տանձ<sup>124</sup> և տարուր և ծիրան, թրինչ և նումայ<sup>125</sup>, նարինչ և լիմաւ<sup>126</sup>: Ունի երկաթ և աղ, բամբակ<sup>127</sup> և ապրիչում<sup>128</sup>, արշասպն և ծծումբ, չերմուկ և բորակ և ձիթ սեաւ և սպիտակ. և մայրաբաղաք զՏարսոն<sup>129</sup> և զՄիս, ուր է ապակէ հողն<sup>130</sup>, և զԱլյաս<sup>131</sup> նաւահանգիստ բաղում նաւաց<sup>132</sup>. լինի մուղուալայ և շապալութ, հաճար՝ թ ցեղ<sup>133</sup>, բուղ և զաֆրան<sup>134</sup>, վարդ և մուրտ և մանուշակ և եղչիւրի<sup>135</sup> ծառ և ձիթապտուղ և աղտոր և նուշ և արմաւ և կաղին, արքայընգոյզ<sup>136</sup>, թուղ և նուռն, սարեկ և մաննեխ, պատեխ, ձմերուկ, շամամ գեղեցկախալու և կոթայ, սերկամի և յունապ, կասկ և հոյն յանտափի<sup>137</sup> և Սանօպարի<sup>138</sup> փիզոյ և այլ բիւր բարիս անթուելիս:

Ա. Ա. ԱՆԱՅԻՆ

## ГЕОГРАФИЯ ТОВМАСА КИЛИКЕЦИ

## Р е з ю м е

На основе сличия двух рукописей, хранящихся в Матенадаране имени Маштоца, автор публикует небольшую работу по географии, которая имеет непосредственное отношение и к краткой редакции армянской «Географии» («Աշխարացուց») VII века. Г. Инджичян, Г. Алишан, Б. Саркисян и другие исследователи были знакомы с этой работой Киликеци по рукописям, находящимся в Венецианском книгохранилище мхитаристов. Они установили имя автора и эпоху, в которую он жил (XIV в.), однако оригинал до сих пор не был опубликован. Недавно выяснилось, что два экземпляра этого произведения находятся в Ереванском Матенадаране имени Маштоца (рук. №№ 1518, 163а—165а, 177а, 87б—90б). Первые две главы публикуемой рукописи представляют географию стран Азии и исторической Армении, третья же глава целиком посвящена Киликии и содержит интересные данные о ее естественных богатствах, а также растительном и животном мире.

<sup>115</sup> Բ աղրիւր <sup>116</sup> Բ էրէս <sup>117</sup> Բ զարզ <sup>118</sup> Ա զինձն <sup>119</sup> Ա պշտան <sup>120</sup> Բ վուռուս <sup>121</sup> Ա արօս <sup>122</sup> Բ միրգ <sup>123</sup> Ա զինձոր <sup>124</sup> Ա տանձ <sup>125</sup> Ա նումա <sup>126</sup> Ա լիմօ <sup>127</sup> Ա բամբակ <sup>128</sup> Բ սպիտակ <sup>129</sup> Ա զՏարսու <sup>130</sup> Ա ապակէ հողն <sup>131</sup> Ա զԱլյաս <sup>132</sup> Բ նաւաց <sup>133</sup> Ա հաճար, ցեղ <sup>134</sup> Բ զաֆրան <sup>135</sup> Բ եղչիւր ծառ <sup>136</sup> Ա արքայընգոյզ <sup>137</sup> Ա յանգափի <sup>138</sup> Ա Սինապարի

A. H. ANASSIAN

## LA GEOGRAPHIE DE THOMAS DE CILICIE

L'auteur publie le petit ouvrage de géographie de Thomas de Cilicie apparemment lié à la rédaction abrégée de la Géographie arménienne du VII<sup>e</sup> siècle et dont le Maténadaran d'Erévan possédait deux copies récemment mises au jour (ms 1518, 163<sup>r</sup>—165<sup>r</sup>; ms 1770, 87<sup>v</sup>—90<sup>v</sup>).

Les philologues Gh. Indjidian, Gh. Alishan, B. Sarkissian et d'autres eurent connaissance de cet ouvrage à la Bibliothèque de la Congrégation des Mékhitaristes de Venise. Ils en déterminèrent l'auteur et l'époque (XIV<sup>e</sup> s.).

Ce texte, publié pour la première fois, concerne les pays asiatiques, la géographie de l'Arménie historique. Le troisième chapitre est entièrement consacré à la Cilicie, la flore, la faune et les ressources naturelles de cette contrée.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ՄԻՒԽԱՐԵՐԻ ՍՈՎԵՏԻ ԱՌԵՄԲԵՐ  
ՄԱՆՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԽՆ ԶԵԺՈՎՔՐԵՐԻ ԽՆՍՏՈՒՏ-«ՄԱՏԵՆԱԳՈՐԱՐ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԳՈՐԱՐՆԻ

ԵՐԵՎԱՆ

N 8

1967

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀԱՑՈՅՑ  
ԶՈՒՂԱՅԵՑԻ ՊԵՏՐՈՍԻ ՈՐԴԻ ՀԱԿՈԲԻ

Բրիտանական թանգարանում Sloane 4090 (17) համարի տակ պահպատ է Հայերեն գրությամբ մի թերթ: Չինական թղթի վրա, երկու էջերում խիտ (յուրաքանչյուր էջում 40 տող) և անվարժ գրված այս գործը Զուղայիշի Պետրոսի որդի Հակոբի ճանապարհացոյցն է, որ նա զրել է Լոնդոնում 1676 թ. դեկտեմբերի 1-ին, այնտեղ նշված ճանապարհներն անձամբ անցնելուց հետո\*:

Գրության նպատակն է ցուց տալ իրանի տիրապետության սահմաններում գտնվող առևտրական գլխավոր ճանապարհների ուղղությունները, նրանց վրա գտնվող կարևոր կետերը և դրանց միջև եղած հեռավորությունները:

Ելման կետը Պարսից ծոցում իրանի գլխավոր նավահանգիստ Բևնդեր-Արբասն է: Այստեղից դուրս է գալիս առաջին ուղին և ձգվում Պարսից ծոցի իրանական և արարական ափերի կարևոր նավահանգիստները:

Երկրորդ ճանապարհն անցնում է ցամաքով: Այն գուրս է գալիս նույն տեղից, ձգվում դեպի արևմուտք, անցնելով Լար, Շիրազ, Սպահան, Ղազվին, Թավրիզ, Երևան քաղաքների վրայով, ավարտվում է Արգրումում:

Երրորդ ուղին իրանական տիրապետությունից դուրս է: Արգրումից, ավելի շուտ Բյուրակն լեռներից Եփրատի հոսանքով իջնում է մինչև Բաղդատ և Բասրա: Այստեղ միայն վերջին երկու քաղաքների հեռավորությունն է նշված:

Չորրորդ և ամենաերկար ուղին սկսվում է Բաղդատից, մանում իրանական հող և Քերմանշահի վրայով ձգվում դեպի Հյուսիս, մինչև Ղազվին: Այնտեղից իջնում է Ղում, ապա Թեհրանի վրայով զնում է մինչև Մեշհետ և Երկանողություն: մեկը հասնում է մինչև Ղանդահար (այժմ՝ Աֆղանստանում), մյուսը՝ Մերվ (այժմ՝ Ուզբեկստանում):

Հեղինակը մի քանի տեղերի վերաբերյալ է ժլատ տեղեկություններ տալիս, մյուս դեպքերում միայն վայրն է հիշում և հեռավորությունը՝ նախորդ կետից:

Տարածության շափի միավորներն են «լէկ»-ը (Հավանաբար մղոնը) «օրէն ճանապարհ», որ լինում է ձիով և հետեւակ, և «զունադ»-ը (իջևան): Առաջինով ձովային ուղիներն են նշված, մյուսներով՝ ցամաքային: Հեռավորությունները գրված են Հայերեն տառերով և մինույն ժամանակ՝ թվանշաններով, ուր երեմն տառը, երբեմն թվանշանն է առաջ դրված: Միօրինակության համար տառը գրել ենք առաջ, թիվը՝ հետ և առել կլոր փակագծերի մեջ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Ճանապարհացոյցի» լեզուն, որ գրված է նոր Զուղայի բարբառով: Հեղինակը հմուտ չէ Հայերենին, այդ

\* A catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, by Frederick Cornwallis Conybeare, London, 1913, էջ 303—304.

պատճառով շատ բառեր կրկնելիս, գրում է տարբեր տառադարձությամբ: Հատկապես աղավաղված են հատուկ անունները: Սուրանկյուն <> փակազգերի մեջ տալիս ենք այդ անունների ուղիղ ձևը, ինչպես նաև օտար բառերի իմաստները:

Ներկայացնում ենք բնագիրը՝ Բրիտանական թանգարանից ստացված միկրոժապավենից:

### ՃԱՆԱԳԱՐՀԱՅՈՅՑ ՅԱԿՈԲԱՅ ՈՐԴԻՈՅ ՊԵՏՐՈՍԻ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ

Թվին 1676—1679, դեկտեմբերի Ա. (1) կուրայ <Լոնդոն> բաղադրատան գործում գրուստ այս է, որ Հայջամբաստանայ <Աջամստան> հայուայշին ըսկալէն <նավահանգիստ>, որ ծուվի ափ, որ է այնուն Բայտար Արասի <Բենգեր-Արբաս>, որ տեղին չուր ի Հոմուզ <Հոմուզ> ծուվի այտայ <Կրդպի> այս, թի (8) լէկ:

Յետու Ա. (1) պօրտ <նավահանգիստ> կայ, այնուն Բատայր Քուէ <Քունկ> այս: Ա. (1) պօրտ կայ, որէն անուն Մեզկատ <Մաղկետ>: Ա. (1) պօրտ կայ, որ այնուն Բայուարապ <Բահրեին> այս, որ է Հայջամստանայ շահին օլքէն զաֆիթ <իմա՝ շահի տիրապետության տակ է>:

Բայտայրէն, որ Գուպկետի՝ լայտ <Լար>, որ է Բատայրէն չուր ի Լայտ ճանապահ օրէն ձիու է (7):

Յետ Լայտու չուր ի Զառում <Զերհոմ> բաղադր թ (6) օրէն ճանապահ: Զուռումու չուր ի Շերայլ <Շերազ> բաղաքն ճանապահ թ (6) օրէն, որ է լէվ, մեծ բաղադր Շերայլ, լէվ շրեր, լէվ ախր[բներ]:

Յետ Շերայլու չուր ի Բապան <Սպահան> բաղադր, որ է թագաւորն տեղն, կայ մէջումն Ա. (1) գիտ, որ այնուն Զատայրուու <Զահինդերուու>:

Գիտին էն լերեսն, որ Զուդայ և այլ տեղն, որ է բնակարան քրիստան <քրիստոնյա>, որ խայ, հաւտան Քրիստոսի: Գիտուն վերայ Ա. (1) կարմուն, որ է անուն Զատայրու: Էս գիտուն վերայ Ա. (1) կարմուն կայ, որ է այնումն է Այլավէրտի խանուն կարմունն, որ կայ շաշմայ <ակն, կամար>: Էս կարմունն զի (94) շաշմայ <ձեռագրում՝ չաշմայ>, որ համէն շաշմայ եկլեղի <անգլիական> գայզ 12 կամ թէ 19 գայզ: Անց այ գիտուն էս ճանապահն, որ զնայ թաքաւորին սայրէն <պալատ>, որ անումն Ալիդափին, որ ունի Ա. (1) մետայնի <հրապարակ>, չուրս կուղմն ու ուխչ բարուվ շենաց այսու, որ կայ մէջումն, չուրս կողմէն չուր <ձեռագրում՝ շոր> է, և այս բաղադր պարեսապն շննվածքն ուխչ խուր այս, որ ունի էս բերթուս ի՞ (24) գուռն, որ անումն զարվայլ <զարպաս> այս: Սավայ <բացի> էս զարվայլին կայ փոքր գուռն, բուլուրումն ի՞ (24) պղտեկ գուռն բերթուս, որ էս բերթն թ (2) օրէ [ճան]ապահ, որ բուլորեկ այ շորս կողմն:

Յետ բերտուն կայ թ—դ (2—3) օրէն ճանապահ, որ է շորս կողման գեղէր՝ մեծ-պղտեկ, ուխչ 1120 գեղ բուլորուս Բապանայ բաղաքուն:

Յետու Բապանայ չորս կուղմուն երկերն, որ զնայս դուրս Բապանայ չուր ի բայլայն <Բայլան> բաղադրն դ—դ (4—3) օրէն ճանապահ այս, որ է Ա. (1) լէվ բաղադր:

Յետ Քայլանայ չուր ի Ղաղվեն <Ղաղվին> է (7) օրէն ճանապահ այս:

Ղայլվենու չուր ի Ֆարայդպէ <Ֆարապատ> թ (6) օրէն ճանապահ այս: Ֆարապատ բաղադր այս: Յետ Ֆարապատու չուր ի թարվեկ <թավրիկ> էլ բաղադր չկայ:

Ֆարապատուն չուր Ա. (1) գիտ կայ, որ է անումն Ղափալլթու գետ, որ զնայ խառնվի Արաստին <Երասխ>, որ զնայ:

Ղայրայ Դակուզն տեղէն չուր ի թարվէդ բաղաքան ժօ (16) օր ճանապահ այս:

Որ Ըսպանայ չուր ի թարվէդ լի՞ (34) զօնադ օրէն ճանապահ այս: Որ է թարվէդ լէվ, մեծ բաղադր:

Յետ Թարվէզու չոր ի Ֆարեվան <Երևան> բաղադրն ժօ (16) օրէն ճանապահ այս:

Որ Ըսպանա չուր Յերևան բաղադրն է Մ (50) օր ճանապահ այս:

Որ է Աջամբստանայ չուր ի Խուռմայց <Հոռմուց> տուն, որ է Հայուալին բաղադրն, որ է այնումն Առզեռում:

Առզուռումու չուր ի Մուշ է (7) օրէն ճանապահ այս, որ խայելվար կատէն սուրբ Կարապիտ Մուշու Սուկտայն:

Ֆարեվան բաղադրն Ա. (1) բերթ այս, որ է էս բերթէս վերայ, այշու կույն բերթին տակումն Ա. (1) գիտ կայ, որ է անումն Զակու շայ <Զանգու>, որ էս գիտէս զուրին գուլման Գելայն <Գեղամայ> բաղադրէն գուլմայն:

Որ է Ֆէրեվան բաղադրէն չուր ի Առզեռում բաղադրն, որ է Օսլմալու <Օսմանլու> բաղադրն, որուն գրայա <գրանտ, մեծ> թուրքին Հաւաշին բաղադրէն էս Առզուռում բաղադրս, որ է սարին անումն Սավալան դաղն <Բյուրակն լեռ>, որ էսաեց ախրուր գուս գոլման, որ կայսեն թէ, որ Շայտին <Եփրատ> չուրն, որ էն սայրէն այս գուրս գուլման, և այլ Արագին չուրն, որ կայ, էլ էն սարէն այս գուլման: Որ տեղէն չուր ի Բաղդատ Շայտին չուրն այս, որ Բաղդատ թուրքին տակօվն անց կայ, որ Շատին վերայ կայ 160 բարքայ, որ կարմուլ այ լր կապաց: // Բաղդատայ չորս կուղմն՝ դ (3) կուղմն պարեսապ այս, Ա. (1) կուղմն՝ Շայտն [շուրբ, որ էն Շայտն այս, որ զնում այս Պասրայ՝ խառնման մեծ ծովն:

ի՞ (24) զունադ այ Բաղդատայ չուր Պայտրայ: Բաղդատայ որ ուզէս զնայս Ըսպան ավեալլ որ Բաղդատայ գուս ելուս զնայ դ—ն (4—5) օրէն ճանապահ, Ա. (1) գիտ կայ, որ զնաման այս՝ Դարրատն կայսեն, էն տեղէն չոր ի շային խուզն <շահի հողն> թ—դ (2—3) սահաթէն ճանապահ այս:

Յետու տեղէն չուր ի Քրմանշայ <Քրմանշայ> Ա. (1) լէվ բերթ այս, Ա. (1) սարի վերա, որտեղն կայ Ա. (1) խան, որ ի՞ (22) օրէն ճանապահ ուր զալէթումն այ <իմա՝ տիրապետության տակ է>: Քրմանշայ թ (2) զունադ զնայս գէպի Համատան բաղադրն, կայ Ա. (1) գիտ, որ զնամ այս խառման Շայտն էն չուրն, որ էնունն Փալայլօրդ գիտ:

Տեղէն չուր Համատան բաղադրն զունադ ձիայն ժօ (13) օր:

Որ Քրմանշայու խետ չոր ի Համատան բաղադր, Համատանայ չուր ի Ղայլվեն բաղադր ժԱ (11) օրէն ճանապահ այս:

Ղայլվենու խետ, որ կուզի զնայ դայալ ի Մայշատն <Մեշհետ> բաղադր կայ, յառաջին բաղադրն, որ է անումն Ղում այս:

Որ բաղադր Ղայլվենու չուր ի Ղում թ (8) օրէն ճանապահ այս:

Ղումու չուր ի Թերայն <Թեհրան> ժօ (12) օրէն ճանապահ այս:

Թերանայ Լասկերտ է (7) զունադ այս:

Էասկերու չուր ի Դեղմային <Դամգան> Թ (9) զունադ այ: Քաղաք այ:  
Դղմանայ չուր ի Մաղինան քաղաք ԺԵ (15) զունադ այ:

Մաղինան չուր ի Նշարուր <Նիշարուր> որ քաղաք, որ ինչ փիրուլայ կայ,  
ուխչ տեղէն այն զուն, որ է էնումն ֆուզեվար <Փրանսերեն> Թուրքիչայ:

Նշարուրու չուր ի Մավեար <Սերգեար> Զ (6) զօն[ադ] այ:

Մավզարու <Սերգեար> չուր ի Սեշեա քաղաք ԺԲ (12) օ[ր] զօնադ այ,  
որ է զգալրայշի մեծ փիրին տեղըն, որ անումն իմամ Բոհե <Ռեզա> այ, որ  
մեծ բերթայպարեսպ ա, որ էն եմամն Ա (1) մաշեթ կայ, որ անումն իմամ  
Բոհե այ, որ է գորեթն <զմբեթ>, որ ուխչ ուսկի քառիկ <աղյուս> այ, շէքն  
որ շենաց այ:

Մեշայտու խետ զնայ, որ Ղաղվենու չոր Մաշատն ԽԴ (44) զունադ այ:

Մաշայտէն չոր ի Ղուփայն Զ (6) զունադ այ, քաղաք այ:

Ղուփանու չուր ի Հարաթ Էլ Ժ (10) զունադ այ, որ մեծ քաղաք այ, մեծ  
աշարեսպ այ:

Հարաթայ չուր ի Մավեար <Սարգեար Շենդան> զունադ այ է (7):

Մասվարու չուր ի Թապայս քաղաքն ԺԱ (11) զունադ այ:

Թապայսէն չուր ի Քուշբնուսուն Թ (9) զօնադ [այ]:

Քուշբնուսուէն չուր ի Ղաղարի <Ղանգահար> մեծ քաղաքն ԺԲ (12)  
օրէն զօն [ադ այ]:

Որ Կառիմայշ չուր ի մեծ քաղաք Ղատայարն զօնադ Մաշատէն ԽԴ (44):

Որ Բսպանայ չուր ի մեծ քաղաքն Ղայտարու զունադ այ 11 օ[ր] զօն[ադ]:  
Մայշատէն չուր Մավը քաղաք, որ է մեծ բերթ զգիլրայշին այ: Մայշատէն չուր  
ի Մավը ԺԲ (18) [ղ]ունադ այ, որ է Եզրուքին <Ոզրեքին> բուղն:

Մաշատէն չուր ի Մարիչազն Խ (20) զունադ այ, չուր ի Ոզրեքըստայն բու-  
ղայն այ, որ Հայշամբստանայ շահին այ, որ տեղէն որ հստուք ուխչ Հահին  
<Հահին> մին բերթով քաղաք այ, որ ես Ջուղայեցի Պետրոսի որդի Հակուրս  
գրեցի ի Լուտրայ իմ խարարի քաղաքս այ, որ ես տեսէլ ամ...

А. С. МАТЕВОСЯН

### «ПУТЕВОДИТЕЛЬ» АКОПА ДЖУГАЕЦИ

#### Р е з ю м е

Оригинал «Путеводителя» хранится в Британском музее за № 4090 (17) и представляет собой содержание листка на армянском языке. Это запись, сделанная купцом Акопом Джугаеци, сыном Петроса Джугаеци, 1 декабря 1676 г. в Лондоне, о важных торговых путях, по которым он проезжал. Он описывает эти пути, их этапы, расстояния между ними. Автор сообщает также некоторые сведения о величине отдельных городов, о состоянии их торговли и т. д. Большой интерес представляет язык «Путеводителя»—разговорный язык армян Новой Джульфы.

A. S. MATEVOSSIAN

### LE „GUIDE ROUTIER“ DE HAKOB FILS DE PETROS DE DJOULFA

Le texte que présente l'auteur—notes relatives aux principales routes commerciales, stations et distances entre elles, transcrites à Londres le 1-er décembre 1676 par un marchand arménien originaire de Djoulfa Hakob fils de Petros—est tiré d'un feuillet arménien conservé au Musée Britannique (Sloane 4090(17)).

Ce guide comporte également des renseignements sur l'importance des villes, du commerce qui s'y fait, etc. La langue de l'ouvrage est représentative du dialecte arménien de la Nouvelle Djoulfa, d'autant plus qu'on la doit à un marchand quasi-illettré.

ԱՍՏԱԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ

ՄԻԶԱՎԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻ ՆՈՐԱՀԱՅ ՊՈԵՄ

«Տաղ Տէր Ստեփանոսին՝ Սինեաց եպիսկոպոսին»

Դեռևս 1940 թվականին, Մատենադարանի ձեռագրերի վրա աշխատելիս, մեր ուշադրությունը դրավեց մի բանաստեղծություն, որը պակասավոր լինելով, բավարար պատկերացում չէր տալիս իր նախնական տեսքի և շոշափած խնդիրների մասին։ Հետագա որոնումների ժամանակ երևան եկան ևս երեք տարբերակներ՝ զգալի լուս սփռելով նշված հարցերի վրա։ Այնուամենայնիվ, շշապեցինը դրանք հրատարակել, սպասելով լրացուցիչ տեղեկությունների։

1960 թվականի վերջերին Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական նստաշրջանում կարգացած մեր զեկուցման մեջ հաղորդում կատարեցինք արդ ստեղծագործության մասին՝ ընդդեմով նրա պատմական, հայրենասիրական բնույթն ու արվեստի առանձնահատկությունները։ 1961 թվականի հունվարին «Մովեսական Հայաստան» և «Երևան» թերթերը առանձին հաղորդում տպագրեցին մեր այդ զեկուցման մեջ հայտնված գրական նորույթների վերաբերյալ, հատուկ տեղ տալով նաև այդ երկին (պոեմին)։ Քանի որ դա տպագիր առաջին խոսքն է նրա մասին, ուստի հարկ ենք համարում այն ընդօրինակել այստեղ։

«Միջնադարյան հայ պոեզիայի նորահայտ հուշարձաններից մեկն է ռՏաղ Տէր Ստեփանոսին՝ Սյունեաց եպիսկոպոսին» պոեմը, որը բաղկացած է եղել 144 տնից և որի հեղինակը հայտնի չէ։

Պոեմը պատմում է մոնղոլական տիրապետության օրոք Սյունիքում կատարված մեր մատենադրությանն անհայտ մի գետքի մասին, որը վերաբերում է օտար բռնակալության գեմ ժողովրդական հուզումներին»<sup>1</sup>։

Այդ պոեմի մասին հիշատակությունն է կատարված նաև մեր մի հոդվածի մեջ՝ 1964 թվականին<sup>2</sup>։

Վերջերս նշված ստեղծագործության վերաբերյալ առանձին հոդվածով հանդես եկավ երիտասարդ բանասեր Պ. Խաչատրյանը, չփառ ինչու, շրջանցելով պոեմի մասին վերոհիշյալ տեղեկություններն ու տպագիր հաղորդումները<sup>3</sup>։

Այժմ կամենում ենք տպագրության ներկայացնել այդ պոեմի բեկորները՝ որոշ բացատրությամբ, մանավանդ, որ, մեր կարծիքով, Պ. Խաչատրյանի հոդ-

<sup>1</sup> «Մովեսական Հայաստան», 1961, 29 հունվարի։

<sup>2</sup> «Պատմա-բանասիրական հանդիս», 1964, № 3, էջ 200—201։

<sup>3</sup> «Պատմա-բանասիրական հանդիս», 1965, № 2, էջ 197—204։

վածում տեղ են գտել ճշգրտման և վերանայման կարում մի շարք հարցեր: Այսպիսս, օրինակ, անտեսված է պոեմի բաղաքական, հայրենասիրական ողին, ճիշտ չեն բացատրված նրա ստեղծման ժամանակը, հեղինակը, տաղաչափությունը, տողատումը, ուշադրությունից դուրս է թողնված պոեմի մի կարեռ տարբերակ (ձեռ. № 5623) և այլն:

Քննվող պոեմի տարբերակները գտնվում են Մաշտոցյան մատենադարանի հետեւյալ ձեռագրերում.

1. № 3884, թերթ 139ա-140բ, ժամանակ 1461—1478 թթ.,

2. № 2676, թերթ 184բ-185ա, ժամանակ XVI դար,

3. № 697, թերթ 56բ-58ա, ժամանակ XVIII դար,

4. № 5623, թերթ 215ա-216ա, ժամանակ 1653 թ.:

Սույն հոդվածը տպարանումն էր, եթե ձեռքի տակ ունեցանք պոեմի ևս երկու ընդօրինակություն. դրանք են.

5. Իրանի Խոյգան գյուղի բնակիչ Ա. Տ. Հովհաննիսյանի ձեռագիր, թերթ 55ա—55բ,

6. Զմմառի Անտոնյան հավաքածու, ձեռ. № 214, թերթ 75բ—77ա, XVIII դ.:

Առաջին օրինակի մասին տեղեկացանք «Սիոն» ամսագրի 1966 թվականի № 1-ում զետեղված իրանի Խոյգան գյուղի բնակիչ Ա. Տ. Հովհաննիսյանի նշված ձեռագրի շահեկան նկարագրությունից՝ կատարված բանասեր Լ. Գ. Մինասյանի ձեռքով: Անմիջապես նամակով դիմեցինք պր. Լ. Գ. Մինասյանին և շուտով ստացանք մեր խնդրած ընդօրինակությունը: Այն համապատասխան դուրս եկավ մեր Մատենադարանի № 5623 ձեռագրի տարբերակին և ներկայացվեց նրա հետ միասին՝ մի բնագրով: Չնայած «Սիոն»-ում այդ օրինակը նշված էր որպես 18 տնանոց (ընդարձակ տողերով) տաղ, սակայն, ինչպես ճշգրտել է պր. Լ. Գ. Մինասյանը, իրականում այն 10 տնանոց է (մեր տողատմամբ՝ 20): Չեռագրում այդ տարբերակի ունեցած խորագիրը սխալ է, որովհետեւ այն վերաբերում է ոչ թե Ստեփանոս Նախավկային, այլ՝ Ստեփանոս Մյունեցուն, ինչպես որ ճիշտ ասված է իր իսկ տողերի մեջ:

Թագաւոր էր թախտին

Նայ Սինեաց յերկրին...

Երկրորդ օրինակը մեղ տրամադրեց Մաշտոցի անվան Մատենադարանի տեսօնն Լ. Ս. Խաչիկյան՝ արտասահմանյան հայ մատենադարաններին կատարած այցելությունից հետո: Հիմքը՝ Զմմառի Անտոնյան հավաքածուի № 214 ձեռագրին է: Դա համապատասխանում է մեր Մատենադարանի № № 2676 և 697 ձեռագրին օրինակներին. ուստի հաշվի առնվեց նրանց համատեղ բնագրում:

Օդովելով առիթից խորին շնորհակալություն ենք հայտնում ինչպես պր. Լ. Գ. Մինասյանին, այնպես էլ բնկ. Լ. Ս. Խաչիկյանին՝ իրենց օգնության համար:

Պոեմի ստեղծման ժամանակը որոշելու առումով եղակի նշանակություն ունի նրա մի վերամշակությունը՝ կատարված 1387 թվականին<sup>4</sup>: Համեմատությունից պարզվում է, որ վերամշակողի ձեռքի տակ եղել է պոեմի արդեն

<sup>4</sup> Հ. Մանանդյան, Հ. Առաջան, Հայոց նոր վկաններ, Վաղարշապատ, 1903, էջ 137: Ժամանակագրական որոշ աղբյուրներում 1387 թվականի փախարեն նշված է 1384 թվականը (տե՛ս Վ. Հակոբյանի Հրատարակած «Մանր ժամանակագրություններ», Բ, Երևան, 1956, էջ 381, 392):

խիստ փոփոխված, աղճատված, ժողովրդականացման ուղին բռնած մի տարբերակ: Իսկ զա ցույց է տալիս, որ այդ հիմքը՝ 1387 թվականից էլ պիտի տասնամյակներ առաջ, եթե ոչ ամելի վաղ, ստեղծված լիներ: Բայց քանի որ պոեմի նյութը սերտորեն կապված է մոնղոլական բռնատիրության հետ, ուստի նրա ծագումը պիտի որոնել XIII—XIV դարերում, ավելի ճիշտ՝ 1236—1387 թվականների սահմաններում, բայց ոչ երբեք 1387 թվականի մեջ կամ, մասնավոր դրանից հետո:

Պ. Խաչատրյանը, ծանոթ լինելով 1387 թվականի մշակմանը, փորձում է պոեմի ստեղծման ժամանակը հասցնել XV դարի առաջին տասնամյակ: Ըստ նրա, նկարագրված դեպքերը պիտի կատարված լինեն «XIV դարում, ոչ ուշ, քան ԽV դարի սկզբները», իսկ պոեմը, հավանաբար, պիտի գրված լինի Առաքել Սյունեցու կողմից, «որի գրական գործունեության եռուն շրջանը... համընկում է XV դարի առաջին տասնամյակին»: Բայց, ինչպես տեսանք, պոեմի ճիշտը չի տալիս նրա ծագումը որոնելու նաև այդ թվականից հետո: Ճիշտ չէ, հենվելով այդ, ապա տաղաչափական հաշիվների, առանձին դարձվածքների վրա, ենթադրել, թե նրա հեղինակը կարող է լինել Առաքել Սյունեցին:

Պոեմի էությունն ըմբռնելու առումով կարևոր է նրա նախնական ծավալի հարցը: Նրա տարբերակներից առաջինը բաղկացած է 29 տնից, երկրորդը՝ 18, երրորդը՝ 17, իսկ չորրորդը՝ 19: Գրանցից նախնական բնագրին ավելի մոտ է առաջինը և լոկ այդ օրինակն է, որ օգնում է նկատելու նրա ակրոստիքային կառուցվածքը և որոշելու ծավալը: Երկում է, որ այն շարադրված է հայոց այրութենք կազմող ակրոստիքոսով, ուր ամեն մի տառով գրված է շորս տուն: Այսաեղից էլ՝ պոեմի ընդհանուր ծավալը՝  $36 \times 4 = 144$  տուն կամ 576 տող: Եթե վերջից կցված լինեն նաև հեղինակի անունն ու այլ տեղեկություններ բովանդակող տներ, որը հավանական է, ապա պոեմի ծավալն ավելի մեծ կլիներ: Ուստի պահպանված ամենաընդարձակ տարբերակն անդամ կարող է նրա լոկ մեկնինգերորդ մասը լինել: Մյուս տարբերակներում կան մի քանի այնպիսի տներ, որոնք չկան առաջինի մեջ և կարող են նկատի առնվել: Այդպիսիներից են, օրինակ, «Զ» տառով կամ ավելի ճիշտ, «Զայն» բառով սկսվող աները, որոնց մի մասը գրված է «Այն» ձևով: Գրանց թիվը, սակայն, չորսից անցնում է: Ուստի հետո են աճել: Հարազատ կարող են լինել թերևն հերոսի երեսի, աչքերի, հոնքերի և բերան-ատամների գովքին նվիրված տները, որովհետեւ պոեմի տարբերակներում ու մշակման մեջ գրանք ավելի շատ են հանդիպում:

№ 5623 ձեռագրի օրինակում առկա է մի ամբողջ տուն, որպիսին չկա և ոչ մի այլ օրինակի մեջ: Այդպիսի մասին ասվում է.

Նայ ի յոտսն անկեալ

հերոյ ջալատին.

«Հաղար զինայհար, զինահար,

թո՛ղ խոստովանիմ»:

Իր բովանդակությամբ զա արժեքավոր նորություն է, հարազատությունը հեղինակին՝ հավանական: Այս նույն ձեռագրում նորություն է նաև հետեւյալ տան հիմնական մասը, որը նորից բուրում է հարազատությամբ.

Սկ շորեցարթին  
Զիսպարըն բերին,  
Թէ բոկիկ և մերկ, գլխիբաց  
Զայն ըմբռոնեցին:

Այս հինգ-վեց տնից բացի, թերևս կարելի է մի-երկու տուն էլ հաշվի առնել վերամշակված օրինակից, հատկապես «ԱՌ» բացականչությամբ սկսվողները, այսուհետեւ առաջնադիրները, պոեմի մեկբառորդից՝ այս ընդհանուր քանակը չի կարող անցնել:

Քննվող ստեղծագործության ծավալի որոշումը կարենոր է մի բանի, այդ թվում՝ նրա ժանրը որոշելու առումներում: Մենք այդ երկը կոչում ենք պոեմ՝ նկատի առնելով ծավալը՝ 576 տող, եթե ոչ ավելի: Բայց լոկ զա՞շ շատ քիչ կլիներ: Այստեղ մեզ համար առաջնաշերթ նշանակություն ունի նրա գործող անձանց բավականին մեծ թիվը («Ժողովուրդն», «Պինուռքն շարին», հերոսը, հայրը, մայրը, ինչպես նաև հերոսի անձնավորված ձին), նրանց՝ պոեմում հեղինակից անկախ հանդես գալու նորանակը, գործողության զարգացումը և այլն: Իր ամբողջությամբ մեր միջնադարյան շափածոյի անդամանում սույն գործը, ամենից առաջ, կապվում է պոեմի ժամրի հետ և ներկայացնում՝ նրա զարգացման մի որոշակի աստիճանը:

Սյունյաց իշխան և եպիսկոպոս Ստեփանոսին նվիրված այս պոեմը ուշագրավ է նաև իր տաղաշախուրյան, տների կառուցվածքի և հանգավորման արվեստով: Բանաստեղծության այս ձևը, առհասարակ շատ սակավագեպ է: Մեզ հայտնի նրա հնագույն քառատողին, ինչպես արդեն նշել ենք, հանդիպում ենք XIII դարի բնդորինակություն համարված № 6885 ձեռագրում:

Կալով առ ինչին  
Երկնից բարձողին  
Եւ հառաշմամբ ի վեր նայեր  
Սուրբ կոյսն և ասեր...<sup>5</sup>

Այս ձևն անհամեմատ շատ է սիրել Առաքել Սյունեցին, որից հետո, շատ շանցած, այն համարյա մոռացության է մատնվում:

Բանաստեղծության այս տեսակին էլ բնորոշ է կանոնավոր քառատող տունը, առանձնահատուկը, սակայն, նրա տողերի կառուցվածքն ու հանգավորման եղանակն է: Այսպես, ամեն տան 1, 2 և 4-րդ տողերը բաղկացած են 5-ական վանկերից, իսկ 3-րդը՝ 8-ական: Տողերի մեջ էլ փոխնիփոխ միմյանց են հաջորդում հայոց լեզվի համար այնքան բնորոշ յամբ-անապեստյան ուժքերը: Եթե հաշվի շառնենք 3-րդ տողի մի անապեստը, որը կարծես ավելորդ է, ապա կատանանք 5 վանկանի տողերով ստեղծված մի սովորական բանաստեղծություն: Սակայն, խնդիրն էլ հենց նրանումն է, որ 3-րդ տողում միշտ էլ առկա է այդ անսպասելի թվացող անապեստը, որով խախտվում է բանաստեղծության միապաղաղությունը և լցվում յուրատեսակ հնչական թարմությամբ: Այն ձգված է ողջ ստեղծագործության միջով՝ որպես տաղաշափական ինքնատիպ զարդ:

<sup>5</sup> Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 6885, թերթ 112ր, Տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 200:

Մաղիկ էր սարին,  
Մանիշակ՝ գաշտին,  
Կարմիր ու սպիտակ իւր երեսն  
Դարձաւ ի ղեղին:

Հանգավորումն էլ իր հերթին է օգնում, որ 3-րդ տողն ավելի քան ինքնատիպ հնչի, որովհետեւ այսակը, որպես կանոն, 1, 2, 4-րդ տողերը, որ համարավանկ են, նաև նույնահանգ են. մինչդեռ 3-րդ տողերը միշտ անհանգ են, ագամ՝ հանգավորման անհրաժեշտությունից: «Որպես կանոն» ենք ասում, որովհետեւ մի քանի տներում նկատվում են շեղումներ: Այսպես, մի-երկու դեպքում հանգավորված են լոկ 2 և 4-րդ տողերը, որ մասամբ արգունք է հեղինակային դիտավորության, մասամբ էլ՝ խաթարման: Բացառված շէր, որ պոեմի որոշ տները հանգավորված լինեն իրարահաջորդ զույգ-զույգ տողերով, ինչպիսին է № 6885 ձեսագրից բերված նմուշը, սակայն, պոեմի պահպանված թեկոններում այդպիսիները չկան:

Դետք է նկատել, որ մասնագետները ցարդ, բացի մի-երկու դեպքից, ճիշտ չեն վարվել բանաստեղծության այս տեսակը տողատելիս և տնատելիս: Այսպես, օրինակ, Գ. Ալիշանը 1848 թվականին «Բազմավէլպ»-ում տպագրելով սույն պոեմի 1387 թվականին վերամշակված օրինակը, նրա ամեն մի տունը ներկայացրել է ոչ թե չորս, այլ երկու տողով<sup>6</sup>: Այսպես են վարվել նաև Հ. Մանուդյանն ու Հ. Աճառյանը՝ «Հայոց նոր վկաներ»-ում այն վերահատարակելին<sup>7</sup>: Նրանց օրինակին է հետեւ նաև Պ. Խաչատրյանը: Ահա թէ ինչ ինչ տեսք է ստանում բանաստեղծության տունը՝ նման տողատման ժամանակ:

Դաշն եղեալ՝ բանին, վրձիռն հատին:

Ասէ. «Դուք տաշիք պատասխան այն ծածկագիտին»<sup>8</sup>:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, բիյթական խորթ տան մեջ առաջին տողում խլացված է երկու հանգ, մինչ բանասիրության նպատակն է հետամուտ լինել արվեստի ամեն մի նրբությանը և բացահայտել, զրուորել զրանք: Իսկական տողատման ժամանակ այդ տունն ստանում է հետեւյալ տեսքը.

Դաշն եղեալ բանին,

Վրձիռն հատին.

Ասէ. «Դուք տաշիք պատասխան

Այն ծածկագիտին»<sup>9</sup>:

Այս առումով խնդրին համեմատաբար ճիշտ է մոտեցել բանասիր Մ. Պոտուրյանը՝ Առաքել Սյունեցու համապատասխան քերթվածները տողատելիս: Միայն թէ նա էլ կանգ է առել կես ճանապարհին՝ ստեղծելով եռատող տներ:

Անձառ և անքընին, ծաղիկ լուսածին,

Բորբոքեալ վառիմ քո սիրով՝

Սուրբ աստուածածին<sup>10</sup>:

Այստեղ ճիշտ են տողատված վերջին երկու տողերը, իսկ առաջինը՝ ոչ:

<sup>6</sup> «Բազմավէլպ», 1848, էջ 341—343:

<sup>7</sup> Հ. Մանուդյանը, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 149—150:

<sup>8</sup> «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 199:

<sup>9</sup> Մ. Պոտուրյանը, Առաքել Սինեցի և իր քերթվածները, Վաղարշապատ, 1914, էջ 53:

Ուշագրավ է, որ Մ. Պոտուրյանը ԺԱ. քերթլածի մեջ երկու տուն, ակրոս-  
տիքոսի՝ այդ տեղից սկսած այլ բնույթ ստացած լինելու պահանջով, ստիպ-  
ված, ճիշտ է տողատել: Ահա այդ տներից մեկը:

### Տառապեալ հոգին

Էկեալ առ մարմին,  
Բամ գործոց շարեացըն ծածկեալ  
Յայնժամ յայտնեսցին<sup>10</sup>:

Բանաստեղծը (Ա. Սյունեցի), որ այդ տնից սկսել է հոդել իր անունը «Տեր Առաքեալ», պարզորոշ գիտակցել է, թե ինչ կառուցվածք ունեն իր ոտա-  
նակորի տողերն ու տները, երբ ամեն տառով սկսել է նոր տողը: Բանաստեղը (Մ. Պոտուրյան), սակայն, հասնելով այդ ակրոստիքոսի բացահայտմանը, լրիվ չի թափանցել բանաստեղծության տողատման, տնատման, հանգակոր-  
ման, հետեապես և տաղաշափության նրբությունների մեջ: Այդուհանդերձ,  
Մ. Պոտուրյանը, ինչպես նշեցինք, մասամբ արդեն ճիշտ էր վարդել: Հետա-  
քրքրական է, որ Պ. Խաչատրյանը, փոխանակ շարունակելու Մ. Պոտուրյանի  
սկսածը, լոելյան փոխում է նրա տողատումը, վերականգնելով, ինչպես ինքն  
է ասում, «երկատող տան» սխալ փորձը՝ եռատող տները ներկայացնում է եր-  
կուական տողերով, իսկ դրանց համար որպես հիմք նշում է Մ. Պոտուրյանի  
հրատարակությունը.

Հօղանչեալ նորին ընդ ուտել պըտղին,  
Հառաշմամբ գոչէր մորմոքեալ իւր սիրտն ի փորին<sup>11</sup>:

Հանգերի խացումների ու տողասահմանների անտեսումներն ակնրախ են  
Քննվող տաղաշափությամբ է շարադրված նաև Գրիգորիս Աղթամարցու մի  
տաղը, որը մասնագետների կողմից մերթ ճիշտ է տողատվել ու տնատվել,  
մերթ էլ սխալ: Այն ճիշտ է, օրինակ, ն. Ակինյանի հրատարակության մեջ.

Անեղին տաճար,  
Բանին բարերար,  
Գերագոյն գովեալ, Տիրամայր,  
Դու յամէն լեզուէ.  
Տիրամայր, որ զաստուած ծընարը<sup>12</sup>:

Նույն երգի տարբերակի ու ճիշտ տողատման ու տնատման հանդիպում  
ենք Ե. Փեշիկյանի հրատարակման մեջ.

Անեղին տաճար — Բանին բարերար — Գովեալ Տիրամայր  
Դու ամէն լեզուէ, (Է.), Տիրամայր, որ զաստուած ծընար.  
Երգեաց Գարբիէլ — Զանեղն Մանուէլ — էացաւ ի քէն, Տիրամայր,  
Ընկալաւ մարմին, (Է.), Տիրամայր, որ զաստուած ծընարը<sup>13</sup>:

Այստեղ առկա է կրկնակ. «Է», Տիրամայր, որ զաստուած ծընար», որը  
Ն. Ակինյանի կազմած բնագրում երևան է գալիս լոկ առաջին տան վերջում,  
իսկ Ե. Փեշիկյանի հրատարակածի՝ բոլոր տների: Ըստ երեսութիւն, գա հետո  
է ավելացված, ուստի իրավացի է ն. Ակինյանը, ասելով. «Այս տողն ավելորդ  
կերևա»<sup>14</sup>:

Հետաքրքրական է, որ քննվող այդ երգի բոլոր տները, բացի սկզբի Յ-ից,  
նույնահանգ են, չհաջված ամեն տան երրորդ տողի վերջին-անապեստ բառը,  
որն այստեղ կրկնակի դեր կատարող միկնույն «Տիրամայր» բառն է: Հենց այս  
բոլոր տողերի (և այն էլ նույնահանգ) հանգավորումն է օգնել, որպեսզի որոշ  
մասնագետներ տաղի տողատումն ու անատումը ճիշտ կատարեն:

Եզրակացությունը պարզ է: Սյունյաց տեր Ստեփանոսի մասին գրված  
ողբը, ինչպես նաև այդ տաղաշափությամբ գրված մյուս երգերը, պիտի տո-  
ղատվեն կարճ տողերով (5—5—8—5) և ներկայացվեն բառատող տներով:

Արդ, ինչպես սիրտի հրատարակվեն քննվող պոեմից մեզ հասած բեկոր-  
ները: Ինչպես երեւմ է Պ. Խաչատրյանի համապատասխան նշումից<sup>15</sup>, նա ի  
մի է բերել երեք տարբերակներն էլ, կազմելով մի ընդհանուր բնագիր: Հետա-  
քրքրության համար, անշուշտ, այդ ձեր կարող է իմաստ ունենալ, գիտական  
առումով, սակայն, այն լիարժեք լինել չի կարող: Ընդհակառակը, կարող է  
թյուրիմացությունների դուռ բացել:

Մանրագին քննությունը ցույց է տալիս, որ պոեմի առկա 6 տարբերակ-  
ներից 2, 3 և 6-րդը, բնագրագիտական առումով կարող են ներկայացվել մի-  
բնդհանուր բնագրով, իսկ 4 և 5-րդը՝ մի ուրիշ: Ինչ վերաբերում է առաջինին,  
ապա այն չի կարող այժմ միացվել որևէ խմբի հետ, ուստի պիտի ներկայացվի  
առանձին: Չուկել այդ բոլորը մի բնագրում սիսալ կլիներ, որովհետեւ կպահանջ-  
վեր բռնի հարմարեցում և անապացուցելի վերապատճենում: Այդ սկզբուն-  
քով էլ ահա տպագրության ենք ներկայացնում բոլոր 6 օրինակները՝ Յ խմբով:

Եթե երեսէ արտասահմանում կամ այլ վայրերում պահպանվող հայերեն  
ձեռագրերից երևան գան այս ստեղծագործության նոր և առավել ընդարձակ  
տարբերակներ, ապա թերեւ այն ժամանակ հնարավոր լինի պոեմի գիտական  
բնագիրը վերականգնելու փորձ կատարել:

Այժմ անդրադառնանք պոեմի բովանդակությանը:

Վերևում ցույց տվինք, թե որքան պակասավոր են այդ ստեղծագործու-  
թյան պահպանված բեկորներն, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ընդ-  
հանուր հաշվով: Այդուհանդերձ, առկա տարբերակների օգնությամբ, հնարա-  
վոր է դառնում մոտավոր գաղափար կազմել այն շարժառիթների մասին,  
որոնք ընկած են պոեմի համար նյութ դարձած գեպերի հիմքում: Այս առումով  
առաջնահերթ տեղ են գրավում գործող անձանց մասին պահպանված տեղե-  
կությունները, ինչպես նաև աշխարհագրական երկու վայրերի՝ Սյունյաց աշ-  
խարհի և Թավրիզ քաղաքի հիշատակումները, կապված նկարագրվող գեպ-  
երի հետ: Գործող անձանցից մեկը կոչվում է «Մեծ Դիւնին». զա նրա պաշ-  
տոնի անուն է, անձնանունը չի պահպանված: Այս «Մեծ Դիւնին» ունի երկու  
կին, մեկը էլ-խութը անունով, իսկ մյուսի անունը չի պահպանված: «Մեծ

10 Անդ, էջ 70, 71:

11 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 204:

12 Ն. Ակինյան, Գրիգորիս Աղթամարցի, Վիեննա, 1958, էջ 10:

13 «Բազմավիճակ», 1952, էջ 216: Այստեղ՝ համանման մի այլ տաղ («Անձառին տաճար,  
Բանին հաշտարար...») սխալ տողատումով:

14 Ե. Փեշիկյանի տպագրած օրինակը վրիտել է թե Ն. Ակինյանի և թե Մ. Ավղալբեկյանի  
(«Գրիգորիս Աղթամարցի», 1963, էջ 164—166) ուշադրությունից, այնպես նրանք այլ տեսք  
կտային տաղի կազմվող բնագրին:

15 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 197:

Դիւանիի» և այդ անանուն կող ամուսնությունից էլ սերված է պոեմի հերոսը՝ Ստեփանոսը: Վերջինիս մասին պոեմում եղած տվյալների համաձայն նա գաստիարակվել է Թավրիզում, իսկ հետո հաստատվել Սյունյաց աշխարհում՝ որպես այնտեղի նախկոպոս և իշխան: Մոնղոլական բռնատիրության պայմաններում ալյապիսի բարձր պաշտոնը ինքնին ենթադրում է համապատասխան ընտանիք և ուժեղ կապեր՝ տիրող ու տեղացի ազգեցիկ շրջանների հետ:

Պոեմի պակասավորության պատճառով մենք այժմ հստակ ու որոշակի պատկերացում չունենք նաև «Մեծ Դիւանի» ընտանիքի բոլոր անդամների, նրանց ազգային ու կրօնական պատկանելիության վերաբերյալ: «Մեծ Դիւանի» ինքը կարող էր մոնղոլ լինել կամ օտարազգի: Այդ պաշտոնին հասած հայ գործիշ մեկ ժանոնթ չէ և հավանաբար ոչ միայն չի եղել, այլև չեր կարող լինել: Բոլոր գեպիերում նա մոնղոլական իշխանության խոշոր ներկայացուցիչներից մենքն էր: «Մեծ Դիւանի» կինը՝ էլ-Խութլուն (տարբերակ՝ Խէլ-Խութլու), ամենայն հավանականությամբ, մոնղոլունի էր<sup>16</sup>: «Մեծ Դիւանի» մյուս կինը, որի անունը չգիտենք, ինչպես երևում է պոեմի ողջ ընթացքից, եղել է հայուհի: Անկախ հոր այլազգի լինելուց, Ստեփանոսը եղել է ոչ միայն հայ, այլև Սյունյաց աշխարհի եպիսկոպոս:

Արդ, ո՞վ էր նրա հայրը որպես գործիշ, որ կոչվում էր «Մեծ Դիւանի»: Հենց «Դիւանի» բառն իր օտար ծագմամբ ենթադրում է օտար տիրողների հետ կապված պաշտոն: Այս տեսակետից ուշագրավ տեղեկությունների ենք հանդիպում ժամանակակից հեղինակների մոտ: Այսպես, օրինակ, Ստեփաննոս Օրբելյանի մոտ «Մեծ Դիւանին» նույն է, ինչ «Սահիպ Դիւանին»: Թվարկելով իր ժամանակի մոնղոլական բարձրապաշտոն անձանց, նա գրում է. «...և Զիուշին և Աւրդուղանին, որք էին ի վերայ գատաստանացն, և մեծ դիւանին Սադագավին՝ բարեբարոյ ջնախն, որ էր ի վերայ ամենայն հարկաց աշխարհս»<sup>17</sup>: Իսկ, ինչպես գիտենք, Մեծ Դիվանի Սադագոլին, իրոք, Սահիպ Դիվանի էր<sup>18</sup>: Մեծ Դիվանի հաստատության ու պաշտոնի հանդիպում ենք նույն հեղինակի նաև հետեւալ տողերում ու պարերություններում. «...Արդունն, որ էր գավիր և պասդաղ (տեսուշ) կարգեալ ի մեծ դանէն ի վերայ ամենայն աշխարհս, այսինքն հրամանատար ամենեցուն և իշխեցող արքունի հարկացն և մեծ դիւանին»<sup>19</sup>: Հայոց Սմբատ իշխանը «գնաց ի մեծ դիւանն արքունի առ Արդունն և Սահիպն ի Թավրէծ»<sup>20</sup>: Նույն Սմբատ իշխանը «...ատայ զգուստը նորա (Ավագի) զիուշաքն ի կոնթին մեծ հօջային Սահիպ Դիւանին, որ ունէր ի բոխն դամենայն աշխարհս տէրութեան Ապաղայ դանին... և նա էր Դիւանի զրուի և վերակացու ամենայնին»<sup>21</sup>:

<sup>16</sup> Ռաշիդ-Ալ-Դինի մատ, մեղ հետաքրքրող ժամանակներում, այդ անունով („Ալլ-Կուլց“, „Խոյ-Կուլց“) հիշատակված են մի քանի բարձրատոնմիկ կանայք, որոնցից և ոչ մեկը, ապային, չի համապատասխանում մեր պոեմի էլ-Խութլուին (Տե՛ս Փազլ Ալլահ Ռաշիդ-Ալ-Դին, Ջամի-ա՛-Տավարիք, III, Բակու, 1957, սր. 17, 66, 100, 133, 192):

<sup>17</sup> Ստեփան Աննոս Օրբելյան, Պատմութիւն տանն Արևական, Թիֆլիս, 1910, էջ 468:

<sup>18</sup> Ֆրիկ, Դիւան, Ելու-Յորք, 1952, էջ 59—61:

<sup>19</sup> Ստեփան Աննոս Օրբելյան, Արևական, էջ 412—413:

<sup>20</sup> Անդ, էջ 419:

<sup>21</sup> Անդ, էջ 418—419:

Այստեղ և նման ուրիշ տեղերում «Սահիպ Դիւանի», «Մեծ Դիւանի», «Դիւանի գլուխ» ձեռքը նույն իմաստն են դրսնորում՝ նկատի ունենալով մոնղոլական բռնատիրության պետական խոշորագույն հաստատություններից մեկը կամ նրա զուրկ կանգնած պաշտոնյային: Բերված հատվածներում խոսուն ավվայաններ կան նաև վերջիններիս ուժի և կարողության մասին: Այս առումով ավելորդ չէր լինի հիշել նաև Յրիկի հետեւալ տողերը՝ Սահիպ Դիվանիի վերաբերյալ:

Սահիպ Դիւանին ասենք, որ մըլքեց զերկիր նա բոլոր,

Հանցեղ սիասաթ ունէր, որ չունէր ոչ թագաւոր:

Զինը որ խանորայք կային՝ յափն ունէր զինը բզմի խընձոր...<sup>22</sup>

Ահա թե մոտավորապես ինչպիսին է եղել մեր պոեմի «Մեծ Դիւանին»: Արդ, ինչպես է եղել, որ այդ օտար պաշտոնյայի որդին ու մի կինը հայ նեղել:

Հայտնի է, որ մոնղոլների ժամանակ էլ տիրողների և տեղացիների միջև, սիասաթոնական-քաղաքական նպատակներով, խնամիական կապեր էին ստեղծվում: Նման կապերը բացառված չէին նաև Սահիպ Դիվանիների, ուստի և մեր պոեմի «Մեծ Դիւանի» համար: Այս տեսակետից ուշագրավ է, օրինակ, հօջա Շամս-էդ-Դին Զովեյնիի ամուսնությունը՝ Ավագ Աթարեկի դստեր՝ հողարի հետ, որի մասին համապատասխան քաղաքածք կատարվեց վերևում: Այս ամուսնությունից սերված զավակներից մեկի՝ Զաքարեկի մի արձանագրության մեջ կարդում ենք.

«Յուսովն անմահին Սստուծոյ ես Զաքարէ որդի Սահիպ Դիւանին և պարոն Խաչարին, թոռն Աթարադ Ավագին որդոյ Աթարադ հվանէի, վասն մեր Հերկար կենդանութեան և փրկութեան հոգոյ իմոյ վեր կալայ, որ ի Բջնի...» և այլն<sup>23</sup>:

Ահա այն ժամանակների օտարազգի Սահիպ Դիվանիներից մեկի մի զավակ՝ սերված հայ կնոշից, որը ոչ միայն կրթությամբ է հայ, այլև ազգային պատկանելիության մասին ունեցած սեփական գիտակցությամբ, իրեն կապում է ոչ թե հոր նախնիների, այլ մոր՝ Աթարադ հվանեի և Աթարադ Ավագի հետ:

Մոտավորապես այդպիսի ամուսնության և այդպիսի դաստիարակության արդյունք է եղել նաև քննվող պոեմի հերոսը:

Այժմ, կարծես հասկանալի է դառնում այն տեղը, որ ունի Թավրիզի քաղաքն այդ պոեմում: Քանի որ Սահիպ Դիվանիները և մոնղոլական մյուս իշխողները նստում էին Թավրիզում, ուստի այնտեղ պիտի ապրելիս լիներ նաև մեր պոեմի «Մեծ Դիւանին» իր կանաց և զավակների հետ: Այդտեղ է ահա, անցկացել նրա Ստեփանոս որդու զինվորական դաստիարակությունը և նախական կրթությունը.

Թարվէդ քաղաքին

ի մեծ մէդանին

Մէկ մանուկ չըկայր, որ քաշէր

Զաղեղ պարոնին:

<sup>22</sup> Ֆրիկ, Դիւան, էջ 374—375:

<sup>23</sup> Ղ. Ալիշան, Աթարադ, Վենետիկ, 1890, էջ 273:

Թարգեղ քաղաքին  
Մէջ շատ հեծելին  
Զհումք ու զուրափ կու առնէր  
ԶԱՅԵՍՏԱՐԱՆԻՒՆ:

Ահա, իր ուժով ու գիտությամբ աշքի բնկնող և ըստ պոեմի հավասարք շունեցող այս գավակին է, որ հայրը հետո հանձնարարում է Սյունիքի կամ նրա գավառներից մեկի հոգեոր ու աշխարհիկ գործերի կառավարչությունը:

Այստեղ ուշագրավ է մի ուրիշ հանգամանք. Սահիպ Դիվանիի ընտանիքում հայ հոգեորականի ծնունդն ու դաստիարակությունը: Խնչպես ցույց են տալիս փաստերը, ուս հնարավոր է եղել հատկապես մինչև Զադան խանի տիրակալությունը, երբ զեռ մոնղոլները քրիստոնեության դեմ մշակված թշնամանք շունեին և մահմեղականություն չէին ընդունել: Այդ ժամանակ երբեմն մոնղոլ իշխողները հանդես էին զալիս որպես քրիստոնեության հովանավորներ, բարեկամներ: 1264 թվականին մեռած Հովափու զանի և նրա կնոջ մասին Ստեփաննու Օրբելյանը գրում է. «Բայց մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և ակնկալութիւնն քրիստոնէից»<sup>24</sup>: Հովափու զանն մեռանի ի յ713 թուին. ընդմին և ամենօրհնեալն Տօնդուզ խաթունն՝ կին նորա, որք դեղակուր եղեն ի բազմահնար Խօջայէն Սահիպէն, որ և գիտէ տէր (թէ) ոչ ինչ էին ընդհատ բարեպաշտութեամբ քան զուստանդիանու և զմայր իր Հեղինէ...»<sup>25</sup>: Նրանց որդին ևս, ըստ պատմիչի, եղել է «սիրոզ քրիստոնէից»<sup>26</sup>:

Այս առումով ուշագրավ դեմք է եղել նաև Արզուն զանը, որի դեմ դավադրություն կազմակերպող Քուլայի հասցեին ֆրիկը գրում է.

Բուղա՛, զու ո՞նց կամիր նենգել  
Աստուածադիր թագաւորին,  
Զոր քրիստոնեայքն ամէն հաւասր  
Ի յաստուծոյ կու խնդրէին:  
Արզուն զանըն աստուած եղիր,  
Ո՞վ է լաղթող Արզուն զանին...»<sup>26</sup>

Այս փաստերը մեզ միաժամանակ տանում են դեպի XIII դարի երկրորդ կեսը և ենթադրել տալիս, թե քննվող պոեմն էլ այդ ժամանակների կամ առնվազն XIV դարի սկզբների արդյունք է, այլապես անհնարին կլիներ կարծել, թե Թավրիզում, մոնղոլների իլիանության նստավայրում, Մեծ Դիվանիի զավակ Ստեփաննուր՝

Մէջ շատ հեծելին  
Զհումք ու զուրափ կու առնէր  
ԶԱՅԵՍՏԱՐԱՆԻՒՆ:

Այսինքն, Ավետարան ու քրիստոնեություն էր քարոզում:

Դա ցույց է տալիս, որ նրա հայրն էլ, այս առումով, համամիտ է եղել մ' որդու, և նրա մոր հետ, որը հավանաբար հայ իշխանական տոհմերից մեկի դուստրն էր:

<sup>24</sup> Մ տ ե փ ա ն ն ո ս Օ բ բ ե լ լ ա ն, Պատմութիւն տանն Սիսական, էջ 419:

<sup>25</sup> Ասդ:

<sup>26</sup> Ֆ ր ի կ, Գիւան, էջ 422:

«Մեծ Դիվանիի» երկուդաժությունը՝ քրիստոնեական կրոնի հանդեպ որոշակիորեն ցույց է տրված նաև պոհմի այն տողերում, որը նա իր Ստեփանոս որդու մասին ստիպված մահվան դատավճիռ կայացնելիս, ասում է.

«Քահանայապես է...  
Կարգէն պատկառիմ...»:

Իրերի այս դրության մէջ, թվում է, թե Սահիպ Դիվանիի ընտանիքում պիտի ներհակություններ լինեին: Բայց այդպիսիք երևան են գալիս և ըստ էության էլ, անպայման պիտի իրենց զգացնել տային: Հենց այն հանգամանքը, որ մոնղոլական բռնատիրության խոշոր գործիչներից մեկը այդքան սերտորեն կապված էր հայերի, ալսինքն, նվաճվածների հետ, ինքնին չէր կարող շշարժել մոնղոլների որոշ շրջանների հակակրանքը: Այնուհետև, ինչպես ցույց են տալիս փաստերը, մոնղոլական զեկավար շրջաններում էլ անպակաս են եղել ներքին դավադրությունները, արյունահեղ սագրանքները, որոնց զոհերից են եղել Սահիպ Դիվանիներ խոշա Շամս-էղ-Դինը, Սաղադոլին և ուրիշներ: Մոռավորապես նման մի փոթորիկ է պայթել նաև մեր պոեմի «Մեծ Դիվանիի» իրավասության սահմաններում:

Խնչպես նշեցինք, նրա մի կինը՝ էլ-Խութլուն, հավանաբար, մոնղոլուհի էր: Այս ճյուղով Սահիպ Դիվանիի ընտանիքը կարող էր կապված լինել մոնղոլական թևի հետ: Փաստորեն այդ ընտանիքը կոչվածն էլ ո՞չ թե մի սովորական ընտանիք էր, այլ ընտանեկան մի բարդ միավոր, որի մեջ զուգորդված էին երկու վատանգավոր կողմերի ծայրերը: Եթե Ստեփաննուն ու իր մայրը ներկայացնում էին նվաճված Հայաստանը, ապա էլ-Խութլուն՝ նվաճողների հակամաներից յացուցիչն էր: Պարզ է, որ նման պայմաններում միշտ էլ հնարավոր էին անախորժություններ և բախումներ:

Այդպես էլ եղել է: էլ-Խութլուն, ինչպես կարելի է ենթադրել, հանդիսացել է մոնղոլ տիրողների ականավոր տոհմերից մեկի դուստրը, և, հավանաբար, հարազանեկան և այլ բռնակալների գրդումով, մեծ եռանդուվ խառնվել՝ պետական գործերին: Երա այդ գործունեությունը շատ ժամանակ է նստել «ժողովրդի» վրա, որն էլ խնդրել ու համոզել է Ստեփաննուն՝ սպանել նրան՝ որպես բոլոր տեսակ շարիքների մոր: Սյունյաց անօրեն Ստեփաննուն էլ, որ ավելի քան որեւէ մեկը, մոտիկից է ծանոթ եղել իրերի գրության ու էլ-Խութլուի հասարակական վնասակարությանը, ի կատար է ածում ժողովրդի ցանկությունը՝ սպանելով էլ-Խութլուն: Հետո, հավանաբար, էլ-Խութլուի բարեկամների խումբը շտապում է Ստեփաննուի հոր մոտ, հավատացնելու, թե Ստեփաննոսը գալիս է իրեն սպանելու: Հայրը սոսկում է, տատանվում, բայց նրան ստիպում են համաձայնելու Ստեփաննուի մահվան դատավճունին: Ստեփաննոսը զլիատվում է:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, արտաքնապես մի ընտանիքի ներսում, բայց ըստ էության մոնղոլական տիրույթի մի հատվածում կատարված արյունահեղությունը, իր հիմքում ընկած պատճառներով, կրում է ոչ թե բռնական բնույթը, այլ՝ հասարակական, հաղաքական:

Բանաստեղծը, անշուշտ, այն արյունոտ օրերին, երբ սպանվել է էլ-Խութլուն, դաժանորեն պատժվել՝ Ստեփաննոսը, երբ հավանաբար հալածվել են վերջինիս համախոններն ու հարազաները, չէր կարող բացորոշ խոսել դեպքերի մանրամասնությունների և իր վերաբերմունքի մասին: Նա խիզախու-

թյուն է ունեցել տվյալ պայմաններում լոկ ողբար հերոսին և նրա հիշատակը՝ վառ պահել ժողովրդի մեջ։ Ուստի նա մեղաղրել է Ստեփանոսի համախոհներին, որպեսզի անմեղ գուրս բերի նրան։ Եվ աշա պոեմի հենց այդ հատվածի մեջ էլ ամփոփված է վերոհիշյալ դեպքերի քաղաքական, հասարակական ընույթին ու ոգին։ Հեղինակը հարց է տալիս և ինքն էլ պատասխանում։

Բանիւ ո՞ պատրեաց

Զիշխանն Սիւնեաց.

Այն խառնիձաղանց ժողովաւրդն  
Եւ սստուծուրաց։

«Բա՛րձ դու ի կենաց

Զմայրն ամէն շարեաց։

Մերժեայ ի կենաց գէլ-հութլուն,  
Լեր երկայնակեաց»։

Բարբանջեալ բարձին

Զինելք խիկարին,

Ետուն սպանանել զիւր մաւրուն,

Հաւր աշից հանին։

Անկախ բանաստեղծի դիրքից, այստեղ որոշակիորեն երևում է ժողովրդի աստվածուրացության հասնող հանդգնությունը, որը խոնված ամբոխով իր դառն վիճակն է պատմել Սյունյաց երկրի հովանավորին և նրանից փրկություն խնդրել՝ իր վրա ծանրացող շարիքներից աղատվելու։ Այստեղ էականը ո՛չ էլ-հութլուի անձնավորությունն է և ո՛չ էլ նրա ազգային ու կրօնական պատկանելիությունը, այլ այն շարիքները, որ հասցել է նա ժողովրդին։ Իրադարձությունների պետական, հասարակական, քաղաքական ոգին այնքան ուժեղ է եղել, որ հասել է մինչև «Մեծ Դիւանիին» սպանելու պատմությանը։ Իրո՞ք Ստեփանոսն ուզեցել է նաև նրան սպանել, թի դա լոկ հակառակորդների հերյուրանքն է, չգիտենք<sup>27</sup>, Պոեմը, սակայն, ներկա վիճակով չի հերքում այդ հանգամանքը։ Ընդհակառակը, նա վկայում է, որ էլ-հութլուի մահից հետո նրա անոնք տվող անգամ չկա. ոչ զինվորքն շարին, որ բողոքում են Ստեփանոսի գեմ և ոչ էլ «Մեծ Դիւանիին» շեն հիշում նրան։ Պետք է նկատել սակայն, որ պոեմից այստեղ պակասում է երկու տուն, մեկը «Բ» տառով, իսկ

27 Այս կապակցությամբ հանդիպում է լոկ մի ակնարկ.

Ետուն սպանանել զիւր մաւրուն,

Հաւր աշից հանին։

Երկրորդ տողի համաձայն, Ստեփանոսը, էլ-հութլուին սպանելու պատճառով, հոր աշքից ընկել է, այսինքն, արծանացել է նրա ատելություն։ Պիտի ասել, սակայն, որ հաջորդ տողում հայրը որպես նկատմամբ ոչ մն ատելություն, այլ սեր ու գորովանք, ինչպես նաև հոգհոր առումով պատկառանք է տածու («Գերեցաց գերին, Չհաւատայր բանին... Այն է իմ որդին», չկայր սիրտն ի փորին», «Կարգին պատկառիմ և այլն)։ Պարզ է, որ այստեղ դործ ունենք հակառակյան, ուստի և աղավաղման հետ Այս տեսակետից ուշագրավ է № 697 ձեռագրի տարբերակը, որը «Հաւր աշից հանին» տողի փոխարեն ունենք. «Հօրն աշացըն հին (հանին), այսինքն, հորն են որդու աշքից հանել, ատելի դարձել։ Այս ձեն ավելի ներդաշն է պոեմի պահանված մասի ողուն։ Ուստի հարազոր է, որ Ստեփանոսը նաև նորն սպանելու միտում ունեցած լինի։

№ 2676 ձեռագրում էլ-հութլուի անվան փոխարեն առկա է «Էլուսատու» բառը՝ դորժածված թերևս որդու իմաստով՝ հետապայում։

մյուսը՝ «Գ»։ Այդուեղ, հավանաբար, որոշ միտք պիտի դրսևորված լիներ նախ էլ-հութլուի մասին, ապա՝ «Մեծ Դիւանիի» գեմ նյութված կամ մտացածին գավագրության շուրջ։ Պահպանված հաջորդ տան մեջ խոսքը զնում է միմիայն երկրորդ հարցի ուղղությամբ, և նշված պակասավորության հետևանքով թողնում այն անձիշտ տպավորությունը, թե էլ-հութլուի սպանության պատճառով են ոմանք շտապել «Մեծ Դիւանիի» մոտ, հանգամանք, որը շփոթեցրել է նաև Պ. Խաչատրյանին. մինչդեռ այստեղ, ինչպես նշեցինք, խոսվում է լոկ «Մեծ Դիւանիին» մասին։

Գումարեալ եկին

Առ Մեծ Դիւանին,

Զի «Գայ» սպանանէ զքեղ, այսաւը,

Ահա քո որդին»։

Գերեցաւ գերին,

Չհաւատայր բանին.

«Մի՛ զիս ձեռնամուխ առնիցէք,

Այն է իմ որդին»։

Ինչպես երեսում է, «Մեծ Դիւանիին» համոզողները սովորական զինվորներ։ Կամ բանարկուներ շեն եղել, այլ ուժի ու իրավունքի լիազորներ, որոնք կարող էին անգամ այդ բարձր պաշտոնյալին սպանել։

Ասեն, «Տո՛ւր ի մեղ, զի սպանցուք

Այսաւը քո զորդին...»

Եթէ ոչ տայցես մեղ հրաման՝

Մեոցի՛ս ընդ նմին»։

Ըստ երեսութին, նրանք կամենում էին լոկ օրենքի ձեռ պահել, ստանալ «Մեծ Դիւանիի» հրամանը, որպեսզի Ստեփանոսի մահապատճեր ապօրինի համարվեր։ «Մեծ Դիւանիին» տեղի է տալիս։ Դա խոսում է նրան ստիպուների, իրոք մեծ ու կարող ուժի մասին, կապելով նրանց ավելի բարձրագիր մարմինների հետ։

Իսկ այս ամենը ոչ մի կասկած չի թողնում ասելու, որ նկարագրվող զեպքերը հասարակական-քաղաքական բնույթ են ունեցել. Եթէ էլ-հութլուն համարվել է «Մայրն ամէն շարեաց» և նրա զինակիցները՝ «զինուուրքն շարին», ապա պարզ է, որ այդ ամենի հիմքում ընկած են եղել բոնատիրական ծայրահեղ շարաշահումներ՝ ուղղված նվազված ժողովություն։

Պոեմի պակասավորության պատճառով լրիվ չի ընկալվում, թե Ստեփանոսը Սյունիքում գտնվելով, ինչպես եղավ, որ պատժվեց «Մեծ Դիւանիի» նստավայրում՝ Թավթիզում։ Դա պիտի բացատրել այսպես։ Նա Սյունիքից հատուկ ծրագրով մեկնել է Թավթիզ, այնտեղ սպանել էլ-հութլուին և ինքն էլ այնտեղ զիմատվել։ Ինչ վերաբերում է հերոսի հարազատ մորը, ատա նա պոեմում առկա անուղղակի տվյալների համաձայն, գեթ այդ օրերին, գտնվելիս է եղել Սյունիքում։ Այս առումով հետաքրքրական են որդու վերապարձին սպասող մոր ապրումները։ Նա ոչինչ զիմայն թե հարազատ մոր կարուով անհամբեր սպասում է տղայի գալուն։ Գտնվում են մարգիկ, անշուշտ, բռնատիրության ներկայացուցիչներից, որոնք խարելով հեգնում են նրան, ատելով, թե շուտով գալուն է քո որդին, զնա ընդառաջ, որ գեմքի քրտինքը

սրես: Մայրն շտապում է ընդառաջ և ճանապարհի ծայրին նստած սպասում՝ որդուն.

Իւր մաւրն ասացին.

«Կու գայ քո որդին,

Արեկ և սրբէ գրտունքն

Ճակտին ու երեսին»:

Իւր մայրն էր նըստել

Դէմ ճանապարհին,

Գիտէր, թէ կու գայ քաւիթաւով

Իւր պարոն որդին:

Տարբերակներից մեկի համաձայն որդին ձիով էր գալու. Հանգամանք, որը ենթադրում է իրոք, հեռու ճանապարհ.

Իւր մայրըն նըստէր

Դէմ ճանապարհին,

Գիտէր, թէ կու գայր ձիաւոր

Իւր պարոն որդին:

Որդին, սակայն, չի գալիս, դալիս են բոթաբերները՝ իրենց հետ բերելով նրա արյունոտ գլուխը:

Ելս բոլորը համոզում են, որ իրոք, Ստեփանոսի մայրը հեռու էր «Մեծ Թիւանիի», Էլ-Խութլուի գտնված վայրից և սպասում էր այնտեղ գտնվող որդու վերադարձին: Բայց քանի որ որդին պիտի Սյունիք վերադառնար, ուստի և հարազատ մայրը գտնվելիս է եղել Սյունիքում: Ելս հանգամանքը ցայտուն կերպով երկում է նաև մոր վշտին ու ողբին շարակցված այն տողերից, որը ասվում է.

Հուր բորբոքեցաւ

Յեղեգեց Զորին...

Անկախ իր ծրագրերի ու գործողությունների ընդգրկման լայն կամ նեղ շրջանակներից, Սյունյաց առաջնորդ Ստեփանոսը հանդես է գալիս որպես հայ բնակչության բողոքի անձնավո՞ն արտահայտիչ, արժանանալով նրա համընդհանուր ու սրտագին սիրուն: Հասկանալի է, որ նա մենակ չէր կարող մեկնած լինել Թավլիկ և միայնակ նախաձեռնել իր վրիժառությունը: Նրա հետ թերևս նաև ուրիշներ էլ են զոհվել, հալածվել, պոեմը սակայն նրա՞ն է նվիրված և նրա՝ մասին է խոսում, ճիշտ այնպես, ինչպես 1387 թվականի նրա մշակման մեջ: Զնայած այդ թվականին Սեբաստիայում շատերն էին զոհվել Բուրհանդին<sup>28</sup> բռնակալի դեմ նախապատրաստված ապստամբության պատճառով, սակայն ստեղծված ողբում սպացվում է միայն Ստեփանոս Սեբաստիային:

Պ. Խաչատրյանի հոդվածում պոեմի քաղաքական, հայրենասիրական բնույթին խպառ անտեսված է: Զգիտես ինչու, նա հետապնդել է մի նպատակ. ցուց տալ, որ «ողբի նյութը վերցված է ավատական ընտանիքի ոլորտից: Հարազատների արյունուշտ արարքների պատկերման հենքի վրա հեղինակը

28 Վերսհիշյալ ժամանակագրություններում՝ «Բուրհան Ղաղի»:

կարողացել է ցուցադրել մարդկային հոգեվիճակներ՝ ծանր ապրումներ, անմիտթար վիշտ և տառապանք կորսված կյանքի համար: Ստեփանոսի կատարած սպանությունը նա դիտում է որպես «Հարազատ մոր կենդանությամբ ալլազգի խորթ մայր ունենալու՝ քրիստոնյային անպատվարեր ու հակարարոյական վիճակի» գեմ բողոքի արտահայտություն: Կատարված դեպքերի ու պոեմի հիմքում նա տեսնում է հոր և որդու հակագրությունը՝ կենցաղային հաշիվների պատճառով: «Դեմ-հանգիման կանգնած են հայրը՝ անձնական բարօրության ու դիրքի «խոհեմ» ընթացքով, և որդին՝ քրիստոնյամ մարդու և հարազատ մոր պատվի շահախնդրությամբ»: Հենց այստեղ է գլխավոր սիմվոլ: Պոեմում միմյանց դեմ կանգնած են ո՛չ թե հայրն ու որդին, այլ մի կողմից՝ Էլ-Խութլուն և «զինուորքն շարին», իսկ մյուս կողմից՝ Հերոսը, «ժողովուրդն» և ուրիշները: Նույնիսկ դժվար է որոշել հոր իսկական տեղն այդ թերությունը. ըստ պոեմի արդի տվյալների՝ նրա վիճակը երկակի է, բարդ՝ ընկած այդ երկու թերությունը սահմանամիջին: Ոչ հատակ պատկերացումը այդ կողմից մասին՝ մթագնել է նրա րուն բովանդակությունը:

Այսուհետև, եթե անգամ, հակառակ փաստերի ու տրամաբանության, ընդունենք այն մեկնաբանությունը, որ տրված է հոդվածում, զարձյալ շնչք կարող անտեսել պոեմի հասարակական բնույթի բովանդակությունը՝ ի գեմս «ժողովրդի» գործոն մասնակցության՝ Էլ-Խութլուի, որպես ամեն տեսակ շարիքների մոր, սպանության նախապատրաստություններին: Այդպես կարող ենք ասել նաև «Մեծ Թիւանիի» և Էլ-Խութլուի ազգային ու կրոնական պատկանելության վերաբերյալ, թույլ տալով այն անհավանական կարծիքը, թե նրանք էլ կարող էին հայ լինել: Թրանից համարյա ոչինչ չի կարող փոխվել, որովհետեւ նրանք մնալու են նորից իրենց բարձր դիրքում, որը մոնղոլական բռնատիրության հենման հզոր կետերից մեկն էր՝ նվաճված երկրներում: Այդ կետի դեմ ուղղված ճնշվածների ամեն մի հարված, որը նպատակ ուներ վերացնել «զմայրն ամէն շարեաց», ամենից առաջ խնսում է պատմա-քաղաքական իրազրությունների մասին: Եվ դա է կարևորը: Իսկ դա անտեսել է Պ. Խաչատրյանը: Նրա հոդվածում փորձ անդամ չի արված բացատրելու «Մեծ Թիւանիի» ով լինելը՝ հասարակական դերի առումով, որի պատճառով էլ շատ խնդիրներ այնտեղ անհասկանալի են մնացել:

Կա նաև մի ուրիշ հանգամանք, նյութի նման ներկայացումը, անկախ հեղինակի ցանկությունից ու նպատակից, ճիշտ չէ ոչ միայն փաստական տեսակետից, այլև տեսականորեն: XIII—XIV դարերում բանաստեղծական միտքը գետ զարգացման այն աստիճանին չէր հասել, որպեսզի ելակետ ունենար ստեղծագործական նյութը որոնելը՝ ազգագրական, կենցաղային, ընտանիքական այնպիսի «մանրություն» վերաբաղբեկու նպատակով, ինչպիսիք մեկնաբանված են հոդվածում, և այդ ամենը՝ հոգեբանական վիճակներ կերտելու համար: Մեկնաբանության նման եղանակը ենթադրում է շատ ավելի ուշ գարերի պատճություն ու գրականություն:

Ներկայացվող պոեմի անանուն հեղինակը նպատակ է ունեցել վերաբաղբեկի իր օրերի համար խոշոր երկույթ հանդիսացած և ժողովրդի ազատապահական զգացմունքների հետ կապված մի իրական ու ցնցող դեպքի ողբերգական ընթացքը: Եվ նա այդ գործը կատարել է մեծ վարպետությամբ, միաժամանակ տալով գործող անձանց ներաշխարհի մոտավոր պատկերը և Սյունյաց աշխարհի վիշտ ու մորմոքը՝ սիրված հերոսի թարմ հիշատակի

առջև: Հարցի վերջին կողմն արդեն հետեւանք է և ոչ ելակետային նպատակ, ավելի ճիշտ, այն միջոց է, ստեղծագործական եղանակ, որը պիտի շատ բարձր գնահատվի:

Նպատակ չունենալով հանգամանորեն անդրագառնալու այս հարցին, ասենք, որ այստեղ առանձնապես հետաքրքրական են ժողովրդական հոգերանության ու մտածողությանը հարազատ այն տները, որոնց մեջ գովերգվում են հերոսի ուժն ու գեղեցկությունը, նրա մոր վիշտն ու բաղրքը և, մանավանդ, անտեր մնացած ու գոյում փակված ձիռ անհանգիստ դոփյունն ու վրնջոցը: Վերջինս, ասես, զգալով տիրոջ հետ կապված դժբախտությունը, փորձում է փշել շղթաները, արգելքները և հասնել օգնության:

Խըրխընչեր իւր ձին,  
Այն բաւզ բաղադին,  
Կոխէր և կտրէր զպիաւուն,  
Սալարկն յախոռուն:  
Խաւաէր մերժապին.  
«Բացէ՛ք զդրուենին,  
Երթանք, թէ հասնիմք աւգնական  
Սիւնեաց իշխանին»:

Այստեղ էլ, սակայն, շպիտի մոռանալ հարցի հասարակական կողմը. այս տողերի միջոցով հեղինակը տվել է ոչ թե անրան ձիռ «անչն» ու կաշկանդվածությունը, այլ՝ տեղի բնակչության:

Անզուգական է մոր նկարագիրը՝ չոքած ճանապարհի ծայրին, ձեռքերը դեպի երկինք մեկնած և «Վրէ՛ժ» աղաղակելիս:

Համբարձեալ զձեռուին  
Դէմ արարողին,  
Զգոգն արեամք լցեալ և խնդրէր  
Վրէ՛ժ սպանողին:

Այս տողերի միջոցով սոսկ մոր անձնական ողբն ու վրեժինդրությունը չէ, որ դրսեռել է հեղինակը: Դա Սյունյաց աշխարհի և մասնավորապես Եղեգյաց Չորի բնակչության վիշտն ու բողոքն է, որից կարծես բոցավառված ճրկիղվել է Հայրենի բնաշխարհը.

Հուր բորբոքեցաւ  
Յեղեցեց Չորին,  
Հրդեհեալ կիդեաց զրոլոր զայն  
Բնակիչը երկրին:

Վերկում տրված մեր բացարությունների հենքի վրա է, որ իսկապես սպատճառաբանվում, իմաստավորվում է Հայրենասիրական այս վեհաշունչ ու վարակող տրամադրությունը, ստեղծելով լիարժեք ու միաձույլ ամբողջություն՝ պոեմի ոգու մասին: Եվ, ամենից առաջ, օտար բռնակալության դեմ կազմակերպված բողոքի, ժողովրդի վշտի ու ազատասիրության իր այդ ոգու սպատճառով է, որ այդ պոեմը հետագայում այնքան շատ է սիրվել և նույնիսկ մշակվել, կապվելով համանման ուրիշ դեպքի հետ՝ ուղղված Բուրհանդին բռնակալի դեմ:

Առանձին ուշագրություն է գրավում պոեմի և մասնավորապես նրա առանձին հատվածների ժողովրդական շունչն ու ողին, բառն ու բանը, որոնք գալիս են մասամբ հեղինակից, մասամբ էլ՝ մշակողներից: Ըստ որում, նկատելի է, որ հետագա փոխությունների ժամանակ պոեմը, կորցնելով հանդերձ իր նախնական ամբողջությունը, միաժամանակ ձգտել է առավել ամփոփ ու քնարական տեսքի:

Մոտավորապես այսպիսին է նորահայտ պոեմը՝ իր ձևի ու բովանդակության հիմնական գծերով. որպես այսպիսին այն մեր միջնադարյան շափածոյի քաղաքական-հայրենասիրական հազվադեպ դոհարներից մեկն է՝ արժանի առավել մեծ ուշագրության:

### ՏԱՂ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ ՍԻՒՆԵԱՅ ԵԳԻՍԿՈՌՈՍԻՆ

Աւրհնեա՛լ է աստուած  
Հայր և սուրբ հոգին,  
Փա՛ռք ներողութեան աստուծոյ  
Որդւոյն միածնին:

5 Աւայ զգովքն ասեմք  
Տէր Ստեփանոսին,  
Եղբարք, լսեցէք հաւասար  
Մահ տարածամին:

Աղամն առաջին՝  
10 Ստեղծուածն անեղին,  
Պատրանաւր շարին՝ ի դրախտին՝  
Հանեալ վանեցին:

Այս է, զոր խաբեաց  
ԶԱղամն և ասաց,  
15 «Եթէ կերիցես ի պտղույն՝  
Դու լիցիս աստուած»:

Բանիւ ո՞ պատրեաց  
Զիշխանն Սիւնեաց,  
Այն խառնիճաղանշ ժողովուրդն  
20 Եւ աստուածուրաց:

«Բա՛րձ զու ի կենաց  
Զմայրն ամէն շարեաց,  
Սերժեայ ի կենաց զէլ-կություն,  
Լեռ երկայնակեաց»:

25 Թարբանջնալ բարձին  
Զիսէլք խիկարին,  
Ետուն սպանանել զիւր մաւրուն,  
Հաւր աշից հանին:  
  
 Գումարեալ եկին  
30 Առ Մեծ Դիւանին,  
Զի «Գայ» սպանանէ զքեզ, այսաւր,  
Ահա քո որդին»:  
  
 Գերեցաւ գերին,  
Զհաւատալը բանին.  
35 «Մի՛ զիս ձեռնամուխ առնիցէք,  
Այն է իմ որդին»:  
  
 Գոչեցին կրկին  
Զինուրքն շարին.  
Ասեն. «Տո՛ւր ի մեզ, զի սպանցուք  
40 Այսաւր քո զորդին»:  
  
 Դողաց վերըստին,  
Լայր սիրտն ի փորին.  
«Քահանակապետ է», ասէ,  
«Կարգէն պատկառիմ»:  
  
 45 Դարձեալ վերըստին  
Գոշին զայրագին.  
«Եթէ ո՞չ տայցես մեզ հրաման՝  
Մեոցի՛ս ընդ նմին»:  
  
 Դաշն եղեալ բանին  
50 Վըճին հատին.  
Ասէ. «Դուք տաշիք պատասխան  
Այն ծածկագիտին»:  
  
 Վայդեցին զարին  
Տէր Ստեփանոսին.  
55 Արիւնն զոշէր առ Քրիստոս  
Որպէս զԱբելին:

28—29-րդ տողերի միջև պակասում է երկու տուն, մեկը «Յ» սկզբնատառով, մյուսը՝ «Գ»:  
39 Զ ե ռ. Ասէ:  
43 Զ ե ռ. և փխ է:  
46 Զ ե ռ. զոշէր:  
49 Զ ե ռ ա զ ր ո ւ մ «Գաշն» բառը՝ եղծված: Ընթեցվում են վերջին տառեր. նշանում ենք  
№ 7707 ձեռագրի հիման վրա:  
53 «Վայդեցին»-ը թերևս «Քափեցին»-ի փոխարեն, որով «Յ» տառով սկսվող տների բանիք կլրանար: Այս և նախորդ տան միջից պակասում է ե—Ծ տառերով սկսվող մասը:

Սաղիկ էր սարին,  
Մանիշակ՝ դաշտին.  
Կարմիր ու սպիտակ իւր երեսն  
60 Դարձաւ ի գեղին:  
  
 Թառմեցաւ ծաղիկն,  
Էն վարդն ի թփին.  
Կարմիր ու սպիտակ իւր երեսն  
Դարձաւ ի գեղին:  
  
 65 Թավրէզ քաղաքին  
Զարդ էր հեծելին՝  
Հէնց, զինչ որ ամիրայ սաւթանն,  
ի իւրեն հաւատին:  
  
 Թադվոր էր թախթին  
70 Այն Սիւնեաց բերդին,  
Նայ հուքմն բռաւան կու վարէք  
ԶԱւետրանին:  
  
 Իւր մաւրն ասացին.  
«Կու գայ քո որդին,  
75 Արեկ և սրբէ զքրտունքն  
Ճակտին ու երեսին»:  
  
 Իւր մայրն էր նըստել  
70 Դէմ ճանապարհին,  
Գիտէր, թէ՝ կու գայ քաւթալով  
80 Իւր պարոն որդին:  
  
 Յայնմ առաւօտին  
Սև շորեթարթին  
Բերին ու ձգեցին արիւնուռ  
Զգլուխն ի զողին:  
  
 85 Լայր, իսանդաղատէր  
Սրտիկն ի փորին,  
Պագնէր և զնէր արիւնուռ  
Զերեսն-երեսին:

57—60-րդ տողերն իւենց տեղում չեն («Յ» տնախումք): Այս և նաշորդ տան երկուրդ  
կեսեր՝ պատահարար կրկնված:  
60 Զ ե ռ. Սըսաւ. ողդեցինք բառ № 5623 ձեռագրի:  
81 Զ ե ռ. Յայմն. Ըստ իմաստի՝ տունք յուր տեղումն է, բառ սկզբնատառի («Յ»)՝ ոչ  
սկզբի բառն աղավաղված է: Եթէ դա էլ «Յ» տասին է պատկանում («Ի յայն առաւօտին»),  
ապա պակասում է այդ տասով սկսվող ևս մի տուն:

Լաց ասէր գերին,  
90 Գրգուէր զիւր որդին,  
«Որդեա՝ իմ, որդեա՝ կ, սաւթան շալ,  
Մաւրս մասն և բաժին»:  
  
 Խրբիւրնչէր իւր ձին,  
Այն բաւզ բաղաւին,  
95 Կոխէր և կտրէր զպիստոն,  
Սալարկն յախոռին:  
  
 Կաւսէր մեքմազին.  
«Բացէք զդրուենին,  
Երթամք, թէ հասնիմք աւզնական  
100 Մինեաց իշխանին»:  
  
 Ծունը ածէր իւր մերն  
Դէմ արարաւզին,  
«Աստուած, դու գիտես, որ էս մէկս,  
Էլ որդի շունիմ»:  
  
 105 Խաւարեա՛ց, լուսի՛ն,  
Ի մէջ զիշերին.  
Արե՛, մի՛ ծագել դու այսաւը,  
Չտեսնում զիմ որդին»:  
  
 Համբարձեալ զձեռուին  
110 Դէմ արարողին,  
Զգողն արեամք լցեալ և խնդրէր  
Վրէ՛ծ սպանողին:  
  
 Հուր բորբոքցաւ  
3եղեգեց Զորին.  
115 Հրդե՛եալ կիվեաց զրուոր զալն  
Բնակիչք երկրին:

92 «Ե» տառով սկսվող տներից պակասում է երկուր:  
95 Զ ե ա. զախաւուն:  
97 «Մեքմազին» բար ճախապես դրված է եղել «Մեքմազին» ձեռվ. Զեռագրում՝ 93—96 և  
97—100-րդ տողերով կազմված տները՝ ետևառաջ. տեղափոխեցին բատ իմաստի և բատ մյուս  
տարբերակների:  
101 Զ ե ա. մէրն:  
101—104-րդ տողերը «Մ» տնախմբից են և իրենց տեղում չեն: «Մ»-ի մի այլ տունն է՝  
վերևում (տես 57—60-րդ տողերը):  
105 Զ ե ա. լուսին.  
108—109 Այս տողերի միջից պակասում են «Ե» տառով սկսվող մեկ տուն, «Մ»-ով՝ երկու  
(մյուս երկուր տես վերևում՝ 57—60 և 101—104-րդ տողեր), «Ե»-ով՝ շորս և «Հ»-ով՝ երկու:  
109 Զ ե ա. զձեռն:  
110 Այս տողից հետո պակասում են Զ—Ք տառերով սկսվող բոլոր տները:

## ՏԱՂ ՍՏԵՓԱՆՈՍԻՒՆ

Ալոհնե՛ալ է աստուած  
Հայր և սուրբ Հոգին.  
Փա՛ռք ներողութեան աստուածու  
Որդոյն միածնին:  
  
 5 ԱՀա՛յ, զողբն ասեմ  
Զտէր Ստեփանոսին.  
Եղբարք, լսեցէք հաւասար  
Ջմա՞ն տարաժամին:  
  
 Բարբաշեալ բարձին  
10 Զիսելքն խիկարին,  
Ետուն սպանանել զիէլ-հութլուն,  
Հաւր աշաց հանին:  
  
 Իւր մայրն նստէր  
Դէմ ճանապարհին,  
15 Գիտէր, թէ տի զայր փութալով  
Իւր պարոն որդին:  
  
 Յայնմ առաւօտին  
Սև չորեքշաբթին  
Բերին արքնուոտ, ձգեցին  
20 Զգլուխն ի մաւր զրկին:  
  
 Թառմեցաւ ծաղիկն,  
Այն վարդն ի թփին.  
Կարմիր ու սպիտակ իւր երեսն  
Դարձաւ ի դեղին:

## Ազրաւուներ

Ա=2հո. № 2676, թերթ 184ր—185ա:  
Բ=2հո. № 697, թերթ 56ր—58ա:  
Ը=2մմառ, ձեռ. № 214, թերթ 75ր—  
77ա:

## Խորագիր

Ե Անխորագիր: С Տաղ սրբուն Ստեփանոսի:

## Բնագիր

1 Ա Աւհեալ:  
4 Ա Ճիածնի:  
5 Ա Հայ (Ա-ի համար տեղ է բողնված):  
BC տունը չի է:

9 Ա Բարբաշեալ:  
10 Բ Զիսելքն ի: С Զիսելքըն:  
11 Ա Ետուն սպանանել զլուսատուն:  
В Յետուն: С զիսելքութլուն:  
12 Ա Հաւր աշացըն լուս: В Հօրն աշացըն  
Հանին: С Հօր աշացըն Հանին:  
13 Ա Գայր քաւելով:  
16 Ա պարոն Ժի՛: В յորդին:  
17 Բ Յայն: С Զայն:  
18 Բ Եւ փխ Աւ:  
20 Ա մօրն: В Զգլուխն ի մօր կրգին:  
С զրկին:  
22 Ա Այն վարդին թփին:  
23 Ա Եւ փխ ու Բ յերեսն:

25 Հայր, խանդաղատէր  
Մաւր սիրան ի փորին.  
Պագնէր արընոտ և ղնէր  
Զերեսն—երեսին:

1աց ասէր դերին,  
30 Գըգմէր զիւր որդին.  
«Որգեա՞կ իմ, որգեա՞կ, սուլթան շահ,  
Մաւրս մասն ու բաժին:

Զայն բոլոր երեսն  
Տէր Ստեփանոսին՝  
35 Որպէս թէ լուսին էր բոլորած՝  
ի տասնուշինդին:

Այն ծով-ծով աչերն  
Տէր Ստեփանոսին՝  
Որպէս թէ կանթեղ էր վառած՝  
40 ի մէջ տաճարին:

Այն կամար ուներն  
Տէր Ստեփանոսին՝  
Որպէս թէ կամար էր շարած՝  
Աւագ խորանին:

45 Այն մաւյտան ճակատն  
Տէր Ստեփանոսին՝  
Որպէս թէ զումբէթ էր սարտած՝  
Մեծ կաթողիկին:

Այն սատաֆ բերանն  
50 Տէր Ստեփանոսին՝  
Որպէս թէ սկիհ էր և առսի՝  
Այն սուրբ խորհրդին:

25 Բ խանտաղատէր:  
26 Բ Մօր:  
27 Ա արենուտ: Ը Փոքներ: զընէր:  
28 Բ յերեսին: Ը երեսն:  
29 Ա Մայր և ասէր զերին: Ը [ա]սեր:  
30 Ա Գոգէր: Ը Գըգուէր:  
31 Ա սուտան շայ:  
32 Բ Մօրս:  
33 Բ յերեսին: Ը երես:  
34 Ա Ստեփանոսին: Յ Համեփանոսին:  
35 Ա բալորաց: Յ է փիս էր: Ը էր չի՞՛:  
36 Ա ի ժե-ին: Ը տասնուշինդին:  
37 Բ արերն:

38 Ա Ստեփաննոսին:  
39 Ը կանդեղ:  
40 Բ օնքերն:  
42 Ա Ստեփաննոսին:  
43 Յ Ս քաշած էր կամար:  
44 Բ Աւագ:  
45 Ա Ճական: Յ Ճոյտան: Ը մոյտան:  
46 Ա Ստեփանոսին: Յ Համեփանոսին:  
47 Ա կումբէթ: Յ սալած: Ը թէ չի՞՛: Գում-  
պէթ էր այլած:  
49 Յ Ս սատաֆ բերան:  
51 Ա ակն էր: Յ սկիհ: Ը խոկին:  
52 Յ Հաղորդին:

Հայր մայրն և ճընէր,  
Խնդրէր զիւր որդին,  
55 Ողբալը, Հառաչէր. գալարէր  
Աղիքն ի փորին:

Հայէր ի յերկինա  
Ցոլժ արտասուազին.  
«Արև՛, մի՛ ծագէր դու այսաւր,  
60 Չտեսնում զիմ որդին»:

Թագաւորն երկրին,  
Այն Սիւնեաց բերդին,  
Նայ Հուրբն ըռաւան կու վարէր  
ԶԱւետարանին:

65 Խըրիսընչէր իւր ձին,  
Հայր պաւզ բատավին,  
Ոտաւքն կտրէր զպիսաւուն,  
Սալարքն ախոռին:

Խաւէր միմազին.  
70 — Բացէ՛ք ըզդոնին,  
Որ Երթամ, Հասնիմ յաւզնութիւն  
իմ թագաւորին:

53 Ա Հայր փիս. Հայր: Ը ձշէր:  
54 Յ Վիճէր և քակէր: Ը Վիճէր և կանչէր:  
55 Յ և հառաջէր: Ը և հառչէր:  
58 Յ արտասազին:  
59 Յ այսօր: Ը ծագել:  
60 Ա Որ շտեսնում: Յ Զբանենում:  
61 Յ Թագաւոր յերկրին: Ը Թագ[աւոր]:  
62 Ա Սրալ: Յ Սրսայ բերդին: Ը Սրսայ  
բերդին:  
63 Ա Նայ զհուրբն ըռաւան: Յ Հուրբ ու  
Հրաման: Ը Նայ Հուրբ ու Հրաման

71 Կ վայէր:  
74 Ը Աւետար[ան]ին:  
75 Յ Խրխնչէր զիւր:  
66 Յ պօդ պետափին: Ը պօդ պէտափին:  
67 Յ Ոտօքն կոտրէր զպիսաւուն: Ը  
Սալին կոտորէր զպիսաւան:  
68 Յ Սալարք: Ը Զալարք:  
69 Ա Խաւէր մէկ աղին:  
70 Յ զդուրնին: Ը զդուրնութիւն:  
71 Յ Հասնիմ օգնութիւն: Ը աւզնութիւն:

**ՏԱՐԱԾԵՎԱՆՈՍԻ**

Աւրհնել է Աստուած,  
Հայր և սուրբ Հոգին.  
Աւրհնեալ, աղաւթել առ Աստուած,  
Որդին միածին:

5 Ահայ զգովքն ասեմ  
Տէր Ստեփանոսին.  
Հաւասր լսեցէք, եղրարք,  
Զմա՞ն տարաժամին:

Թագուոր էր թախտին  
10 Այն Սիւնեաց երկրին,  
Զհուրմն ու զուրափ կու առնէր  
ԶԱւարանին:

Զինչ վարդն ի թիգին,  
Մանուշակ սարին,  
15 Էնցեղ թառամեր գեղեցիկ  
Սորուքն յերեսին:

Զինչ վարդ վառուցած  
Կարմիր երեսին:  
էնցեղ, զինչ նշխարք և բաժակ՝  
20 Սուրբ պատարագին:

Զիւր ծով-ծով աշուեր  
Տէր Ստեփանոսին՝  
էնցեղ, զինչ ջրով աւազան՝  
Սուրբ եկեղեցին:

25 Զիւր կամար ուներ  
Տէր Ստեփանոսին՝  
էնցեղ, զինչ կամար, որ քաշած  
Ի սուրբ խորանին:

**Աղբյուրներ**

- Ա=Զեռ. № 5623, թերթ 215ա—216ա:  
Բ=Իրանի Խորհան զյուղի Ճեռագիր,  
թերթ 55ա—55բ:  
Հարազիր  
Ա Խորագիր Ճի՛: Յ Տաղ Ստեփանոսի  
նախավկային է ասացեալ,  
Բնագիր  
3 Յ աղաւթել յառ:  
4 Ա միածին: Յ Զի՞ր միածին:  
6 Ա Ստեփանոսին:  
7 Ա իմ եղրայր: Յ Հաւասր լսեցէք:  
8 Ա տարաժամին: Յ տարաժամին:  
9 Ա թախտին: Յ Թագաւոր:

- 10 Յ նայ վիս. Այն: յերկրին:  
11 Ա Զնուքը ու զուրափին: Յ Հուքն և  
զուրափ առնէր:  
12 Յ Աւարարանին:  
15 Ա Էնցեղ գեղեցիկ թառամեր: Յ Են-  
ցեղ թառամեր: Զի՞ր գեղեցիկ:  
16 Յ Երեսին:  
17 Ա Զինչ վարթըն վառած:  
19 Յ Այնպէս: Սուրբ վիս զինչ:  
20 Յ պատարագի:  
21 Յ աշճը:  
23 Յ Այնպէս: աւազանն:  
24 Յ սուրբ:  
25 Յ ուներն:  
26 Ա Ստեփանոսին:  
27 Յ Այնպէս, զինչ կամար կապած:  
28 Յ շի՞ր:

Զիւր լատիֆ բերան,  
30 Ատմունքն ի միջին՝  
էնցեղ, զինչ շինած զմբեթով  
Սուրբ եկեղեցին:  
Զիւր լատիֆ շրթունք,  
Բարակ պոկնին՝  
35 Էնցեղ, զինչ փոխեցաւ ծիրանի  
Մածկոց սեղանին:  
Զմոմեղէն մատունք  
Տէր Ստեփանոսին՝  
էնցեղ, զինչ մոմերն, որ վառն  
40 Յաւագ սուրբ Զատկին:  
Կրիսնչէր իւր ձին,  
Իւր բաւզ բէդեին,  
Կոտրէր զրխաւն ի յոտերն,  
Մալերն յախոռին:  
45 Ասէր լիւր մտին.  
«Բացէ՛ք զգոնին,  
Որ երթամ, Հասնեմ ատենին  
Հայոց իշխանին»:  
Աև շորեքշարթին  
50 Զիւրաբըն բերին,  
Թէ բոկիկ և մերկ, զիխիբաց  
Զնա ըմբռնեցին:  
Նա ի յոտսն անկնալ  
Իւրոյ ջալատին.  
55 «Հազար զինահար, զինահար,  
Թո՛ղ խոստովանիմ»:

41 Ա երիշնչէր:  
42 Ա բէդէին: Յ Իւր բաւզէ զեխն:  
43 Ա ի յոտին: Յ Կոտորէր զրխաւուն:  
44 Յ Ջալերն:  
45 Յ հաւար ճոխ մազին:  
47 Յ Հասնեմ յատենին:  
50 Յ Զիւրաբն:  
51 Յ թէ բորիկ, զիխիբաց: Զի՞ր և մերկ:  
52 Ա Զնայ: Յ Զնայ ըմբռնեցին:  
53 Ա նայ: Յ ոտն անկել:  
54 Յ Իւր զինուրին:  
55 Ա զինահար, զինահար: Յ Հազար զին-  
հար, Հազար:  
56 Յ խոստովանին:

իւր մայրըն նըստէր  
Դէմ ճանապարհին,  
Գիտէր, թէ կու գայր ձիաւոր  
60 իւր պարոն որդին:  
  
իւր մայրըն ծընկուէր  
Դէմ աղաւթրանին,  
«Արարիշ վկայ այս բանիս,  
Որ որդի շունիմ»:  
  
65 Զգլուխն բերին,  
Մաւր գորն ընկեցին.  
Առնէր և զընէր զարընոտ  
Երևսն—երեսին:  
  
Ի Սըսայ բերթին  
70 Թագուոր ի թախտին,  
Զինչ սուլթան, փատշահ և ամիրայքն՝  
իւր հաւանէին:  
  
Թարվէդ բաղաքին  
Ի մեծ մէդանին  
75 Մէկ մանուկ ըրկայր, որ բաշէր  
Զաղեղ պարոնին:  
  
Թարվէդ բաղաքին,  
Մէջ շատ հեծելին  
Զհուրմ ու զուրաւի կու առնէր  
80 ԶԱւանարանին:

57 Յ իւր մօրն նստէր:  
58 Ա Դէպ:  
59 Յ զայ օթալով:  
60 Ա 61—64-րդ տողեր՝ 57—60-րդ  
տողերից առաջ: Յ իւր մօրն մնդէր:  
62 Յ աղօթրանին:  
63 Յ Արարիշ:  
64 Յ Որ որդի ես շունիմ:  
65 Ա Զգլուխին:  
66 Յ Մօր գիրկն:  
67 Յ Առնոյր և զնէր զարնոտ:

68 Յ Երեսի:  
69—72 Ա Այս տողեր՝ շիֆ: 70 Յ Բա-  
գուր:  
73 Յ Ի Թարվէդ բաղաքն:  
74 Յ Այս մեծ մօդանին:  
75 Ա Մէկ: Յ Հարո:  
76 Յ պարանին:  
77 Ա Թարվէդ:  
78 Յ Բաղում հեծելին:  
79 Յ Նայ Հորմ, զատաստան առնէր:  
80 Յ Սուրբ Աւետարանին:

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՎНОВЬ НАЙДЕННАЯ СРЕДНЕВЕКОВАЯ  
ПАТРИОТИЧЕСКАЯ ПОЭМА

## Р е з ю м е

В средневековых армянских рукописях сохранились шесть неполных копий одной высокохудожественной средневековой поэмы. Здесь они представлены впервые.

Исследователь приходит к заключению, что эта, пока безымянная, поэма создана в XIII—XIV вв. и что ее темой служит трагическое событие, связанное с протестом населения Сюника, направленным против монгольского ига.

Главный герой поэмы—епископ и князь Сюника Тер-Степаннос. Отец последнего именуется «Великим Диваном», это один из монгольских сахиб-диванов.

A. CH. MNATSAKANIAN

## UN POEME PATRIOTIQUE MEDIEVAL INEDIT

L'auteur donne une scrupuleuse analyse d'un poème médiéval particulièrement intéressant et d'une grande valeur littéraire, publié ici pour la première fois dans ses six variantes quelque peu défectueuses retrouvées dans six manuscrits arméniens du Moyen Age.

Selon l'auteur, ce poème anonyme remonterait au XIII<sup>e</sup> ou au XIV<sup>e</sup> siècle, le sujet se rapportant à un tragique épisode du mouvement de révolte de la population de la région de Siounie contre la tyrannie mongole.

Le héros y apparaît sous les traits de l'évêque et prince de la Siounie Stépannos, dont le père, „Grand Divan“, est l'un des „sahibs—divans“ mongols.

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՄԱՇՏՈՑԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԳԱՐՄՈՒՊՈՒՄՆԵՐԸ

1965 թ. նոյեմբերի կեսերին, բուլղարահայոց «Երևան» մշակութային միության կենտրոնական վարչության հրավերով բուլղարիա գործուղքով Մատենադարանի գիտնական քարտուղար Վարդան Գրիգորյանը: Շուրջ մեկ և կես տարի մնալով բուլղարիայում, ընկ. Գրիգորյանը «Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր գանձերը» և «Հայագիտության զարգացումը Սովետական Հայաստանում» թեմաներով զեկուցումներ կարդաց Սոֆիա, Պլովդիվ, Բուրգազ, Վառնա, Տոլեռսին, Խասրովո, Ալբու, Սլիվեն, Սիլիստրա և Ռուսև քաղաքներում: Զեկուցումներից հետո ցուցագրվում էր «Մատենադարան» գունավոր կինոնկարը: Միաժամանակ ընկ. Գրիգորյանը աշխատանք էր տանում բուլղարահայ մեր հայրենակիցների մոտ պահպանված ձեռագրերը, գրերն ու վավերագրերը ուսումնասիրելու և նրանց մի մասը հավաքելու ուղղությամբ: Պլովդիվ, Վառնա և Ռուսև քաղաքների եկեղեցական վարչություններից և մի շարք անհատներից ընկ. Գրիգորյանը Մատենադարանի համար նվեր ստացավ հայերն 19 ձեռագիր և 4 հմայի (նվիրատունների անունները նշված են սույն տեղեկատուի վերջում): Զեռագրերի մեջ հատկապես արժեքավոր է XIII դարի արծաթեկազմ ավետարանը, որն ունի հետաքրքրական հիշատակարաններ, IX—X դարերի մագաղաթի պահպանակներ և զարդարված է գեղեցիկ մանրանկարներով: Զգալի հետաքրքրություն են ներկայացնում նաև XIV դարի Մաշտոցը և XVII դարի Շարակնոցը՝ IX դարի մագաղաթի պահպանակներով: Պլովդիվ բաղաքում Մատենադարանին նվեր արվեցին թուրքական սուլթանների կողմից Ֆիլիպեի (Պլովդիվի) հայ առետրականներին տրված մի շարք հրովարտակներ: Պլովդիվի «Գրասիրաց» գրադարանի վարչությունը ընկ. Գրիգորյանի խրնորանքով բաց արեց շուրջ 20 տարի առաջ փակված մի քանի սննդուկներ, որոնց մեջ զետեղված էին անցյալ դարի վերջերին Կ. Պոլսում և Բուլղարիայում լույս ընծայված հայկական պարբերականների հավաքայուտ հավաքածուներ, հնատիպ հայերն և հայատառ թուրքերն զրբեր: Այդ ամենը, ինչպես նաև 300 կտոր հայագիտության համար արժեք ներկայացնող գրքեր «Գրասիրաց» գրադարանի վարչությունը հանձնեց ընկ. Գրիգորյանին՝ Հայրենիք տանելու համար: Հայերն շատ զրբեր հավաքեցին նաև Սոֆիա, Վառնա, Ռուսև և Խասրով քաղաքներում: Այդ զրբերն ու պարբերականները «Երևան» կազմակերպության տեղական վարչությունների միջոցով տեղափոխվեցին Սոֆիա, ապա միացվեցին կենտրոնական վարչության հավաքած գրքերին և այդ ամենը, շուրջ 2000 անուն գրքեր ու հանդեսներ, ուղարկվեցին Հայաստան: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի որոշմամբ այդ գրքերը հանձնվեցին Հայաստանի Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանին:

Միաժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց սովիարնակ ընկ. Պետրոս Բոստանչյանի հետ՝ նրա ավելի քան 500 անուն գրքերի և պարբերականների հարուստ հավաքածուն տեղափոխվելու նրեան և որպես նվեր հանձնելու շՍՍՀ զիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարանին: Իսկ վառայաբնակ Փափազյան բուլղարի տանը պահպան հայատառ թուրքերին երեք տասնյակից անցնող ձեռագրերը տեղափոխվելու են Մատենադարան:

Սովիայի պետական համալսարանի պատմության և փիլիսոփայության ֆակուլտետների ուսանողության համար ընկ. Գրիգորյանը հանդիս եկավ դասախոսությամբ՝ Մատենադարանի պատմական և աշխարհագրական ընությի ձեռագրերի մասին: Բուլղարաս-սովետական բարեկամության ընկերության առաջարկությամբ Վ. Գրիգորյանը Մատենադարանի ձեռագիր հուշարձանների մասին գրեց հոգվածներ, որոնք տպագրվեցին Սովիայի «Ենարոդնա մլադեժ» և «Օտելեսավելն ֆրոնտ» լրագրերում:

Բուլղարիա կատարած իր այցելության և այնտեղից բերված նյութերի մասին ընկ. Գրիգորյանը զեկուցումներով հանդիս եկավ Մատենադարանի գիտական խորհրդի նիստում, գիտությունների ակադեմիայում, Արտասահմանից վերագրածող հայերի ընդունման և տեղափորման և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեներում, նաև ելույթ ունեցավ նաև Երևանի ուղիությունում ու հեռուստատեսությամբ:

\* \* \*

1966 թ. հունվարի 20-ին Մաշտոցի անվան Մատենադարանի գիրեկտոր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լևոն Խաչիկյանը և Մատենադարանի հին ձեռագրերի ուսումնասիրության սեկտորի վարիչ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Սեն Արեգացյանը գործուղքեցին Երուսաղեմ (Հորդանան), Բեյրութ (Լիբանան), Դամասկոս և Հալեպ (Սիրիա)՝ այգեղ պահպան հայերեն ձեռագրերն ուսումնասիրելու, ինչպես նաև ձեռագրական կենտրոնների հետ գիտական կապեր հաստատելու առաջադրությունում կազմակերպության կամաց վանքի ձեռագրածուն Երևանի Մաշտոցյան Մատենադարանից համար աշխարհանում գրավում է երկրորդ տեղը: Այստեղ Հայոց պատրիարքարանի խնամածության ներքո պահպան են 3800 գրչագրեր, որոնց մանրամասն ցուցակը կազմում և պրակներով հրատարակության է հանձնում անվանի բանասիր նորայր եպիսկոպոս Պողարյանը (Սովական):

Մեկ և կես ամիս աշխատելով Երուսաղեմում, Լ. Խաչիկյանը և Ս. Արևաշտյանը վանքի միաբանության և հատկապես ամենաապատիկ Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի կողմից ցուցաբերված ուշադրության և ստեղծված զուրությունների շնորհիվ Հնարագորություն ունեցան ուսումնասիրելու առավել ուշագրավ ձեռագրերը, կատարել անհրաժեշտ քաղվածքներ, պատճենահանենել մի շարք ձեռագրեր և մանրանկարներ, արտագրել ավելի քան 300 հիշատակարաններ, ինչպես և պատվիրել ամբողջական ձեռագրերի մանրաժամանակներ, որոնք անհրաժեշտ են Մաշտոցյան Մատենադարանի գիտահետազոտական աշխատանքների համար: Գործուղքած ընկերների հավաքած նյութերը հարուստ են ու բազմազան, գրանք կնապատեն Մատենադարանի կողմից հրատարակության պատրաստվող հիշատակարանների որոշմամբ այդ գրքերը հանձնվեցին Հայաստանի Փափազյան Բուլղարանդ, Արբահամ Կրետացի և այլն) բննական բնագրերի

և մի շարք մենագրական ուսումնասիրությունների առավել ամբողջական լինելուն: Երուսաղեմյան հավաքածուն զեռևս պարունակում է գիտական աշխարհին անհայտ կամ սակավ հայտնի գործեր: Դրանց թվին են պատկանում, օրինակ, Գրիգոր Տաթևացու «Յաղագ» շար Հերձուածոյն որ երեցաւ յերկիրն Ռըշտունիաց», ինչպես և նույն Հեղինակի «Թուղթ վասն Աղթամարայ եպիսկոպոսացն» խորագրերը կրող աշխատությունները, Հակոբ Զուղայեցու՝ պատմական պրոշակի արժեք ներկայացնող կտակը, Մինաս Համթեցու օրագրությունը, մի շարք անանուն ժամանակագրություններ և այլն: Բացադրիկ գիտական արժեք են ներկայացնում այստեղ պահպաղ բժշկական ձեռագրերը, ալրիմիական գործերը, ինչպես և միջնադարյան բառարաններն ու տաղարանները:

Երուսաղեմյան հավաքածուի փառքն են կազմում մանրանկարներ պարունակող ընտիր ձեռագրերը: Թորոս Ռոսլինի մեջ հասած սակավաթիվ ձեռագրերից հինգը գտնվում են այստեղ: Մատենադարան են բերվել թ. Ռոսլինի բազմաթիվ մանրանկարների գունավոր պատճենները (գիտապողիտիվները): Բացի այդ պատճենահանվել են հաշատուր ինգանեցու (XIV դ.), Հակոբ Զուղայեցու (XVI—XVII դ.) և այլ մանրանկարիչների գործերը:

Երուսաղեմի հավաքածուն ուսումնասիրելու և գիտական շրջանառության մեջ գնելու համար տարիներ են պետք: Բայց և այնպես այս այցելությունը և կատարված աշխատանքը հնարավորություն տվեցին գործուղված ընկերներին մոտիկից ծանոթանալու այդ հարուստ հավաքածուին և կապեր հաստատելու հայ ձեռագրական մշակույթի այդ խոշոր կենտրոնի հետ:

Երուսաղեմում աշխատանքներն ավարտելուց հետո Լ. Խաչիկյանը և Ս. Արեշատյանը անցան Լիբանան և, 25 օր մնալով այստեղ, ծանոթացան Զմմառի և Անթիլիսափ հայերն ձեռագրերի հավաքածուների հետ:

Զմմառի հայ Կաթողիկե միաբանության խնամքի տակ գտնվող արժեքավոր հավաքածուն այժմ պարունակում է 1300 հայերն գրչագրեր, այդ թվում նախկին Անտոնյան միաբանության ձեռագրերը, Զմմառի վանքի հին հավաքածուն և վերջին տարիների ընթացքում հավաքված, բայց գեռևս ցցոցակագրով մատյանները: Գործուղված ընկերները այստեղ են հայ կաթողիկե պատրիարք ամենապատիվ իգնատիոս Պաթանյանի թույլավությամբ ու վանքի միաբանության կողմից ստեղծված նպաստավոր պայմանների շնորհիվ հավաքեցին ուշագրավ նյութեր տաղարաններից, ձեռագրաց հիշատակարաններից, փիլիսոփայական և բնագիտական բնագրերից և այլն:

Զմմառի վանքում պահպատ են մի շարք խիստ արժեքավոր բնագրեր՝ «Գիրք թղթոցի» միակ ձեռագիրը, Մսիթար Գոշի «Դատաստանագրքի» հնագույն օրինակներից մեկը, XIII դարի մի արժեքավոր բժշկարան և շատ այլ եղակի գրչաղբեր:

Այսուհետև Լ. Խաչիկյանը և Ս. Արեշատյանը մեկնեցին Սիրիա, ծանոթացան Դամասկոսում և Հալեպում գտնվող հայերն ձեռագրաց հավաքածուներին, կապեր հաստատեցին Դամասկոսի ազգային թանգարանի տնօրինության հետ, ուր պահպատ են մի քանի հայերն հնագույն պատառիկներ: Բացի այդ նրանք ծանոթացան առանձին անհատների (Վ. Սեթյան, Գևորգ վարդապետ Կարպիսյան, Գ. Մազլումյան և այլք) մոտ գտնվող ձեռագրերին:

Գործուղված ընկերները Հորդանանում, Լիբանանում և Սիրիայում հանդիպում են հայկական գաղութի ներկայացուցիչների հետ, հանդես մի շարք դասախոսություններով՝ նվիրված Մաշտոցյան Մատենադարանին:

Նի գանձերին և Հայաստանում կատարվող հայագիտական աշխատանքներին: Նրանք այցելեցին նաև հայկական գաղութներ, մշակությալին միություններ, ակումբներ, գիտեցին պատմական հուշարձաններ (Պետրա, Զեռաշ, Երուսաղեմի և Բեթղեհեմի հիշարձան վայրերը, Քերոս, Բաւլբեկ, Պալմիրա և այլն):

Ավարտելով իրենց աշխատանքը, Լ. Խաչիկյանը ու Ս. Արեշատյանը հարուստ նյութերով և վառ տպապրություններով 1966 թ. ապրիլի 10-ին վերադարձան Երևան: Ծուրջ 3 ամիս տևող այդ ուղևորության մասին նրանք մանրամասն զեկուցումներով հանդիս եկան Մաշտոցյան Մատենադարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստում, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում, Հայաստանի գիտությունների ակադեմիայում և այլ գիտական հաստատություններում:

#### ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ

Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհուրդը ընդլայնված հաստուկ նիստերով նշել է ականավոր հայագետներ՝ Հովհաննեսի Հովհաննի Մարկվարտի և Մանուկ Արեղյանի ծննդյան 100-ամյակները:

Հ. Մարկվարտին նվիրված նիստը տեղի ունեցավ 1965 թ. մարտի 11-ին: Մատենադարանի գիրեկտոր Լ. Խաչիկյանի բացման խոսքից հետո զեկուցումներով հանդիս եկան Մատենադարանի ավագ գիտական աշխատակից Գ. Արգարյանը՝ «Հովհաննի Մարկվարտ (կյանքն ու գիտական գործունեությունը)», ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակրելագիտության սեկտորի ավագ գիտական աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Ռ. Մահակյանը՝ «Հ. Մարկվարտը արևմտահայերի գենոցիդի մասին» թեմաներով: ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պրոֆեսոր Կ. Մելիք Օհանջանյանը հիշողությունների պատմեց Հ. Մարկվարտի մասին, որին նա աշակերտել է Բեռլինում 1910—1915 թվականներին:

Մ. Արեղյանին նվիրված նիստը տեղի ունեցավ 1965 թ. մայիսի 22-ին: Հնկ, Լ. Խաչիկյանի բացման խոսքից հետո զեկուցումներով հանդիս եկան Մատենադարանի ձեռագրերի գիտական պահպատ ազգային թեկնածու Ա. Մնացականյանը՝ «Արեղյանը և գուղովական աշխատակից հնագիտության և ազգագրության ինստիտուտի ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Հարությունյանը՝ «Արեղյանի հայ վիպական բանահյուսության տեսությունը», Մատենադարանի ավագ գիտական աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մազլումյանը՝ «Արեղյանը և այլ գիտական աշխատակից հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Արեղյանի հայ գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակիցների թեկնածուների մեջ մի մաս կազմում է Ա. Արեղյանի անդամները» և այլ գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակիցները:

348—21

1965—66 թվականներին Մատենադարանում գեկուցումներով հանդես են եկել արտասահմանյան հետեւյալ զիտնականները՝

1. Ռումինահայ Հայագետ Հակոբ Սիրունին՝ «Նասիրի տաղարանը» և «Ռումինահայ անվանի գիտնական, պրոֆեսոր Արամ Զքենջյանի կյանքն ու գիտական գործունեությունը» թեմաներով (1965 թ. Հոկտեմբերի 12-ին և 22-ին):

2. Սոփիայի Համալսարանի պրոֆեսոր, բյուզանդագետ Դիմիտր Անգելովը՝ «Կատարագրությունը ժամանակակից Բուլղարիայում» թեմայով (1965 թ. Հոկտեմբերի 29-ին):

3. Հնդկեալ արևելագետ, Հնդկաստանի ազգային պրոֆեսոր Սյունիթի Քումար Չաթրջին՝ «Հայ-Հնդկական փոխարաբերությունները» թեմայով (1966 թ. ապրիլի 29-ին):

4. Լիբանանահայ արվեստագետ Վազգեն Թութունչյանը և սիրիահայ ակնարույց և Հասարակական գործիչ, դոկտոր Ռուպեր Ճեպեճյանը՝ «Սիրիական անտառում հայտնաբերված Հայերեն վիմագիր արձանագրությունները», «Հալեպի «Քառասուն մանկանց» եկեղեցու «Ահեղ գատաստան» նկարը» թեմաներով (1966 թ. սեպտեմբերի 24-ին):

#### ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԶԵԽԱԳՐԵՐԻ ԱՃՅ ՎԵՐՋԻՆ ԶՈՐՍ ՏԱՐՈՒՄ

Վերջին շորու տարում (1963—1966) Մաշտացի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուները համալրվել են 762 միավորով: Եթե 1962 թվականի վերջին Մատենադարանի բոլոր հավաքածուները միասին ամփոփում էին 13398 ձեռագրական միավոր, ապա, այսօր այդ թիվը հասնում է 14160-ի, այսպէս:

Հավաքածուներ	Թ թ ե ց					
	1962 թ. պրոլ.	1962 թ. թիվը	1966 թ. պրոլ.	1966 թ. թիվը	Անը տարում	Դ դ լ ո
				դ պ ա ծ	ն կ ե ր	ա յ լ
Հայերեն ձեռագրեր . . . . .	10171	10312	141	73	68	—
Հայերեն նորագոյն ձեռագրեր .	—	57	57	28	29	—
Հայերեն հմայիներ . . . . .	270	298	28	13	15	—
Հայերեն պատառկներ . . . . .	1683	1902	219	46	29	144
Արարատան ձեռագրեր . . . . .	995	1265	270	17	253	—
Արարատան հմայիներ . . . . .	31	32	1	1	—	—
Արարատան պատառկներ . . . . .	70	81	11	6	4	1
Ալլալուկու ձեռագրեր . . . . .	90	116	26	7	18	1
Ալլալուկու պատառկներ . . . . .	88	97	9	—	7	2
Բնդամենը . . . . .	13398	14160	762	191	423	148

Մատենադարանի ձեռագրական հավաքածուների հարսացման գործում միշտ էլ մեծ է եղել նվիրատվության տեսակարար կշիռը: Անցյալի մեր մշակութային բնագավառի գործիչները, և ոչ միայն նրանք, սիրով Մատենադարանին են տրամադրել իրենց ունեցած ձեռագրական արժեքները, վստահ, որ դրանով մի կողմից նպաստում են այդ արժեքների համահավաքմանը, իսկ մյուս կողմից անմահ հիշատակ են թողնում իրենցից հետո: Գեղեցիկ ու հայրենակու այդ սովորությն այսօր էլ շարունակվում է: Մատենադարանին ձեռագրեր

են նվիրում ոչ միայն հայրենաբնակ, այլև սիրուռքահայ մեր բարեկամները, որոնց ներդրումը հատկապես խիստ զգալի է:

Արակես շնորհակալության և անկեղծ երախտազիտության անխառն արտահայտություն, ստորև այբբենական կարգով թվարկում ենք այն բոլոր անձանց անունները, որոնք վերջին չորս տարում որևէ ձեռագիր են նվիրաբերել, մատնանշելով միաժամանակ Մատենադարանի համապատասխան հավաքածուներում՝ նվիրաբերված ձեռագրերի զբաղեցրած թվակամարները:

Արամամյան Հակոբ (Ստամբուլ, Թուրքիա) — Բառզիրք պարսից լեզուի Գէորգի Դավրի, 1795 թ., № 10301, Համառա հաւաքումն յաղագ նոզոյ բանկանին, Ժկ դ., № 10302:

Ալեքսանյան Օնիկի (Կահիրե, ԱՄՆ) — Արք., № 1074—1077:

Ամիրյան Սամվել, Հայր (Վենետիկ, Իտալիա, բերված Թէհրանից) — Մաշտոց, 1699 թ., № 10273:

Անտոնյան Սարգս (Քնի, ՀՍՍՀ) — Հայ. պատառիկ, № 1902:

Առաքելյան Թարեն (Երևան, ՀՍՍՀ) — Գերմ. պատառիկ, № 1:

Առաքելյան Ռուրի (Երևան, ՀՍՍՀ) — Հայ. պատառիկ, № 1606:

Ասլանյան Արտաշես (Ռուսե, Բուլղարիա) — Խամականի, Ժկ դ., նորագույն ձեռագրերի շարք, № 39:

Ավագյան Գրիգոր (Երևան, ՀՍՍՀ) — Ախտարք, 1876 թ., № 10274:

Ավուշանյան Ֆարինա (Չիգդամալ, ՀՍՍՀ) — Ժողովածու, Ժկ դ., № 10275:

Բարիկյան-Անտիկյան Արաքսի (Մոնթերելո, ԱՄՆ) — Հմայիլ, 1695 թ., № 277:

Բաղդասարյան Էղվարդ (Երևան, ՀՍՍՀ) — Մաշտոց, 1729 թ., № 9215:

Բարխուդարյան Սեղրակ (Երևան, ՀՍՍՀ) — Վեցհազարեակ, Ժկ դ., № 10294:

Բարոյաններ Արաքսի և Արքահամ (Դետրոյտ, ԱՄՆ) — Հմայիլ, 1671 թ., № 293:

Բարսեղյան Գրիգոր (Գամակոս, Լիբանան) — Արք., № 1007—1016, 1024—1034, 1054—1060, 1086—1095, 1099—1108, Արք. պատառիկ, № 29:

Բյուրականի աստղադիտարանի գրադարան (Բյուրական, ՀՍՍՀ) — Ախտարք, 1821 թ., № 10179, Վեցհազարեակ, 1890 թ., № 10180:

Գալեմբարյան Ռույրե (Հալեպ, Սիրիա) — Քիմիական պայքարութիւններ, 1905 թ., Նորագույն ձեռագրերի շարք, № 34:

Գալենդեր Սուրեն (Հալեպ, Սիրիա) — Բառզիրք զգեստոց, 1890 թ., Նորագույն ձեռագրերի շարք, № 35:

Գալստյան Վաղարշակ (Մանգր, ԱՄՆ) — Մատենագրութիւն Պետրոսի Արքագույն, 1646 թ., № 10307:

Գամեր Ջուլի (Գամբեկ, ՀՍՍՀ) — Հայ. պատառիկ, № 1033:

Գասայան Ներսես (Պուլգիվ, Բուլղարիա) — Վեցհազարեակ, 1825 թ., № 10241, Կանոնիրք, 1678 թ., № 10242, Խամականի, 1825 թ., № 10243, Յաղագ կագմուրեան մարդոյ Ապուսայիդայ, Ժկ դ., № 10244:

Գարայան Վերն (Խասրովս, Բուլղարիա) — Հմայիլ Ժկ դ., № 292:

«Գրասիրաց գրադարան» (Պուլգիվ, Բուլղարիա) — Ճարտասանութիւն նշան Շիշմանեանի, 1863 թ., Նորագույն ձեռագրերի շարք, № 2, Խամականի, Ժկ դ., № 40, Յարդիկ, վեպ Արմեն Շիտանի, 1899 թ., Ա. Հատոր՝ № 42, Բ. Հատոր՝ № 43:

Գրիգոր Հակոբ (Փարիզ, Ֆրանսիա) — Արք., № 1020—1023:

Գրիգորյան Ս. Ա. (Թոստով, ՍՍՀՄ) — Ամետարան հանգստեան, 1847 թ., № 9373:

Գրիգորյան Վարդան (Երևան, ՀՍՍՀ) — Հայ. պատառիկ, № № 568, 576, 578, 580 (բերված Լվովից), 1150 (բերված Հալեպից), Աղք Եղեսիոյ Ներսիսի Շնորհալոյ, ԺԲ դ., № 10285, Կրօնագիտուրին, ԺԹ դ., Նորագույն ձեռագրերի շարք, № 38 (բերված Վառնայից):

Գանիելյան Հովհ. Բահ. (Եխալցիս, ՍՍՀՄ) — Ժողովածու, 1670 թ., № 10270:

Գարեգինյան Աղասի (Փարիզ, Ֆրանսիա) — Արք., № 1019:

Գեղեցիան Հովհանն (Հալեպ, Սիրիա) — Արք., № № 1006, 1061, 1063, 1064:

Եզանյան Օննիկ (Երևան, ՀՍՍՀ) — Ախտարք, ԺԹ դ., № 10183, Արք., № 1109:

Եղիվարդ Մարտր (Մաշեստր, Անգլիա) — Հաջուեմատեան, 1816 թ., № 10272:

Եւեանի պետական համալսարանի գրադարան (Երևան, ՀՍՍՀ) — Կոնդակի Դանիէլ, Եփրեմ և Յովինաննէս կրդ-աց, ԺԹ դ., № 10266, Բնագննուրին, 1702 թ., № 10267, Հարանց վարչ Քոնանց, 1700 թ., № 10268, Աղօրագրեր, 1851 թ., № 10269, Հայ. պատառիկ, № 1627:

Զարյան Վահե (Կոպենհագեն, Դանիա) — Արք., № 1098:

Պարայան Զարեհ (Սան-Ֆրանցիսկո, ԱՄՆ) — Արք., № 1097:

Պանզարանյան Մերոպոնի (Սոֆիա, Բուլղարիա, այժմ Երևանաբնակ) — Տամարանուրին, ԺԷ դ., № 10249, Բարոյագիտուրին, ԺԲ դ., № 10250:

Պարվերյան Անդրեա (Թոստով, ՍՍՀՄ) — Տաղարան, 1890 թ., Նորագույն ձեռագրերի շարք, № 7:

Պիրիաքյան Միհրդատ (Եյու-Ցորք, ԱՄՆ) — Արք., № 1018:

Պյուրյունյան Լևոն (Ցյուրիխ, Շվեյցարիա) — Տաղարան, ԺԹ դ., № 10295, Սաղմոսարան, ԺԷ դ., № 10296:

Պովմասյան Շավարշ (Թեհրան, Իրան) — Հմայիլ, 1787 թ., № 282:

Փամկոշյան Հայկ (Կահիրե, ԱՄՆ) — Զայնազեալ Փամագիրե, ԺԹ դ., Նորագույն ձեռագրերի շարք, № 5, 6:

Խսպիրյան Ռոկան (Չիկագո, ԱՄՆ) — Ամետարան, ԺԵ դ., № 10271:

Լևոնյան Ալիս (Երևան, ՀՍՍՀ) — Հմայիլ, № 298 (պատկանել է բնիկ կեսարացի Սեդրակ Բոյաջյանին):

Խինդիլյան Թագվոր (Պլովդիվ, Բուլղարիա) — Կրօնագիտուրին, 1878 թ., Նորագույն ձեռագրերի շարք, № 4:

Խոռոզյան Ճորին (Հալեպ, Սիրիա) — Արք., № № 1072, 1078—1085:

Խուլավերյան Գարբիել (Արագան, Իրան) — Ժողովածու, 1596 թ., № 10254:

Կյուզելյան Ասատուր (Կալկաթա, Հնդկաստան) — Ամետարան, ԺԷ դ., № 10190:

Հազարյան Հարուրյուն (Եյու-Ցորք, ԱՄՆ) — Արք., № № 999—1005, Հնդ. № 93, Հուն., № 95, Հարշ., № № 96—104, Հայ. պատառիկ, № № 1877—1887, Վրց. պատառիկ, № № 46—48:

Հակոբ Էլերեկցի (Գուգկունճուր, Թուրքիա) — Կանոնգիրք և Պատաստանագիրք, 1637 թ., № 10311 (ստացված Գ. Բամպուկճյանի միջոցով):

Համբարձումյան Հոփիսիմ (Երևան, ՀՍՍՀ) — Արք., № 1110 (Համազասպ Համբարձումյանի զրքերից):

Հարուրյունյան Արամ (Բուխարեստ, Բուլғանիա) — Հմայիլ, 1558 թ., № 297:

Հեղինարյան Հովհաննես (Էջմիածին, ՀՍՍՀ) — Հայ. պատառիկ, № 1263:

Հեղենյան Ռոպե (Հալեպ, Սիրիա) — Երազական, ԺԹ դ., Նորագույն ձեռագրերի շարք, № 38, Արք., № 1062:

Մամեդրովա Ջուկիխա (Աշխարադ, ՍՍՀՄ) — Արք., № 998:

Մանուկյան Աղավելի (Վասնա, Բուլղարիա) — Ախտարք, ԺԹ դ., № 10284:

Մարաշի Ս. Գևորգ Եկեղեցու քաղական խորհուրդ (Հալեպ, Սիրիա) — Ամետարան, ԺԵ դ., № 10226, Ամետարան, 1727 թ., № 10227, Մաշտոց, ԺԹ դ., № 10228:

Մարշանյան Արքանամ (Երևան, ՀՍՍՀ) — Հայ. պատառիկ, № 1873:

Մարտիրոսյան Հայկ (Պրագա, Չեխոսլովակիա) — Աղօրագիրք, 1785 թ., Գերմ., № 92:

Մեսիայան Հրանտ և Պարգև (Բրոնքս, ԱՄՆ) — Բժշկարան Ամիրդովլարայ Ամասիացոյ, 1631 թ., № 10277:

Մեւրոպյան Էդվարդ (Մամբրու, Բուլղարիա, Հ. Բ. Բ. Ս. Աթենքի մասնաձյուղի միջոցով) — Գիրք աղերսանաց, 1757 թ., № 10298:

Մովի Լիլիան (Լոս-Անջելոս, ԱՄՆ) — Բառարան պարսկերէնէ-հայերէն Արամ Մովիի, Ի դ., Նորագույն ձեռագրերի շարք, № 54:

Նալչազյան Արևիան (Երևան, ՀՍՍՀ) — Հմայիլ, 1661 թ., № 10248:

Ներսիսյան Վեհունի (Էջմիածին, ՀՍՍՀ) — Հմայիլ, ԺԲ դ., № № 280, 281:

Ներսյան Տիրան արթեպս. (ԱՄՆ), Բժշկարան Ամիրդովլարայ Ամասիացոյ, ԺԷ դ., № 10288, Շարակնոց, ԺԵ դ., № 10289:

Շիշմանյան Լյուտի (Պլովդիվ, Բուլղարիա) — Ճարտասանուրին Նշան Շիշմաննի, 1863 թ., Նորագույն ձեռագրերի շարք, № 37:

Շիրազյան Արա (Ֆրեզնո, ԱՄՆ) — Բժշկարան, ԺԲ դ., № 10246:

Ռոկանյան Հովհ. (Մարտել, Ֆրանսիա) — Աստուածաշունչ, 1965 թ., Նորագույն ձեռագրերի շարք, № 31:

Ռոկանյան Մինաս (Հալեպ, Սիրիա) — Արք., № № 1078—1085:

Ռոկանյան Նինել (Երևան, ՀՍՍՀ, բերված Լվովից) — Հայ. պատառիկ, № № 1367, 1380, 1383, Արք. պատառիկ, № 34:

Վալյան Մուշեղ (Փարիզ, Ֆրանսիա) — Մաշտոց, ԺԷ դ., № 10300:

Վալլմյան Շավարշ Բահ. (Մտամրու, Թուրքիա) — Գիրք շորից վերջնոց Յովի. Սերաստացոյ, 1859 թ., № 10185, Խամակնի, 1829 թ., № 10186, Գաղտնի գաղտնեաց կանանց Ալբերտ Մեծի, 1859 թ., № 10287, Ձեռմեռանդուրին Հ. Ալֆոնս Մեսիայի, 1810 թ., № 10188:

Վասմանյան Հովհաննես (Հալեպ, Սիրիա) — Ամետարան, Արք., № 94, Արք., № № 1043—1046:

Վերենիկյան Հովհաննես (Հալեպ, Սիրիա) — Արք., № № 1078—1085:

Վլովդիկի Բայ Եկեղեցական խորհուրդ (Պլովդիվ, Բուլղարիա) — Մաշտոց, ԺԳ դ., № 10282, Ամետարան, ԺԳ դ., № 10283:

Վուսէի Բայ Եկեղեցական խորհուրդ (Վուսէ, Բուլղարիա) — Քարոզգիրք Յակարայ Նալեան, 1786 թ., № 10278:

Վահակյան Արմենակ (Սոֆիա, Բուլղարիա) — Հմայիլ, ԺԷ դ., ԺԲ դ., № № 283—286:

Վահակյան Արտավազդ (Գառնի, ՀՍՍՀ) — Հայ. պատառիկ, № 1891, Արք. պատառիկ, № 32:

Վամբելյան Վահե (Հալեպ, Սիրիա) — Զրոյց, ԺԹ դ., № 10247, Արք., № № 1065—1071:

Վարգյան Կիրակոս (Եյու-Ցորք, ԱՄՆ) — Մեկնուրին վեցօրէից Բարսի Կիրացոյ, 1820 թ., № 10258:

Սարդարյան Մելիք (Օշական, ՀՍՍՀ) — Բնախօսութիւն, ժթ դ., նորագույն ձեռագրերի շարք, № 10;

Սարյան Մարտիրոս (Երևան, ՀՍՍՀ) — Քրիստոնէական վարդապետութիւն, ժթ դ., № 10178;

Սիմոնյան Հ. (Էնինական, ՀՍՍՀ) — Շիրակի գիտաբանութեական և արդինարեական վիճակը Պետրոս Խաչեան-Բերտեանի, 1889 թ., նորագույն ձեռագրերի շարք, № 14;

Սիրունի Հակոբ (Բուխարեստ, Ռումինիա) — Պատմութիւն վարուց նարուկոն Պոնարարդի Պետրոսի Մոմենան, 1860 թ., № 10306;

Սմբատյան Շավարշ (Երևան, ՀՍՍՀ) — Ժողովածու, 1609 թ., № 10245;

Սյումպուլյան Հակոբ (Հալեպ, Սիրիա) — Արք. № 1078—1085;

Սուրբիայան Կարապետ (Երևան, ՀՍՍՀ) — Հմայիլ, ժե դ., № 278, Հմայիլ, 1821 թ., № 279, Հայ. պատափիկ, № 1102;

Նազգեն Ա. Կրդ. (Էջմիածին, ՀՍՍՀ, բերդած Եթովպիայից) — Հարշ., № 105;

Վանայի Ս. Սարգսի եկեղեցու վարչություն (Վանա, Բուլղարիա) — Շարակեց, ժե դ., № 10286;

Վարդանյան Լևոն (Էնինգրադ, ՍՍՀՄ) — Մեկնութիւն Աւտարանի, 1725 թ., № 10290, Տաղարան Գրիգորի Օշականցոյ, 1799 թ., № 10291, Հայ. պատափիկ, № 1896;

Տեր-Ղազարյան Հարուրյուն (Հալեպ, Սիրիա) — Արք. № 1017;

Տեր-Մինասյան Ղևոնդ Վրդ. (Զմբառ, Էլիանան) — Մարզանի գրաբար լեզուի, 1964 թ., նորագույն ձեռագրերի շարք, № 47;

Տեր-Մինասյան Վ. (Փարիզ, Ֆրանսիա) — Յաղագ աստուածային բացարձակ կատարելութեանցն, 1826 թ., № 10225;

Տեր-Պետրոսյան Վրեմ (Թիֆրան, Իրան) — Մաշտոց, 1692 թ., № 10259;

Փարքամյան Նուրար (Հալեպ, Սիրիա) — Սաղմոսարան, ժե դ., № 10218;

Փափազյան Աշխին (Վանա, Բուլղարիա) — Ժողովածու, 1853 թ., № 10279, Կերակուր բահանայից Յովի, 1853 թ., № 10280, Աղբիւր բացեալ Պետրոսի Աղամալեան, 1849 թ., № 10281, Բանաստեղծութիւնի, ժթ դ., նորագույն ձեռագրերի շարք, № 36, Աւտարան Յովիաննու, ժթ դ., № 41, Քարոզի, ժթ դ., № 44, Ճարտասանութիւն Խշան Շիշմանեանի, 1846 թ., № 45;

Փիլափինյան Խորեն (Հալեպ, Սիրիա) — Արք., № 1078—1085, Հայ. պատափիկ, № 1889;

Քյուրումյան Պարզի (Հալեպ, Սիրիա) — Շարակեց, ժե դ., № 10231;

Քյուրիննյան Կատարինն Մալարիացի (Եթովպիա) — Հարշ., № 112;

Քյուրմբյան Արիզի (Բուլղարիա, Ալբ) — Տաղարան, ժե դ., № 10221, Հմայիլ, 1776 թ., № 276;

Քոշարյան Ելենա (Թրիլիս, ՍՍՀՄ) — Տեղաբանութիւն կամ փղորայ Հայատանեայց Ստեփանոսի Շահրիմանեանց, 1817 թ., № № 10303—10305, Ժողովածու, ժթ դ., նորագույն ձեռագրերի շարք, № № 55, 56:

Օ. Եղանյան  
Զեռագրատան զիսավոր ավանդապահ

## Յ Ո Ւ Յ Ա Կ

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԳՐԸՆԹԻ

1. Գիտական նյութերի ժողովածու, № 1: 1941, 250 էջ:
2. Գիտական նյութերի ժողովածու, № 2: 1950, 204 էջ:
3. Բանբեր Մատենադարանի, № 3: 1956, 457 էջ:
4. Բանբեր Մատենադարանի, № 4: 1958, 436 էջ:
5. Բանբեր Մատենադարանի, № 5: 1960, 540 էջ:
6. Բանբեր Մատենադարանի, № 6: 1962, 550 էջ:
7. Բանբեր Մատենադարանի, № 7: 1964, 435 էջ:
8. Անանուն ժամանակագրություն: Առաջարանով և ծանոթագրություններով կազմեցին՝ Հովհ. Մանվելյան, Հար. Արքահամյան: 1940, 35 էջ:
9. Անահիտ Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար: Աշխատությամբ Աշ. Արքահամյանի: 1940, 95 էջ:
10. Յովիան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ: Աշխատությամբ և առաջարանով Աշ. Արքահամյանի: 1941, 300 էջ:
11. Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ I: Առաջարանով, ծանոթագրություններով և բառարանով կազմեց՝ Հար. Արքահամյան: 1941, 190 էջ:
12. Հարուրյունյան Ա. Խ., Ներկերի և թանաքների գործածությունը Հին Հայկական ձեռագրերում: 1941, 99 էջ:
13. Մելիկ-Պարսածանյան Խ., Խհիտար Գերացի (վրաց XII վ.). 1941, 30 ստր.
14. Արքահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, 1944, 419 էջ:
15. Խաչիկյան Լ., Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար): 1951, 112 էջ:
16. Արքահամյան Ա. Գ., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից (ուսումնասիրություն և վավերագրեր): 1953, 280 էջ:
17. Մեացականյան Աս., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր: 1956, 669 էջ:
18. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ առաջին (Ժե—ԺԶ դդ.), կազմեց Հ. Գ. Փափազյան: 1956, 315 էջ:
19. Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: Խ լոյս ածեալ Ե. Տէր-Մինասիան: 1957, 224 էջ:
20. Պատմութիւն Յարման մանկան (միջնադարյան պահմ): Հրատարակության պատրաստեց Շուշանիկ Նազարյան: 1957, 194 էջ:
21. Պաղտասար Գալիր, Տաղիկներ սիրոյ և կարօտանաց: Հրատարակության պատրաստեցին Շուշանիկ Նազարյան, Աստուր Մնացականյան: 1958, 285 էջ:

22. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակերկորդ (1601—1650 թթ.): Կազմեց Հ. Գ. Փափազյան: 1959, 593 էջ:
23. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց: Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Ելիք-Օհանջանյանի: 1961, 426 էջ:
24. Անանուն մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի: Համահավաք բնագիրը Ս. Պ. Լալաֆարյանի և Վ. Կ. Զալոյանի, առաջարանը և խմբագրությունը Վ. Կ. Զալոյանի, թարգմանությունը գրարարից ուստերեն Ս. Ա. Արեշատյանի: 1961, 317 էջ:
25. Կօրիոն, Ժիտիւ Մաշտօցա. Պերեց Ռ. Վ. Ըմբատյան և Կ. Ա. Մելիք-Օգանջանյան, կոմմենտարի Ռ. Վ. Ըմբատյան. 1962, 163 ստր.
26. Խաչերյան Լ. Գ., «Գրչության արվեստի» լեզվական-քերականական տեսությունը՝ միջնադարյան Հայուստանում (ստումնասիրություն և բնագրեր): 1962, 405 էջ:
27. Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց: Աշխատասիրությամբ Ա. Ս. Կծոյանի: 1962, 267 էջ:
28. Հովհաննես Կարենցի, Տաղարան: Աշխատասիրությամբ Շուշանիկ Նազարյանի: 1962, 150 էջ:
29. Արգարյան Գ. Վ., Մատենադարան: 1962, 87 էջ, 17 թ. նկ.
30. Աբգարյան Գ. Վ., Մատենադարան, 1962, ստր. 71, ալլուստ. 17.
31. Abgarian G. W., Matenadaran. 1962, p. 66, Illust. 17.
32. Անանյան Շիրակաց, Կօսմոգրաֆիա. Պերեց սկզբանական պատմական արձանագրությունները (XVI դ.): Աշխատասիրությամբ Վ. Բ. Գրիգորյանի: 1963, 439 էջ:
33. Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ: Աշխատասիրությամբ Կ. Ն. Յուղբաշյանի: 1963, 159 էջ:
34. Կամենց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.): Աշխատասիրությամբ Վ. Բ. Գրիգորյանի: 1963, 439 էջ:
35. Հովհաննես Մերաստացի, Բանաստեղծություններ: Աշխատասիրությամբ Վ. Պ. Գևորգյանի: 1964, 234 էջ:
36. Հովհաննես Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու: Աշխատասիրությամբ Հ. Ս. Անասյանի: 1964, 124 էջ:
37. Արգարյան Գ. Վ., «Մերենուի պատմությունը» և Անանունի առեղծվածը: 1965, 252 էջ:
38. Թումանյան Բ. Ն., Առձեռն տոմարացուց: 1965, 65 էջ:
39. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա. Կազմեցին՝ Օ. Եղանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, ներածությունը Օ. Եղանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացակյանյանի: 1965, 1634 էջ:
40. Պատմութիւն Փարիզի և Վեննայի: Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի: 1966, 306 էջ:
41. Մնացակյան Ա. Շ., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ: 1966, 284 էջ:
42. Ամալյան Հ., Միջնադարյան Հայուստանի բառարանագրական հուշարձանները: 1966, 240 էջ:
43. Խաչի Նշեցի, Վերլուծութիւն քերականութեան: Աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի: 1966, 208 էջ:

## Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ւ

## Հ Ա Ղ Վ Ա Ճ Ե Ր Ե Կ Ի Ա Վ Ր Գ Ո Ւ Մ Ե Ե Ր

- Ա. Մարտիրոսյան — Խիկարի տեղն ու զերը հայ մատենագրության մեջ . . . . .  
Լ. Շահինյան — Ո՞րն է Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը . . . . . 21
- Հ. Բարթիկյան — Անանիա Եիրակացուն վերագրվող «Ժամանակագրության» և նրա բանաբաղի հարցի շուրջը . . . . . 57
- Խ. Թորոսյան — Բնդպատությունը՝ միջնադարյան Հայուստանում . . . . . 79
- Ն. Թաշիկյան — Ներդաշնակության հենքի մասին ուսմունքը Հայուստանում՝ միշտն դարձրում (X—XV դդ.) . . . . . 93
- Տ. Իդալովա — «Բեղինց» ավետարանը . . . . . 113
- Ա. Գեորգյան — Էկոն երրորդ թագավորի ավետարանը . . . . . 143
- Փ. Անթարյան — Վարդան Արենելցու «Ժվանիքը» . . . . . 157
- Բ. Իշանյան — Հայ հնագույն տպագրությունների ժամանակագրության հարցի շուրջը . . . . . 183
- Ս. Բարիսուրյան — Գեղարքունիքի մելիքներն ու տանութերերը ըստ Տաթևի վանքի մի ժամանակաշինքի . . . . . 191
- Հ. Փափազյան — Քորդ ժողովրդի պատմության մի նոր սկզբնազրյուր . . . . . 229
- Հ. Խաչատրյան, Լ. Խաչենյան — Մերովին կարնեցու ուղեղությունը . . . . . 249

## Բ Ն Ա Գ Ր Ե Ր

- Ե. Կայիսեր. Պողարյան (Երասազեմ) — Ներագյուտ հատված Ղաղար Փարացու «Հայոց պատմութեան» . . . . . 263
- Ա. Անասյան — Թովմա Կիլիկիցու աշխարհագրությունը . . . . . 275
- Ա. Մաթեոսյան — «Ճանապարհացոյց» Զուղայիշի Պետրոսի որդի Հակոբի . . . . . 285
- Ա. Մացականյան — Միջնադարյան հայրենական մի նորահայտ պոեմ . . . . . 291
- Տեղեկատու . . . . . 318

## СОДЕРЖАНИЕ

### Статьи

А. А. Мартиросян—Место и роль Ахикара в армянской словесности . . . . .	7
Л. П. Шагинян—О хронологической системе «Истории Армении» Мовсеса Хоренаци . . . . .	21
Р. М. Бартикий—К вопросу о «Хронографии», приписываемой Анании Ширакаци и ее компиляторе . . . . .	57
Х. А. Торосян—Подсудность в средневековой Армении . . . . .	79
Н. К. Тагмизян—Учение об остове гармонии в Армении в X—XV веках . . . . .	93
Т. А. Измайлова—Евангелие «Бегюнц» . . . . .	113
А. Б. Геворкян—Евангелие царя Левона третьего . . . . .	143
П. П. Аитапян—«Жхланк» Вардана Аревелци . . . . .	157
Р. А. Ишханян—К вопросу о датировке древнейших армянских печатных изданий . . . . .	183
С. Г. Бархударян—Мелики и танутэры (старшины) Гехаркуника согласно одному документу Татевского монастыря . . . . .	191
А. Д. Папазян—Новый источник по истории курдского народа . . . . .	229
А. Хачатрян, Л. Хачерян—Путевые записки Серовбе Карнеци . . . . .	249

### Тексты

Н. Богарян (Иерусалим)—Новооткрытый фрагмент «Истории Армении» Лазаря Парбеци . . . . .	263
А. А. Анасян—География Товмаса Киликейци . . . . .	275
А. С. Матевосян—«Путеводитель» Акопа Джугаеци . . . . .	285
А. Ш. Мнацаканян—Вновь найденная средневековая патриотическая поэма Справочник . . . . .	291
	318

## ТАБЛИЦА МАТЕРИАЛОВ

### А r t i c l e s

А. А. Martirossian—De l'Importance d'Akhikar dans la littérature arménienne . . . . .	7
L. P. Chahinian—A propos de la chronologie de l'Histoire d'Arménie de Moïse de Khorène . . . . .	21
H. M. Bartikian—A propos de la Chronographie attribuée à Anania Chirakatsi et de son véritable compilateur . . . . .	57
Kh. A. Thorossian—De la juridiction dans l'Arménie médiévale . . . . .	79
N. K. Tahmizian—La théorie de l'ossature de l'harmonie musicale en Arménie aux X <sup>e</sup> —XV <sup>e</sup> siècles . . . . .	93
T. A. Izmailova—L'Evangile de Beguntz . . . . .	113
A. B. Gevorkian—L'Evangile du roi Léon III . . . . .	143
P. P. Antablian—Le Jeghank de Vartan Arévéltsi . . . . .	157
P. A. Ichkhanian—A propos de la chronologie des incunables arméniens . . . . .	183
S. G. Barkhoudarian—Les Méliks et les Tanouters de Guégharkouni, d'après un document du couvent de Tathève . . . . .	191
H. D. Papazian—Une nouvelle source de l'histoire du peuple kurde . . . . .	229
H. Khatchatrian, L. Khatchérian—La Relation de voyage de Sérové Karnétsi . . . . .	249

### T e x t e s

N. Bogharian (Jérusalem)—Un fragment récemment découvert de l'Histoire d'Arménie de Lazare Parbetsi . . . . .	263
A. H. Anassian—La Géographie de Thomas de Cilicie . . . . .	275
A. S. Matévoossian—Le Guide routier de Hakob fils de Petros de Djoulfa . . . . .	285
A. Ch. Mnatsakanian—Un poème patriotique médiéval inédit . . . . .	291
Comptes rendus . . . . .	318

Տպագրված է  
Մաշտոցի անվան մատենադարանի  
գիտական խորհրդի ոռօչմամբ

Հրատ. խմբագիրներ՝ Փ. Մ. Արքով, Գ. Վ. ԽԱՂՋԱՅԱՆ  
Նկարչական ձեռագրություն՝ Լ. Ա. ՍԵՐՈՎԱՆԻ  
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԻԱՆՅԱՆ  
Մրցագրիչներ՝ Լ. Կ. ՀԱՐԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Է. Տ. ՔԵՐԿԻՆՅԱՆ

<i>կզ</i>	<i>Տաղ</i>	<i>Տպված է</i>	<i>Պետք է լինի</i>
39	39	գրքի	գլուխ
48—49-ի ժիշտ Ազյուսակ 9.	2	Ա և Բ	Բ և Գ գրքեր
»	Մյուսնակ III	Կոստանդ Բ-ի 3-րդից 1240—1248 թթ.	Կոստանդ Բ-ի 8-րդից 1240—1246 թթ.
180	28	Իւ (Էջմանածառը տպված է տոպամիջում)	(Պետք է լինի լուսանց- քում)
286	9	Իր (Էջմանածառը տպված է տոպամիջում)	(Պետք է լինի լուսանց- քում)
287	27	Իր (Էջմանածառը տպված է տոպամիջում)	(Պետք է լինի լուսանց- քում)
323	25	Լիրանոն	Սիրիս

*43b* 04327      *Zimmer.* 2684      *Quarry* 348

Համաձնված է արտադրության 12/IX 1966թ.: Ստանդարտած է տպագրության 28/II 1967թ.:  
Տպագր. 20,75 մմմ. + 4 ներդիր: Հքառ. 23,83 մմմուլ. թուղթ № 2 70×108<sup>1</sup>/<sub>16</sub>:  
Գիրն համար 1 գ. 60 կ.

ՀՍՏՅ ԳԻՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ակադեմիայի հրատ. տպարան, Երևան, Բարեկամության 24: